


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ 2023Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Երևան 2024

**Հաշվետվությունը պատրաստել է ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական բաժինը՝
ՀՀ ԳԱԱ գիտությունների բաժանմունքների, գիտական
կազմակերպությունների և ստորաբաժանումների ներկայացրած նյութերի
հիման վրա**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ	5
ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	7
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	8
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	26
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	46
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	51
Մաթեմատիկայի ինստիտուտ	52
Մեխանիկայի ինստիտուտ	57
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ	65
«Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ	75
ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	77
Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան	78
Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	84
Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ	92
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ	99
ԻԿՐԱՆԵՏ ԿԵՆՏՐՈՆ ՄԿ	103
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	108
Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն	109
Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ	115
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	121
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն	129
Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ	137
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	141
Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ	147
Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ	152
ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	157
Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	158
Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ	167
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն	172
Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	187
Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ	193
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	199
Պատմության ինստիտուտ	200

Արևելագիտության ինստիտուտ	213
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	220
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն	232
Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ	239
Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ	246
Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ	253
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ	263
Արվեստի ինստիտուտ	269
«Հայկական հանրագիտարան» հրատարակչություն	273
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ	274
ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ.....	279
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	287
Ընդհանուր ժողովներ	288
Նախագահություն	288
Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանց (ASNET-AM)	289
Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով.....	289
Միջազգային կապերի վարչություն	290
Միջազգային գիտատեխնիկական կապեր	290
ԳԱԱ գիտական կազմակերպությունների դրամաշնորհներ	293
Միջազգային դրամաշնորհների աջակցություն	302
Սփյուռքի գիտնականների գործունեություն	303
«Գիտություն» հրատարակչություն.....	307
Գրադարաններ	309
ԳԱԱ և այլ գիտական կազմակերպությունների, բուհերի համատեղ կենտրոններ, լաբորատորիաներ, ամբիոններ	311
Գիտության և կրթության ոլորտում գաա գիտական կազմակերպությունների համագործակցությունը հի բուհերի եվ այլ կազմակերպությունների հետ.....	313
Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում	317
ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ	321
ԳԱԱ հիմնարկների արտոնագրային ցուցանիշներ.....	322
ԳԱԱ գիտաշխատողների հրապարակումների ընդհանուր քանակը	323
ԳԱԱ ինստիտուտների անցկացրած հանրապետական և միջազգային գիտաժողովներ, սիմպոզիումներ և գիտական այլ միջոցառումներ.....	325
ԳԱԱ գիտական կադրերի 2023թ. ատեստավորման արդյունքներ.....	335
Կադրեր	336

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

2023թ. դեկտեմբերի 19-20-ին նշվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակը: Ութ տասնամյակների ընթացքում ակադեմիան անցել է դժվարին, միաժամանակ բովանդակաշատ ուղի, ունեցել է գիտական մեծ նվաճումներ, արժանացել համաշխարհային ճանաչման: Գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի բարձրագույն գիտական կենտրոնն է, իր համակարգի կազմակերպությունների միջոցով իրականացնում է հիմնարար և կիրառական հետազոտություններ գիտության բոլոր բնագավառներում, դարձել է հիմնարար ու հայագիտական հետազոտությունները համակարգող մարմին:

Հոբելյանին նվիրված միջոցառումներ իրականացվել են ողջ տարվա ընթացքում, մասնավորապես գիտության տարբեր ոլորտներում կազմակերպվել են գիտաժողովներ, գիտական նստաշրջաններ, հանրային դասախոսություններ, ձեռք բերված գիտական արդյունքների ցուցահանդեսներ: Տոնական հանդիսություններին մասնակցել են ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը, նախագահ Վ.Խաչատուրյանը, կառավարության անդամներ, Ազգային ժողովի պատգամավորներ, գիտության, կրթության ու տնտեսության մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, ՀՀ հավատարմագրված դեսպաններ, արտասահմանյան պատվիրակություններ: Միջոցառումների շրջանակում տեղի է ունեցել Վիկտոր Համբարձումյանի անվան 2020թ. միջազգային գիտական մրցանակի հանձնման արարողությունը, կազմակերպվել է ակադեմիայի հանդիսավոր գիտական նստաշրջան:

2023թ. ԳԱԱ ակտիվորեն մասնակցել է «Ակադեմիական քաղաք» մեգաժրագրի, պետական բուհերի խոշորացման ու գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման հայեցակարգային առաջարկությունների մշակման ու ներկայացման գործընթացին: Բուհերի հետ համագործակցության հարցը քննարկվել է ակադեմիայի բոլոր կազմակերպություններում, արված առաջարկությունների հիման վրա մշակվել է ընդհանուր եզրակացություն ու ներկայացվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը: Ակադեմիայի գիտական հանրույթը, ընդգծելով գիտության կարևորությունը Հայաստանի զարգացման ու առաջընթացի համար, հաշվի առնելով արդեն իսկ կայացած գիտական ավանդույթների պահպանման ու հետագա զարգացման անհրաժեշտությունը, շեշտելով ակադեմիայի առանցքային դերն ու նշանակությունը հանրապետության գիտական ու գիտակրթական ընդհանուր համակարգում, հանդես է եկել ակադեմիայի ներկա կազմակերպարավարական ձևի պահպանման ու Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեության կազմակերպման ձևերի բազմազանության ապահովման օգտին:

Հաշվետու տարում ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունները շարունակել են իրականացնել հիմնարար ու կիրառական բնույթի հետազոտություններ, ստացել են արժեքավոր գիտական արդյունքներ, ներդրվել են մի շարք կիրառական ծրագրեր: Մասնավորապես «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի և ավստրիական «GECCO INT» ընկերության միջև կնքվել է համագործակցության պայմանագիր, որի շրջանակում նախատեսվում է կենտրոնում ստեղծել գեղարարական ու սննդային նշանակության բուսական յուղերի, լուծամզվածքների ու եթերայուղերի արտադրություն: Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանում շարունակվում է մերձերկրյա տիեզերական տարածության մշտադիտարկումը՝ տիեզերական սարքերի բեկորներ ու «կորած» արբանյակներ հայտնաբերելու նպատակով: Ավարտին են մոտենում Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի նախաձեռնությամբ ու ակտիվ մասնակցությամբ Հայաստանում ազգային գերհամակարգչային կենտրոնի ստեղծման աշխատանքները, ինչի արդյունքում կձևավորվի ամբողջովին նոր հաշվողական էկոհամակարգ և լայն կիրառություն կգտնի գիտության, կրթության, տեխնոլոգիաների, պաշտպանության, առողջապահության բնապահպանության և այլ ոլորտներում:

2023թ. ամբողջ ծավալով գործել են նոր նախաձեռնություններ: Մասնագիտական պրոբլեմային խորհուրդները կազմակերպել են իրենց համակարգման բնագավառներում առկա հիմնախնդիրների մասնագիտական քննարկումներ, պետական կառավարման մարմիններին ու գերատեսչություններին են տրամադրվել փորձագիտական խորհրդատվություններ ու եզրակացություններ: Գիտական և գիտատեխնոլոգիական խոշորամասշտաբ ծրագրերի մշակման ուղղությամբ պատրաստվել են տասներկու գիտահետազոտական նախագծեր, որոնք ներկայացվել են շահագրգիռ պետական մարմիններին, Էկոնոմիկայի նախարարություն՝ «Նախակլինիկական և տրանսլացիոն հետազոտությունների գիտափորձարարական կենտրոնի/կլաստերի ստեղծում» հանրային ներդրումային ծրագիրը:

Հիմնադրվել է ակադեմիայի մրցանակ, հայտարարվել է առաջին մրցանակաբաշխությունը: Այն շնորհվելու է երկու տարին մեկ անգամ՝ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական, քիմիայի, կյանքի և երկրի մասին, հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում: Ընդ որում, առաջին երկու բնագավառներում մրցանակը շնորհվելու է երկու անվանակարգում՝ հիմնարար հետազոտությունների ու կիրառական մշակումների ոլորտում:

Շարունակվել է համագործակցությունը միջազգային գիտական կառույցների, տարբեր երկրների գիտությունների ակադեմիաների ու գիտական կազմակերպությունների հետ: Արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ակադեմիայի 606 աշխատակից, որոնցից համատեղ աշխատանքներ է կատարել 161-ը, ակադեմիայի կազմակերպություններ է այցելել 1026 գիտաշխատող արտասահմանից, որոնցից 301-ը մասնակցել է համատեղ աշխատանքներին: Անցած ժամանակահատվածում ակադեմիայի պատվիրակությունները մասնակցել են բազմաթիվ գիտաժողովների, գիտական ու գիտակազմակերպական միջոցառումների, մասնավորապես Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադրման 300-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը, ԱՊՀ երկրների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի XI նիստի աշխատանքներին և այլն: Ակադեմիայի ղեկավարությունը մասնակցել է Իտալիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության մի շարք համալսարանների ու գիտական կազմակերպությունների, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (Դուբնա, ՌԴ) և արտասահմանյան գիտական կամ գիտակրթական այլ կազմակերպությունների հետ համագործակցության հեռանկարների քննարկմանը: Կնքվել են համագործակցության պայմանագրեր Չինաստանի, Մոլդովայի, Բուլղարիայի ու Իրանի Իսլամական Հանրապետության գիտությունների ակադեմիաների, Չեռնոգորիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի հետ:

2023թ. ակադեմիայի գիտական կազմակերպությունները պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացրել են գիտական և գիտատեխնիկական գործունեություն 45 բազային, 6 նպատակային-ծրագրային ու 292 գիտական դրամաշնորհային ծրագրերով: Կատարվել են նաև 192 տնտեսական պայմանագրային ու 77 միջազգային դրամաշնորհային ծրագրեր: Կազմակերպվել և անցկացվել են 72 միջազգային ու 86 հանրապետական գիտաժողովներ: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքներով հրապարակվել են 171 մենագրություն ու ժողովածու (27-ն արտասահմանում), 24 ուսումնական ձեռնարկ ու դասագիրք, 1528 հոդված գրախոսվող ամսագրերում (670-ն արտասահմանում), 537 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (236-ն արտասահմանում), 652 թեզիս (285-ն արտասահմանում): Պաշտպանվել են 1 դոկտորական ու 43 թեկնածուական ատենախոսություններ:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա.Ս.Սարգսյան

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաթեմատիկա: Չափելի մետրիկական տարածությունների վրա որոշված լայն դասի օպերատոր հաջորդականությունների համար տրվել է զուգամիտության ու տարամիտության բազմությունների լիովին նկարագրություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլան):

Գտնվել է պայման, որը թույլ է տալիս վերականգնել անընդհատ ֆունկցիան (պարտադիր չէ կոմպակտ կրիչով)՝ օգտագործելով շրջանաձև Ռադոնի ձևափոխությունը՝ գծի վրա տեղադրված չափիչներով: Ներկայացվել է այդ ձևափոխության համար նոր շրջման բանաձև, որը թույլ է տալիս վերականգնել անհայտ ֆունկցիան լոկալ տվյալների միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Դիտարկվել է գրաֆների վրա հիմնված կիսավերահսկվող ուսուցումը՝ օգտագործելով մրցակցային համակարգերի տարածական սեգրեգացիայի տեսությունը: Առաջարկվել են գրադիենտի պրոյեկտման ու ռեգուլարիզացման նոր մեթոդներ, ներկայացվել են նաև թվային արդյունքներ՝ հաստատելու մեթոդների արդյունավետությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Առաքելյան):

Դիտարկվել է գրավիտացիայի երկչափ ուռուցիկ աղբյուրի վերականգնումը կիսահարթությունների միավորման վրա՝ իր պոտենցիալ ֆունկցիայի ընդունած արժեքների միջոցով: Այդ նպատակով ապացուցվել է Պելի-Վիների տիպի թեորեմ սեկտորում էքսպոնենցիալ տիպի ֆունկցիաների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Վաղարշակյան):

Մեխանիկա: «Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites» («Էլեկտրաակուստիկ ալիքները պիեզոէլեկտրական շերտավոր կոմպոզիտներում») մենագրությունում քննարկվել են պիեզոէլեկտրական շերտավոր կոմպոզիտներում էլեկտրաակուստիկ ալիքների հետ կապված տարբեր հարցերը (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Ավետիսյան):

Մշակվել է խողովակաշարերում ճնշման պոլսացիաների ու տատանումների մակարդակների վերացման և նվազեցման արդյունավետ գործող ալիքային ու տատանողական պրոցեսների բազմառեժիմ կայունացուցիչ, որը մարում է երկֆազ (հեղուկ-գազ) պարունակող խողովակաշարերում ճնշման ու ծախսի պոլսացիաները (ղեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան):

Ինֆորմատիկա և ավտոմատացման պրոբլեմներ: Թիրախային դասի դասակարգումը դինամիկ գործառույթ է, որի արդյունքում հաջորդական դասակարգումների միջոցով առարկան վերագրվում է որոշակի, այսպես կոչված «թիրախ» կամ «նորմալ» դասին: Խնդիրը կարող է դիտարկվել որպես բուժման փուլերի կառավարման համակարգի մի մոտեցում: Խնդրի համար կազմվել է կոմբինատոր մոդել կողմնորոշված գրաֆի տեսքով, որտեղ առանձին դասակարգման գործառույթները համապատասխանում են անցմանը գրաֆի մեկ կողմնորոշված կողմի միջոցով: Անցումների քաղաքականությունն ուղղված է ապահովելու առարկաների վերջնական վերագրումը թիրախային դասին: Լուծվել է համապատասխանության հավաստման խնդիրը նշված քաղաքականության նկատմամբ: Այն պահանջում է անցումային գրաֆի որոշակի պայմանների ապահովում գազաթների աստիճանների ու ուժեղ կապակցվածության կոմպոնենտների կառուցվածքի տեսքով: Խնդրի վերլուծությունը տրվել է ճանաչողության տրամաբանական-կոմբինատոր ալգորիթմների լեզվով՝ ստանալով, որ այն լուծվում է որպես հակադարձ ճանաչողության

խնդիր: Տրվել է նաև առանձին դասակարգումների իրականացման բարելավման մի մոտեցում դինամիկ էմիսիայի մոդելի տեսքով: Իրականացվել են ծրագրային փորձարկումներ բաց հասանելի բժշկական տվյալների վրա (ղեկ.՝ թղթ. անդ. Լ.Ասլանյան):

Մշակվել են աֆինական $AG(n, 3)$ երկրաչափությունում $F_3 = \{0, 1, 2\}$ Գալուայի դաշտի վրա լրիվ գլխարկների կառուցման նոր մեթոդներ: Գլխարկն աֆինական $AG(n, q)$ կամ պրոյեկտիվ $PG(n, q)$ երկրաչափությունում կետերի բազմություն է, որոնցից ոչ մի երեքը համագիծ չեն: Նշենք, որ պրոյեկտիվ $PG(n, q)$ -ում գլխարկների մասին ավելի շատ բան է հայտնի, քան աֆինական $AG(n, q)$ -ում: Ստացվել է P_n բազմությունների մի դասի այսպես կոչված b -հագեցած լրիվ P_n բազմությունների նկարագրությունը: Այդպիսի կենտ (յուրաքանչյուր կետի 0-ական կոորդինատների քանակը կենտ է), լրիվ ու b -հագեցած P_n բազմությունների օգտագործմամբ մշակվել են նոր մեթոդներ մեծ լրիվ գլխարկների կառուցման համար $AG(n, 3)$ -ում կամայական n -ի համար: Ստացված արդյունքներն ընդհանրացնում են մի շարք հայտնի արդյունքներ (A. R. Calderbank and P. C. Fishburn, “Maximal three-independent subsets of $\{0, 1, 2\}^n$ ”, Designs, Codes and Cryptography, vol. 4, pp. 203-211, 1994), դրանցից մասնավորապես բխում են մեծագույն գլխարկների հզորությունների համար հետևյալ ստորին գնահատականները՝ $c_{6,3} \geq 112$, $c_{7,3} \geq 236$, $c_{10,3} \geq 2240$, $c_{11,3} \geq 5504$, որտեղ $c_{n,3}$ -ով նշանակված է մեծագույն գլխարկի հզորությունը $AG(n, 3)$ -ում: Վերջին գնահատականն այժմ լավագույնն է, այն չի ստացվում նախկին մեթոդներով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ի.Կարապետյան):

Անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) երամի կողմից տեղանքի մշտադիտարկման ու առաջադրանքների կատարման նպատակով մշակվել է կոլեկտիվ արհեստական բանականությամբ օժտված ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի մոդելավորման ծրագրային համակարգ: Ինֆորմացիայի լրիվ փոխանակում (Gossip/broadcast models) իրականացնող մշակված օպտիմալ ու վթարակայուն սխեմաների (fault-tolerant) կառուցման մեթոդներն ու ալգորիթմներն ադապտացվել են և հիմք են հանդիսացել տրամաբանական կապերով ապակենտրոն դեկավարմամբ ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի կառուցման համար: Ապացուցվել է բազմամասնիկ դեգերման ընդհանրացված թեորեմը Rotor-router մոդելի համար, որի հիման վրա մշակվել են էլեկտրոնային ցանցի համատեղ գեներացման նոր ալգորիթմներ: Երամի դրոնները քվադրատահական դեգերման (rotor-router model) ընթացքում իրականացնում են տեղանքի դինամիկ նկարահանումներ, պատկերների գաղտնագրում, միմյանց միջև նկարահանված պատկերների հուսալի ու լրիվ փոխանակում և արդյունքների փոխանցում տվյալների մշակման կենտրոն: Ստացված տվյալների ինտեգրման հիման վրա վերարտադրվում է տեղանքի դինամիկ պատկերը, որի կոլեկտիվ հետազոտություններն իրականացվում են բազմաօգտատեր ծրագրային հարթակում: Արդյունքում ձևավորվում են նպատակային առաջադրանքներ, մասնավորապես նոր անօդաչու երամի ուղղորդում դեպի նոր հաշվարկված կոորդինատներ: Նկարահանումների ու առաջադրանքների կատարման ողջ ընթացքում ԱԹՍ երամը չի օգտվում արտաքին կառավարման որևէ միջոցից: Մշակվել և իրականացվել է ԱԹՍ երամի ապարատածրագրային համակարգի միատիպ, քիչ ծախսատար բաղադրիչներով օժտված 4 դրոնով երամի փորձարարական տարբերակը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Պողոսյան):

Աստղաֆիզիկա: Ռուսաստանի Դաշնության 6մ դիտակով ուսումնասիրվել է RNO 54 օբյեկտը և ապացուցվել է, որ նրա մեջ գտնվող աստղը շատ ծեր Ֆուօր է, որի բռնկման տարիքը գերազանցում է 1000 տարին: Այս հայտնագործությունը կարճ ժամանակ անց հաստատվել է ԱՄՆ աստղագետների կողմից: Այն առ այսօր հայտնի ամենածեր Ֆուօրն է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Ուսումնասիրվել է տարբեր FR (Fanaroff-Riley) դասերի արտագալակտիկական ռադիոաղբյուրների կապն այդ օբեկտների շրջակա միջավայրի ֆիզիկական հատկությունների հետ: Պարզվել է, որ FRI դասի 3C31 ռադիոգալակտիկայի ռադիոակտիվության վերսկսման պատճառ կարող է հանդիսանալ գալակտիկաների եռակի մոտեցումը: Դա հիմնավորվում է նրանով, որ NGC380 ու NGC386 գալակտիկաները մոտ 100 միլիոն տարի առաջ եղել են գալակտիկաների կոյտի կենտրոնական անդամ NGC383-ի մոտակայքում և սկսել են հեռանալ նրանից հակառակ ուղղություններով: Այդ ուղղությունները համընկնում են 3C31-ի ռադիոշիթերի ուղղությունների հետ: Մոտավորապես նույն ժամանակ էլ՝ 100 միլիոն տարի առաջ, սկսվել է ռադիոշիթերի ժայթքումը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Անդրեասյան):

Կ.Գիգոյանը պարզել է 236 M թզուկների ֆիզիկական բնութագրերը: Շատերի մոտ հայտնաբերվել են բռնկումներ: FBS 0250+167 աստղի մոտ հայտնաբերվել է 2 մոլորակ (Exoplanet) մոտ 1.1 արեգակնային զանգվածներով: Պարզվել է, որ 25-ը կազմում են կրկնակի համակարգեր, հայտնաբերվել են նաև եռակի համակարգեր: Գալակտիկայի հալոյում՝ հարթությունից 7 կպս ու ավելի բարձրությունների վրա, DFBS շրջահայությունից հայտնաբերվել են մեծ քանակությամբ նոր C-CH, C-N, ածխածնային աստղեր: Սպեկտրային դասերը հաստատվել են՝ օգտագործելով Gaia DR3 տվյալների շտեմարանը: Որոշ նոր CH աստղեր ունեն ավելի քան 450 կմ/վ տեսագծային արագություններ և ցույց են տվել կրկնակիության նշաններ: TESS-ի փոփոխականության կորերը հետազոտելիս հայտնաբերվել են մեծ թվով նոր խավարուն փոփոխականներ SDSS-ի ու FBS M թզուկների մեջ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Սահմանվել և հաշվարկվել է փորձնական մասնիկի «հարաբերական արագությունը» դիտորդի նկատմամբ կամայական պսևդո-Ռիմանյան տարածության համար, ինչը 1915թ.-ից մինչ օրս չլուծված կարևորագույն խնդիր էր «Ընդհանուր հարաբերականության տեսության» մեջ: Այդ արագությունը հաշվվել է մի շարք կարևոր ֆիզիկական դեպքերում, այդ թվում՝ նաև Ռոբերտսոն-Ուոլկերի մետրիկայի համար: Վերջին դեպքում ցույց է տրվել, որ աստղագիտական մարմնի հեռանալու «կինետիկ» արագությունը կարմիր շեղման ցանկացած արժեքի համար մնում է փոքր վաակումում լույսի տարածման արագությունից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Նեյտրոնային աստղերի կեղևների էլեկտրական հաղորդունակությունը հաշվարկվել է նյութի հեղուկ փուլում ուժեղ մագնիսական դաշտերի առկայության դեպքում: Ստացվել են առաջին ու երկրորդ կարգի ռելյատիվիստական հիդրոդինամիկայի հավասարումները նյութում դիսիպացիայի առկայությամբ: Ուսումնասիրվել է չափավոր տաք ու խիտ, նեյտրինո-թափանցիկ նեյտրոն-պրոտոն-էլեկտրոն-մյուոնային նյութի երկրորդ մածուցիկությունը, որն առաջանում է թույլ փոխազդեցության ուղիղ Urca գործընթացներից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սեդրակյան):

Առաջարկվել է նոր մեթոդ, որն օգտագործում է մեքենայական ուսուցման ալգորիթմներ գամմա տիրույթում ճառագայթող բլազարների դասակարգման համար: Ուսուցանելով տարբեր ալգորիթմներ, ինչպիսիք են արհեստական նեյրոնային ցանցերը, XGBoost-ն և LightGBM-ը, հայտնի բլազարների դասերի սպեկտրալ ու ժամանակային հատկությունների վրա՝ ստացված մոդելները կարող են հաջողությամբ դասակարգել անորոշ դասի բլազարները: Դասակարգման այս առաջընթացը նոր հնարավորություններ է ընձեռում տարբեր դասերի բլազարների բաշխումների վիճակագրական հետազոտությունների համար, օգնում է բլազարների նոր դիտումների պլանավորմանը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյան):

Ֆիզիկա: Բարձրջերմաստիճանային նանոբջիջների կիրառմամբ ցույց է տրվել, որ բացի ատոմ-մակերևույթ վանդերվալսյան (ՎԴՎ) փոխազդեցությունից՝ ատոմային ռեզո-

նանսների հաճախության «կարմիր» շեղում է առաջացնում նաև ատոմ-ատոմ դիպոլ-դիպոլային (ԴԴ) փոխազդեցությունը: Վերջինիս չհաշվառումը բերում է ՎԴՎ C3 գործակցի արժեքի գերազնահատմանը: Առաջին անգամ «կարմիր» շեղման փորձարարական չափումներով ցույց է տրվել C3 գործակցի արժեքի նվազումն ատոմական նանոբջջի հաստության 130 նմ-ից մինչև 30-50 նմ նվազեցման դեպքում՝ հավաստելով տեսականորեն կանխատեսված ՎԴՎ երևույթի «թուլացումը» (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Մշակվել է Հոնգ-Օու-Մանդելի (<ՕՄ) ինտերֆերենցի իրականացման նոր մեխանիզմ տարբեր ալիքի երկարության երկու անկախ ֆոտոնների համար՝ հիմնված պարամետրիկ փոխազդեցության վրա: Մեխանիզմը հնարավորություն է տալիս վերահսկելի կերպով տեղափոխել կողավորված քվանտային տեղեկությո՞ւյթը հիբրիդային ցանցով, ինչպիսին է քվանտային ինտերնետը, որտեղ տարբեր նյութական հանգույցները գործում են տարբեր ռեզոնանսային հաճախություններով՝ ապահովելով պաշտպանվածությունը դեկոհերենտությունից: <ՕՄ երևույթն անկախ է ֆոտոնների բևեռացումից, ինչի շնորհիվ առաջարկվող մոդելը ճկուն է հիբրիդային քվանտային ցանցերում օգտագործելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Յու.Մալաքյան):

Օպտիկական հոլոգրաֆիայի ու չդիֆրակտվող բեսելյան փնջերի եղանակների հիման վրա մշակվել է միկրոմասնիկների գերման սարքերի (թվիզերների) նոր մեթոդ՝ ֆոտոռեֆրակտիվ բյուրեղի մակերևույթին լազերային փնջով մակածված, ամիսներ պահպանվող ֆոտովոլտային դաշտերի միջոցով միկրո- ու նանոմասնիկների ղեկավարվող տեղաշարժման ու գերման համար: Մշակված մեթոդով իրականացվել է կենսաբանական օբյեկտի՝ ԴՆԹ-ի մոլեկուլների միկրոտեղաշարժում ու գերում: Հայտնաբերվել է 4 մկմ չափերով ԴՆԹ մոլեկուլների կլաստերների ձևավորում NaCl լուծույթում: Բյուրեղի փոքր չափը (10x10x2 մմ) թույլ է տվել ստեղծել ինքնավար գործող միկրո/նանոմասնիկների տեղաշարժման ու գերման «lab-on-a-chip» համակարգ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Դրամիյան):

Փորձնականորեն հետազոտվել է ամորֆ կվարցից պատրաստված, սնամեջ գլանաձև ալիքատարի առանցքով 3.7ՄԷՎ էներգիայով էլեկտրոնների թանձրուկի շարժման արդյունքում գեներացված կոհերենտ ճառագայթման անկյունային բաշխումը հաճախությունների 10-100ԳՀց տիրույթում: Ցույց է տրվել, որ արագացուցիչներում օգտագործելով որոշակի չափերով գլանային ալիքատարներ՝ կարելի է հաճախությունների ԳՀց-SՀց տիրույթում գեներացնել հզոր ճառագայթում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Ցույց է տրվել, որ խնդրի պարամետրերի որոշակի ընտրության դեպքում դիէլեկտրիկ գնդի շուրջը պատվող ռեյատիվիստիկ էլեկտրոնների շղթան կարող է մակածել հզոր, քվադրիկոհերենտ, «ռեզոնանսային» ճառագայթում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Գրիգորյան):

Վալինի խառնուկով աճեցրած α -LiIO₃-ի միաբյուրեղների ռենտգեն-կառուցվածքային հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է, որ ստացվել է մինչ այժմ անհայտ նոր նյութ՝ Li₂IO₃H₃O (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աթանեսյան):

Առաջարկվել է կոմպլեքս դիէլեկտրական թափանցելիությամբ ջրային խառնուրդի միկրոալիքային տաքացման մեթոդ՝ էլեկտրամագնիսական դաշտի էլեկտրական բաղադրիչի հետ փոխազդեցության շնորհիվ՝ օգտագործելով օղակային ճեղքով ռեզոնատորներ: Ճեղքի չափի սահմանափակման խնդիրը լուծելու համար առաջարկվել է օգտագործել կոպլանար ունակությամբ օղակային ռեզոնատոր՝ ուժեղ ու տեղայնացված էլեկտրական դաշտի ընդլայնված շրջանով: Առաջարկվող կառուցվածքն արդյունավետ է խառնուրդից աերոգոլ ստանալու համար (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Հախումյան):

p-InSb-n-CdTe հետերոանցումային ֆոտոընդունիչի վրա ստեղծվել է CO₂ գազի օպտիկական սենսորի մակետ, որն օժտված է CO₂ մոլեկուլների նկատմամբ խիստ

արտահայտված սելեկտիվ ու շատ մեծ գազագայնությամբ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Կատարվել է նանոլարային բիո-սենսորի անալիտիկ մոդելավորում՝ օգտագործելով անցումային նանոլարային դաշտային տրանզիստորի մոդելը: Անալիտիկ հաշվարկներով ստացված արդյունքները համեմատվել են թվային սիմուլյացիաների հետ, ցույց է տրվել մոդելի բարձր ճշգրտությունը: Մշակված մոդելը հնարավորություն է տվել կանխատեսել սենսորի զգայնությունը՝ կախված համակարգի պարամետրերից (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Մշակվել և պատրաստվել է արդյունարար ռադիոլոկացիոն անդրադարձնող մակերեսի չափման համար անհրաժեշտ շարժական ստենդ: Հետազոտվել է զանազան մարմիններից, այդ թվում՝ գնդից ու անկյունային անդրադարձիչից ազդանշանի ինտենսիվության կախվածությունը թիրախի շարժման արագությունից ու ուղղությունից (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կենսաբանություն: Հայաստանի ֆլորայի համար հայտնաբերվել է բույսերի 3 նոր տեսակ՝ *Malva mauritiana*, *Alcea persarum*, *A. wilhelminae* (ղեկ.՝ Կ.գ.դ. Գ.Օզանեզովա):

Հայաստանի ֆլորայի Հիբիկազգիների ներկայացուցիչների համար պալինոտաքսո-նոմիական վերլուծության արդյունքում առաջին անգամ կազմվել է բանալի՝ կիրառելով ծաղկափոշու հատկանիշները (ղեկ.՝ Կ.գ.դ. Ա.Հայրապետյան):

Բացվել է Բուսաբանական թանգարանը, որտեղ ցուցադրվում են ՀՀ տարածքի ժամանակակից ու անցյալ երկրաբանական դարաշրջաններում աճած բրածո ու ժամանակակից բույսերը: Հայտնաբերվել և ուսումնասիրվել են Ապարան-Հանքավան ուղղությամբ գտնվող լեռնահամակարգում *Vaccinium myrtillus*, Սյունիքի մարզի Ձորաստան գյուղի մերձակայքում ռելիկտային *Dentaria quinquefolia* և Լոռու մարզում *Vaccinium uliginosum* տեսակների մեկական նոր տեղավայրեր (ղեկ.՝ Կ.գ.դ. Ի.Գաբրիելյան):

Հայաստանի Ֆլորայի սերմերի բանկում (SBAF) պահպանվում են 120 ընտանիք, 630 ցեղ, 1620 տեսակ, մոտ 2700 նմուշ, որոնցից 90-ը կարմիրգրքային տեսակներ են: Իրականացվել է միջազգային CARYOPHYLLACEAE CHECKLIST համացանցային կայքում տաքսոնոմիական ու նոմենկլատուրային տվյալների համալրում Բեռլինի բուսաբանական այգու (Գերմանիա) հետ համագործակցության շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Ներսեսյան):

Կատարվել է կենսաբազմազանության համաշխարհային տեղեկատվական ֆոնդում (GBIF) հրապարակված Հայաստան ներմուծված բուսատեսակների տվյալների բազայի համալրում, որը ներկայում ընդգրկում է շուրջ 700 օտարածին տեսակ: Արդյունքները ներառվել են Անդրկովկասի բուսականության տվյալների բազայում (Transcaucasian Vegetation Database) (ղեկ.՝ Կ.գ.դ. Գ.Ֆայվուշ):

Գնահատվել են Հայաստանի չորային շրջաններում բնիկ քսերոֆիլ գեղազարդ բույսերի՝ կանաչապատման նպատակներով օգտագործելու հեռանկարները (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա. Ղուկասյան):

Միջգիտակարգային հետազոտությունների շրջանակում առաջին անգամ փորձ է արվել գնահատել և գիտականորեն հիմնավորել «կանաչ պատի» արդյունավետությունը՝ որպես աղտոտման հետ կապված ռիսկերի նվազման միջոց: Ամփոփվել են Երևանի նախադպրոցական հաստատություններից մեկում որպես մոդելային օբյեկտ ստեղծված «կանաչ պատի» տերևների վրա նստած փողոցի ու բակի փոշու, փոշու մասնիկների (ՓՄ) հետազոտության արդյունքները: Տերևների 1915 ՓՄ-ների մանրադիտարկումը ցույց է

տվել, որ դրանց 76.6%-ը 2.5-10 մկմ չափի են, իսկ 16.2%-ը՝ ավելի փոքր: Մեքենայական ուսուցման ու կոմպոզիցիոն տվյալների վերլուծության մեթոդների համադրմամբ Si, Al, Fe, Mg, K, Cl և Ca-ի խտությունների միջոցով վեր է հանվել, որ ՓՄ-ները խմբավորվում են երկու կլաստերների մեջ՝ առաջինը կարբոնատների, երկրորդն ալյումոսիլիկատների ու երկաթի օքսիդ/երկօքսիդների հետ կապակցված: Մասնիկներում հայտնաբերվել է նաև Mo, Cu, Ba, Zn և Cr, ինչը կապված է մետաղաձուլության, տրանսպորտային արտանետումների, անվադողերի մասնիկների ու շինարարական ներկերի հետ: Փողոցի ու բակի փոշում տարրերի պարունակությունները երեխաների համար ներկայացնում են առողջական ռիսկ: Հաստատվել է, որ «կանաչ պատի» կիրառումից հետո բակի փոշում Cu-ի պարունակությունները նվազել են փողոցի փոշու համեմատ (ղեկ.՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան):

Սևանա լճի էպիլիմնիոնային շերտում լուծված թթվածնի ու օդերևութաբանական ցուցանիշների անընդմեջ չափման արդյունքների հիման վրա գնահատվել են ֆիտոպլանկտոնի համախառն առաջնային արտադրությունը, սպառման հնարավորությունները սննդային շղթայում, փոփոխման միտումները կլիմայի սպասվող տաքացման համատեքստում (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Գևորգյան):

2023թ. Սևանա լճի ֆիտոպլանկտոնի զարգացման առանձնահատկություններից էին ցիանոբակտերիաների ամառային ծաղկումների բացակայությունը, կանաչ ջրիմուռների գերակայումը, օրգանական աղտոտման ցուցիչ Euglenophyta տեսակների քանակական աճն ու արեալի ընդլայնումը: Լճի էկոհամակարգում որպես էվտրոֆացման դրսևորումներ կարելի է գնահատել աննախադեպ կառուցվածքային ու այլ փոփոխությունները (ղեկ.՝ Կ.գ.թ. Լ.Համբարյան):

Նկարագրվել է Հայաստանում հայտնաբերված ու գիտության համար նոր բզեզների 5 տեսակ և 14 նոր տեսակ այլ կենդանիների հարակից մարզերից: Նշվել են բզեզների 4 ու մլուկների 1 ինվազիվ տեսակներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Քալաշյան):

Հայտնաբերվել է սարդերի Eresidae ընտանիքին պատկանող գիտության համար նոր 1 տեսակ, գրանցվել են ՀՀ ֆաունայի համար նոր սարդակերպերի 50, Tardigrada տիպի 10 ու լիկների 23 տեսակներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Կ.Դիբարյան):

Լոռու մարզի լեռնատափաստանային ու անտառային գոտիներում գրանցվել է ջրային կենդանիների թվի կտրուկ նվազում և մոխրագույն կռունկների բոլոր բնադրավայրերի ու ջրաճահճային ֆաունայի բազմաթիվ ներկայացուցիչների անհետացում՝ կապված խոնավ բիոտոպների չկարգավորված դրենաժի հետ (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Ղասաբյան):

Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանում հայտնաբերվել են Դարևսկու իժի նոր ապրելավայրեր (ղեկ.՝ Կ.գ.թ. Լ.Աղասյան):

Տաշիրի տարածաշրջանում Հայաստանի համար առաջին անգամ հայտնաբերվել են ճագարների դիկրոցելիաների ձվեր (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Վարդանյան):

Հայաստանի ավազանային տնտեսություններում աճեցվող կարմրախայտի մոտ առաջին անգամ գրանցվել է *Bunodera luciopercae* տեսակի տրեմատոդը (ղեկ.՝ Կ.գ.թ. Օ.Շչերբակով):

Հայաստանում առաջին անգամ իրականացված *Toxoplasma gondii* գենատիպավորման արդյունքում նույնականացվել է միջին ու թույլ ախտածնությամբ օժտված երկու գենոտիպ (ղեկ.՝ Կ.գ.թ. Հ.Գևորգյան):

Մշակվել են մեթոդներ նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզի համար՝ դրանց հետագա ներմուծմամբ պեպտիդային շղթա: Արդյունքում ստացվել են նոր պոտենցիալ կենսաբանորեն ու դեղաբանորեն ակտիվ պեպտիդներ (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Գենային ինժեներիայի մեթոդներով ստացվել է ալֆա-ամիլազ արտադրող *Bacillus subtilis* ռեկոմբինանտ շտամը (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

Քիմիական մուտագենեզի ու սելեկցիայի եղանակով ստացվել են *Phaffia rhodozyma* խմորասնկի մի շարք հեռանկարային մուտանտ շտամներ, որոնք 25-28°C ջերմաստիճանի պայմաններում օպտիմալացված սննդային միջավայրերի վրա սինթեզում են մինչև 3 գ/լ արժեքավոր կարոտինոիդային պիգմենտ՝ աստաքսանտին (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Մշակվել է քիրալային միացությունների C, H, N, S էլեմենտային անալիզի հուսալի մեթոդ, որը նպաստել է կվարցե ռեակտորի շահագործման ժամկետների զգալի ավելացմանը (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Գենետիկական սելեկցիայի եղանակով՝ քիմիական մուտագենեզի կիրառմամբ, *Brevibacterium flavum* 4 (m-FP-r) շտամի հիման վրա ստացվել են 5-ֆտորտրիպտոֆանի նկատմամբ կայուն (5-FT-r) մուտանտներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Իրականացվել է կաթնաթթվային բակտերիաների ու էնտերոկոկ շտամների կողմից ֆերմենտային ակտիվության, արգինինի ու էկզոբազմաշաքարների սինթեզի համեմատական բնութագրում՝ կախված սննդային միջավայրի բաղադրությունից (ղեկ.՝ Կ.գ.թ. Ֆ.Տխրունի):

Ցույց է տրվել, որ *Pseudomonas aeruginosa* MDC5249 և *P. syringae* MDC8733 շտամները սինթետիկ սնուցող միջավայրում պահպանում են պրոտեոլիտիկ ակտիվությունը բոլոր օգտագործված սուբստրատների (կազեին, ժելատին, ֆիբրին) նկատմամբ (ղեկ.՝ Կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Մշակվել է սպեկտրոֆոտոմետրիկ եղանակով սև մոշի, սև հաղարջի, հապալասի հասուն պտուղներում ու դրանցից ստացվող լուծամզվածքներում «մերտիլենի» քանակությունը $95 \pm 2\%$ ճշգրտությամբ որոշելու վալիդացված մեթոդ (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Դադայան):

Ցույց է տրվել, որ որոշ դեղաբույսերի էթանոլային էքստրակտները, կախված խտությունից, կարող են խթանիչ ու ճնշող ազդեցություն ցուցաբերել կաթնաթթվային բակտերիաների նկատմամբ (ղեկ.՝ Կ.գ.թ. Լ.Դանիելյան):

Ստեղծվել է ազոտֆիքսող սիմբիոտիկ բակտերիաների ու ցիանոբակտերիաների արդյունավետ կոնսորցիում, որը համապատասխանաբար 1,5 և 2,0 անգամ ավելացնում է աշնանացան ոսպի ու սիսեռի բույսերի աճի ցուցանիշները (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Պղնձի խտանյութի (Արմանիս) նախամշակումը ակտիվացված ածուխի վրա իմոբիլիզացված *Leptospirillum ferriphilum* CC-ի միջոցով ստացված կենսաածին Fe^{3+} -ով թույլ է տալիս դրա հետագա կենսատարրալուծման ընթացքում կորզել մոտ 2 անգամ ավելի պղինձ (ղեկ.՝ Կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Գինու շաքարասնկերի կայուն կոնսորցիումներ կազմելու համար հայկական խաղողի տեղական սորտերի 11 նմուշներից մեկուսացվել են 15 խմորիչ կուլտուրաներ: Տարվում են նոր պրոբիոտիկ պատրաստուկի ստեղծման աշխատանքներ: Հայտնաբերվել է ամինաթթուներ արտադրող առավել հեռանկարային շտամ՝ *B. flavum* MDC5090 (ղեկ.՝ Կ.գ.թ. Վ.Բազիյան):

Տվյալների մաթեմատիկական մոդելավորմամբ դուրս է բերվել մորինգայի բերքատվության բարձրացման գծային ռեգրեսիայի հավասարումը՝ $y=161.37-1.49x$, որը ցույց է տալիս բույսի բերքատվության ու սննդալուծողությամբ NPK-ի հարաբերակցության մաթեմատիկական կապը: Այսպիսով, մորինգայի բույսերը $N_{43}:P_{35}:K_{22}$ ատոմ% հարաբերակցությամբ սննդալուծողությամբ սնուցելու դեպքում կարելի է ստանալ առավելագույն 161.37 գ/բույս չոր տերևների բերք (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Հակոբջանյան):

In vitro մշակությամբ ցանովի զաֆրանի (*Crocus sativus* L.) համար լավագույն սննդամիջավայր են հանդիսացել 3% սախարոզով 0.5 ՄՍ սննդամիջավայրերը, որտեղ ԲԱՊ 1.0 մգ/լ, ԻԿԹ և GA_3 0.5 մգ/լ խտությունները խթանել են նոր պալարասոխուկների ձևավորումը: Դեղատու հազրեվարդի (*Rosmarinus officinalis* L.) հիդրոպոնիկ ու հողային բուսահումքում ֆենոլաթթուները կազմել են հետևյալ նվազող շարքը՝ քլորոգենաթթու > ռոզմարինաթթու > գալաթթու > սրճաթթու, որտեղ քլորոգենաթթուն գերազանցել է ռոզմարինաթթվին, գալաթթվին, սրճաթթվին համապատասխանաբար, 1.4 և 1.5, 2.4 և 2.5, 2.5 և 2.8 անգամ:

Պարզվել է, որ Արարատյան դաշտում, ՀՊԻ-ի տարածքում, հիդրոպոնիկայում ու հողում մշակված մի շարք բանջարաբույսերի ու դեղաբույսերի բուսահումքը ռադիոէկոլոգիապես անվտանգ է, քանի որ գումարային β -ռադիոակտիվությունը համապատասխանում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանած ռադիոէկոլոգիական անվտանգության չափանիշներին (1000 Բք/կգ): Ընդ որում դեղաբույսերը, ըստ գումարային β -ռադիոակտիվության, հիդրոպոնիկայում ու հողում կազմել են հետևյալ նվազող շարքը՝ աշվագանդա (*Withania somnifera* L.) > նրբածաղիկ ռեհան (*Ocimum tenuiflorum* L.) > դեղատու հազրեվարդ, իսկ բանջարաբույսերը՝ կծու տաքդեղ (*Capsicum annum* L.) > սիսեռ (*Cicer Arietinum* L.) > ոսպ (*Vicia lens* Coss & Germ.) (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Բժշկական կենսաբանություն: Մարդու դոնորական արյան էրիթրոցիտներից մաքրվել է ադենոզինդեամինազ (ԱԴԱ_{էր}) ֆերմենտը: Պեպտիդիլարգինինդեամինազ 2 ֆերմենտի կիրառմամբ *in vitro* պայմաններում ցիտրուլինացվել են ԱԴԱ_{էր}-ը, ցուլի թոքից մաքրած ԱԴԱ-ն (ԱԴԱ_{ցուլ}), և դրանց նկատմամբ ստացվել են պոլիկլոնալ հակամարմիններ՝ IgG_{էր} և IgG_{ցուլ}: Հետազոտվել է նշված հակամարմինների իմունափոխազդեցությունը ռևմատոիդ արթրիտով հիվանդների սինովիալ հեղուկից մաքրած ցիտրուլինացված ԱԴԱ_{սՀ}-ի հետ: Շարունակվում են ՕԴՔԿ աշխատակիցների սինթեզած 100-ից ավելի նյութերի ազդեցության հետազոտությունները ԱԴԱ-ի ու ԴՊՊ4-ի ակտիվությունների վրա: Դրանցից 6-ը կարող են հիմք հանդիսանալ հակաշաքարախտային ու հակաբորբոքային դեղամիջոցների ստեղծման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Ինտակտ կենդանիների պլազմային հեմոստազի առանձին ցուցանիշների վրա γ -ամինակարազաթթվից, գլուտամինից, β -ալանինից ու էթանոլամին-Օ-սուլֆատից բաղկացած ամինաթթվային խառնուրդի (ԱԹ խառնուրդ) ֆունկցիոնալ ակտիվության հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ստուգիչ կենդանիների համեմատությամբ արյան ընդհանուր մակարդեղիության ու ռեկալցիֆիկացման ժամանակը չափաբաժնից կախված երկարում է մինչև 48%-ով, պրոթրոմբինային ժամանակը դանդաղում է 2-4 անգամ: ԱԹ խառնուրդն ունի անուղղակի հակամակարդիչ ֆունկցիա և կարող է կիրառվել մակարդեղիության հետ կապված հիվանդությունների այլընտրանքային բուժման ժամանակ (ղեկ.՝ կ.գ.թ. Զ.Պարոնյան):

Տարբեր կատիոնային պորֆիրինների հետ հիալուրոնաթթվի ոչ կովալենտ կապման արդյունքում ստացվել են կոմպլեքսներ պորֆիրինների ու հիալուրոնաթթվի միջև և մշակվել է չկապված միացություններից մաքրման մեթոդ: Պորֆիրինների հետ հիալուրոնաթթվի կոմպլեքսների ստացման պարզությունն ու դրանց բավականին ուժեղ փոխազդեցությունը ցույց է տվել, որ այդ կոմպլեքսները կարող են հաջողությամբ օգտագործվել ուռուցքների թիրախային ֆոտոդինամիկ թերապիայում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլխանդանյան):

K. pneumoniae կլինիկական իզոլյատների շարքում բացահայտվել է կարբապե-նեմների նկատմամբ կայունության բարձր տարածվածություն (15%): Ամբողջական գենոմի

վերլուծության արդյունքում պարզվել է կարբապենեմակայուն *K. pneumoniae* շտամների պատկանելությունը միջազգային բարձր ռիսկային կլոնների ST395 ու ST15 սերվենս տիպերին, որոնք նաև օժտված են հակաբիոտիկների նկատմամբ լայն կայունության (XDR) ֆենոտիպով (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սեդրակյան):

Գերմանիայի խաղողի սելեկցիայի ինստիտուտի հետ համատեղ իրականացվել է ՀՀ 4 մարզերի վայրի խաղողի գենետիկական ռեսուրսների մոլեկուլային նույնականացում ու փաստագրում: Նույնականացված վայրի բույսերի համար ստեղծվել են ֆենոտիպային ու գենետիկական անձնագրեր, որոնք կներբեռնվեն ՀՀ-ի Vitis տվյալների բազա (www.vitis.am) (ղեկ.՝ կ.գ.թ. Բ.Մարգարյան):

Կատարվել է *Macrovipera lebetina obtusa* օձի թույնի տարբեր բաղադրամասերի նշանակության գնահատում հեմոռագիայի առաջացման ժամանակ և դրանց սիներգիկ ազդեցության մեխանիզմների ուսումնասիրություն (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Այվազյան):

Բացահայտվել են «Դիաբեֆիտ» բուսական հավաքածուի պաշտպանիչ ներուժի ցուցիչները գլխուղեղի նեյրոնային ցանցերի ֆունկցիոնալ էլեկտրաֆիզիոլոգիական, ինչպես նաև միկրոանոթային հունի խաթարումների պայմաններում: Ստացված տվյալները ընդլայնում են խոլինէրգիկ ակտիվությամբ օժտված բուսական հավաքածուի թերապևտիկ թիրախները նյութափոխանակային համախտանիշի պայմաններում (ղեկ.՝ կ.գ.դ. Վ.Զավուշյան-Պապյան):

Բակտերիալ մելանինի (ԲՄ) հիստոքիմիական հետազոտություններից ստացված տվյալները վկայում են նրա հակաօքսիդանտ ու անոթապաշտպան ազդեցությունների մասին: Առնետների Ալցհեյմերի հիվանդության մոդելի վրա գալարմինի ազդեցության ներքո կատարված հետազոտությունները վկայում են, որ գալարմինը ցուցաբերում է անոթա- ու նյարդապաշտպան ազդեցություն (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Դանիելյան):

«Խնկածաղիկ սովորական»-ի սպիրտաջրային լուծամզվածքի հետազոտությունը ցույց է տվել հավաստի հակաբորբոքային, 5 մգ/կգ չափաբաժնով հակացավային և MCF-7 բջջային գծի վրա՝ հակաքաղցկեղային ազդեցություն (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ոսկանյան):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քիմիա: Հետերոցիկլիկ ու ալիցիկլիկ կետոնների հիման վրա մշակվել են պիրանո[3,4-c]պիրիդինի, իզոքինոլինի և 2,7-նաֆթիրիդինի օղակ պարունակող համակցված թիենո[3,2-d]պիրիմիդինների ստացման մեթոդներ:

Մշակվել են ավելցուկային ու պակասորդային հետերոցիկլեր պարունակող նոր համակարգերի՝ ֆուրո[2',3':4,5]թիենո[2,3-b]պիրիդինի և պիրիդո[3'',2'':4',5']թիենո-[2',3':4,5]ֆուրո[3,2-d]պիրիմիդինի ածանցյալների սինթեզի եղանակներ:

Ուսումնասիրվել են համակցված պիրիդինի օղակում հիդրօքսիլ խումբ պարունակող ածանցյալների ալկիլացման ռեակցիաները: Կրասնոդարի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի հետ համագործակցության շրջանակում կատարվել են քվանտա-քիմիական հետազոտություններ՝ ռեակցիաների մեխանիզմը բացահայտելու նպատակով: Համակցված պիրիդինների հիդրօքսիածանցյալների հիման վրա սինթեզվել են տետրացիկլիկ համակցված նոր հետերոցիկլիկ համակարգեր՝ թիենո[2,3-b]ֆուրո[3,2-d]- և թիենո[2,3-b]ֆուրո[3,2-e]պիրիդիններ:

Իրականացվել են սինթեզված միացությունների *in silico* հետազոտություններ ու կենսաբանական հատկությունների ուսումնասիրություններ (ղեկ.՝ ք.գ.դ. Ե. Պարոնիկյան):

ՄՄՌ սպեկտրոսկոպիայի միջոցով ուսումնասիրվել է ագետիլենի վարքը գերհիմնային միջավայրերում, մասնավորապես դիմեթիլսուլֆօքսիդում՝ KOH և NaOH հիմքերի առկայությամբ: Պարզվել է, որ ագետիլենի ^{13}C ածխածնային ՄՄՌ սպեկտրում առկա $^1\text{J}_{\text{CH}}$ սպին-սպինային փոխազդեցության հաստատունը (ՍՍՓՀ) կախված է փորձարարական պայմաններից (ջերմաստիճան, ջրի առկայություն, լուծված հիմքի կոնցենտրացիա): Մասնավորապես դիտվել է կոալեսցենցիայի երևույթ՝ ՍՍՓՀ-ի անհետացումը, որը դարձել է, ինչը վկայում է լուծույթում փոխանակման երևույթների առկայության մասին: Քվանտաքիմիական հաշվարկներով ցույց է տրվել մի քանի տարբեր փոխանակման երևույթների հնարավորություն՝ ագետիլենի ջրածնի, հիդրօքսիլ խմբի ու մետաղի միջև (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Շահխաթունի):

Բացահայտվել է բարձր էնտրոպիական (Fe,Co,Ni,Mn,Zn)O օքսիդներում կերակրի աղի կառուցվածքից շափնելային կառուցվածքի երկկողմանի լրիվ փոխարկման հնարավորությունը կայծալազմային եռակալման ժամանակ, ինչը թույլ է տվել պահանջվող միջակայքում կարգավորել արգասիքի մագնիսական ու մեխանիկական հատկությունները (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

Ֆուրյե ձևափոխման ինֆրակարմիր ու մագնիսառեզոնանսային սպեկտրաչափական հետազոտություններով բացահայտվել է, որ ուսումնասիրվող սելենօրգանական միացություններն օժտված են հակահիդրոպերօքսիդային/հակաօքսիդիչային հատկությամբ: Առաջարկվել է մոդելային լիպիդային հիդրոպերօքսիդի հետ փոխազդեցության ռեակցիայի մեխանիզմը (ղեկ.՝ ակ. Լ.Թավադյան):

Միկրոալիքային եղանակով սինթեզված բարձր արդյունավետությամբ ու ընտրողականությամբ, երկաթով դոպացված վոլֆրամի կարբիդ կատալիզատորը ցուցաբերել է 100% փոխարկում նավթի օքսիդացումային ծծմբազրկման պրոցեսում (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

Մշակվել է սերպենտին $(\text{Mg}(\text{Fe}))_6[\text{Si}_4\text{O}_{10}](\text{OH})_8$ պարունակող հանքաքարի թթվային մշակման նոր եղանակ, որոշվել են մշակման օպտիմալ պարամետրերը սերպենտինային միներալներից մագնեզիումի միացությունների բարձր ելքեր ստանալու նպատակով: Պարզվել է, որ քրիզոտիլն ուլիզարդիտն ապահովում է մագնեզիումի ավելի բարձր ելքեր, քան անտիգորիտը (ղեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Ուսումնասիրվել են $\text{Al}_2\text{O}_3\cdot\text{MeO}/\text{MeF}_2\text{-B}_2\text{O}_3\text{-SiO}_2$ (Me-Mg,Ca,Sr,Ba), $\text{BaV}_2\text{O}_5\text{-MeB}_2\text{O}_4\text{-MgF}_2$ (Me-Zn,Cd) համակարգերում ապակեգոյացումն ու ֆազային դիագրամները, ուղղորդված բյուրեղացմամբ ապակեբյուրեղների սինթեզի փուլերը: Մշակվել են ԻԿ տիրույթում թափանցիկ ապակիներ, ջերմակայուն ապակեբյուրեղներ ու կիսահաղորդիչ ապակիներ: $\text{CaO-Al}_2\text{O}_3\text{-SiO}_2\text{-Fe}_2\text{O}_3\text{-MeF}_n$ (Me-Mg,Ca,Al) համակարգի հիման վրա մշակվել են տարբեր արագությամբ ամրացող կապակցող նյութեր (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

Մշակվել է ճշգրիտ ձուլման, բարձրջերմաստիճանային ֆոսֆորական կաղապարանյութ՝ օգտագործելով β -կրիստոբալիտ, որը սինթեզվել է β -քվարցից, 1100°C ջերմաստիճանում՝ օգտագործելով հավելանյութեր: Ստացված կաղապարանյութն ունի 9 րոպե պնդացման սկիզբ, 6.1 ՄՊա սեղմման ամրություն և ապահովում է քրոմ-նիկելային ձուլվածքների հարթ մակերևույթ, հեշտությամբ անջատվում է կաղապարից (ղեկ.՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Երկրի մասին գիտություններ: Հարավ Հայկական բլոկի (CCF) մագմատիկ ու մետամորֆային ապարների երկրաքիմիական, պալեոմագնիսական ու երկրաժամանակագրական (U-Pb ու $^{40}\text{Ar}/^{39}\text{Ar}$) ուսումնասիրություններով պարզաբանվել է, որ ապարներն ունեն Գոնդվանական ծագում, իսկ վերջինիս ակտիվ՝ հյուսիսարևելյան հատվածի ռիֆթինգը սկսվել է վաղ տրիասում՝ բացելով Նեոթետիս օվկիանոսը: Մեզոզոյան ժամանակաշրջանում CCF էվոլյուցիայի համար առաջարկվել է նոր

պալեոերկրադինամիկ մոդել: Արփիի (<<) ու Նեգրամի (Նախիջևան) ուշ դևոնի նստվածքային ապարները կտրող մաֆիկ, ալկալային OIB ծագման սիլերն ունեն ~246Ma հասակ և հանդիսանում են <<Բ տակ աստենոսֆերայի հալման, իսկ Խոր Վիրապում 234Ma հասակի մաֆիկ P-MORB ինտրուզիան՝ աղքատ, մակերեսային մանթիական աղբյուրի արդյունք: Ուշ դևոնի նստվածքային ապարները կտրող անդեզիտային դայկաները՝ Արփի (~117Ma տարի), Նեգրամ (~104-126 Ma), ունեն սուբդուկցիային (հյուսիս-արևելք) բնորոշ երկրաքիմիական բնութագիր (ղեկ.՝ Ե.Գ.Պ. Խ.Մելիքսեթյան):

Սեյսմիկ 2D տոմոգրաֆիայի միջոցով նկարագրվել է Եվրասիական ու Արաբական սալերի բախման կոլիզիոն գոտում տեկտոնական ակտիվությունը (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Զ.Կարապետյան):

Իրականացվել է Տավրո-Կովկասյան տարածաշրջանում 2005-22թթ. տեղի ունեցած $M \geq 5$ մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժերի սեյսմիկ մոմենտների, ֆոկալ մեխանիզմների ու էպիկենտրոնների տարածական բաշխվածության վերլուծություն: Ցույց է տրվել, որ տարածաշրջանում տեղի ունեցած ուժեղագույն (Վան՝ 23.10.2011թ. $M_w=7.2$, Ահար՝ 11.08.2012թ. $M_w=6.4$, Դիարբեքիր՝ 24.01.2020թ. $M_w=6.8$) երկրաշարժերին նախորդել և ուղեկցել են սեյսմիկության անոմալ դրսևորման տարատեսակներ: Բացահայտվել է, որ ռեգիոնալ սեյսմադեֆորմացիոն պրոցեսները տարածաժամանակային տեսանկյունից ունեն արևելք-արևմուտք ուղղության միգրացիոն բնույթ և ուրվագծում են Արաբական սալի արևելյան Զագրոսյան, ճակատային Ուրմիա-Բիթլիս-Երզնկա, արևմտյան Արևելաանատոլական կարային գոտիները (ղեկ.՝ Ֆ.-մ.Գ.Թ. Է.Գյոդակյան):

Իրականացվել է սեյսմիկ ռեժիմի քանակական պարամետրերի ($A_{10}, \gamma, \Sigma n, \Sigma E$) միջին, երկարաժամկետ ու ընթացիկ արժեքների ժամանակային շարքերից համապատասխան բնութագրիչների ֆոնային ու ֆլուկտուացիոն արժեքները գերազանցող անոմալ ժամանակային տիրույթների տարանջատում: Բացահայտվել է, որ օպերատիվ փոփոխության հատկությամբ օժտված ($\gamma, \Sigma n$) պարամետրերը զգայուն կերպով արձագանքել են 2016-22թթ. Լազ-Աղդամի ու Կեչուտի բեկվածքների դիզյունկտիվ հանգույցում լոկալ լարվածային դաշտի անոմալ դրսևորում հանդիսացող սեյսմիկ իրադարձությունների էպիկենտրոնների տարածական խմբավորման պրոցեսին: Երկրաշարժերի ռետրոսպեկտիվ վերլուծության հիման վրա այդ տարանջատված անոմալ դրսևորումները նույնականացվել են որպես 2016թ. Դմանիսի, 2019թ. Տաշիրի, 2022թ. Մեծավանի երկրաշարժերի նախապատրաստման ու առաջացման պրոցեսների նախանշաններ (ղեկ.՝ Բ.Սահակյան):

Վերլուծվել են Հայաստանի ու հարակից տարածքներում տեղի ունեցած երկրաշարժերի էպիկենտրոնների ($M_s \geq 3.5$) բաշխվածությունը տարածության ու ժամանակի մեջ, համեմատվել են այս տարածքի տեկտոնական շարժումների հետ: Հաշվարկվել և վերլուծվել են այս երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմները: Բացահայտվել է, որ նշված տարածքում առկա են ֆոկալ մեխանիզմների գրեթե բոլոր լուծումները (տարատեսակները), և դրանք բավականին մեծ ճշտությամբ համադրվում են հիմնական խորքային բեկվածքների հետ (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Ա.Գևորգյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագիտություն: «Հայաստանը և հայությունը նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան) միջազգային համագործակցության արդյունքում ՄԳՇ-ում բարձր վարկանիշ ունեցող «Oriental Studies» (Scopus, Q1) ամսագրում հրատարակվել է Խորհրդային

Հայաստանի ու Արցախի օրինակով խորհրդային տարիներին ազգային-պետական շինարարության խնդիրներին վերաբերող հոդված, որտեղ ստույգ փաստերի վրա հեղինակները ցույց են տվել, որ ՀԽՍՀ-ն ու ԼՂԻՄ-ը պետականության բազմաթիվ հատկանիշներ ունեցող ազգային կազմավորումներ էին, որոնց հենքի վրա 1991թ. սեպտեմբերին կյանքի են կոչվել հայկական երկու անկախ պետություններ՝ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը:

Արցախյան հիմնախնդիրներին վերաբերող գիտագործնական համաժողովի զեկույցների ժողովածուում ներկայացվել են Արցախի ու Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրադրության մեջ լուծումներ առաջարկելու վերլուծություններ, հոդվածներ ու առաջարկություններ:

«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը: Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ռ.Ղազարյան) հրատարակվել է Ուրարտուի պատմությունը «Հին Մերձավոր Արևելքի Օքսֆորդի պատմությունը» (“The Oxford History of the Ancient Near East”) հատորաշարի IV հատորը, որտեղ հանգամանորեն ներկայացվել է Ուրարտուի պատմությունը՝ կազմավորումից մինչև անկումը, պետության կառուցվածքը, վարչական, տնտեսական ու ռազմական կազմակերպությունը, պանթեոնը, քննվել են ժամանակագրության ու էթնիկական խնդիրներին վերաբերող հարցեր: Սա հայ գիտական իրականության մեջ նախադեպը չունեցող երևույթ է, առաջին անգամ է, որ օքսֆորդյան կամ քեմբրիջյան նմանօրինակ հանրաճանաչ գիտական հրատարակություններում տեղ է գտել հայ գիտնականի ուսումնասիրությունը:

Կարևոր են ոչ միայն գիտական, այլև ռազմավարական տեսանկյունից մեծ նշանակություն ունեցող Աղվանքի վերաբերյալ հետազոտությունները՝ անգլալեզու «Հայկական աղբյուրները քրիստոնեության ներդրման մասին Կովկասյան Ալբանիայում և Ալբանիայի հարաբերությունները Հայաստանի հետ» (“Armenian Sources on the Introduction of Christianity to Caucasian Albania and Albania’s Relationships with Armenia”) և «Էթնիկ իրավիճակը անտիկ և միջնադարյան կովկասյան Ալբանիայում» (“The Ethnic Situation in Antique and Medieval Caucasian Albania”) Աղվանքի հին և միջնադարյան շրջանի պատմության, էթնիկ պատկերի ու դավանաբանական հարցերի վերաբերյալ, հատկապես, որ այս թեման գրեթե մեկ դար դարձել է Ադրբեջանի կողմից սեփական պատմության հնեցման, բնիկ ներկայանալու և Աղվանքի պատմամշակութային ժառանգորդության անձնագիր ձեռք բերելու քաղաքականության մաս: Ուսումնասիրությունները հրատարակել են լայն լսարան ունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված խոշոր հրատարակչությունները (“Brill”, “De Gruyter”):

«Հնագույն և հին Հայաստանի հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն» ենթաժրագրով (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Բոբոխյան) կարևորագույն ձեռքբերումներ են արձանագրվել Հայկական լեռնաշխարհի հնագույն հասարակությունների ու բնակչության հետազոտության բնագավառում: Հայ-ճապոնական արշավախմբի աշխատանքները Լեռնագոգ-1 հնավայրում (Արմավիրի մարզ) ցույց են տվել, որ Ք.ա. VIII-VII հազարամյակների սահմանին այստեղ ապրել է մի համայնք, որի բնակիչները տիրապետել են վաղ անասնապահությանն ու կավաշաղախից շինություններ կառուցելու տեխնիկային: Սա ոչ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում

հայտնի վաղ անասնապահների առաջին կայան-բնակատեղիներից է: Այս իմաստով Լեռնագոգ-1-ի պեղումներն ունեն կարևորագույն նշանակություն հին աշխարհում առաջին նստակյաց համայնքների հետազոտության գործում: Էական են նաև Արտաշատ մայրաքաղաքի հայ-գերմանական արշավախմբի պեղումներից ստացված տվյալները, որոնք նոր լույս են սփռում Հայաստանի անտիկ շրջանի մայրաքաղաքում ընթացած տարաբնույթ մշակութային, տնտեսական ու քաղաքական գործընթացների վրա, բացահայտում այդ հռչակավոր կենտրոնի՝ Մետաքսի ճանապարհով իրականացվող ընդարձակ առևտրային կապերն ու Մերձավոր Արևելքում նրա քաղաքական ու մշակութային դերակատարության մանրամասները: Առանձին արժեք է ներկայացնում Արտաշատի XVII բլրի ստորոտին բացահայտված մ.թ. II դ. մոնումենտալ քաղաքացիական կառույցը, որն իր ճարտարապետությամբ ու գործառնությամբ եզակի է, իսկ նրա հիմնադրումն ու ավերումն ուղղակիորեն կապվում են մայրաքաղաքում և ողջ Հայաստանում ընթացած քաղաքական զարգացումների հետ: Դաշտային հետազոտությունների, կենսաչափական, հնաչափական լաբորատոր անալիզների արդյունքները տեղ են գտել տարածաշրջանի (հարավ-արևմտյան Ասիա) ու հարավ-արևելյան Եվրոպայի սահմաններում կատարված հասարակական զարգացումների, միգրացիաների խնդիրները լուսաբանող ուսումնասիրություններում, որոնց զգալի մասը հրատարակվել է ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականներում ու ժողովածուներում:

Ռազմավարական նշանակության ձեռքբերումներ են արձանագրել Արցախի մշակութային ժառանգության խնդրի միջազգայնացման ոլորտում «Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» և «Կիրառական մարդաբանություն» գիտահետազոտական խմբերը (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան): Մասնավորապես գործարկվել է <https://monumentwatch.org/> եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) ակադեմիական հարթակը, որն աշխարհին է ներկայացրել Արցախի մշակութային ժառանգությունը, հետևել դրա արդի վիճակին, արձագանքել ադրբեջանական վանդալիզմի դեպքերին (ղեկ.՝ պ.գ.դ. Հ.Պետրոսյան): Բացի այդ, մոսկովյան արխիվներից ձեռք են բերվել և հետազոտվել Խորհրդային Ադրբեջանի հուշարձանների պաշտոնական ցանկերի նկարագրերն ու ադրբեջանական իշխանությունների մշակութային քաղաքականությունն Արցախում (և Նախիջևանում):

Հայաստանի մշակութային ժառանգության հանրահռչակման գործում կարևորագույն արդյունք է գրանցել Ազգագրության բաժինը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի 18-րդ միջկառավարական նստաշրջանին «Գյումրիի դարբնության ավանդույթը» հայտը գրանցվել և ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Թադևոսյան):

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Հայրապետյան) շարունակվել են պեղումները Զրաձորի բրոնզ-երկաթեդարյան ամրոց-բնակավայրի տարածքում: Հիմնական աշխատանքները կենտրոնացվել են ամրոցի արևմտյան լանջին պաշտպանված պարսպապատի ուղղությամբ: Թափված քարերը հեռացնելուց հետո ուրվագծվել է ամրոցի պարսպի հորիզոնական շարվածքը: Պեղավայրում հայտնաբերվել են բազալտե վեցանկյուն կտրվածք ունեցող պաշտամունքային սյան մնացորդներ: Պեղված նյութի մեջ գերակշռող են վաղերկաթեդարյան ու ուշերկաթեդարյան խեցանոթների բեկորները: Աներկբա է՝ ամրոցը ներկայիս տեսքը ստացել է դարերի ընթացքում՝ անընդհատ օգտագործվելով ու վերանորոգվելով:

Բացահայտվել է Աշոցքի սարահարթի բրոնզ-երկաթեդարյան ամրոցների համակարգը: Տարբեր մեծության այս պաշտպանական կառույցներն իրար հետ կապված են եղել 1.5-2 մ լայնությամբ պատաշարերով: Ցավոք, դրանք պահպանվել են կղզյակներով, քանի որ տարածքները բնակեցված են և օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նույն սարահարթում հանդիպող ցից քարերի «քարուղիները»: Այս համալիրները տարածված են Աշոցք, Հարթաշեն ու Ջուլգաղբյուր բնակավայրերի միջև: Նախնական դիտարկմամբ գործ ունենք հնագիտական մեգահամալիրների հետ, որոնց իրական նշանակությունն առայժմ բացահայտված չէ:

Հետախուզական աշխատանքներ են կազմակերպվել Շիրակի մարզի Հարթաշեն համայնքի դամբանադաշտում. կատարվել է օդալուսանկարահանում, պատրաստվել է դամբանադաշտի օրթոֆոտոալանն ու մոդելը: Հետախուզական աշխատանքներ են կազմակերպվել նաև Քեթիի դամբանադաշտում ու ամրոցում: Կատարված աշխատանքը թույլ է տալիս ենթադրել, որ Քեթիի ուշբրոնզ-վաղերկաթեդարյան ամրոցը, որի N 21 դամբանում ժամանակին երկանիվ սայլի մնացորդներ էին հայտնաբերվել, ունեցել է Շիրակի դաշտից դեպի Աշոցքի սարահարթ գնացող լեռնանցքը վերահսկող գործառույթ: Ամրոցի տարածքում օդալուսանկարահանման եղանակով ամրագրվել են ճանապարհի հիշեցնող կառույցի մնացորդներ:

Բանասիրություն: Զգալի արդյունքներ են ձեռք բերվել գրաբար-բարբառ առնչությունների քննության ուղղությամբ: «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) դիտարկվել են գրաբարին բնորոշ բառաքերականական մի շարք իրողությունների համապատասխանություններ, նաև նախագրաբարյան որոշ երևույթների արձագանքներ Ղարաբաղի բարբառում, ինչը վկայում է հնագույն ժամանակներից Արցախում հայերենի գործածության մասին: Հետազոտությունները որոշակի նյութ են տալիս ոչ միայն բարբառային հայերենի, այլև հայոց լեզվի պատմության որոշ հարցերի պարզաբանման, քերականական տարբեր կարգերի զարգացման յուրահատկությունների լուսաբանման համար: Հետազոտվել են բառապաշարի թեմատիկ մի շարք խմբերի արտահայտություններ հայերենի զարգացման տարբեր փուլերում: Նկարագրվել են բառամիավորների իմաստները, կառուցվածքն ու արտահայտման յուրահատկությունները: Բառապաշարի թեմատիկ խմբերի քննությունը կատարվել է լեզվաբանական արդի մոտեցումներով ու եղանակներով: Բառամիավորների՝ որպես օբյեկտիվ իրականության արտահայտման բազմազան ձևերի մեկնաբանությունն ունի նաև ճանաչողական նշանակություն:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Կատվայան) ուշագրավ արդյունքներ են ձեռք բերվել հայերենի բարբառային միավորների ու հատկանիշների համաժամանակյա հետազոտության ուղղությամբ: Հայ բարբառների ուսումնասիրությունը համալրվել է Սուրմալուի, Սևերեկի, Բասենի, Նախիջևանի խոսվածքների հետազոտությամբ ու նկարագրությամբ, ներկայացվել է Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը: Էական դիտարկումներ են կատարվել բարբառային առանձին միավորների հնչյունական համակարգերի վերաբերյալ: Մեծ ծավալի աշխատանք է կատարվել բառապաշարի իմաստաբանական, բառակազմական իրողությունների վերհանման ու նկարագրության, բառիմաստային թեմատիկ խմբերի ուսումնասիրության ուղղություններով: Հետաքրքրական դիտարկումներ են կատարվել արդի բարբառային լեզվի բայական համակարգի, շարահյուսական իրողությունների վերաբերյալ:

«Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Դերիկյան, բ.գ.թ. Հ.Որսկանյան) հրատարակվել է «Армения и

армяне в записках европейских путешественников. Легенды и предания эпохи раннего христианства» մենագրությունը, որտեղ գիտական շրջանառության մեջ է դրվել հայ ժողովրդի մշակութային ժառանգության պատմության վերաբերյալ չուսումնասիրված նյութ՝ ամփոփված XI-XVIII դդ. Հայաստան այցելած մի քանի տասնյակ հեղինակների ճամփորդական գրառումներում: Ֆրանսերենից, անգլերենից, լատիներենից, իտալերենից, գերմաներենից մենագրության հեղինակի թարգմանությամբ ներկայացվել են տասը լեզենդ ու ավանդություն: Եվրոպացի ճանապարհորդների արձանագրած նյութը, որ հնարավորություն է տալիս վերականգնել բանավոր ավանդության մեջ եղած, բայց գրավոր տարբերակով չպահպանված հայկական լեզենդները, արժևորվում է հայ ժողովրդի պատմական ուղու և նրա մշակութային ժառանգության նոր ու համակարգված ըմբռնման տեսակետից:

Արցախին նվիրված հետազոտությունների շրջանակում հրատարակվել է «Արցախի հայկականության ակունքները և ադրբեջանական «աղվանագիտության» կեղծիքների հերքում» աշխատությունը, որտեղ աղբյուրագիտական քննությամբ հիմնավորվել է Արցախի Գորոզճունի, Փառաճունի, Խաչյան ու Խաղբյան ազնվական տների գոյությունը, համակարգված ներկայացվել են հայ հին գրականության մեջ Արցախի ու արցախցիների մասին վկայակոչումները, ամբողջացվել են Արցախ աշխարհի գավառների մասին տեղեկությունները, հիմնավորապես հերքվել և բացահայտվել է ադրբեջանական կեղծիքը՝ աղվանացնելու հայ մշակույթի նշանավոր գործիչներին:

Տնտեսագիտություն: «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանությունը որպես ՀՀ կայուն զարգացման երաշխիք» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Մանուչարյան) բացահայտվել է, որ ժամանակին համընթաց գնալով՝ ազգային անվտանգությանը զգալի վնաս են հասցնում խոշորամասշտաբ, երկարատև կանխամտածված ու չկանխամտածված ազդեցություններն ինչպես դրսից, այնպես էլ ներսից, որոնք մեծ սպառնալիք են նաև շրջակա միջավայրին: Կանխամտածված ազդեցությունը հիմնականում էկոլոգիական ագրեսիա է տարբեր դրսևորումներով: Այն, սովորաբար, դիտարկվում է ազգային անվտանգության ռազմական բաղադրատարրի շրջանակում: Այս համատեքստում առաջարկվել է տնտեսական աճի, ռեսուրսների սպառման ու շրջակա միջավայրի աղտոտվածության միջև կապի քանակական չափման գործիք՝ դեկալիինգի (անջատման) մեթոդը, որը պարզ է դարձնում, թե արդյոք տնտեսական գործունեությունն արդյունավետ է շրջակա միջավայրին հասցված վնասը նվազագույնի հասցնելու առումով: Հիմնավորվել է կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվողականության զարգացումն ու համապատասխան ներուժի ստեղծումը, շրջանաձև տնտեսությանն անցումը, որը կարող է վերականգնել բնական համակարգերը և բարձրացնել մարդու բարեկեցությունը, ինչը կնպաստի նաև գյուղական խնդիրների լուծմանը, որը պետք է հանձն առնի կառավարությունը: Առանձնակի կարևորելով էկոլոգիական անվտանգության դերն ազգային անվտանգության ապահովման համակարգում՝ մշակվել են երաշխավորություններ, առաջին հերթին՝ այն ընդգրկել սոցիալական արժեքների ոլորտում: Այսինքն՝ էկոլոգիական անվտանգությունը պետության ռազմական անվտանգության նման պետք է լինի երաշխավորված: Իրավական տեսանկյունից էկոլոգիական անվտանգության սոցիալապես երաշխավորված նվազագույնի իրավունքը պետք է լինի համընդհանուր ու բոլորի համար հավասար:

«Հանքարդյունաբերության զարգացման հեռանկարներն ու Հայաստանի Հանրապետությունում վերջնական արտադրանքի ստացմանն ուղղված միջոցառումների մշակման հնարավորությունները» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Ե.Հակոբյան) մշակվել է ՀՀ հանքարդյունաբերական վերջնական արտադրանքի ստացմանն ուղղված միջոցառում-

ների ներդրման փաթեթ, կայուն հանքագործական արդյունաբերության տեսանկյունից միջազգային փորձի վերլուծության արդյունքում հիմնավորվել է օրենսդրական փոփոխությունների շրջանակը, բացահայտվել է հանքարդյունաբերությունում առաձգականության ու արտադրողականության միջև կապը, հստակեցվել են ոլորտի զարգացման առաջնահերթությունները:

Փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, քաղաքագիտություն: «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» թեմայի շրջանակում (ղեկ.՝ քաղ.գ.թ. Է.Օրդուխանյան) իրականացվել են հետազոտություններ գիտական 4 ուղղություններով (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն):

Միջգիտակարգային հետազոտությունների համատեքստում ներառվել են հայ փիլիսոփայության տեսության ու պատմության, իրավունքի պատմատեսական արդի հիմնախնդիրների, հայկական պետականության իրավական-փիլիսոփայական հարցերի, ՀՀ-ում, հարավկովկասյան ու մերձ տարածաշրջաններում տեղի ունեցող առանցքային սոցիալ-քաղաքական գործընթացների և արդի մարտահրավերների ուսումնասիրությունները՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական ու ժողովրդագրական նոր տեղաշարժերն ու փոփոխությունները:

Առանձնակի կարևորություն ունեն 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ փիլիսոփայական-քաղաքական մտքի ականավոր գործիչների, մասնավորապես Լ.Շանթի, Մ.Օրմանյանի, Մ.Մամուրյանի աշխատությունների ուսումնասիրությունը, ֆրանսերեն-հայերեն իրավաբանական եզրույթների բառարանը (շուրջ 35000 բառ ու արտահայտություն), որն իրավունքի բնագավառում ֆրանսերենից հայերեն առաջին ծավալուն մասնագիտական բառարանն է հայ իրականության մեջ, «Գանձանակ հայ քաղաքագիտական մտքի և Հայաստանի քաղաքական պատմության» IV, V, VI պրակների տպագրությունը, որտեղ ներկայացվել ու համապարփակ քննության են ենթարկվել հայ երկրառազմավարական մտքին, արմենոցիդի ներքին ու արտաքին ծալքերին և «Հայկական խաչմերուկին» վերաբերող հարցերը հայ քաղաքական մտքի շրջանակում, ՀՀ-ում խորհրդարանական կառավարման համակարգի զարգացման, սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մշակման վերաբերյալ ամբողջական հետազոտությունները՝ հաշվի առնելով միջազգային արդյունավետ փորձն ու ՀՀ առանձնահատկությունները:

Ինստիտուտում ստացված կարևորագույն գիտական արդյունքները տպագրվել են մենագրություններում, միջազգային հեղինակավոր WoS և Scopus գիտաչափական շտեմարաններում ընդգրկված հանդեսներում:

Արվեստագիտություն: «Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ արվ.դ. Ա.Ասատրյան) շարունակվել են ժամանակակից արվեստի ուսումնասիրման աշխատանքները: Առաջին անգամ իրականացվել է Հովհ.Չեքիջյանի կյանքի ուղու, կատարողական գործունեության, խմբավարական ու դիրիժորական արվեստի համակողմանի ուսումնասիրություն, ներկայացվել է նրա բացառիկ ներդրումը հայ երգչախմբային արվեստի զարգացման գործում, բացահայտվել են խմբավարական ու դիրիժորական արվեստի կատարողական առանձնահատկությունները:

Ուսումնասիրվել է ճարտարապետ Հովհ.Քաջազունու ստեղծագործական գործունեությունը (ղեկ.՝ ճարտ.դ. Լ.Դոլուխանյան), շրջանառության մեջ են դրվել նրա մասնագիտական գործունեությանը վերաբերող հոդվածներ ու արխիվային վավերագրեր:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԿՄԿ միջազգայնացման գործընթացն ակտիվ վերելք է գրանցել և՛ գործընկեր կազմակերպությունների, և՛ միջազգային շարժունության առումներով: Մասնավորապես կնքվել է 17 միջազգային ու արտաքին համագործակցության համաձայնագիր, հուշագիր ու պայմանագիր տարբեր բուհերի, գիտական և այլ կազմակերպությունների հետ:

Կենտրոնը համագործակցել և բազային ամբիոններ է տեղակայել գիտա-արտադրական կազմակերպություններում ու ընկերություններում՝ «Ինստիտյուտ» ՓԲԸ, «Ինժեներական ասոցիացիա» ՀԿ: «Ավիատիեզերական ճարտարագիտություն» ամբիոնը բազավորվել է Ինժեներական քաղաքում, իսկ «Համակարգչագիտություն և ինքնավար համակարգեր» ամբիոնը՝ «Ինստիտյուտ» ընկերությունների խմբում:

Դիտարկելով բարձր տեխնոլոգիական ու ճարտարագիտական ոլորտներում առկա մարտահրավերները, ինչպես նաև ուսումնասիրելով և գնահատելով աշխատաշուկայի ներկայիս պահանջարկները, առկա աշխատատեղերն ու հետագա զարգացման հնարավորությունները՝ ԳԿՄԿ «Ինժեներական ասոցիացիայի» հետ համատեղ մշակել և իրականացնում է «Ավիատիեզերական սարքաշինություն» մագիստրոսական նոր կրթական ծրագիրը: Տիեզերական տեխնոլոգիաների ու տիեզերական գործունեության ոլորտները ներկայում ակտիվորեն զարգանում են ամբողջ աշխարհում՝ ապահովելով պետական անվտանգության, աղետների կանխարգելման, կլիմայի փոփոխությունների մշտադիտարկման, հողային ռեսուրսների կառավարման և մի շարք այլ խնդիրների լուծումներ: «Ավիատիեզերական սարքաշինություն» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն այնպիսի մասնագետների պատրաստումն է, որոնք օժտված կլինեն ապագայի՝ ավիատիեզերական համակարգերի ու տեխնոլոգիաների բնագավառների արժեքավոր գիտելիքներով, որով և կնպաստեն ՀՀ համար թիրախային հանդիսացող ոլորտի զարգացմանն ու մասնագիտական աշխատատեղերի ստեղծմանը: «Տեղեկատվական համակարգերի մշակում» մագիստրոսական կրթական ծրագիրը նպատակ ունի իրականացնել նախագծահեն հետազոտություն պետությունից ու ընկերություններից ստացված և «Ինստիտյուտ» ԳՀԶԿ կողմից հաստատված իրական նախագծերի շրջանակում: Ուսուցումն իրականացվում է իրական նախագծահեն սկզբունքով՝ առցանց նյութերից օգտվելով, իսկ գործնական աշխատանքը կատարում են նախագծի շրջանակում հետազոտություններ կատարելով:

ԳԿՄԿ-ն շարունակում է հրատարակել «Կաճառ» գիտական պարբերականը (ընդգրկվել է ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հայաստանյան գիտական պարբերականների ցանկում), «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսը: ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմը տպագրել է 1 ուսումնական դասագիրք (երաշխավորված ՀՀ ԿԳՄՍՆ կողմից), 46 գիտական հոդված (7-ը «Scopus» ու «Web of Science» շտեմարաններում ընդգրկված գիտական պարբերականներում):

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Կազմակերպությունը 2019թ. հրատարակում է «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես» գիտական պարբերականը, 2023թ. հրատարակվել են պարբերականի 9-րդ ու հոբելյանական 10-րդ համարները (ներառվել է 31 հոդված):

Leica ֆիրմայի արտադրության RTC360 մակնիշի լազերային սկաներով համակարգը համալրվել է Cyclone 3DR ծրագրային ապահովումով, որը հնարավորություն է ընձեռում

լազերային սկաների միջոցով դաշտային պայմաններում իրականացնել շինարարատեխնիկական ու էկոլոգիական հետազոտություններ:

Ձեռք է բերվել «Regula 4307» մոդելի տեսապատկերային համեմատական սարքավորումային համալիր, որը հնարավորություն է տալիս իրականացնել 3D մոդելավորում, ավտոմատ եղանակով կնիքների, դրոշմների համեմատական հետազոտություններ և նույնականացում:

Կազմակերպությունը համալրվել է ժամանակակից գերզգայուն անալիտիկ սարքով՝ եռակի քառաբևեռ մասսպեկտրաչափի հետ համակցված հեղուկային քրոմատոգրաֆով՝ համապատասխան լրակազմով, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել փորձագիտական, մասնավորապես մարդու օրգանիզմի կենսամիջավայրերում՝ մեզի, արյան, մազի, եղունգների, քրտինքի, թքի մեջ ու ներքին օրգաններում թմրանյութերի, նյութերի ու դեղամիջոցների որակական ու քանական հետազոտություններ:

Կազմակերպությունն իրականացրել է շուրջ 16.000-ից ավել փորձագիտական հետազոտություն ու դրանցում ստացել գիտականորեն հիմնավորված արդյունքներ:

Կազմակերպության փորձագետները մասնակցել են Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) անցկացրած համաժողովներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին, աշխատաժողովներին, որակավորման ստուգման թեստերին ու ընթացիկ այլ աշխատանքներին:

Կազմակերպությունում առանձին ուղղություններով մշակվել և ներդրվել են հետազոտությունների նոր մեթոդներ ու մեթոդիկաներ, շարունակվել են համապատասխան հետազոտական ուղղություններով տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները:

Կազմակերպությունը եղել է 4 միջազգային գիտաժողովի համակազմակերպիչ, համագործակցության հուշագրեր է ստորագրել Ուզբեկստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատափորձագիտական հանրապետական կենտրոնի և Շվեյցարիայի ձեռագրաբանական գիտությունների ինստիտուտի (IHS) հետ:

Շարունակվել է կազմակերպության փորձագետների մասնակցությունը Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) փորձի փոխանակման ծրագրին և այլն:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ուսումնասիրվել են ամպային ենթակառուցվածքների ու նրանցում աշխատող ծրագրերի մոնիթորինգի, աշխատանքի արդյունավետության, խափանումների կանխատեսման ու դասակարգման խնդիրներ: Դիտարկվել են մոնիթորինգի արդյունքում հավաքված տվյալների տարբեր տեսակներ՝ ժամանակային շարքեր, ծրագրերի հետքեր և լոգ-տվյալներ: Կիրառվել են մեքենայական ուսուցման մեթոդներ՝ ելնելով տվյալների մեծ քանակությունից ու ավտոմատացման անհրաժեշտությունից: Առաջարկված լուծումները հնարավորություն են տալիս ժամանակին կանխարգելել խնդիրները կամ դրանց առաջացման դեպքում հասկանալ խնդրի ծագման աղբյուրն ու արագ վերացնել այն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան):

Նկարագրվել է HLSD-ի գեներացման տեխնիկան տեքստային ֆորմատի սկզբնական կոդի համար, որը ռենդերինգի ժամանակ առաջացնում է տեսողական բովանդակության ցուցադրում: Սկզբնական կոդի ռենդերինգն առաջացնում է տեսողական սկզբնական էլեմենտների ծառի հիերարխիա, որը տրամաբանորեն հնարավոր է արտապատկերել ցանկացած գրաֆային ծառի վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Առաքելյան):

Գրավիտացիայի երկչափ ուռուցիկ աղբյուրը վերականգնվում է կիսահարթությունների միավորման վրա իր պոտենցիալ ֆունկցիայի ընդունած արժեքների միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Վաղարշակյան):

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կատարված տեսական հաշվարկներով, ինչպես նաև ուղղակի փորձերով հաստատվել է, որ u' հոսուն-պլաստիկ, u' կոշտ կոնսիստենցիաների վիճակներում գտնվող կավային գետնահողերի սահքի դիմադրության ցուցանիշները ոլորման եղանակով ստանդարտ մեթոդով որոշման դեպքում ստացվում են ավելի ցածր, քան դրանք կինեմատիկական ռեժիմով փորձարկման եղանակով որոշելիս (ղեկ.՝ ե.գ.դ. Ս.Հայրոյան):

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կիբեր հարձակումները կանխելու համար մշակվել և ներդրվել են հետևյալ տեխնոլոգիաները՝ NEMO՝ նախատեսված DDOS հարձակումները հայտնաբերելու ու կանխելու համար, MISP՝ նախատեսված Կիբեր խոցելիությունների հայտնաբերման, մշակման ու տարածման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Աբրահամյան):

Մշակվել և ընդլայնվել են ռազմադաշտի RGT Solver-ները՝ թռիչքի ընթացքում ստացված պատկերների համար մշակվել է մոդել 8 ռազմական տարբեր միավորներ դասերի ճանաչման համար, իսկ ռազմական միավորների խմբերը մշակվել են ռազմական փորձագետների հետ, փորձագիտական գիտելիքների ձեռքբերմամբ ընդլայնվել են օգտագործված դասակարգիչները, որոնք ընդգրկում են միջուկային, հիմնական դասակարգիչներ, գործողություններ, նպատակներ, պլաններ, ընդլայնվել է ռազմադաշտերի

իրավիճակների նկարագրությունը RGT Solver-ներում առկա եղանակներով՝ հիմնվելով անհրաժեշտ միջուկային դասակարգիչների վրա:

Առկա պլանավորման ու որոշումների կայացման ալգորիթները կիրառվելու են գործողություններ առաջարկելու համար, որն ընդլայնում է որոշում կայացնելու հնարավորությունները՝ ընդգրկելով գիտելիքահեն TZT և PPIT ալգորիթները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Է.Պողոսյան):

Հետազոտվել են գոյություն ունեցող ստանդարտ անիմացիաների շտեմարանները (Adobe Mixamo, Blender)՝ ըստ եռաչափ մոդելներին ավտոմատ շարժունակություն հաղորդելու նպատակով կիրառության հարմարության: Հետազոտական նպատակով ստեղծվել են անիմացիաներ: Adobe Mixamo շտեմարանի հիման վրա ստեղծվել է ծրագրային համակարգ, ինչը թույլ է տալիս իրական ժամանակում նշված շտեմարանից ցանկացած անիմացիայի կիրառումը տրված եռաչափ ոսկրային համակարգ ունեցող մոդելի վրա: Լավարկվել են նախկինում մշակված ծրագրային նախատիպերը, որոնք թույլ են տալիս հատուկ դիրքով (A-Pose) կանգնած մարդու մոդելին ավելացնել ոսկրային համակարգ: Ստեղծվել է հավելվածի ծրագրավորման ինտերֆեյս (API) P13D-8 և P13D-12 տեսակի եռաչափ սկաներների կառավարման, կարգավորման, դրանցից ստացված տվյալների մշակման ու արդյունքում եռաչափ մոդելների ստացման համար: Վերը նշված մոտեցումների արդյունքում ստեղծվել է ծրագրային փաթեթ, որն ապահովում է «ռեալ մարդու սկանավորում – եռաչափ մոդելի ստացում – ոսկրային համակարգի հաշվարկ – անիմացիայի կիրառում – ընդլայնված ու վիրտուալ իրականության (AR/VR) աշխարհներում ավելացում» ողջ շղթան (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Աբրահամյան):

ASNET-AM ցանցում գործող eduroam ծառայության հնարավորությունների ընդլայնման նպատակով հետազոտվել են freeradius-ի կարգավորումների նոր հնարավորությունները, փորձարկվել է դրանց աշխատանքը: Շարունակվել են ASNET-AM ցանցի MEET.ASNET.AM տեսակոնֆերանսների ծառայության զարգացմանն ուղղված աշխատանքները, մշակվել և ավելացվել են համակարգի նոր հնարավորություններ: Ուսումնասիրվել են ASNET-AM ցանցում գործող SSL հավաստագրերի կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված համակարգի հնարավորությունների ընդլայնման տարբերակները ACME2 արձանագրության կիրառմամբ: Հետազոտվել են ASNET-AM ցանցում գործող DNS համակարգի զարգացման հնարավորությունները: Մշակվել են փոխկապակցված DNS master, slave և resolver սերվերների տարաբաշխված համակարգի թարմացման փորձնական տարբերակները: Բոլոր արդյունքները ներդրվել են ASNET-AM ցանցում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Պետրոսյան):

ASNET-AM ցանցի կայունությունն ու արագագործությունն ապահովելու համար կատարվել են վերակարգավորման աշխատանքներ բոլոր երթուղավորիչների հետ: Կատարվել են փոփոխություններ ներքին կառուցվածքի, երթուղավորման չափանիշների, դինամիկ OSPF արձանագրությունների կարգավորումների հետ: Ցանցային մոնիթորինգային համակարգը բարելավելու նպատակով փորձարկվել է Zabbix համակարգը: Կիրառվել է Telegram bot ֆունկցիան որպես տեղեկացման համակարգ: Բոլոր արդյունքները ներդրվել են ASNET-AM ցանցում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ռ.Թադևոսյան):

«ՀԻՊՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Մեծացվել է ջրանցքներում ջրի ծախսի չափման «արագություն-մակերես» մեթոդի ճշտությունը, որը տալիս է զգալի տնտեսական ու բնապահպանական արդյունք,

մասնավորապես կապված Սևանա լճից բաց թողնվող ջրի քանակի հետ (ղեկ.՝ Ա.Սիմոնյան):

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Շարունակվել են նոր ծրագրային փաթեթի ու դիտողական նյութի մշակման նոր մեթոդների ստեղծման աշխատանքները: Կատարելագործվել է նաև ավտոմատ կարգով (pipe line) մշակման փաթեթը, որը հնարավորություն է ընձեռում մշակել ամբողջ գիշերվա ընթացքում ստացված գիտական պատկերները՝ օգտագործելով բազմաթիվ լրացուցիչ պատկերներ (bias, flat-field, dark ets.) (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Հայ-ռուսական համատեղ կայանում 240 դիտողական գիշերների ընթացքում ընդհանուր առմամբ կատարվել է 537.000 չափում, վերականգնվել է 570 ուղեծիր արհեստական արբանյակների համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել է մետաղական իրերի դետեկտման համակարգ՝ հիմնված ալկալի մետաղի գոլորշու բջջում լազերային ճառագայթման ու ատոմների ռեզոնանսային փոխազդեցության մագնիսաօպտիկական երևույթի վրա: Զրոյական մագնիսական դաշտում գրանցված ազդանշանը մաքսիմալ է, այն կտրուկ նվազում է 10 մԳս կարգի մագնիսական դաշտում: Այդ ազդանշանն ակտիվ հետադարձ կապով ղեկավարում է 2 մ տրամագծով Հելմհոլցի 3D կոճերի համակարգը՝ մշտապես փոխհատուցելով արտաքին մագնիսական դաշտը: Մետաղական իրի շարժումը բերում է դաշտի կոնֆիգուրացիայի փոփոխման՝ ձևավորելով ահագանգի ազդանշան (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Պապոյան):

Մշակվել է օպտիկապես թափանցիկ դաշտային տրանզիստորի (ԴՏ) ստացման եղանակ: Շափյուղայի տակդիրի վրա ակցեպտորային $ZnO:Li$ ու դոնորային $ZnO:Ga$ շերտերի դիֆուզիոն փոշենստեցման միջոցով ձևավորվել են ԴՏ ակունքն ու հոսարանը: ԴՏ փականի մեկուսիչը ստեղծվել է MgF_2 դիէլեկտրիկ շերտի միջոցով, որի վրա նստեցվել է բարձր հաղորդականությամբ $ZnO:Ga$ շերտը: Ստացված թափանցիկ ԴՏ ունի բարձր ելքային հզորություն, ըստ հոսանքի՝ մեծ ուժեղացման գործակից, բարձր ՕԳԳ ու փոքր չափեր: Մեթոդը ստացել է ՀՀ արտոնագիր (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ռ.Հովսեփյան):

ՃՓՀ24 սպեկտրաֆոտոմետրով ու National Instruments USB6002 DAQ սարքով կոմբինացիոն ցրման ու լյումինեսցենցի ճառագայթումները գրանցելու համար մշակվել է անհրաժեշտ ծրագրային ապահովման ալգորիթմը: Թեստային չափումների հիման վրա իրականացվել են ծրագրի ճշգրտումներ: Համակարգը հնարավորություն է տվել բավարար ճշգրտությամբ կատարել 473 նմ ալիքի երկարությամբ գրգռող լազերի միջոցով հարուցված լույսի թվային եղանակով գրանցում (ղեկ.՝ ակ. Ռ.Կոստանյան):

Հետազոտվել է երկաթի ֆտալոցիանինի ($FePc$, $Pc=C_{32}N_8H_{16}$) ու ֆերոցենի ($FeC_{10}H_{10}$) պինդֆազային պիրոլիզի եղանակով սինթեզված ($Fe-Fe_3C$) ու ($Fe-Fe_3O_4$) «միջուկ-թաղանթ» կառուցվածքով ֆեռոմագնիսական նանոմասնիկների ջրային լուծույթի տաքացման վարքը 350 կՀց հաճախությամբ ու 200 է լայնությամբ փոփոխական մագնիսական դաշտում: Ցույց է տրվել այդ նանոնյութերի կիրառելիության հնարավորությունը մագնիսական գերտաքացման համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Մանուկյան):

ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈՔԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել և ստեղծվել է ռենտգենյան միկրոտոմոգրաֆի նոր ծրագրային փաթեթ, որը հնարավորություն է տվել նմուշների եռաչափ պատկերների ներքին կառուցվածքների վիզուալիզացիայի համար առանձնացնել տարբեր խտությամբ տիրույթներ, միաժամանակ դիտել տարբեր կտրվածքներ ու կամայական հատույթներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ իրականացվել են սեյսմիկական-ակուստիկական ալիքների նոր դասի փոխակերպիչ գրանցիչ համակարգի ստեղծման հետազոտություններ (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Մկրտչյան):

Մշակվել է բյուրեղների աճեցման նոր մեթոդ, պատրաստվել են համապատասխան բյուրեղարարներ, որոնցում աճեցվել են կիրառության համար հեռանկարային, օպտիկական որակի, մեծ չափերի միաբյուրեղներ: Մշակված նոր տեխնոլոգիան արտոնագրվել է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Սուքիասյան):

Կատարվել են ապակիների ստացում գերարագ սառեցման եղանակով և հետագա բյուրեղացում՝ $\text{BaO}(\text{CaO}, \text{SrO}) - \text{TiO}_2 - \text{B}_2\text{O}_3$ համակարգում նոր սեգնետոէլեկտրիկ նյութերի ստացման նպատակով: Արդյունքում ստացվել է նոր սեգնետոէլեկտրիկ նյութ՝ $\text{Sr}_3\text{Ti}_3\text{B}_2\text{O}_{12}$ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Արամյան):

Ինֆրաձայնային տիրույթի ալիքների գրանցիչների տվյալների ճշգրտման նպատակով մշակվել ու ստեղծվել են մինչև 120ԴԲ կարգավորվող ելքային հզորությամբ ակուստիկական ալիքների աղբյուրներ մինչև 20Հց, մինչև 100Հց ու մինչև 1կՀց հաճախությունների տիրույթների համար (ղեկ.՝ Ա.Առաքելյան):

Ինստիտուտում մշակված ու ստեղծված ինֆրաձայնային տիրույթի ալիքների գրանցիչ-փոխակերպիչների ելքային ազդանշանների հեռահաղորդման նպատակով ստեղծվել են ուղղորդված 300 բացվածքով հաղորդիչներ ու ընդունիչներ (ղեկ.՝ Վ.Բադոյան):

Մթնոլորտում ջրագոյացությունների առաջացման ու ցրման նպատակով ստեղծվել է կարգավորվող ելքային հզորությամբ նոր դասի ակուստիկական համակարգ (ղեկ.՝ Կ.Եղիազարյան):

Մշակվել է 532Նմ ու 1064Նմ ալիքի երկարության 50Վտ հզորության լազերային համակարգ՝ բժշկական ֆիզիկայի բնագավառում նախատեսված հետազոտություններ իրականացնելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Նալբանդյան):

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել և պատրաստվել է արդյունարար ռադիոլոկացիոն անդրադարձնող մակերեսի չափման համար անհրաժեշտ շարժական ստենդ: Հետազոտվել է զանազան մարմիններից, այդ թվում՝ գնդից ու անկյունային անդրադարձիչից ազդանշանի ինտենսիվության կախվածությունը թիրախի շարժման արագությունից ու ուղղությունից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան):

p-InSb-n-CdTe հետերոանցումային ֆոտոընդունիչի վրա ստեղծվել է CO_2 գազի օպտիկական սենսորի մակետ, որն օժտված է CO_2 մոլեկուլների նկատմամբ խիստ արտա-հայտված սելեկտիվ ու շատ մեծ գազազգայնությամբ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Ֆիզիոթերապևտիկ նշանակության սարքի համար մշակվել և փորձարկվել են տարբեր կայունությամբ, մասնավորապես հայելային հոսանքի աղբյուրներ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ն.Եզակյան):

Կատարվել են ազնիվ մետաղների (ոսկու, արծաթի, պլատինի) նանոմասնիկներով հարստացված լուծույթների ուսումնասիրություններ միկրոալիքային սենսորի միջոցով, 8–12 ԳՀց հաճախային տիրույթում: Միկրոալիքների փոխազդեցությունը նշված լուծույթների հետ բնորոշվում է մեծ զգայնությամբ, լուծույթում նանոմասնիկների խտության ու նրանց չափերի, ինչպես նաև հեղուկի մոլեկուլների կլաստերային կառուցվածքի նկատմամբ, հաճախականության ռեզոնանսային արժեքների ժամանակ: Հայտնաբերվել է, որ խտության մինիմալ չափով սահմանը կազմում է 0.01 մինչև 0.05 մկգ/մլ: Արդյունքները նաև ցույց են տվել չափիչ ազդանշանի միջինացված արժեքի գծային կախվածությունը նանոմասնիկների չափերից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Մշակվել է հատուկ նշանակության տեխնիկայի հանգույցների վերականգնման ու բարելավման, ինչպես նաև դրանց պարամետրերի չափման մեթոդիկա: Այն կիրառվել է C-300 զենիթահրթիռային համակարգի անտենային հանգույցի վերականգնման համար: Մշակվել և պատրաստվել է մեխանիկական սինուսոիդալ (մինչև 600 Հց) հաճախությամբ թրթռականության փորձարկումների համակարգ, որի գրգռիչն ու ուժեղարարը հիմնված են ժամանակակից հաճախային փոխակերպիչի վրա: Մշակվել է արագացման անուղղակի չափման մեթոդիկա, հետազոտվել է համակարգի մեխանիկական հաճախային բնութագիրը (ղեկ.՝ Ն.Պողոսյան):

Մշակվել և պատրաստվել են Ku, X, C ու S հաճախային տիրույթների ռադիոմետրերի ԳԲՀ մուտքային հանգույցների նախանմուշներ գյուղատնտեսության ու շրջակա միջավայրի հետազոտման, հատուկ նշանակության համակարգերում օգտագործման համար: Մշակվել և պատրաստվել է երկու ֆեռոզոնոդով մագնիսական տվիչի նախանմուշ (ղեկ.՝ Կ.Դադայան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Շարունակվել են սննդամթերքի սպառման և քիմիական վտանգների պարունակության տվյալների համադրման միջոցով ներգործության ու ռիսկի գնահատման, բնութագրման աշխատանքները: Ուսումնասիրված մեղրի նմուշների, ՀՀ-ում արհեստական լճակային տնտեսություններում աճեցված ձկան որոշ նմուշներում հայտնաբերվել են հակամանրէային նյութեր (նիտրոֆուրանի մետաբոլիտների մնացորդային պարունակություններ), սակայն ռիսկի գնահատման արդյունքները ցույց են տվել, որ դրանց սննդակարգային ներգործությամբ պայմանավորված հանրային առողջապահական խնդիրներ չկան: ՀՀ-ում արտադրված մեղրի մեջ ուսումնասիրված 10 հակաբիոտիկից հայտնաբերվել են տետրացիկլինի, սուլֆադիազինի, բենզիլպենիցիլինի, ստրեպտոմիցինի ու սալինոմիցինի մնացորդային պարունակություններ: Բնակչության համար հակաբիոտիկների ներգործությամբ պայմանավորված քրոնիկ ռիսկերը գտնվել են թույլատրելի տիրույթում, այնուամենայնիվ դրանց առկայությունը կարող է խոչընդոտել մթերքի արտահանման գործընթացը (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի ստեղծման նպատակով շարունակվել են Հայաստանում արբանյակային լուսանկարների հավաքագրման ու մշակման բազմաչափ տեղեկատվական համակարգի (տեղեկատվական խորանարդ) (<http://datacube.sci.am>) ստեղծման աշխատանքները Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և Ժնևի համալսարանի (Շվեյցարիա) հետ:

Համակարգի շտեմարանը ներառում է Landsat ու Sentinel արբանյակային լուսանկարները և պարբերաբար թարմացվում է: Փորձ է արվել համակարգում ներդնել Sentinel 5P արբանյակային պատկերների վիզուալիզացման ու մշակման ծառայություն (ղեկ՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂՐՈՒԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շարունակվել են Սևանա լճի կենսաոռոտությունների գնահատման աշխատանքները.

- 2023թ. սիգի արդյունագործական ընդհանուր պաշարը լճում կազմել է 513.11 տ, որը մոտ 100 տ ցածր է 2022 թ. ցուցանիշից: Սիգի որսի թույլատրելի որսաչափը 2024թ. գարուն-ամառ ժամանակահատվածի համար սահմանվել է 257 տ, որը կազմում է արդյունագործական պաշարի մոտ 50%-ը (ղեկ՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

- Խեցգետնաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ Սևանա լճում խեցգետնի կենսազանգվածը նախորդ տարվա համեմատ աննշան աճել է՝ դառնալով 95 տոննա: Պոպուլյացիայի սահմաններում հիվանդ կենդանիների մասնաբաժինը մնացել է գրեթե անփոփոխ՝ 6.4%: Խեցգետնի անօրինական որսը լճում շարունակվում է: Լճի խեցգետնաարդյունավետությունը վերականգնելու նպատակով առաջարկվել է արգելել խեցգետնի որսը լճում (ղեկ՝ կ.գ.թ. Է.Ղուկասյան):

Մշակվել է ակտիվ ռեկրեացիոն գոտիների փոքր լեռնային գետերի ավազանում մշակութային էկոհամակարգային ծառայությունների ներուժի գնահատման մեթոդաբանություն (ղեկ՝ կ.գ.թ. Վ.Ասատրյան):

Ստեղծվել է ջրիմուռների հավաքածու (27 ցեղի 180 տեսակ), որն անջատվել է Սևանա լճի ափամերձ ու խորքային հատվածների ջրային նմուշներից (ղեկ՝ կ.գ.թ. Ա.Մամյան):

Հայաստանի հյուսիսային որոշ գետերի ու Սևանա լճի արևելյան ափի ռեկրեացիոն գոտուց վերցված նմուշներում հաստատվել է մարդու առողջության համար վտանգ ներկայացնող նախակենդանիների առկայությունը: Շահառու կազմակերպությունների համար մշակվել են ջրի նմուշների մշտադիտարկմանը վերաբերող առաջարկություններ (ղեկ՝ կ.գ.թ. Հ.Գևորգյան):

Գնահատվել է որսի օբյեկտ հանդիսացող կենդանատեսակների պոպուլյացիաների վիճակը, ՇՄ նախարարությանն են տրամադրվել 2023-24թթ. որսաշրջանի համար թույլատրված որսատեսակների ցուցակը, չափաքանակների, տարածքների ու ժամկետների վերաբերյալ տվյալները (ղեկ՝ կ.գ.թ. Մ.Ղասաբյան):

Հ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎ. ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հետազոտվել և մշակվել են լեկտինների վրա հիմնված տրանսպորտային համակարգեր՝ քաղցկեղային ու բակտերիալ բջիջներին դեղամիջոցների թիրախային առաքման նպատակով: Համակարգը կազմված է ցորենից անջատած բակտերիա ճանաչող լեկտինից ու հակաբիոտիկներով լիցքավորված ֆերիտինից: Նման համակարգը մոտ 10 անգամ ավելի արդյունավետ է, քան սովորական հակաբիոտիկը: Սինթեզվել են քաղցկեղային բջիջների տեսանելիության ու թերապիայի համար հեռանկարային Se տիպի AuSe, AgSe, ZnSe, CuSe, խիտոզան-Se նանոմասնիկներ, ուսումնասիրվել են դրանց ֆլյուորեսցենտային հատկությունները (ղեկ՝ կ.գ.թ. Վ.Գասպարյան):

Ուսումնասիրվել և ընտրվել են պրոբիոտիկներ Lactobacillus acidophilus INMIA 9602, L.rhamnosus V 300, L.casei VKPM B-7657 շտամները, որոնք աճեցվել են կաթի, կաթնային շիճուկի ու MRS Broth սննդամիջավայրերում, որոշվել են բակտերիաների թիվն ու հակա-

մանրէային հատկությունները: Այդ շտամների կողմից սինթեզված բակտերիոցինները ցուցաբերել են բարձր հակամանրէային հատկություններ *Staphylococcus aureus*, *E.coli* ախտածին մանրէների ու *Candida albicans*-ի նկատմամբ և կարող են առաջարկվել հետազոտվող ախտածիններով պայմանավորված հիվանդությունների բուժման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Ռ.Մադոյան):

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համագործակցության պայմանագրի շրջանակում «GECCO INT.» ՍՊԸ-ն (Ավստրիա) մատակարարել և տեղադրել է բնական բուսական ու եթերային յուղերի արտադրության հոսքագիծ: Սկսվել է գեղարարական ու սննդային նշանակության ավելի քան 20 տեսակի պատրաստուկների փորձնական արտադրությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

«Thomas GMHB sp.z.o.o» (Լեհաստան) և «ZARETIS s.r.o.» (Չեխիա) ընկերությունների հետ կնքվել են արտահանման պայմանագրեր՝ այս երկրների տարածքում կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումների՝ «Նարինե» ու «Նարարգին» ապրանքատեսակների ներկայացուցչական իրավունքով (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Շարունակվել է *Lactobacillus acidophilus* MDC9602 և *L. rhamnosus* MDC9631 կաթնաթթվային բակտերիաների հիման վրա «Նարարգին» կենսաբանական ակտիվ հավելման արտադրությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ. Տխրունի):

Շարունակվել է ֆերմենտացված կաթնամթերքի ու կենսաբանորեն ակտիվ սննդային հավելում «Նարինե»-ի արտադրությունն աղիքներում լուծվող պատիճներով (ղեկ.՝ Ռ.Հայրապետյան):

Շարունակվել է գյուղատնտեսության համար «Էկոբիոֆիդ» ու «Էկոբիոֆիդ+» կենսաբանական պարարտանյութերի արտադրությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Ավետիսովա):

Շարունակվել է ջրածնի պերօքսիդ, բորաթթու, մագնեզիումի սուլֆատ, կալիումի պերմանգանատ, ամոնիումի ջրային լուծույթ, գերչակի յուղ, գլիցերին, 5% յոդի լուծույթ պատրաստուկների արտադրությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Շարունակվել է բնական բուսական յուղերի՝ չիչխան, կտավատ, տատասկափուշ, նուշ, սպիտակ ու սև քունջութ, ծիրան, դեղձ, սև չաման, դդմի սերմ ու սալոր, արտադրությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Դադայան):

Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առաջին անգամ Հայաստան են ներմուծվել և անհող պայմաններում փորձարկվել արժեքավոր դեղաբույսեր հուրանային ծնեբեկը (շատավարի) (*Asparagus racemosus* Willd.) ու սաղավարտուկը (*Scutellaria lateriflora* L.): Վայրի ուտելի բույսեր մանրապտուղ բոխին ու սովորական սիբեխը (*Falcaria vulgaris* Bernh.) առաջին անգամ ներմուծվել են հիդրոպոնիկ մշակույթ: Առաջին անգամ հիդրոպոնիկ մշակույթ է ներմուծվել նաև պիրականտա (*Pyracantha* M. Roem.) թուփը, աճեցվել է մոտ 60 տնկի, որոնք ունեն գեղազարդ նշանակություն և կարող են լայնորեն կիրառվել Երևանի կանաչապատման մեջ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Մի քանի գաճաճ տեսակի հուդայածառի բուսակներից ստացվել են հյուսված բուսակներ, որոնք ունեն գեղազարդ կիրառական նշանակություն և կարող են կիրառվել կանաչապատման մեջ (ղեկ.՝ գ.գ.թ. Լ.Հովհաննիսյան):

Իրացվել են գիտափորձերի արդյունքում արտադրված շուրջ 720 հատ տարբեր ծառաթփերի (կենսաճառ, սոսի, կատալպա, գիհի, կաղնի, սոֆորա, հուդայածառ,

մետաքսաձառ, սրնգենի) տնկիներ ու բուսահումք՝ մոտ 1120.0 հազար դրամ գումարով (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Խ.Մայրապետյան):

Մշակվել են ստույգ գործնական ռադիոպաշտպանիչ առաջարկներ հիդրոպոնիկայում ու ագրոհամակեցություններում կիրառելու համար, որը կօգնի ստանալ ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումք, միաժամանակ կունենա բնապահպանական ու սանիտարահիգիենիկ նշանակություն (ղեկ.՝ Գ.Գ.Թ. Լ.Ղալաչյան):

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի բջջի կենսաբանության ու վիրուսաբանության լաբորատորիայում ստեղծվել է միջազգային ստանդարտներով ինֆեկցիոն վիվարիում (ղեկ.՝ Կ.Գ.Դ. Զ.Կարալյան):

Ստեղծվել են մոլեկուլների քաղցկեղածին ակտիվության կանխագուշակման մոդելներ՝ մեքենայական ուսուցման ժամանակակից ալգորիթմների կիրառմամբ (XGBoost, LLMs, MPNN, GCN), որոնց հիման վրա մշակվել է քաղցկեղածին դիսկի գործակիցը, որի կանխագուշակիչ ճշգրտությունն ավելի բարձր է ստանդարտ *in vitro/in vivo* մոդելների համեմատ: Մոլեկուլային տրանսֆորմեր թարգմանչական ալգորիթմի կիրառմամբ ստեղծվել է մետաբոլիտների կանխատեսման մոդել, որն ունակ է կանխատեսել քիմիական միացությունների՝ մարդու լյարդում կենսատրանսֆորմացիայի արդյունքում ստացված հնարավոր մետաբոլիտները (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ն.Բաբայան):

“Denovo Sciences” ընկերության մոլեկուլների նախագծման հարթակի կիրառմամբ ստեղծվել են քիմիական նոր միացություններ, որոնք փոխազդում են գրիպի A և B վիրուսների նեյրամինիդազ ֆերմենտի հետ: Երկու լավագույն միացությունները ցույց են տվել հակավիրուսային բարձր ակտիվություն փորձարկված բոլոր վիրուսային շտամերի դեմ, այդ թվում՝ օսելտամիվիրի նկատմամբ կայունություն ցուցաբերող շտամի (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Հ.Զաքարյան):

Մշակվել է ընտանեկան միջերկրածովյան տենդի պատճառ հանդիսացող *MEFV* գենում մուտացիաների նանոպորային սեքվենավորման մեթոդ, ստացվել է արտոնագիր (ղեկ.՝ Կ.Գ.Դ. Ա.Առաքելյան):

Լ.ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել է հակացավային ու հակաբորբոքային համակցված պրեպարատի երկու դեղաձևի նախատիպ՝ ներարկման լուծույթ ու քսուք: Քսուքային տարբերակը ցույց է տվել առավել արդյունավետ հակաբորբոքային ազդեցություն՝ նվազեցնելով կարագինանով ինդուկցված բորբոքային այտուցի ծավալը 24 ժամ հետո մոտ 49%-ով, չի առաջացրել ալերգիկ գրգռում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Ոսկանյան):

Իրականացվել է արյան պլազմայից ալբումինի ու նորմալ իմունոգլոբուլինի արտադրական տեխնոլոգիաների մշակում և փորձնական նմուշների ստացում: Ցույց է տրվել դրանց համապատասխանությունը միջազգային համարժեք դեղամիջոցներին ու եվրոպական դեղագրքի պահանջներին: Արդյունքում՝ հնարավոր է իրականացնել նշված պատրաստուկների արտադրությունը ՀՀ-ում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Գ.Կիրակոսյան):

Կատարվել է ապաբջջայնացված նյարդերի սկաֆոլդների ուսումնասիրություն հյուսվածաբանական H&E անալիզով ու կոնֆոկալ մանրադիտմամբ, դիտվել է բջջային բաղադրիչի հաջող հեռացում՝ հյուսվածքի կառուցվածքի հարաբերական պահպանմամբ:

Կատարվել է դորզալ գանգլիոններից բջիջների կուլտուրաների ստացում: Կատարվել է սկաֆոլդների համադրում գրաֆենի օքսիդի հետ և ըստ նախնական տվյալների՝ բացասական ազդեցություն բջիջների վրա չի դիտվել (ղեկ.՝ Վ.Գրիգորյան):

Լաբորատոր կենդանիների վարքագծային ակտիվությանը հետևելու նպատակով մշակվել է SFCO սենսորներից ազդանշանների մշակման ծրագրի նախնական տարբերակ: Մշակվել և հավաքվել է մարդու կենսաէլեկտրական ազդանշանների մուլտիմոդալ հավաքման դյուրակիր համակարգ, որում ներառված են ֆոտոպլատիզմոգրամ, աքսելերոմետր, գիրոսկոպ ու մագնիսաչափ: Համակարգը նախատեսված է հոգեֆիզիոլոգիական փորձերի ժամանակ բազմամոդալ տեղեկատվություն հավաքելու համար (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Խաչունց):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Սիսիան ավազանի դիատոմիտային ապարներից մշակվել է դանդաղ գործող կոմպլեքսային պարարտանյութերի ստացման նոր տեխնոլոգիա: Ստացված դանդաղ գործող պարարտանյութի կիրառման արդյունքում, որը պարունակում է կալիում, կալցիում, մագնեզիում, երկաթ, ակտիվ սիլիցիում, նկատվել է հողի ու բերքի ագրոքիմիական ցուցանիշների նշանակալի բարելավում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Գրիգորյան):

Մշակվել է ֆտորսիլիկատային համակարգի հիմքով ԻԿ տիրույթում բարձր թափանցելիությամբ ապակի՝ կիրառելի գիշերային տեսողության սարքերում: Ուղղորդված բյուրեղացմամբ սինթեզվել են նանոբյուրեղային կառուցվածքով ու ցածր ընդարձակման գործակցով (15-30)·10⁻⁷Կ⁻¹ թափանցիկ սիտալներ, ինչպես նաև երկվալենտ մետաղների բորվանադատների հիմքով կիսահաղորդիչ դյուրահալ ապակի՝ կիրառելի միկրոէլեկտրոնիկայում: Մշակվել են CaO-Al₂O₃-SiO₂-Fe₂O₃-MeFn (Me-Mg, Ca, Al) համակարգի հիմքով բարձր արագությամբ ամրացող կապակցողներ շինությունների վերականգնման համար (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Իրականացվել է Արևելյան պտղակերի (*Grapholita molesta*) ֆերոմոնի պրեպարատիվ ձևերի մշակում: Դաշտային փորձարկումների արդյունքում առավել արդյունավետ ազդեցություն են ցուցաբերել պոլիմերապատ դիսպենսերները, որոնցում ֆերոմոնի կոնցենտրացիան կազմել է 20 մգ/մլ: Իրականացվել են Լուիկի ցեցի (*Tuta absoluta*) ֆերոմոնի (3E,8Z,11Z)-3,8,11-տետրադեկատրիենիլացետատի նպատակային սինթեզի որոշ հանգուցային փուլեր եռսինտոն C₅ + C₅ + C₄ մարտավարությամբ: Սպասվելիք 2-(դեկա-4,7-դիին-1-իլօքսի)տետրահիդրո-2H-պիրանի ելքն ընդամենը 5% է, ինչը խոչընդոտ է դիինի հետագա վերականգնման, բրոմացման ու առանցքային (3Z,6Z)-10-բրոմոդեկա-3,6-դիենի ստացման համար: Այդ պատճառով մշակվել և փորձարկվել է դիինի ստացման մեկ այլ մարտավարություն: Պրոպարգիլապիրտից ստացվել է պենտ-2-ին-1-ոլը, որը -10°C-ում փոխազդելով *ω*-տոլուոլսուլֆոքլորիդի հետ՝ փոխարկվել է համապատասխան 2-պենտին-1-

իլ-ս-տողուլուլսուլֆոնատի: 1-(Տետրահիդրոպիրան-2-իլօքսի)-4-պենտինը SՀՖ-ի միջավայրում փոխազդել է էթիլմագնեզիումի բրոմիդի հետ, ինչն ուղեկցվել է Գրինյարի ռեագենտի ալկինային նմանակի առաջացմամբ ու էթանի ինտենսիվ անջատմամբ: Գրինյարի ալկինային ռեագենտի ու համապատասխան տոզիլատի կոնդենսացմամբ, $\text{CuBr} \cdot \text{Me}_2\text{S}$ կոմպլեքսով կատալիզի պայմաններում, ստացվել է 2-(դեկա-4,7-դիին-1-իլօքսի)տետրահիդրո-2H-պիրան 78% ելքով (դեկ.՝ ք.գ.թ. Հ.Սարգսյան):

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

Ստացվել են անհամասեռ երկշերտանի 8 տարբեր հիմնատակերի համար սինթետիկ սեյսմոգրամների ու աքսելերոգրամների կանխագուշակման բանաձևեր և ըստ ժամանակի դրանց փոփոխությունների կորեր՝ կախված հիմնատակի շերտերի սեյսմիկ կարգից, երկրաշարժի մագնիտուդի մեծությունից և ապագա երկրաշարժի ժամանակ առաջացող խզման գծի հեռավորության մեծությունից (դեկ.՝ ալ. Է.Խաչիյան):

ՇՄՆ պատվերով իրականացվել են «Հատիս հրաբուխ» երկրաբանական հուշարձանի երկրաբանահրաբխագիտական առանձնահատկությունների նկարագրության, քարտեզագրման ու անապատացման գործընթացի տվյալների վերլուծության աշխատանքներ: Ելնելով Հատիս հրաբխի երկրաբանահրաբխագիտական, երկրաձևաբանական առանձնահատկություններից՝ ներկայացվել է «Հատիս հրաբուխ» հուշարձանի գիտական ու զբոսաշրջային արժեքի գնահատումը, առանձնացվել է 13 գետսայթ, որոնք ներառվել են 3 տեղամասերի պահպանման գոտիներում: Իրականացվել է նաև կատարված հողային աշխատանքների արդյունքում ռելիեֆի փոփոխությունների համադրում ու հետազոտական վերլուծություն (դեկ.՝ Ե.գ.դ. Խ.Մելիքսեյան):

Արարատյան դաշտն ընդգրկող խոշորամասշտաբ (1:10 000, 1:25 000) տեղագրական քարտեզներից թվայնացված իզոհիպսերի հիման վրա կառուցվել է դաշտի բարձր լուծաչափի (5 մ) բարձրությունների թվային մոդելը (ԲԹՄ): ԲԹՄ-ի արբանյակային պատկերների, ջրային օբյեկտների ու ենթակառուցվածքների վեկտորային շերտերի հետ համադրման միջոցով որոշվել են Արարատյան դաշտում դրենաժային ջրերի ամբարման օպտիմալ տեղամասերը՝ դրանց ոռոգման համար կրկնօգտագործման նպատակով:

Կազմվել է Քասախի ավազանի ջրային հաշվեկշռի ԱՏՀ մոդել՝ հիմնված մթնոլորտային տեղումների, մակերևութային հոսքի, գոլորշացման տվյալների ու բարձրությունների թվային մոդելի տվյալների վրա: Դրա հիման վրա հաշվարկվել են գետի առանձին հատվածների ու վտակների ջրհավաք ավազանների ջրային հաշվեկշռի բաղադրիչների արժեքները: Գնահատվել է նաև կլիմայի փոփոխության ազդեցությունը ջրային հաշվեկշռի բաղադրիչների վրա՝ ըստ ԿՓՓՄՀ RCP8.5 սցենարի, մինչև 2040, 2070, 2100թթ.: Արդյունքները կարող են կիրառվել գետավազանում ջրային ռեսուրսների կառավարման ու ջրօգտագործման առավել արդյունավետ պլանավորման համար:

Իրականացվել է կոմունալ կենցաղային կեղտաջրերի՝ Սևանա լճի էկոլոգիական վիճակի վրա ազդեցության քանակական գնահատում: Պարզվել է, որ տարեկան Սևանա լիճ է թափվում մոտ 338 տոննա ազոտ ու 65 տոննա ֆոսֆոր, ինչը նպաստում է լճի ակտիվ ծաղկմանը (դեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Առաքելյան):

Անտառային հրդեհների վտանգի գնահատման, հրդեհի բռնկման կանխատեսման ու նախազգուշացման գոյություն ունեցող մեթոդների ու համակարգերի ուսումնասիրության արդյունքում դուրս է բերվել Հայաստանի տարածքի համար կիրառելի մեթոդաբանություն (դեկ.՝ աշխ.գ.թ. Գ.Ավետիսյան):

ՀՀ տարածքի համար առաջին անգամ վերլուծվել և գնահատվել է գլոբալ ծածկույթ ունեցող բարձրությունների թվային մոդելների (ALOS, ASTER և SRTM) ուղղահայաց ճշտությունը: Եզրակացվել է, որ ՀՀ ողջ տարածքն ընդգրկող հետազոտությունների ժամանակ նախընտրելի է կիրառել ALOS բարձրությունների թվային մոդելը (ԲԹՄ) հենց անտառապատ կամ կառուցապատ տարածքների դեպքում՝ SRTM-ը, իսկ Սևանա լճի ափամերձ տարածքների դեպքում՝ SRTM-ը կամ ASTER-ը (ղեկ.՝ Հ.Ուլոյան):

Երկրատեղեկատվության լաբորատորիայի սերվերի վրա տեղադրվել և կարգաբերվել է R ծրագրային միջավայրի *sen2r* գրադարանը, որը հնարավորություն է տալիս ընտրված կամայական տարածքի համար պարբերականությամբ, ավտոմատացված կերպով ներբեռնել Sentinel-2 պատկերներ ու դրա ածանցյալ ինդեքսները (ղեկ.՝ Ն.Տարասյան):

Ա.ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՏԵՆՏԵՐԱՅԻՆ ՍԵՅՍՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նախագծվել է սեյսմիկ տվյալների եռաբաղադրիչ թվային լոգգեր: Նորովի ձևափոխվել են նախկին մշակումների սխեմոտեխնիկան ու տպագրական սալիկները: Տպագրական սալիկները պատրաստվել են արտադրական եղանակով, որը բարձրացնում է աշխատանքի հուսալիությունը:

Նոր սերունդի Raspberry Pi միկրոհամակարգչի հնարավորությունների հիման վրա նախագծվել է սեյսմաբանական տվյալների ստացման ու պահպանման ծրագրային փաթեթ (ղեկ.՝ Հ.Շահապարոնյան):

Նախագծվել է խորքային էլեկտրահետախուզական աշխատանքների իրականացման համար համապարփակ սնուցման համակարգ (100 V լիքավորման հնարավորությամբ) ժամանակակից Li-իոնային կուտակիչների օգտագործմամբ (ղեկ.՝ Ս.Շահապարոնյան):

Նախագծվել են հայրենական արտադրության արդիականացված IGES-006 սեյսմիկ կայաններ, որոնք տեղադրվել են Վլադիկավկազի ու Մախաչկալայի սեյսմիկ կայաններում (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Զ.Կարապետյան):

Նախագծվել է պարբերությունների առավել լայն տիրույթ ապահովող ուղղաձիգ ճոճանակային տվիչի նոր տարբերակ (ղեկ.՝ Ա.Գասպարյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտը տարբեր երկրների, մասնավորապես մերձավորարևելյան երկրների դիվանագիտական ու գիտական շրջանակների ներգրավմամբ փորձ է կատարել ձևավորելու գիտական ու հանրային դիվանագիտության հարթակներ, որտեղ ՀՀ-ում հավատարմագրված արաբական, ասիական տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցիչները (դեսպաններ, այլ դիվանագետներ), տարբեր տարիներին այդ երկրներում դիվանագիտական ծառայություն իրականացրած ՀՀ դիվանագետները, ակադեմիական գիտական հետազոտողները, ՀՀ տարբեր գերատեսչությունների աշխատակիցները համատեղ քննարկել են տարածաշրջանային արդի հիմնահարցերը, դրանց ազդեցությունը Հարավային Կովկասում, մասնավորապես ՀՀ անվտանգային հիմնախնդիրների, արաբական երկրներ - ՀՀ երկկողմ, Իրանի և ՀՀ երկկողմ բազմաոլորտ հարաբերությունների զարգացման հեռանկարների, ասիական երկրներ - ՀՀ

գիտական համագործակցության հնարավոր հեռանկարների տեսանկյունից, արաբական մի շարք երկրներում հայ համայնքների արդի հիմնախնդիրները և այլն:

Մեծ կարևորություն ունեն ինչպես ՀՀ, այնպես էլ մերձավորարևելյան երկրների դեսպանների, դիվանագիտական ու պետական ծառայության այլ ներկայացուցիչների ներգրավմամբ կազմակերպված գիտական միջոցառումները՝ «Գոտի և ճանապարհ նախաձեռնության» հանրահռչակման 10-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը, «Հարավային Կովկաս. կայունության և անվտանգության արդի մարտահրավերները», «Մերձավոր Արևելքի արաբական երկրների հայ համայնքները. արդի միտումներ և փոխակերպումներ» միջազգային գիտաժողովները:

Կարևոր ձեռքբերում է «Բանբեր Արևելագիտության ինստիտուտի» և «Ժամանակակից Եվրասիա» գրախոսվող պարբերականների 2 համարների տպագրությունը հայաստանյան արևելագիտական մտքի «արտահանման», հայագիտությանը վերաբերող անաչառ հետազոտությունների հանրայնացման ու միջազգայնացման տեսանկյունից: Պարբերականը լույս է ընծայվում անգլերեն, տպագրված աշխատությունների մեկ երրորդը ստացվել է արտերկրից: Պարբերականները տեղ են գտել նաև միջազգային հայտնի գիտատեղեկատվական շտեմարաններում՝ ErihPlus, DOAJ, PIIHL, Dimentions և այլն:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Կիրառական ազգագրության» խումբն իրականացրել է տարատեսակ հետազոտական ու վերլուծական ենթաժրագրեր՝ էթնիկ, կրոնական, լեզվական, հասարակական խմբերի ինքնությունների պահպանության, ձևափոխման, դրանց հասարակական, քաղաքական, մշակութային, գաղափարական պատճառների, ինչպես նաև անհատական, հասարակական, կոլեկտիվ հիշողության ձևավորման մարդաբանական օրինաչափությունների ու քաղաքականության շուրջ:

Հաշվի առնելով 2020թ. պատերազմից հետո Ադրբեջանի նախագահի քանիցս բարձրաձայնած՝ 1993-2020թթ. միջակայքում Արցախի ռազմական ու վարչական հսկողության տակ գտնված տարածքների ադրբեջանական մշակութային արժեքների ոչնչացման մասին հայտարարությունները, որոնք ուղեկցվում են «ոչնչացված արժեքների» թվերով, միաժամանակ Արցախի տարածքի միջնադարյան քրիստոնեական համալիրներն աղվանական անվանելու և չեղած «Աղվանական եկեղեցուն» վերադարձնելու խնդիրը՝ խումբը ձեռնամուխ է եղել գտնելու Խորհրդային Ադրբեջանի հուշարձանների պաշտոնական ցանկերը՝ յոթ շրջանների, ԼՂԻՄ-ի տարածքի, Նախիջևանի, Կուրի աջ ու ձախ ափերի հայաթափված շրջանների՝ Շամխորի, Խանլարի, Շահումյանի, Դաշքեսանի, Բարդայի, Միր Բաշիրի, Աղդամի, Կիրովաբադի, Շաքիի, Շամախու, Իսմայիլիի և այլ մահմեդական ու քրիստոնեական հուշարձանների ցանկերի փաթեթը և այդ հուշարձանների վիճակի նկարագրերը մինչև 1988թ., ինչպես նաև 1988թ. հետո Նախիջևանում ոչնչացված և 2020թ. հետո ԼՂԻՄ-ի և յոթ շրջանների տարածքում ադրբեջանական իշխանությունների կամքով ինքնությունը փոխած հուշարձանների մանրամասն փաթեթը: Խումբն ինտենսիվ աշխատում է այդ նյութերի դասակարգման ուղղությամբ, ինչպես նաև փորձում է ձեռք բերել 1988թ. ցանկերը:

«Կիրառական մարդաբանության» խումբը կատարում է ադրբեջանահայ փախստականների նկատմամբ Հայաստանի իշխանությունների քաղաքականության վերլուծություն (դեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան):

Վերջնականապես ձևավորվել է «Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» ենթաժրագրի կատարողների ու միջազգային գործընկերների

համագործակցությամբ ստեղծված <https://monumentwatch.org/> եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) ակադեմիական հարթակը, որը ներկայացնում է Արցախի մշակութային ժառանգությունը, հետևում դրա արդի վիճակին, արձագանքում ադրբեջանական վանդալիզմի դեպքերին: Կայքը բաղկացած է չորս հիմնական բաժիններից և տասը ենթաբաժիններից: Ընթացիկ տարում խումբը սկսել է նաև <https://Tigrnakert.am> կայքի նոր դիզայնի, թեմաների ընդարձակման և թարմացման, անգլերեն բաժնի հավելման և վերաներբեռնման աշխատանքները (ղեկ.՝ պ.գ.դ. Հ.Պետրոսյան):

Շարունակում է գործել դեռևս անցյալ տարի արխիվի աշխատակիցների նախաձեռնությամբ ստեղծված iae-archive.am կայքը, որտեղ ներկայացվել են հայկական ձեռագրերին նվիրված ալբոմի էլեկտրոնային հրատարակությունը և առցանց “Home Saint Manuscripts” ցուցահանդեսը (ղեկ.՝ պ.գ.թ. Լ. Սիմոնյան):

Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ համատեղ գործարկվել է «Հայաստանի 100 հնագիտական հուշարձանները» ինտերակտիվ կայքը (<https://ama100.am/>) (ղեկ.՝ պ.գ.թ. Վ.Վասիլյան):

Վերականգնվել, հետազոտության ու թանգարանացման համար նախապատրաստվել են 26 հուշարձաններից հայտնաբերված տարբեր դարաշրջանների գտածոներ՝ 89 ամբողջական, 48 ամբողջացող ու 65 մասնակի վերականգնվող խեցանոթներ, 30 մետաղե ու 10 անուն քարից, կավից պատրաստված մանր իրեր: Զուգահեռ մաքրվել են տարբեր հուշարձաններից հայտնաբերված շուրջ 1500 խեցու բեկոր ու ոսկրաբանական նյութ (ղեկ.՝ Լ.Մանուկյան):

Հնագիտական գտածոների թանգարանացման հիման վրա կազմակերպվել են ցուցադրություններ Գյումրիում («Հողի գաղտնիքը. Շիրակ, հայ-գերմանական պեղումների արդյունքները»), Իջևանում («Գետահովիտ-2 քարայր»), Վանաձորում («Գինու փառատոն», «Թանգարանային գիշեր») և Երևանում («Կարասի ֆենոմենը թաղման ծեսում»), ՀՊԹ):

Ինստիտուտը ներկայացվել է Digitec Expo տեխնոլոգիական և «ԲանՈւԳործ-2023» EXPO Երևանյան ցուցահանդեսներին:

Դաշտադեմի ու Տավուշի ամրոցների պեղումներով հայտնաբերված ճարտարապետական կառույցների հիման վրա իրականացվել են վերականգնման ու թանգարանացման նախագծեր, որոնք նաև կրթական հնարավորություններ կապահովեն տեղական համայնքների ու դպրոցների համար: Հուշարձանների թանգարանացումը կնպաստի զբոսաշրջության հետ կապված տնտեսական գործունեության աշխուժացմանը՝ եկամուտներ ստեղծելով տեղական համայնքի և տարածաշրջանի կայուն զարգացման համար:

Դաշտային հետազոտություններով ու տեղազնությամբ 19 հնագիտական փորձաքննություններ են իրականացվել ՀՀ տարբեր մարզերում տնտեսվարող սուբյեկտներին հատկացված հողամասերում: Հուշարձանների բացահայտման պարագայում փաստագրված տվյալները փոխանցվել են լիազոր մարմինն՝ վերջիններիս պահպանությունը կազմակերպելու համար: Հնագիտական փորձաքննությունների շնորհիվ մի շարք օբյեկտներ ստացել են հուշարձանի կարգավիճակ (Հատիսի ամրոցը, Արտանիշ 9 բնակատեղին և այլն): Հատիս լեռան գագաթին հայտնաբերված ամրոցի փրկարարական պեղումներով բացահայտվել են ոչ միայն հուշարձանի ճարտարապետական հորինվածքն ու շինարարական տեխնիկան, այլև ձեռք բերված տվյալները թույլ են տալիս հնավայրը թվագրել նեոլիթ-էնեոլիթյան, բրոնզ-երկաթեդարյան, անտիկ ու, հիմնականում, միջնադարյան ժամանակաշրջաններով:

Ինստիտուտը ներկայացրել է Տիրինկատարի հուշարձանախումբը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկելու ծրագիր, որն արժանացել է հավանության, ընթանում են համապատասխան աշխատանքները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական ժառանգության ներկայացուցչական ցանկում ընդգրկվելու նպատակով ներկայացվել են «Վարդավառ. ջրի տոն» ու «Տոլմա պատրաստելու և կիրառման ավանդույթը» ծրագրերը: Ներկայացվել է «Ժենգյալով հացի պատրաստման և կիրառման ավանդույթը Արցախի Հանրության շրջանից բռնի տեղահանված և Հայաստանում ապաստանածների սոցիալական պրակտիկաներում» տարրը անհապաղ պաշտպանության ենթակա ոչ նյութական մշակութային արժեքների ՀՀ ազգային ցանկում ներառելու դիմում-առաջարկ: «Գյումրիի դարբնության ավանդույթը» հայտը գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում:

«Վիքիմեդիա Հայաստան» կազմակերպության հետ համագործակցության շրջանակում «Վիքիպեդիա» էլեկտրոնային հարթակում տեղադրվել են 12 նոր և խմբագրվել 100-ից ավելի հոդվածներ:

Դասախոսություններով ու սեմինարներով ինստիտուտը մասնակցել է միջազգային ու հանրապետական բազմաթիվ լսարաններում, այդ թվում՝ «Հուշարձանների տեսարժան վայրերի միջազգային օրվան», «Եվրոպական հնագիտության օրեր» միջոցառումներին: Պարբերաբար կազմակերպվել են տարբեր թեմաներով սեմինարների շարքեր, որոնց մասնակցել են նաև Հայաստանի այլ գիտական հաստատությունների ու արտասահմանյան հրավիրյալ մասնագետներ: Ինստիտուտի աշխատակիցները բազմաթիվ մասնագիտական կարծիքներ, գրախոսություններ են տրամադրել Հայաստանի և արտերկրի վարկանիշային ամսագրերում տպագրվող հոդվածների համար, հրատարակվել են «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ», «Армянский гуманитарный вестник» հանդեսները:

Ինստիտուտի գրադարանային ֆոնդում առկա է 45609 միավոր գրականություն՝ 80113718 դրամ արժողությամբ: Հաշվետու տարում գրադարան մուտք է գործել 1986 միավոր գրականություն՝ 6.223.452 դր. արժողությամբ:

Կարևորագույն ձեռքբերում է Արխիվի միասնականացումը, կատալոգի ստեղծումը և Արխիվը որպես բաց սպասարկող միջավայր դարձնելը:

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի հիմնադրման 80-ամյակի առիթով «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) կազմվել է «Հայոց պատմության դրվագներ (V-VII դարեր)» ժողովածուն: Այն ներկայացնում է հայ պատմիչների երկերում արձանագրված իրադարձությունները, որոնք վճռորոշ են եղել մեր ժողովրդի պատմության համար: Գրաբար-աշխարհաբար զուգահեռ տարբերակներով գիրքը ունի ինչպես ճանաչողական, այնպես էլ կրթադաստիարակչական կարևոր նշանակություն:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Կատվայան) թվայնացվել են Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի շուրջ 500 բարբառային տարբերակներ, որոնք ներառված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով անցյալ դարի վերջին քառորդում և 21-րդ դարի սկզբներին կատարված գրանցումներում: Հրապարակման պատրաստվող գիրքն ունի գիտական, կրթական, ճանաչողական մեծ կարևորություն:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Թ.Ասոյան) հրապարակման են պատրաստվել «Նոր բառեր»-ի մեկական պրակներ՝ արդի գրական արևելահայերենի ու արևմտահայերենի գործառական տարբերակներից քաղված նյութի ընդգրկումով:

Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հրատարակվել է Ավ.Խսահակյանի 14 հատորով «Երկերի լիակատար ժողովածու»-ի VIII հատորը, որտեղ ընդգրկված բնագրերը շարունակում են «Ուստա Կարո և Օրթե Հարութ» վեպի երկրորդ տարբերակի հատվածական բնագրերի և ծրագրային գրառումների ու ամբողջական գլուխների հրապարակումները երեք թեմատիկ խմբավորումներով՝ Ուստա Կարոն Անիում, Ուստա Կարոն Գյումրիում և Բագրանի ուխտը:

Լույս է տեսել Ե.Չարենցի 13 հատորով «Երկերի ժողովածու»-ի I հատորը, որտեղ ամփոփվում է Ե.Չարենցի 1912-1922թթ. բանաստեղծական ժառանգությունը: 15 նոր բանաստեղծություններից 3-ը նախկինում չեն ընդգրկվել Չարենցի որևէ ժողովածուում: Ուղղվել և շտկվել են նախորդ հրատարակությունների բացթողումներն ու վրիպումները, որոնք վերաբերում են բառերի տարընթերցումներին, կետադրության ու ուղղագրության հարցերին, ծանոթագրություններին:

Կազմվել և պատրաստ է հրատարակության «Հովի. Թումանյանի մահվան 100-րդ տարելիցին» նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուն, որում ամփոփված հոդվածները լույս են սփռում Թումանյանի բազմաբեղուն գործունեության, ազգային-քաղաքական մտածողության ու մարդկային նկարագրի, իրականության թումանյանական ընկալման վրա:

Հրատարակվել է «Գրականություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք»-ը:

Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանությունը որպես ՀՀ կայուն զարգացման երաշխիք» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Մանուչարյան) առանձնացվել են մի շարք առաջնայնություններ: Արդյունաբերության, կենցաղային ու օգտագործման այլ տեսակների կողմից ջրի աղտոտվածության աճով, ջրի օգտագործման պահանջարկի ավելացմամբ, կլիմայի փոփոխության հետևանքով ջրային ռեսուրսների առկա ու կանխատեսվող նվազմամբ պայմանավորված՝ երկրորդային ջրօգտագործումը դառնում է անհրաժեշտ ու արդիական հատկապես Արարատյան դաշտում ոռոգման կարիքները բավարարելու և Սևանա լճի ու տնտեսության տարբեր ճյուղերի վրա ճնշումը նվազեցնելու նպատակով: Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներից անհրաժեշտ է կիրառել նաև ջերմակայուն ու չորադիմացկուն մշակաբույսերի աճեցում, հակակարկտային ցանցեր, դաշտապաշտպան անտառաշերտեր, ջրամատակարարման համակարգերի բարեկարգում, ջրօգտագործման պլանավորում ու ջրային ռեսուրսների ամբարում, ջրավազանների կառավարում ու պահպանում, կանաչ տարածքների ավելացում, արևապաշտպան միջոցների կիրառում, բնական պաշարների կայուն օգտագործում, կենսաբազմազանության պահպանում և այլն: Հայաստանի համար շատ կարևոր է կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հետևապես չափազանց անհրաժեշտ է կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվողականության զարգացումն ու համապատասխան ներուժի ստեղծումը:

Գծային տնտեսությունից շրջանաձև տնտեսության անցման ամենագլխավոր տարբերությունն այն է, որ շրջանաձև տնտեսությունն ունի փակ շրջան՝ ի տարբերություն գծայինի, որը չի ենթադրում առաջնային ապրանքների ու թափոնների կրկնակի օգտագործում հետագա վերամշակման համար: Գծային տնտեսության հիմնական նպատակն առավելագույն շահույթն է, բայց ոչ բնության ու շրջակա միջավայրի պահպանումը: Շրջանաձև տնտեսության նպատակն էկոլոգիական հավասարակշռությունն է, այսինքն՝ կիրառվում է շրջակա միջավայրի կայուն կառավարում՝ միաժամանակ հասնելով ապրանքների ու ծառայությունների օգտագործման երկարաժամկետ ու արդյունավետ ցիկլին: Վերոնշյալ առաջարկը հսկայական հնարավորություններ կստեղծի արտադրության արդիականացման ու արդյունաբերական նորարարությունների ներդրման համար՝ ապահովելով արտադրողականության տարեկան աճ:

Սևանա լճի աղտոտումը կանխելու համար առաջարկվել է Արփա, Որոտան գետերի, Կեչուտ, Սպանդարյան ջրամբարների ջրհավաք ավազաններից Սևանա լիճ թափվող աղտոտող նյութերի քանակական աճը բացառելու համար կառուցել Կեչուտ ու Սպանդարյան ջրամբարների շուրջ 100-200մ լայնությամբ սանիտարապաշտպանիչ շերտ, ինչպես նաև «Ջերմուկ» հանքային ջրերի սանիտարական օկրուգի սահմաններում նախատեսված տնտեսական գործունեության սահմանափակումների իրագործում: Նույն սահմաններում է տեղակայված նաև «Ջերմուկ» արգելավայրը: Արգելոցային ռեժիմի պահպանումը կարգելակի անթրոպոգեն ծագում ունեցող կենսածին ու թունավոր նյութերի հոսքը դեպի լիճ:

«Հանքարդյունաբերության զարգացման հեռանկարներն ու Հայաստանի Հանրապետությունում վերջնական արտադրանքի ստացմանն ուղղված միջոցառումների մշակման հնարավորությունները» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Ե.Հակոբյան) առաջարկվել են հանքարդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացման միջոցառումներ, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա նորարարությունների ներդրման որոշ ուղղություններ ու միջոցառումներ, ՀՀ-ում հանքային ռեսուրսի մեծության հաշվարկի նպատակով նոր մեթոդաբանություն:

«Ռազմավարական պլանավորման հայեցակարգային մոտեցումներն ու ազգային քաղաքականության մշակման անհրաժեշտությունը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Է.Մաթևոսյան) առաջարկվել է ՀՀ ընդունել ռազմավարական պլանավորման մասին մեթոդական բնույթի փաստաթուղթ, որը կկանոնակարգի ռազմավարական պլանավորման ոլորտում պետական քաղաքականության համակարգված միջոցառումները՝ ուղղված ՀՀ ազգային շահերի պահպանմանը, սոցիալ-տնտեսական զարգացման ու ազգային անվտանգության ապահովման երկարաժամկետ նպատակների սահմանմանը, ռազմավարական ազգային առաջնահերթությունների ու ուղիների որոշմանը, դրանց հասնելու հիմնական գործիքակազմին:

«Տնտեսական աճի հայաստանյան մոդելը և դրա սոցիալ-տնտեսական հետևանքները» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Շ.Պողոսյան) առաջարկվել է ստեղծել միջավայր՝ աստիճանաբար բարձրացնելով ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժինը, դիվերսիֆիկացնել ծառայությունների ոլորտը՝ նպաստելով արդի տեղեկատվական ծառայությունների ընդլայնմանը, միջազգային շուկայում ապահովել մրցունակ ընկերությունների աճ՝ ներգրավել օտարերկրյա առաջադեմ ընկերություններին, իրականացնել տնտեսական ներկա զարգացումների պայմաններում կառավարության արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն, գիտելիքահեն տնտեսության կայացման համար ձևավորել ինստիտուցիոնալ միջավայր, արտադրական գիտատեխնոլոգիական ու մարդկային կապիտալի ներուժ: ՀՀ տնտեսական աճի

ապահովման հեռանկարները կապված են որակյալ ապրանքատեսակների արտահանման ու առաջադեմ ծառայությունների մատուցման հետ, որի նպատակով ցանկալի է, որ կառավարությունն ակտիվորեն աջակցի գյուղատնտեսությանն ու արդյունաբերությանը, որպեսզի ներկայիս ծառայությունների ոլորտով պայմանավորված աճի նվազման պարագայում կարողանա աճ ապահովել՝ հույսը դնելով արտահանելի հատվածի վրա:

«ՀՀ նորարարական տնտեսության զարգացման հեռանկարները թվային փոխակերպումների համատեքստում» (ղեկ.՝ տնտ.գ.թ. Ս.Դալլաքյան) թեմայի շրջանակում առաջարկվել է մշակել զբոսաշրջային կլաստերի զարգացման հիպոթետիկ մոդել, որն իր մեջ ներառում է ՀՀ զբոսաշրջային ենթակառուցվածքները, պատմամշակութային, գինեգործական, մարքեթինգային և այլ հնարավորությունները՝ դրանք համադրելով կառավարության և այլ ինստիտուտների հետ:

«Աշխատանքի շուկան՝ որպես գործարար միջավայրի բարգավաճման քաղաքականություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Տ.Փարսադանյան) առաջարկվել է զբաղվածության խնդիրների լուծման համար կազմակերպել ՏՀՏ ոլորտում վերապատրաստման ծրագրեր, դասընթացներ հատկապես չապահովված խավի բնակչության համար: Էներգետիկ ոլորտում աշխատուժի ավելացման համար անհրաժեշտ է մշակել ՀՀ զարգացման էներգետիկ ծրագիր մանրակրկիտ փուլերով ու զարգացման իրական ժամանակահատվածով, ինչը հնարավորություն կտա հստակություն մտցնել աշխատաշուկայում, և մասնագիտությունների ձևավորման հարցում: Հայաստանում շահագործվող շուրջ 200 փոքր հիդրոէլեկտրակայաններում աշխատում են շրջակա գյուղերում բնակվող երիտասարդներ, որոնք համապատասխան գիտելիքներ չունեն բնագավառի շահագործման մասին, ինչի արդյունքում ՀԷԿ-երը ոչ միշտ են աշխատում արդյունավետ ռեժիմով, սարքավորումները հաճախ շարքից դուրս են գալիս: Անհրաժեշտ է տեղերում կազմակերպել ուսուցման դասընթացներ, որը հնարավորություն կտա բարձրացնել ՀԷԿ-երի շահագործման արդյունավետությունը, լուծել բազմաթիվ բնապահպանական խնդիրներ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Իրավունքի միջազգայնացման և իրավահամեմատական ուսումնասիրությունների նորաստեղծ գիտահետազոտական խումբն ակտիվորեն ներգրավվել է ՀՀ Սահմանադրության բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներում, իսկ խմբի ղեկավարը հանձնաժողովի նախագահն է:

Շարունակվել են ինստիտուտի և ՀՀ Սահմանադրական դատարանի միջև կնքված համապարփակ համագործակցության մասին համաձայնագրի շրջանակում իրավունքի ոլորտում երկուստեք տեսական ու կիրառական բնույթի գիտահետազոտական ու փորձագիտական համատեղ աշխատանքները:

Քաղաքական հետազոտությունների գիտական որոշ արդյունքներ, կապված տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների և կոնֆլիկտների լուծման հետ, պարբերաբար ներկայացվել են ՀՀ պետական համապատասխան կառույցներին, գիտաշխատողները պետության իրավաքաղաքական կյանքի կազմակերպման վերաբերյալ վերլուծություններով ու առաջարկներով պարբերաբար հանդես են եկել հանրային փորձագիտական-վերլուծական դաշտում:

Ինստիտուտի և նրա հիմնարար գիտական ուղղությունների հանրահռչակման նպատակով տեսանկարահանվել է բանախոսությունների երկու շարք, այն ինստիտուտի յուրօրյան ալիքում ունեցել է հազարավոր դիտումներ:

Ինստիտուտի անգլալեզու գիտական հանդեսը (“The POLITNOMOS. Journal of Political and Legal Studies”) կույր գրախոսությամբ տպագրության է ընդունում քաղաքագիտության, իրավագիտության, քաղաքական ու իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրներին վերաբերող գիտական հոդվածներ:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Աղասյան) հրատարակվել է կերպարվեստի ընդհանուր պատմությանը նվիրված հայալեզու, ոչ թարգմանական առաջին ուսումնական ձեռնարկի՝ «Արվեստի պատմություն. կերպարվեստ» եռամաս դասագրքի վերջին՝ III հատորը, որտեղ ներկայացված են XX դարի արևմտյան կերպարվեստի հիմնական ուղղությունները, նույն դարաշրջանի ռուսական ու հայկական կերպարվեստի համառոտ պատմությունը:

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ արվ.դ. Ա.Ասատրյան) շարունակվել են հայ ականավոր կոմպոզիտոր Ա.Խաչատրյանի կյանքի, ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեության ուսումնասիրության, նրա թողած ժառանգության արժևորման աշխատանքները: Հետազոտությունների արդյունքները զեկուցվել են «Արամ Խաչատրյան-120» խորագրով միջազգային գիտաժողովում, որը կարևոր փուլ էր միջազգային խաչատրյանագիտության մեջ:

Միջգիտակարգային հետազոտությունների իրականացման շրջանակներում կազմակերպվել է «Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտաժողովը, որտեղ առաջին անգամ քննության է առնվել արվեստի ու գրականության փոխառնչությունների հարցը Սարոյանի ստեղծագործության օրինակով: Գիտաժողովի ընթացքում ոչ միայն Սարոյանի գրական ժառանգությունն է դիտարկվել արվեստի տեսանկյունից, այլև բացահայտվել է Սարոյանի ներդրումը կերպարվեստում ու երաժշտության մեջ:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Տեխնիկապես հագեցվել են ԳԿՄԿ համակարգչային լսարանները համակարգչով, պրոյեկտորով, բարձրախոսով, ինտերակտիվ էկրանով: Ձեռք են բերվել մեդիալաբորատորիայի համար նախատեսված մեդիա միջոցներ, կահավորվել և բացվել է նկարահանումների տաղավարը: Թարմացվել են տեղադրված հեռավար ուսուցման հարթակի (կայք՝ <https://vle.sci.am/>) հիմքում ընկած Moodle միջավայրը և համակարգի ծրագրային այլ ապահովումները:

ԳԿՄԿ-ն մասնակցել է էրազմուս+ կարողությունների զարգացման հետևյալ ծրագրերին.

- «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) ծրագրի շրջանակում կազմակերպվել է այցելություն Լիոն (Ֆրանսիա): Ուսումնասիրվել են դոկտորական դպրոցների ու բարձրագույն կրթության երրորդ մակարդակի համատեղ կրթական ծրագրերի կազմակերպման ֆրանսիական փորձը և ներհամալսարանական կանոնակարգերը: Եվրասիա միջազգային համալսարանի հետ մշակվել է «Կայուն զարգացում» ընդհանուր խորագրով ասպիրանտական համատեղ կրթական ծրագիր, բուհերի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր, գործարկվել է ծրագրի շրջանակում հիմնված մեդիալաբորատորիան:

- «Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) ծրագրի շրջանակում ուսումնասիրվել են նմանատիպ կրթական ծրագրերը, կազմակերպվել է գործատուների հետ հանդիպում, մշակվել են «Ձկնային տնտեսություն» համատեղ ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքներն ու ուսումնական պլանը, տեղի է ունեցել ծրագրի համակարգման հանդիպում Նիտրայում (Խորվաթիա): Ստեղծվելու են գիտակրթական լաբորատորիա ու հետազոտահեն կրթության իրականացման համար անհրաժեշտ այլ ենթակառուցվածքներ, ձեռք են բերվել 10 անուն համակարգչային ու լաբորատոր սարքավորումներ ստեղծվելիք լաբորատորիայի համար: ԳԿՄԿ աշխատանքային խումբը մշակել է նոր մագիստրոսական կրթական ծրագիր՝ ՀԱԱՀ-ի համատեղ Կենդանաբանություն և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հենքի վրա՝ խթանելով հետազոտահեն կրթությունը ՀՀ-ում: Ընտրվել է համատեղ կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը, մեկնարկել են առարկայական նկարագրերի ու ուսումնամեթոդական նյութերի մշակման աշխատանքները, «Ձկնային տնտեսություն» համատեղ ՄԿԾ-ի լիցենզիայի ստացման աշխատանքները: AFISHE ծրագրի շնորհիվ կստեղծվի ակվակուլտուրայի ու ձկնային տնտեսությունների ոլորտային ցանց Հայաստանի, Ուկրաինայի ու Եվրոպական երկրների միջև, որը կծառայի հարթակ այդ ոլորտներում միասնական կրթական ու հետազոտական գործունեություն իրականացնելու համար, ինչը կզարգացնի էկոլոգիայի վրա հիմնված մոտեցումներն ու գործունեությունը՝ համապատասխան ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների ու ԵՄ Կանաչ գործարքի:

Տուշայի (Իտալիա) համալսարանի 2 դասախոս դասախոսություններ են կարդացել «Իրավագիտության» ամբիոնում: ԳԿՄԿ վարչակազմն ու պրոֆեսորադասախոսական կազմը գործուղումների են մեկնել Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն, Իտալիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Լեհաստան, Բուլղարիա, Ալբանիայի Հանրապետություն, ՌԴ, մասնակցել են հայաստանյան ու արտերկրի վերապատրաստման ծրագրերին, համաժողովներին, երիտասարդական ֆորումներին, գիտաժողովներին: Կնքվել է շուրջ 20 միջազգային ու միջհամալսարանական համաձայնագիր ու համագործակցության հուշագիր:

Լավագոյն բուհերի վարկանիշավորման աղյուսակներում ԳԿՄԿ ներգրավվածության գործընթացն ապահովելու նպատակով արդեն իսկ մեկնարկել է արտերկրի հայազգի դասախոսների ներգրավումն ուսումնական գործընթացում՝ 2023-24 ուստարվա առաջին կիսամյակում Մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոնի «Մոլեկուլային մանրէաբանություն» առարկան առցանց տարբերակով կդասավանդի Գդանսկի (Լեհաստան) Կենսատեխնոլոգիայի և մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտաշխատող Լ.Հովհաննիսյանը, 2024-25 ուստարվա առաջին կիսամյակում երկրաբանության ամբիոնի «Ֆիզիկական հրաբխագիտություն» առարկան՝ Ֆրայբերգի (Գերմանիա) Լեոնային տեխնիկական համալսարանի միներալոգիայի ինստիտուտի գիտաշխատող ու դասախոս Հ.Գևորգյանը, 2023-25 ուստարվա երրորդ կիսամյակում երկրաբանության ամբիոնի «Մասնագիտական հաղորդակցման կարողությունների զարգացում (անգլերենով)» առարկան՝ Լիլի համալսարանի (Ֆրանսիա) պրոֆեսոր Տ.Դանիելյանը, որը հայտնի Evo-Eco-Paleo լաբորատորիայի փոխտնօրենն է, (Institut de Recherches Pluridisciplinaires en Sciences de l'Environnement) ինստիտուտի տնօրենը:

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի շրջանակում իրականացվել է 12931 դատական փորձաքնություն. քրեա-

դատավարական օրենսդրության շրջանակում՝ շուրջ 111, դատարանների կողմից կայացված որոշումների հիման վրա՝ 156, քաղաքացիական դատավարության շրջանակում՝ 20, վարչական դատավարության շրջանակում՝ 1, սնանկության դատարանի որոշումների հիման վրա՝ 105, պետական գնման պայմանագրի ու քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա՝ 167:

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար

Համակարգող՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների
ինստիտուտի փոխտնօրեն

Ծրագիրը նպատակաուղղված է բնագիտական (հիդրոոդերևութաբանություն, բնապահպանություն, սեյսմաբանություն, կենսաբանություն ու բժշկական գենետիկա) խնդիրների լուծմանն ու ամպային ենթակառուցվածքի զարգացմանը՝ օգտագործելով ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի հնարավորությունները:

Ծրագրին մասնակցել են Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների, Գիտակրթական միջազգային կենտրոնի և Շրջակա միջավայրի նախարարության առաջատար մասնագետները:

Կատարվել են մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների հիման վրա ամպային միջավայրն ընդլայնելու և ամպային ծառայություն մշակելու հետազոտություններ: Մասնավորապես ծավալվել է k8s (Kubernetes) կլաստերն ու մշակվել է մասնագիտացված կոնտեյներների խումբ (pod) ընտրված ուղղություններից մեկի՝ երկրի հեռավար զոնդավորման տվյալների մշակման համար, մշակվել է մասշտաբավորվող հարթակ, որը համատեղելի է ամպային բարձր արտադրողականությամբ հաշվարկների (HPC - High Performance Computing) ռեսուրսների ու նման տվյալների պահեստների հետ, HPC աշխատանքային բեռների կատարման համար՝ առանց սերվերի ճարտարապետություն ու համապատասխան ծրագրային փաթեթ, որը հասանելի է Github-ում (<https://github.com/imastio/shoc>): Շարունակելով մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ նախկինում կատարված աշխատանքներն ու պահպանելով ընտրված ուղղվածությունը՝ կատարվել է կլիմայական փոփոխությունների գնահատում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մասշտաբով, շարունակվել է բաց տվյալների խորանարդների վրա հիմնված հեռավար զոնդավորման պատկերների մշակման ու պահպանման համակարգի մշակումը, տվյալների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվել են տվյալների սեղմման տեխնիկան բարելավելու աշխատանքներ: Փորձերի արդյունքում որպես լավագույն լուծում ընտրվել են Zstandard սեղմման մեթոդն ու Dask ծրագրային կմախքը՝ նվազեցնելով պահպանվող տվյալների ծավալն ու ցանցում փոխանցման ժամանակը:

Օդերևութաբանության բնագավառում շարունակվել են գիտահետազոտական աշխատանքները, այդ թվում՝ կլիմայի ու կլիմայի փոփոխության վերլուծությունները Հայաստանում ու Հարավային Կովկասում, երաշտային պայմանների գնահատումը Հայաստանում՝ օգտագործելով արբանյակային դիտարկումներն ու օդերևութաբանական կայանների տվյալները, վտանգավոր եղանակային պայմանների մոդելավորումը՝ կիրառելով Weather Research and Forecasting (WRF) եղանակի կանխատեսման թվային մոդելը:

Բնապահպանության բնագավառում կատարվել են մթնոլորտ արտանետումների նորմավորման ժամանակակից ծրագրային ապահովման ու ավտոտրանսպորտային արտանետումների գնահատման մեթոդիկայի մշակման աշխատանքներ:

Սեյսմաբանության բնագավառում կատարվել են շենքերի տեխնիկական վիճակի (խոցելիության) աստիճանի որոշման հաճախականային <2 Հց տիրույթում աշխատող սեյսմիկ համակարգ մշակելու աշխատանքներ: Մշակվել է նաև համակարգի գրանցիչի էլեկտրոնային ենթահամակարգը, ծրագրային ապահովման փաթեթը, ինչպես նաև ավտոմատ սնուցման համակարգն ամբողջությամբ: Ներկայում իրականացվում է համակարգի չափաբերում լաբորատոր պայմաններում:

Կենսաբանության բնագավառում շարունակվել են բարդ համակարգերի համակարգչային մոդելավորման աշխատանքները, մասնավորապես լիպիդային երկշերտ/տրանս-մեմբրանային ինտեգրին բարդ կենսաբանական համակարգի մոդելավորումը, գնահատվել են ռեսուրսներն էներգիայի խնայողության տեսանկյունից և փոփոխելով ծրագրային փաթեթի մի շարք պարամետրեր՝ փորձ է արվել օպտիմալացնել արագագործություն/էներգիայի ծախս հարաբերությունը:

Բժշկական գենետիկայի բնագավառում կատարվել են քաղցկեղային գենոմների հայկական ատլաս ստեղծելու ու թելոմերի երկարության պահպանման, պան-քաղցկեղային մեխանիզմները հետազոտելու աշխատանքներ:

Փորձագիտական երկրաքիմիական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի անվտանգության ապահովման համար

Համակարգող՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան

Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն

Իրականացվել է Լոռու մարզի ռեգիոնալ մասշտաբի հողային հանույթ, նմուշառվել է 158 նմուշ, որոնցում որոշվել են Cr, V, Ti, As, Zn, Cu, Co, Fe, Mn, Ba, Pb, Ca, K և Mo տարրերի պարունակությունը, α և β ակտիվության ցուցանիշները: Ստեղծվել է տվյալների բազա, իրականացվել է ուսումնասիրված ցուցանիշների քարտեզագրում: Արդյունքում հաստատվել է, որ ուսումնասիրված ցուցանիշների տարածական բաշխվածության առանձնահատկություններն առավելապես պայմանավորված են մարզի երկրաբանական հենքի ու հողատիպերի առանձնահատկություններով և շահագործվող հանքավայրերի տեղադիրքով: Ավելին, ուսումնասիրված քիմիական տարրերի տարածաբաշխման ու երկրաքիմիական առանձնահատկությունների, երկրաքիմիական ասոցիացիաների ձևավորման գործընթացում առանցքային դեր են խաղում Cu, Ca, Pb, Ba և Cr տարրերը: ՀՀ-ում սահմանված ՍԹԽ նկատմամբ գերազանցումներ հայտնաբերվել են Cr, As, Zn, Cu, Mn և Pb-ի դեպքում: Մեծահասակների առողջությանն ուղղված միատարր ու բազմատարր ոչ քաղցկեղածին ռիսկ չի գրանցվել: Երեխաների համար միատարր ոչ քաղցկեղածին ռիսկ դիտվել է Fe, Pb, Mn, As և Co-ի դեպքում: Մարզի ամբողջ տարածքում գրանցվել է երեխաների առողջությանն ուղղված ոչ քաղցկեղածին ռիսկ, որն առավելապես պայմանավորված է Fe, Mn, Co և Pb տարրերով: Կյանքի տևողության քաղցկեղածին ռիսկի թույլատրելի շեմի գերազանցում գրանցվել է միայն Pb-ի դեպքում, 1 նմուշում: Կազմվել են ծրագրի շրջանակում ուսումնասիրված մարզերի գյուղատնտեսական հողերի երկրաքիմիական էլեկտրոնային ատլասներ՝ որպես որոշումների կայացմանն աջակցող տեղեկատվություն:

Հայկական գենոֆոնդի կայունության գործոնները

Համակարգողներ՝ կ.գ.դ. Ա.Առաքելյան (տնօրեն), կ.գ.դ. Լ.Եպիսկոպոսյան
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ

30 ամբողջական գենոմների և 50 ամբողջական էքզոմների սեքվենավորման տվյալների հիման վրա իրականացվում է հայկական պոպուլյացիայում գենետիկական տարբերակների առկայության փաստագրում, դրանց տեսակների ու հաճախականության որոշում:

Կիրառական (կոմերցիոն) նշանակության տիտանի հիմքով համաձուլվածքների սինթեզը հիդրիդային ցիկլի եղանակով

Համակարգող՝ ք.գ.թ. Դ.Մայիլյան
Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ

Հետազոտվել է Ti-23Zr-25Nb, γ -TiAl, Ti₃Al, TiAl₃ համաձուլվածքների հիդրիդային ցիկլի (<Ց) մեթոդով սինթեզի տեխնոլոգիական պրոցեսը: Բարձրջերմաստիճանային ինքնատարաձվող սինթեզ (ԲԻՍ) եղանակով սինթեզվել է ելանյութ հանդիսացող տիտանի, ցիրկոնիումի ու նիոբիումի հիդրիդների անհրաժեշտ քանակ: Տեխնոլոգիական պրոցեսի բոլոր փուլերում իրականացվել է ելանյութերի ու վերջնանյութերի բնութագրերի որոշում՝ ջրածնի պարունակություն, ֆազային բաղադրություն, միկրոկառուցվածք, ջերմային էֆեկտներ: Ռենգենաֆազային վերլուծության միջոցով ցույց է տրվել, որ Ti-23Zr-25Nb համաձուլվածքի ֆազային բաղադրությունում առկա է երկու ֆազ՝ α (ՀԽԴ, 194: P6₃/mmc) ու β (ԾԿԽ, 229: Im-3m): Որոշվել են ֆազերի բյուրեղական ցանցի պարամետրերը. α ՝ $a = 0.310451$ նմ, $c = 0.489659$ նմ, β ՝ $a = 0.331091$ նմ: Ուսումնասիրվել է սինթեզված Ti-23Zr-25Nb համաձուլվածքի փոխազդեցությունը ջրածնի հետ ԲԻՍ ռեժիմում: Ցույց է տրվել, որ գլանաձև, կոմպակտ, հոծ նմուշներն առանց նախնական մանրացման կարող են փոխազդել ջրածնի հետ, ինչի արդյունքում Ti-23Zr-25Nb համաձուլվածքը կլանում է 2.78 կշռ.% ջրածին: Ջրածնի 2 ՄՊա ճնշման դեպքում համաձուլվածքի այրման ջերմաստիճանը կազմել է 540°C: Սինթեզված համաձուլվածքի հիդրիդի ջերմակայունությունն ու ջրածնի դետորբցիան ուսումնասիրվել են ԴՋԱ եղանակով: Ցույց է տրվել, որ ջրածնի դետորբցիան տեղի է ունենում երկու ջերմային էնդոէֆեկտներով՝ 362 °C ու 855 °C ջերմաստիճաններում:

Բացահայտվել է, որ <Ց եղանակով TiAl₃ և Ti₃Al ալյումինիդների սինթեզը տեղի է ունենում ըստ $x\text{TiH}_2 + (1-x)\text{Al} \rightarrow \text{Ti}_x\text{Al}_{1-x} + \text{H}_2\uparrow$ ռեակցիայի, որտեղ $x = 0.25, 0.75$: Ստացվել են միաֆազ TiAl₃ տետրագոնալ կառուցվածքով ու միաֆազ α_2 -Ti₃Al հեքսագոնալ կառուցվածքով համաձուլվածքներ: Ti-Al համաձուլվածքների սինթեզի ուսումնասիրության արդյունքում զանգվածի փոփոխության ու դիֆերենցիալ ջերմային կորերի համադրմամբ, ինչպես նաև միջանկյալ ու վերջնական նյութերի նույնականացմամբ հաստատվել է, որ <Ց եղանակով սինթեզված ալյումինիդների ձևավորումը տեղի է ունենում պինդֆազային դիֆուզիայի մեխանիզմով: Վերոնշյալ տեխնոլոգիական մշակումները կարող են հիմք հանդիսանալ արդյունաբերական կիրառության համար ու ներկայացնել կոմերցիոն հետաքրքրություն:

Ռադիացիոն-կայուն և լազերային լույսակալից պաշտպանող ապակեկերպ ու կոմպոզիտային նյութերի մշակում

Համակարգող՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան

Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ

Կատարվել են ԸԱՔԻ-ում և Ա.Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիայում ՀՀ լեռնային ապարներից (պեռլիտ, տուֆ, նեֆելինային սիենիտ, դաշտային սպատ, դիատոմիտ, քվարցիտ) որպես հումք բարձր ջերմաստիճանային, հիդրոջերմային եղանակներով սիլիկատների ու տարբեր տեսակի ապակիների ու բովախառնուրդների ստացման հետազոտություններ: Հետազոտվել են ալյումաբորոսիլիկատային համակարգերի ապակեգոյացման տիրույթները, կայուն ապակիների ու միացությունների բյուրեղացման դաշտերը, ապակիների ֆիզիկաքիմիական հատկությունները:

Մշակվել են կադմիումի ու բիսմութի սիլիկատների ստացման միկրոալիքային եղանակ, բիսմութի սիլիկատի հիման վրա տարբեր ապակու բովախառնուրդներ:

Ուսումնասիրվել են ինչպես սիլիկատների, այնպես էլ ապակիների ֆիզիկաքիմիական ու օպտիկական հատկությունները: Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիայում ուսումնասիրվել է ստացված նյութերի ճառագայթային կայունությունը պրոտոնային ճառագայթման պայմաններում ջերմամշակումից առաջ ու հետո: Ուսումնասիրվել են դիֆուզիոն անդրադարձման հատկությունները պրոտոնային 10^{14} P/սմ² ինտենսիվության ճառագայթումից առաջ ու հետո 200-ից 1000 նմ ալիքի երկարության տիրույթում:

Պարզվել է, որ մեծ ատոմային զանգվածով տարրերն ավելի ուժեղ են նվազեցնում ճառագայթման ինտենսիվությունը, քան թեթև ատոմային զանգվածով տարրերը: Հաշվարկների արդյունքներով համակարգերում ընդգծվել են կայուն ապակիների տիրույթները կիրառական նշանակության ապակեկերպ ու ապակեկերամիկական նյութերի մշակման համար:

Նոր ֆունկցիոնալ օպտիկական հատկություններ ստանալու նպատակով $MgO(MeF_2)-Al_2O_3-TiO_2-SiO_2$ ($Me-MgF_2, BaF_2$) համակարգերի հիմքով սինթեզվել են ապակիներ ու ապակեբյուրեղային նյութեր՝ կիրառելի որպես էլեկտրամագնիսական ճառագայթման փոխարկիչ, որը նվազեցնում է ընկնող ուլտրամանուշակագույն ու կապույտ լույսի էներգիան՝ այն վերածելով երկրորդային ճառագայթման ավելի երկար ալիքի: Մշակված ապակիներն ունեն համընկնող կլանման գոտիներ, որոնք գտնվում են սպեկտրի լայն տիրույթում՝ 250-410 նմ, և ունեն համապատասխան լյումինեսցենտային գոտիներ 380-610 նմ տիրույթում: Կատարվել են մշակված նյութերի γ – ճառագայթման կլանման հետազոտություններ:

Մշակվել են կերամիկական բաղադրություններ պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնների, մագնետիտի հանքաքարի հիման վրա: Կերամիկայի ստացման համար, որպես կապակցող նյութ, օգտագործվել է $BaB_2O_4 - BaSiO_3$ կեղծ բինար համակարգի էվտեկտիկ բաղադրության ապակի: Նմուշները, որոնցում բարձր է (80-100%) բազմակոմպոնենտ բյուրեղային լեռնային ապարների քանակը, մասնավորապես Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնները, ունեն հարաբերական բարձր դիֆուզիոն անդրադարձման գործակից ճառագայթումից առաջ ու հետո:

Մշակվել է ոչ մետաղական ու հանքաքարային միներալների թափոններից ռադիոպաշտպանիչ «սենդվիչ» տիպի նոր շինանյութերի ստացման եղանակ: Պարզվել է, որ կոմպոզիտային նյութի բաղադրությունում մագնիսաունակ մետաղներ պարունակող

հանքային միներալների թափոնների օգտագործումով կարելի է ստանալ ռադիո-
պաշտպանիչ հատկություններով եռաշերտ շինարարական նյութեր:

**Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական
հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության
խնդիրներն ու հեռանկարները**

Համակարգող՝ պ.գ.դ. Ռ.Կարապետյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի հետազոտական խումբը, համագործակցելով
13 երկրների (ՌԴ, Բելառուս, Ղրղզստան, Լիբանան, Քուվեյթ, Մեծ Բրիտանիա,
Գերմանիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Բելգիա, Չեխիա, Ուկրաինա, ԱՄՆ) գիտական
կենտրոնների հետ, տեսական և համեմատական հետազոտություններ է իրականացրել
հայկական համայնքների ինտեգրացման գործընթացների վերաբերյալ: Ստացված
նյութերի վերլուծության հիման վրա փորձագիտական առաջարկներ են արվել ՀՀ տարբեր
գերատեսչություններին: Հետազոտությունների արդյունքներն անգլերենով լույս են տեսել
Պրահայում:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Լ.Աղալովյան
Գիտքարտուղար՝ Լ.Մարտիրոսյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Մաթեմատիկայի, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները, «Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ-ն:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 9 ակադեմիկոս, 7 թղթակից և 24 արտասահմանյան անդամներ, 5 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 1 ընդհանուր ժողով:

Բաժանմունքի ապրիլի 20-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել Լ.Աղալովյանի «Բաժանմունքի 2022թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը: Լսվել են արտասահմանյան անդամ Ա.Սերգենի (ՌԴ), Ֆ.-մ.գ.դ.Վ.Հակոբյանի (Մեխանիկայի ինստիտուտ), Ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյանի (Մաթեմատիկայի ինստ.) և Ֆ.-մ.գ.թ. Ս.Պողոսյանի (Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստ.) գիտական զեկուցումները:

Բաժանմունքն անցկացրել է բյուրոյի 21 նիստ, որոնցում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2023թ. աշխատանքային պլանը, 2023-2024 ուստարվա ասպիրանտական տեղերի քանակն ու ըստ ինստիտուտների բաշխվածությունը, ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները, ասպիրանտների գիտական ղեկավարներն ու գիտական թեմաները, 2024-25 ուստարվա ասպիրանտուրայի հայտերը, տարեկան հաշվետու ժողովի որոշման նախագիծը, 2023թ. համար ինստիտուտներին տրված բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, պետական նպատակային ծրագրերի, ինստիտուտներին անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսավորում հատկացնելու և գիտական գործուղումների հայտերը, բաժանմունքի ինստիտուտների կողմից ներկայացված հատուկ նշանակության ծրագրերը, Կառավարության «ՀՀ պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» նոր օրենքի նախագիծը, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամյա հավելավճարի չափն ու կարգը սահմանելու մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային գիտական, դրամաշնորհային ֆինանսավորման ձևերով պետական ֆինանսավորման կարգերը սահմանելու մասին» որոշման նախագծերը, ռոբոտատեխնիկական համակարգերի ու անօդաչու թռչող սարքերի վերաբերյալ ինստիտուտներում տարվող ուսումնասիրությունների մասին հարցերը, ԳԱԱ 80-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները, «Լավագույն գիտական աշխատանք մրցույթին» ներկայացված աշխատանքը: Քննարկվել են 2023թ. ինստիտուտների կարևորագույն արդյունքները, գիտակազմակերպական բնույթի այլ հարցեր:

Ըստ բաժանմունքի մասնագիտությունների՝ հրատարակվել են «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» (6 համար), «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» (4 համար), «ՀՀ ԳԱԱ և ՀԱՃՀ տեղեկագիր» (տեխնիկական գիտություններ սերիա. 4 համար), «Համակարգչային գիտության մաթեմատիկական խնդիրները» (2 համար) հանդեսները, «Հայկական մաթեմատիկական հանդես» էլեկտրոնային ամսագիրը:

Բաժանմունքի ինստիտուտների գիտաշխատողները տպագրել են 1 մենագրություն (արտասահմանում), 2 ուսումնական ձեռնարկ (1-ն արտասահմանում), 191 հոդված՝

գրախոսվող ամսագրերում 120 (85-ն արտասահմանում), գիտաժողովների նյութերի ժողովածուներում 71 (18-ն արտասահմանում), 22 թեզիս (13-ն արտասահմանում):

Բաժանմունքի ինստիտուտները կազմակերպել են 4 միջազգային գիտաժողով, միջազգային ֆինանսավորմամբ իրականացրել են 6 դրամաշնորհային ծրագիր:

Բաժանմունքի Մեխանիկայի ինստիտուտի 1 աշխատակից պաշտպանել է 1 թեկնածուական ատենախոսություն:

2023թ. դեկտեմբերին բաժանմունքի ինստիտուտներում անցկացվել են տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել և հաստատվել են 2023թ. գործունեության մասին հաշվետվությունները:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան

Գիտքարտուղար՝ Ֆ.-մ.գ.թ. Դ.Դավիդովա

Էլեկտրոնային փոստ՝ office@instmath.sci.am

Կայքէջ՝ <http://math.sci.am>

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հայտնի է, որ անընդհատ ֆունկցիաների հաջորդականության կամ շարքի զուգամիտության բազմությունն ունի F -sigma- δ տոպոլոգիական նկարագրություն: Բազմաթիվ աշխատանքներ են նվիրվել այս կամ այն դասի հաջորդականությունների զուգամիտության ու տարամիտության բազմությունների նկարագրությանը, նման խնդիրներ դիտարկվել են մաթեմատիկայի տարբեր բնագավառներում (Ֆուրիեի շարքեր, շրջանում անալիտիկ ֆունկցիաներ, աստիճանային շարքեր, դիֆերենցման տեսություն և այլն): Հենվելով նախորդ աշխատանքներում զարգացված մեթոդների վրա՝ չափելի մետրիկական տարածությունների վրա որոշված լայն դասի օպերատոր հաջորդականությունների համար տրվել է զուգամիտության ու տարամիտության բազմությունների լիովին նկարագրություն (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլան):

Ելնելով Գաուսի բաշխման հատուկ դերի մասին Խինչինի թեորեմից՝ առաջարկվել է Լինդեբերգի պայմանի նոր մեկնաբանություն, ցույց է տրվել, որ այս պայմանի առկայությունն ապահովում է պատահական մեծությունների նորմավորված գումարների քառակուսիների միատեսակ ինտեգրելիությունը և, հետևաբար, սահմանային անցում մաթեմատիկական սպասումի նշանի տակ, ինչը հնարավորություն է տվել անկախ պատահական մեծությունների համար տալ կենտրոնական սահմանային թեորեմի պարզ ապացույց (դեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Լ.Խաչատրյան):

Դիտարկվել է գրաֆների վրա հիմնված կիսավերահսկվող ուսուցումը՝ օգտագործելով մրցակցային համակարգերի տարածական սեգրեգացիայի տեսությունը: Առաջարկվել են գրադիենտի պրոյեկտման ու ռեգուլարիզացման նոր մեթոդներ: Դիտարկվել են նաև մոդելներ, որոնք հիմնված են ռեակցիոն-դիֆուզիոն համակարգերի տարածական սեգրեգացիայի վերջին արդյունքների վրա: Ներկայացվել են նաև թվային արդյունքներ՝ հաստատելու մեթոդների արդյունավետությունը:

Որոշ սիմետրիկ տիրույթների համար առաջարկվել է p -Լապլաս օպերատորի երկրորդ սեփական արժեքը և նրան համապատասխանող սեփական ֆունկցիան մոտարկելու ալգորիթմ: Դիրիխլեի եզրային պայմանի դեպքում ալգորիթմն ունի սահմանափակում՝ պահանջելով, որ երկրորդ սեփական ֆունկցիայի դրական ու բացասական

մասերն ունենան հավասար L_p -նորմեր: Նեյմանի եզրային պայմանի դեպքում ալգորիթմը չունի սահմանափակումներ: Ստացվել են մի շարք հետաքրքիր գնահատականներ առաջարկված իտերատիվ մեթոդի համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Առաքելյան):

Առաջարկվել է մոտեցում, որը հնարավորություն է տալիս գտնել առաձգական մարմնի եզրի վրա գտնվող բոլոր այն կետերը, որտեղ լարումները կարող են ունենալ խզումներ (թռիչքներ): Եղանակը հիմնված է Ֆուրիեի կրկնակի եռանկյունաչափական շարքերի միջոցով ուղղանկյան համար առաձգականության տեսության հարթ խնդրի լուծման և Ֆուրիեի շարքերի զուգամիտության արագացման նոր մեթոդների վրա: Եղանակը կիրառվել է առաձգականության տեսության հայտնի եզրային խնդրի դեպքում: Բերված թվային փորձարկումների արդյունքները հաստատել են եղանակի ճշգրտությունն ու թվային արդյունավետությունը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան):

Հետազոտվել է կիսաառանցքի վրա ինտեգրալ օպերատորների մի դաս, որը ֆունկցիայով բազմապատկման ու Վիներ-Հոպֆի օպերատորների կոմբինացիա է: Այդ օպերատորների դասը դիֆերենցիալ օպերատորի սպեկտրալ տվյալների ու սիմվոլի համապատասխան ընտրության դեպքում իրացվում են որպես L -Վիներ-Հոպֆի օպերատորներ: Ստացվել է ֆրեդհոլմության հայտանիշն ու ինդեքսը հաշվելու բանաձևը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Քամայան):

Ստացվել են անհրաժեշտ ու բավարար պայմաններ, որպեսզի ընդհանրացված համասեռ կամ սովորական բազմանդամն ավելի հզոր լինի, քան ընդհանրացված համասեռ բազմանդամը, մասնավորապես միանդամը: Պայմանները ձևակերպվել են այս բազմանդամների ընդհանրացված համասեռության կարգի ու նրանց արմատների պատիկության տերմիններով (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ.Ղազարյան):

Ստացվել է կամայական ողորկ իրական ֆունկցիաների զրոների քանակի գնահատման սկզբունք: Շարունակվել է դիֆերենցիալ հավասարումների բազմաթիվ դասերի լուծումների զրոների ուսումնասիրությունը: Նաև ուսումնասիրվել է հավասարումների հիմնական համակարգը $y' = F_1(x; y)$, $x' = F_2(x; y)$, ինչը թույլ է տվել հայտնի սահմանային ցիկլերի թեման դիտարկել շատ ավելի լայն տեսակետից և ստանալ դրանց գոյության պայմանները (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Գ.Բարսեղյան):

Կառուցվել է երկու հիմնարար տեսություն, որոնք պարփակվել են Ա.Ջրբաշյանի ու իր աշակերտի՝ Ջոել Ռեստրեպոյի (Բելգիա, Գենտի համալսարան) համատեղ մենագրության մեջ: Այդ տեսություններից մեկը, որպես շատ մասնավոր դեպք, պարունակում է Մ.Ջրբաշյանի հայտնի ֆակտորիզացիայի տեսությունը, մյուսն առաջինի շատ ավելի բարդ համանմանն է, ուր Ֆուրիեի շարքերի ապարատը փոխարինված է Լապլասի ձևափոխությամբ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Ջրբաշյան):

Ստացվել են Պէլի-Վիների տիպի ինտեգրալ ներկայացումներ շատ կոմպլեքս փոփոխականների անալիտիկ ֆունկցիաների նոր կշռային դասերի համար՝ որոշված խողովակաձև տիրույթներում, որոնց հիմքում Ջիգելի իրական տիրույթն է (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Կարապետյան):

Ընդհանրացվել է Լերոյ, Լինդելյոֆի թեորեմը՝ փոխարինելով աջ կիսահարթությունում ինտերպոլացնող անալիտիկ ֆունկցիայի տիպի π -ից փոքր լինելու պայմանը միայն կեղծ առանցքով ֆունկցիայի աճի π -ից փոքր լինելու պայմանով (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Մկրտչյան):

Շարունակվել է C^n տարածության Վեյլի պոլիէդրերի համար Կոշիի ինտեգրալի հատկությունների ուսումնասիրությունը, ներառյալ Հյուդեր-ոլորկության (ընդհուպ մինչև եզրը) հարցերը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Ուսումնասիրվել է անկյան վրա տրված (անալիտիկ անկյան ներսում ու անընդհատ անկյան վրա) ֆունկցիայի լավագույն շոշափումային մոտավորության հարցն ամբողջ

ֆունկցիաներով: Ստացված արդյունքը նոր է, և մոտարկող ֆունկցիաների աճը, կախված շոշափումային արագությունից, լավագույնն է: Ուսումնասիրվել է անկյան վրա տրված (անընդհատ անկյան վրա ու հարմոնիկ անկյան ներքնամասում) ֆունկցիայի լավագույն հավասարաչափ ու շոշափումային մոտավորության հարցն ամբողջ հարթության վրա որոշված հարմոնիկ ֆունկցիաներով: Ստացված արդյունքը նոր է, և ավելին՝ այլ հեղինակներ անսահմանափակ տիրույթների վրա այս ուղղությամբ խնդիրներ չեն դիտարկել: Ստացված արդյունքները կարելի է կիրառել անկյան համար Դիրիխլեի խնդրի լուծման ասիմպտոտիկան որոշելու հարցերում (ղեկ.՝ ֆ.-մ. գ.թ. Ս.Ալեքսանյան):

Դիտարկվել են Ռիմանի ու Լեբեգի ինտեգրալների զուգակցման հարցերը փաթեթի տիպի ինտեգրալ հավասարումների հետազոտման ու արդյունավետ լուծման բնագավառում: Դիտարկվող հավասարումների լուծումների գոյությունն ու հատկությունները ստացվել են լեբեգյան տարածություններում, իսկ լուծման գործընթացը տրվել է Ռիմանի ինտեգրալի միջոցով: Նման հարցադրումը հավանաբար նոր է: Դրվել է հետևյալ խնդիրը՝ զարգացնել փաթեթի հավասարումների որոշ դասերի տեսությունը Ռիմանի ինտեգրալի միջոցով՝ առանց կիրառելու Լեբեգի ինտեգրալի կոնցեպցիան:

Դիտարկվել են Վոլտերայի առաջին սեռի ինտեգրալ հավասարումների լուծելիության, լուծման հատկությունների ու կառուցման հարցերը բացարձակ անընդհատ կորիզային ֆունկցիաների դեպքում: Զարգացվել են հեղինակների կողմից նախկինում ստացված վերականգնման կառուցվածքային թեորեմն ու կորիզի միջինացման մեթոդը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Ենգիբարյան):

Օգտագործելով Ռիկատիի հավասարման մեթոդը՝ երկչափանի գծային համասեռ հավասարումների համակարգերի համար ստացվել են կայունության նոր թեորեմներ: Ցույց է տրվել որ 2-չափողականության դեպքում Ռաուս-Հուրվիցի թեորեմը ստացված թեորեմներից երկուսի հետևանքն է:

Օգտագործելով Ռիկատիի հավասարման մեթոդը՝ ստացվել են Կամենևի տիպի պայմաններ երրորդ կարգի գծային դիֆերենցիալ հավասարումների համար: Ապացուցվել են երեք օսցիլյացիոն թեորեմներ, որոնք ընդհանրացնում են Լազարի թեորեմը:

Օգտագործելով Ռիկատիի հավասարման մեթոդը երկչափանի գծային համասեռ հավասարումների համակարգերի համար՝ ստացվել է համեմատության նոր թեորեմ: Այս արդյունքը հիմնված է զրո- դասերի նոր կոնցեպտի վրա և ընդհանրացնում է Շտուրմի թեորեմը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Գ.Գրիգորյան)

Դիտարկվել են կիսառանցքի, ամբողջ առանցքի ու հարթության վրա մոնոտոն ոչ գծայնությամբ սկալյար ու վեկտորական որոշ ինտեգրալ հավասարումների հետազոտության հարցեր: Ուսումնասիրվող հավասարումները լայնորեն կիրառվում են տախիոնյան դաշտերում, ք-ադիկ բաց ու փակ լարերի դինամիկ տեսությունում, գազերի կինետիկ տեսությունում, քվանտային մեխանիկայում, ճառագայթման տեղափոխման տեսությունում ու համաճարակի աշխարհագրական տարածման մաթեմատիկական տեսությունում: Ստացվել են լուծման գոյության ու միակության մի շարք կոնստրուկտիվ թեորեմներ, նաև բավարար պայմաններ, որոնց առկայության դեպքում դիտարկվող հավասարումները որոշակի ֆունկցիոնալ տարածություններում ունեն միայն տրիվիալ լուծումներ: Հետազոտվել են կառուցված լուծումների մի շարք որակական հատկություններ՝ մոնոտոնություն, անընդհատություն, զոգավորություն ու ասիմպտոտիկ վարք անվերջությունում: Ստացված արդյունքները տարածվել են այդ հավասարումների ինչպես համապատասխան վեկտորական, այնպես էլ դիսկրետ անալոգների վրա: Մշակվել և զարգացվել են հատուկ խտերացիոն մեթոդներ՝ նշված հավասարումների մոտավոր լուծումների կառուցման ուղղությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Խ.Խաչատրյան):

Հրատարակության է պատրաստվել «Лекции по стохастической геометрии» մենագրությունը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ռ.Համբարձումյան):

Գտնվել է պայման, որը թույլ է տվել օգտագործելով շրջանաձև Ռադոնի ձևափոխությունը՝ գծի վրա տեղադրված դետեկտորներով վերականգնել անընդհատ ֆունկցիան (պարտադիր չէ կոմպակտ կրիչով): Ներկայացվել է այդ ձևափոխության համար նոր շրջանի բանաձև: Այս բանաձևը թույլ է տալիս վերականգնել անհայտ ֆունկցիան լոկալ տվյալների միջոցով (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Կայունության ու կանոնավորության պայմաններին բավարարող տրանսլյացիոն-անփոփոխ զույգ պոտենցիալների դասի համար դիտարկվել է համապատասխան սահմանային Գիբսյան G պրոցեսը d -չափանի էվկլիդեսյան տարածությունում: Ներկայացվել է G -ի մասնիկների թվերի կենտրոնական սահմանային թեորեմ՝ օգտագործելով վիճակագրական մեխանիկայի կետային պրոցեսների կառուցման վերացական մեթոդը, որը զուգորդվում է կենտրոնական սահմանային թեորեմի Դոբրուշինի մոտեցմամբ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ս.Պողոսյան):

Ուսումնասիրվել են եզրային խնդիրների թվային լուծման կտոր գծային մոտարկման մեթոդները, որոնք բերվել են եռանկյունների ցանցից կախված հավասարումների համակարգերի: Բացահայտվել է եզրային խնդրի այն պայմանը, որի բավարարման դեպքում լավագույն ցանցապատումը Դելոնեի եռանկյունապատումն է: Ապացուցվել է, որ էլեկտրամագնիսական դաշտի թվային հաշվարկի խնդիրը բավարարում է այդ պայմանին (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Սուքիասյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել են սովորական կամ մաքսիմալ տիպի օրթոգոնալ գումարների նորմային գնահատականների ուսումնասիրությունները: Խնդիրները դիտարկվել են վեյվլետային ու մարտինգալային համակարգերի համար: Երկու դեպքում էլ ստացվել են մաքսիմալ գումարների քառակուսի-արմատ-լոգարիթմական ճշգրիտ գնահատականներ: Մարտինգալային գումարների համար ստացվել են նաև Խինչինի տիպի անհավասարություններ ճշգրիտ հաստատումներով: Ավելին, ապացուցվել են թեորեմներ, որոնք թույլ են տվել մարտինգալերի համար նմանատիպ գնահատականների ուսումնասիրությունները բերել պարզագույն՝ Ռադեմախերի կամ Հաարի համակարգերի դեպքերին (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլան):

Գտնվել է պայման, որի առկայությունը թույլ է տվել վերականգնել անհայտ ֆունկցիան՝ օգտագործելով Ռադոնի շրջանաձև ձևափոխությունը փոքր աղեղի վրա տեղադրված դետեկտորներով: Շրջանային ձևափոխության համար գտնվել է նոր շրջանի բանաձև (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Դիտարկվել են դասական գիբսյան կետային պրոցեսներ սահմանափակ ու անսահմանափակ տիրույթներում, որոնցում մասնիկները փոխազդում են զույգ պոտենցիալի միջոցով: Ուսումնասիրվել է տիրույթում գտնվող մասնիկների թիվը բնութագրող պատահական մեծության ասիմպտոտիկ վարքը: Պոտենցիալի բավականին լայն դասի համար ապացուցվել են ինտեգրալ կենտրոնական սահմանային թեորեմներ սահմանափակ ու անսահմանափակ տիրույթների դեպքում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ս.Պողոսյան):

Ստացվել են պարզ անհրաժեշտ ու բավարար պայմաններ վերջավոր պատահական դաշտերը նրանց մի-կետային պայմանական բաշխումների միջոցով նկարագրելու համար: Ցույց է տրվել, որ վերջավոր ծավալում բոլոր պատահական դաշտերը գիբսյան են: Դիտարկվել են դասական գիբսյան կետային պրոցեսներ սահմանափակ ու անսահմա-

նափակ տիրույթներում, որոնցում մասնիկները փոխազդում են զույգ պոտենցիալի միջոցով: Ուսումնասիրվել է տիրույթում գտնվող մասնիկների թիվը բնութագրող պատահական մեծության ասիմպտոտիկ վարքը: Պոտենցիալի բավականին լայն դասի համար ապացուցվել են ինտեգրալ կենտրոնական սահմանային թեորեմներ սահմանափակ ու անսահմանափակ տիրույթների դեպքում (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Բ.Նահապետյան):

Ցույց է տրվել, որ ամպային ենթակառուցվածքների և նրանցում աշխատող ծրագրերի մոնիթորինգն արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել այսպես կոչված KPI (key performance indicator) ժամանակային շարքերի (մետրիկաների) վրա: Այնուհետև համակարգի խափանումները միանգամից կբացահայտվեն այդ մետրիկաների տարօրինակ վարքագծով: Հաջորդ քայլը նման վարքագծի բացատրումն է վերջինիս հետ կոռելացված այլ ժամանակային շարքերի օգնությամբ, որոնց վարքագծի առանձնահատկություններն ավելի մատչելի են նույնացվում համակարգի խնդիրների հետ: Այս աշխատանքը նման մի համակարգի նախագծումն ու իրականացումն է:

Ուսումնասիրվել է ամպային ենթակառուցվածքներում աշխատող ծրագրերի խափանումների պատճառների բացահայտումը հետքերի (tracing) օգնությամբ, որոնց համար ստացվել է դասակարգման խնդիր, որը լուծվել է կանոններ սովորող RIPPER ալգորիթմի օգնությամբ: Բացահայտվել են այդ ալգորիթմի հնարավորություններն արագության ու հուսալիության տեսանկյունից: Ոլորտի մասնագետների հետ ստուգվել է կանոնների օգտակարությունն իրական ամպային ծրագրերի խափանումների բացատրման տեսանկյունից (դեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Aleksanyan S., Optimal uniform approximation on the angles by the entire functions, “Journal of Contemporary Mathematical Analysis NAS of RA”, v. 58, 1, 2023, pp. 213-218.
2. Aramyan R., Inversion of the pair of weighted and classical circular Radon transforms in $C(R^2)$, “Journal of Mathematical Analysis and Applications”, v. 530, issue 2, 2023, doi.org/10.1016/j.jmaa.2023.127687
3. Aramyan R., Recovering a function from spherical means in 3D using local data, “Inverse Problems and Imaging”, 2023, doi: 10.3934/ipi.2023050
4. Aramyan R., Reconstruction of a function defined on R^2 from its circular transformations, centered on arc, “J. Math Sci”, 2023, https://doi.org/10.1007/s10958-023-06748-9
5. Barsegian B., Knots of plane curves, Applications to ODE, “Izvetiya Akademii Nauk Armenii”, v. 58, N 3, 2023, pp. 14-20.
6. Bozorgnia F., Fotouhi M., Arakelyan A., Elmoataz A., Graph based semi-supervised learning using spatial segregation theory, “Journal of Computational Science”, v. 74, article 102153, 2023, pp. 1-11.
7. Bozorgnia F., Arakelyan A., Approximation of the second eigenvalue of the p-Laplace operator in symmetric domains, “Journal of Computational and Applied Mathematics”, v. 434, article 115349, 2023, pp.1-16.
8. Ghazaryan H., Margaryan V., On the comparison of powers of differential operators (polynomials). “Bollettino dell’ Unione Matematica Italiana”, v. 16, issue 4, 2023, pp. 703-740.
9. Grigorian G., On the stability of systems of two linear first-order ordinary differential equations, “Differ. equ. appl.”, v. 15, N 3, 2023, pp. 285-296, http://dx.doi.org/10.7153/dea-2023-15-15
10. Grigorian G., Kamenev type conditions for oscillation of third order linear ordinary differential equations, “Acta Mathematica Universitatis Comenianae”, https://doi.org/10.48550/arXiv.2301.09975
11. Grigorian G., A generalization of Sturm’s comparison theorem, “Rocky Mt. J. Math.”, v. 47, N 5, 2023, pp. 1497-1524.
12. Harutyunyan A., Poghosyan A., Harutyunyan L., Aghajanyan N., Bunarjyan T., Challenges and experiences In designing interpretable KPI-diagnostics for cloud applications, “Journal of Universal Computer

- Science” (JUCS), v. 29(11), 2023, pp. 1298-1319.
13. Kamont A., Karagulyan G., On wavelet polynomials and Weyl multipliers, “Journal d’Analyse Mathématique”, v. 150, issue 2, 2023, pp. 429-445.
 14. Karagulyan G, Karagulyan V., On uniqueness properties of Rademacher chaos series, “Math. Notes”, v. 114, 2023, pp. 5-6.
 15. Khachatryan L., Nahapetian B., On the characterization of a finite random field by conditional distribution and its Gibbs form, “J. Theor. Probab.”, 2023, 36 pp, 1743–1761.
 16. Khachatryan Kh., Petrosyan H., On a class of nonlinear integral equations of the Hammerstein–Volterra type on a semiaxis, “Russian Math. (Iz. VUZ)”, v. 67 (1), 2023, pp. 64-73, <https://doi.org/10.26907/0021-3446-2023-1-75-86>
 17. Poghosyan A., Harutyunyan A., Grigoryan N., Pang C., Distributed tracing for troubleshooting of native cloud applications via rule-induction systems, “Journal of Universal Computer Science”, (JUCS), v. 29(11), 2023, pp. 1274-1297.
 18. Vagharshakyan A., Sectorial Paley–Wiener theorem, “Math. Meth. Appl. Sci.”, v. 46, 202), pp. 19173–19183, DOI 10.1002/mma.9618
 19. Енгибарян Н.Б., О сочетании интегралов Лебега и Римана в теории уравнений свертки, Ер., “Теоретич. и матем. физика”, т. 148, N 2, 2023, с. 216-220.
 20. Камалян А.Г., Киракосян Г.А., О Фредгольмовости одного класса операторов L-Винера-Хопфа, Ер., ДНАН Армении, т. 123, N 3-4, 2023, с. 1-6.
 21. Сукиасян Г.С., Алаеи М.Е., Автоматизированная система для статистической оценки состояния финансового рынка, Ер., “Изв. НАН РА. Технич. науки”, т. 76, N 2, 2023, с. 230-236.

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.դ. Վ.Ավետիսյան
 Փոխտնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան
 Գիտքարտուղար՝ Ֆ.-մ.գ.թ. Լ.Դաշտոյան
 Էլեկտրոնային փոստ՝ mechins@sci.am
 Կայքէջ՝ www.mechins.sci.am

Մասնագիտական խորհուրդ 047՝ «Մեխանիկա»

Նախագահ՝ ակ. Լ.Աղալովյան, գիտքարտուղար՝ Ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել է պիեզոէլեկտրական ալիքատարում էլեկտրաառաձգական ալիքների տեղայնացումը, երբ ալիքատարի երեսներին զուգահեռ պարբերականորեն տեղադրվել են էլեկտրոդներ: Երկու հարակից ենթաշերտերի միջև փոխանցման մատրիցան կառուցվել է էլեկտրոդների վրա էլեկտրական կարճված պայմանների հիման վրա: Դուրս են բերվել ալիքատարի վերին ու ստորին երեսների առաձգական տեղաշարժերի միջև տեղափոխության կապի հավասարումները լարման բացակայության եզրային պայմանի դեպքում: Նաև դուրս են բերվել ալիքատարի երկու երեսների միջև տանգենցյալ լարումների կապի հավասարումներն ամրացված եզրային պայմանի դեպքում: Դիտարկված համակարգերում էլեկտրամեխանիկական փոխկապակցվածությունը խիստ ազդում է ակուստիկ ալիքների հատկությունների վրա՝ հանգեցնելով նոր հատկությունների: Մասնավորապես ցույց է տրվել, որ էլեկտրամեխանիկական փոխկապակցվածության շնորհիվ ալիքները կարող են տեղայնացվել համակարգի ինտերֆեյսներում, եթե էլեկտրոդները ոչ միասնական են բաշխված պիեզոէլեկտրական ալիքատարի հաստության երկայնքով: Ալիքների տեղայնա-

ցումը զգալիորեն մեծանում է շերտերի միջև ոչ սիմետրիկորեն ներմուծված էլեկտրոդների քանակի աճմանը զուգահեռ (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Ավետիսյան):

Կառուցվել են առաձգականության տեսության որոշ դասի կոնտակտային ու խառը եզրային խնդիրների որոշիչ ինտեգրալ հավասարումների թվային վերլուծական լուծումները մեխանիկական քառակուսացման բանաձևերի օգտագործմամբ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Սահակյան):

Ստացվել է երկշերտ սալի ստիպողական տատանումների 3D խառը եզրային խնդրի լուծումը, որը մոդելավորում է կառուցվածքների հիմք-հիմնատակ փաթեթի վրա սեյսմիկ ազդեցությունները: Ցույց է տրվել, որ կառուցվածքների ամրության տեսակետից գլխավոր դերակատարություն ունեն տանգենցիալ տեղափոխություններն ու ընդլայնական շոշափող լարումները, մյուս հաշվարկային մեծությունների դերակատարությունը կարգով փոքր է (ղեկ.՝ ակ. Լ.Աղալովյան):

Փորձարարական հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությամբ ցույց է տրվել, որ կարբոնատային կազմի սպիտակահողային հիմքով, համեմատաբար ջրացեմենտային մեծ հարաբերությամբ ցեմենտագրունտային կոմպոզիտների առաձգականության մոդուլի ու ամրության վրա քիմիապես չկապված խոնավության ազդեցության մեխանիզմը գործնականում չի տարբերվում կոնստրուկցիոն ցեմենտային թեթև բետոնների նույնանուն մեխանիկական հատկությունների վրա վերոհիշյալ գործոնի ազդեցության մեխանիզմից: Այսինքն՝ դետորբցիոն պրոցեսներ ընթանալու դեպքում տեղի է ունենում ցեմենտային կապակցանյութի հենքով հիշյալ նյութերի մեխանիկական բնութագրիչների ցուցիչների նվազում սկզբնական բարձր, ապա մարող արագությամբ: Ասվածը նախանշում է այն, որ ցեմենտագրունտային կոմպոզիտների դեֆորմացվելուն ու քայքայվելուն դիմադրողականության փոփոխությունների վարքում վերը հիշյալ գործոնը որոշ դեպքերում կարող է լինել գերակշռող այլ գործոնների նկատմամբ, որը հաճախ նկատվում է կոնստրուկցիոն ցեմենտային բետոնների մոտ (ղեկ.՝ տեխ.գ.դ. Կ.Կարապետյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Միաօղակ էլեկտրամեխանիկական մանիպուլյատորի համար լուծվել է ղեկավարող լարման և մանիպուլյատորի վերջնական վիճակների այն տիրույթների կառուցման խնդիրը, որոնց յուրաքանչյուր կետ մանիպուլյատորի տեղափոխումը սկզբնական հանգստի վիճակից կառուցված ղեկավարման օգնությամբ իրականացվում է վերջավոր ժամանակում՝ առանց լարման ֆունկցիայի ու էլեկտրաշարժիչի ռոտորի փաթույթում ջերմաանջատման հզորության վրա դրված տրված սահմանափակումների խախտման (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Վ.Ավետիսյան):

Մագնիսաակտիվ բարակ թաղանթների համար ստացվել են տատանումների ու կայունության հավասարումներն ու մակերևութային պայմանները, ձևակերպվել են մաթեմատիկական ֆիզիկայի համապատասխան խնդիրներ: Դիտարկվել է կրկնակի կորության ուղղանկյուն օրթոտրոպ թաղանթի ոչ գծային տատանումների խնդիրը: Ոչ գծային խնդիրների լուծման անալիտիկ մեթոդի հիման վրա ուսումնասիրվել է խնդրի ոչ գծայնության ազդեցությունը տատանողական պրոցեսի բնութագրիչների վրա: Ցույց է տրվել, որ տատանումների ոչ գծային լինելը հանգեցնում է էապես նոր տեսակի ռեզոնանսների ի հայտ գալուն՝ օբերտոնների ու սեփական տատանումների պատիկ հաճախականությունների վրա: Ստացվել են բանաձևեր, որոնք ցույց են տվել ամպլիտուդա-հաճախության կախվածության բնույթը, և այդ բանաձևերը կարող են հիմք

հանդիսանալ դիտարկվող թաղանթի ոչ գծային տատանումների բնութագրերի վրա անիզոտրոպիայի ու ընդլայնական սահքերի ազդեցությունն ուսումնասիրելու համար: Առաջարկվել է ամպլիտուդա-հաճախականության կախվածության կորի վրա սահմանային ու բիֆուրկացիայի կետերի հայտնաբերման մեթոդ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան):

Տատանման էներգիայի հավաքման նպատակով ուսումնասիրվել է պիեզոէլեկտրական ներդիրներով ու ներքին հողակապերով պարբերաբար ամրակցված հեծանում ծռման ալիքների արգելված գոտիների խնդիրը: Ուսումնասիրվել են նաև վերջավոր երկարության պարբերական հեծանի ընդհանուր լուծումները երկու տոպոլոգիական համակարգերի համար (ներդիրներով հեծան, փոքրիկ կարկատաններով ու ներքին ծղխնիներով հեծան): Ֆլուկեի տեսության օգնությամբ ստացվել են արգելված գոտու կառուցվածքը որոշող բացահայտ արտահայտություններ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Դ.Փիլիպոսյան):

Դիտարկվել է անվերջ պիեզոէլեկտրիկ ալիքատարում միակողմանի առաձգական սահքի ալիքի տարածումը սահմանափակ ժամանակի ինտերվալում ղեկավարելու խնդիրը: Պիեզոէլեկտրիկ ալիքատարի մակերևույթներն ազատ են լարվածությունից ու շփումներից: Էլեկտրական դաշտի տարբեր պոտենցիալներով բեռնված էլեկտրոդները տեղակայված են ալիքատարի մակերևույթներից տարբեր հեռավորությունների վրա: Պիեզոէլեկտրական ալիքատարի մեխանիկորեն ազատ մակերևույթների մոտ լիցքավորված էլեկտրոդները հանգեցնում են ալիքատարի մակերևույթների վրա համարժեք էլեկտրամեխանիկական ազդեցության: Ձևակերպվել է ալիքատարի հաստությամբ էլեկտրաակտիվ միակողմանի սահքի դեֆորմացիայի ալիքի բաղադրիչների բաշխման եզրային ղեկավարման խնդիրը, որը լուծվում է՝ օգտագործելով Ֆուրիեի շարքի ներկայացման մեթոդը, որը ներառում է էլեկտրաակուստիկ ալիքների ճիշտ ձևի հայտնաբերում՝ օգտագործելով մակերևութային ազդեցությունների համապատասխան հարմոնիկները (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Ավետիսյան):

Դիտարկվել է բազմաշերտ փաթեթների, մասնավորապես եռաշերտ սալի դինամիկական խնդիր: Ուսումնասիրվել է երկայնական առաձգական ալիքների տարածումն ու նրա բնույթը սահմանային շերտում: Հաշվի են առնվել տեղանքի մակերևույթի անհարթությունների առանձնահատկությունները: Ստացվել են սահմանային շերտի մեծությունների մարման արագությունները՝ կախված շերտերի երկրաչափական ու մեխանիկական բնութագրիչներից (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Լ.Ղուլազարյան):

Առաջարկվել է մարմինների կոնտակտի նոր մոդել հանգստի շփման հաշվառումով: Ըստ նոր մոդելի ենթադրվում է, որ մարմինների կոնտակտի ողջ տեղամասում գործող շոշոփող լարումները կապված են նորմալ ճնշման հետ ընդհանրացված չոր շփման օրենքով, որի շփման գործակիցը կախված է կոնտակտային մակերևույթների հպման կետերի կոորդինատներից և ուղիղ համեմատական է դրանց: Առաջարկված նոր մոդելի կիրառմամբ կառուցվել է հարթ հիմքով դրոշմի ու առաձգական կիսահարթության կոնտակտային փոխազդեցության խնդրի փակ լուծումը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Հակոբյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Avetisyan A.S., *Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites*, (2023), *Advanced Structured Materials*, v. 182, Springer Cham., 225 p., <https://doi.org/10.1007/978-3-031-26731-4>

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

2. Ստեփանյան Ս.Պ., Մաթեմատիկական անալիզի հիմունքներ (բուհական դասագիրք), Ե., ԵՊՀ հրատ., 2023, 318 էջ:
3. Vantsyan A. Anushavan, Mojtaba Mozavej. *Some Methods of Solution of Transcendental and Algebraic. Equations*, Tehran, Lambert Academic Publishing, 2023, 84 p.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

4. Սարգսյան Կ.Ս., Ջերմագայուն նյութից պատրաստված սալի կայունության խնդիրը, Ե., ՀԱՊՀ «Բանբեր» հանդես, N 2, 2023, էջ 25-32:
5. Аветисян А.С., Саакян С.Л., Отражение и прохождение форм волны сдвига от границы раздела двух полубесконечных частей упругого композитного волновода, Ер., ДНАН Армении, т. 123, N 1, 2023, с. 12-20, <https://doi.org/10.54503/0321-1339-2023.123.1-12>.
6. Аветисян В.В., Управляемое движение электромеханической системой с ограничениями, сб. XIII всерос. съезда по фунда. пробл. теоретич. и прикл. Механике, т. 1, СПб., изд. "Политех-Пресс", 2023, с. 301-304.
7. Агабекян П.В., Арутюнян Л.А., Плоская задача теории упругости для составной плоскости с трещинами. Ер., "Изв. НАН РА. Механика", т. 76, N 2, 2023, с.11-19.
8. Агаловян Л.А., Япуджян В.Т., О пограничном слое в смешанной 3D краевой задаче ортотропной пластинки, Ер., "Изв. НАН РА. Механика", т. 76, N 3, 2023, с. 64-75.
9. Агаян К.Л., Плоская сдвиговая волна в пьезоэлектрическом слое со смешанными граничными условиями, Ер., ДНАН РА, т. 123, N 3-4, с. 61-74.
10. Агаян К.Л., Амирджанян А.А., Изгиб балки на крае упругой полосы, усиленной упругими опорами., "Изв. НАН РА. Механика", т. 76, N 1, 2023, с. 3-14, <http://doi.org/10.54503/0002-3051-2023.76.1-3>
11. Агаян К.Л., Атоян Л.А., Упруго-спиновые волны в ферромагнитном полупространстве с магнитным экраном, Ер., "Изв. НАН РА. Механика", т. 76, N 2, 2023, с. 3-10, <http://doi.org/10.54503/0002-3051-2023.76.2-3>
12. Акопян В.В., Гаспарян А.В., Саакян А.В. О решении одного гиперсингулярного интегрального уравнения, встречающегося в механике трещин, Ер., ДНАН Армении, т. 123, N 2, 2023, с. 18-30. DOI:10.54503/0321-1339-2023.123.2-1.
13. Амирджанян А.А, Геворгян Г.З., Дарбинян А.З., Отражение упругих волн от границы полупространства при условии скольжения с трением, Ер., "Изв. НАН РА. Механика", т. 76, N 1, 2023, с. 15-26. DOI: 10.54503/0002-3051-2023.76.1-15.
14. Барсегян В.Р., Граничное управление и оптимальное управление распределенной неоднородной колебательной системой с промежуточными условиями, мат. XVI всерос. мультikonф. по проблемам управления (МКПУ-2023)", т. 2, 2023, Волгоград, изд. ВолгГТУ, с. 51-53.
15. Барсегян В.Р., Граничное управление некоторой распределенной неоднородной колебательной системой с заданными состояниями в промежуточные моменты времени, М., "Автоматика и телемеханика", N 2, 2023, с. 66-80, <https://doi.org/10.31857/S0005231023020046> .
16. Барсегян В.Р., Матевосян А.Г., Об одной задаче управления беспилотным летательным аппаратом самолетного типа с заданными промежуточными значениями разных частей координат, СПб, "Дифференциальные уравнения и процессы управления", N 2, 2023, с. 86-96. <https://doi.org/10.21638/11701/spbu35.2023.205>.
17. Барсегян В.Р., О задачах граничного управления и оптимального управления распределенной неоднородной колебательной системой с заданными промежуточными условиями на функции состояния, мат. межд. Воронежской весенней математ. Школы "Современные методы теории краевых задач. Понтрягинские чтения – XXXIV", Воронеж, ВГУ, 2023, с. 66-68.
18. Барсегян В.Р., Солодуша С.В., Граничные управления некоторой распределенной неоднородной колебательной системой с промежуточными условиями, М., "Итоги науки и техн. сер. "Современная математика и ее приложения. Тематические обзоры", т. 226, 2023, с. 3-15, <https://doi.org/10.36535/0233-6723-2023-226-3-15> <https://www.mathnet.ru /links/14fa740d47a98fe54d67642fb15c817b/into1196.pdf>
19. Барсегян В.Р., Солодуша С.В., Задача оптимального управления тепловым воздействием лазерного луча на двухслойный биоматериал, мат. V межд. конф. "Динамические системы и компьютерные науки: теория и приложения ", Иркутск, ИГУ, 2023, с. 78-81.
20. Барсегян В.Р., Солодуша С.В., О задаче оптимального граничного управления распределенной неоднородной колебательной системой с заданными промежуточными условиями, мат. межд.

Воронежской весенней матем. школы, “Современные методы теории краевых задач, Понтрягинские чтения – XXXIV”, Воронеж, ВГУ, 2023, с. 68-70.

21. Барсегян В.Р., Оптимальное граничное управление распределенной неоднородной колебательной системой с заданными состояниями в промежуточные моменты времени, М., “Журн. вычислит. матем. и матем. физики”, т. 63, N 1, 2023, с. 74-84. <https://doi.org/10.31857/S0044466922120031>.
22. Барсегян В.Р., Задача граничного управления смещением на двух концах процессом колебания стержня, состоящего из двух участков разной плотности и упругости, М., “Изв. РАН. Механика твердого тела”, N 2, 2023, с. 125-135, DOI 10.31857/S0572329922600517 <https://mtt.ipmnet.ru/ru/Issues/2023/2/125>.
23. Геворкян Г.А., Численное решение задачи Кирша с центральным круговым отверстием произвольного радиуса на основе МКЭ, мат. XXIII межд. конф. по вычислительной механике и современным прикладным программным системам, с. Дивноморское, Краснодарский край, 2023, с. 195-197.
24. Гукасян А.А., Управляемость и оптимальный синтез в задачах обслуживания, СПб, “Транспортное, горное и строительное машиностроение: наука и производство”, НИЦ МС, N 20, 2023, с. 18-30.
25. Ерофеев В.И., Леонтьева А.В., Шекоян А.В., Дисперсия продольных волн, распространяющихся в материалах. Вестник Пермского нац. исслед. политехн. ун-та, Пермь, “Механика”, N5, 2023, с. 26-35.
26. Жамакочян К.А., Саркисян Л.С., Саркисян С.О., Задачи статики и собственных колебаний плоского напряженного состояния поперечного изгиба прямоугольного листа графена по моменто-мембранной теории упругих тонких пластин, сб. “Динамич. и технологич. проблемы механики конструкций и сплошных сред”, Кременки, т. 1, 2023, с. 120-122.
27. Казарян К.Б., Мусій Р., Мельник Н., Термонапружений стан біметалевих пластин за індукційного нагріву неусталеним електромагнітним полем, Міжнар. наук. конф. «Сучасні проблеми механіки та математики», Львов 2023, с. 115-116, <http://iapmm.lviv.ua/mpmm2023/materials/proceedings>.
28. Канецян Е.Г., Мкртчян М.С., Мхитарян С.М., Определяющие уравнения деформирования упругого слоя во взаимодействии с концентраторами напряжений приосесимметричном кручении, Ер., ДНАН Армении, т. 123, N 2, 2023, с. 38-50.
29. Мартиросян С.Р., Об устойчивости широкой панели со свободным краем, растянутой по сверхзвуковому потоку газа, при наличии сосредоточенных инерционных масс и моментов, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 76 (1), 2023, с. 37-55, DOI: 10.54503/0002-3051-2023.76.1-37.
30. Мартиросян С.Р., Оптимальные гарантированные алгоритмы скоростной коррекции инерциальной навигационной системы, Ер., ДНАН Армении, т. 123, N 2, 2023, с. 7-17. DOI:10.54503/0321-1339-2023.123.2-7. ISSN 0321-1339.
31. Мартиросян С.Р., Сверхзвуковой флаттер прямоугольной пластинки умеренных размеров со свободным краем, сжатой по потоку газа, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 76 (3), 2023, с. 47-63. DOI: 10.54503/0002-3051-2023.76.3-47.
32. Мартиросян С.Р., Сверхзвуковой флаттер удлиненной прямоугольной пластинки со свободным краем, сжатой по потоку газа, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 76 (2), с. 44-58. DOI: 10.54503/0002-3051-2023.76.2-44.
33. Саргсян А.М., Плоская задача теории упругости для кругового сектора, радиальные стороны которого взаимодействуют с упругим стрингером и жестким штампом без трения, ч. 3, Satteldorf, Germany, “German International Journal of Modern Science”, N 64, 2023, с. 21-27.
34. Саргсян А.М., Плоская задача теории упругости для кругового сектора, радиальные стороны которого взаимодействуют с упругим стрингером и жестким штампом без трения. Продолжение, Florence, Italy, “Scientific journal of Italy”, N 41, 2023, с. 43-48.
35. Саргсян А.М., Плоская задача теории упругости для кругового сектора, радиальные стороны которого взаимодействуют с упругим стрингером и жестким штампом без трения, ч. 2, Satteldorf, “Germany German International Journal of Modern Science”, N 58, 2023, с. 30-36.
36. Сейранян С.П., К решению задачи о симметрично-антисимметричном изгибе прямоугольной защемленной по контуру пластины посредством модификации метода С.П. Тимошенко, мат. XXIII межд. конф. по вычислит. механике и соврем. прикладным программным системам, М., изд. МАИ, 2023, с. 268-273, ISBN 978-5-4316-1054-7, <http://www.cmmass.ru>.
37. Торосян В. С., Погосян А.В., О выявлении особенностей напряжений на границе прямоугольной

- области в одной задаче теории упругости, Ер., ДНАН Армении, т. 123, N 1, 2023, с. 21-29.
38. Япуджян В.Т., О вынужденных колебаниях ортотропной полосы при наличии внутреннего трения и кулонова трения между полосой и жестким основанием, Ер., ДНАН Армении, т.123, N1, 2023,с.30-39.
 39. Япуджян В.Т., Об одной смешанной 3D задаче теории упругости для ортотропной пластинки, Д.Армении, Ер., т. 123, N 2, 2023, с. 31-37.
 40. Aghalovyan L., Ghulghazaryan L., Hambardzumyan P., 3D dynamic problems for three-layered shells with delamination between the layers, "Mechanics of High-Contrast Elastic Solids. Advanced Structured Materials", v. 187. Springer, Cham. 2023. pp. 13-26, https://doi.org/10.1007/978-3-031-24141-3_2.
 41. Aghalovyan L., Ghulghazaryan L., Kaplunov J., Prikazchikov D., Degenerated boundary layers and long-wave low-frequency motion in high-contrast elastic laminates, "Mathematics", v. 11, 2023, 3905, <https://doi.org/10.3390/math11183905>
 42. Aghalovyan L., Ghulghazaryan L., Kaplunov J., Prikazchikov D., Sargsyan. M. On the dynamic behaviour of a three-layered strip in a non-classical mixed plane deformation problem,"Proceedings of NAS RA. Mechanics", v. 76, N 3, 2023, pp. 35-46, <http://doi.org/10.54503/0002-3051-2023.76.3-35>
 43. Aghalovyan L., Aghalovyan M., On forced 3D vibrations of two layered plates under periodic tangential impacts, "Mechanics of Composite Materials", v. 59, N 2, 2023, pp. 393-402.
 44. Aghalovyan M., Aghalovyan L., Ghulghazaryan L., Method for determining the accumulated potential energy of deformation in lithospheric plates, blocks of the Earth's crust and earthquake prediction, "XXVIII General Assembly of the International Union of Geodesy and Geophysics", (IUGG), Berlin, 2023, <https://doi.org/10.57757/IUGG23-3019s>
 45. Aghayan K., Bagdasaryan R., Diffraction of planewaves in an elastic half-plane enhanced along its boundary by a semi-infinite stringer, in book: "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep. book series Advanced Structured Materials" (STRUCTMAT), v.185, 2023, pp.17-32, https://doi.org/10.1007/978-3-031-18564-9_2
 46. Antipov Y., Mkhitarian S., Herzian and adhesive plane models of contact of two inhomogeneous elastic bodies, "Euro. Jnl of Applied Mathematics", v. 34, 2023, pp. 667-700, Cambridge University Press, DOI: 10.1017/s 0956792522000237
 47. Avetisyan A., 2D multicomponent electroacoustic waves in piezo crystalline layers, in: "Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites. Advanced Structured Materials", v. 182, Springer, Cham., 2023, pp. 87-117, https://doi.org/10.1007/978-3-031-26731-4_4
 48. Avetisyan A., Controllability of electroacoustic wave process, in: "Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites. Advanced Structured Materials", v. 182, Springer, Cham., 2023, pp. 177-215, https://doi.org/10.1007/978-3-031-26731-4_6
 49. Avetisyan A., Coupled electroactive stress-strain states in piezoelectric textures, in: "Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites. Advanced Structured Materials", v. 182, Springer, Cham., 2023, pp. 25-85, https://doi.org/10.1007/978-3-031-26731-4_3
 50. Avetisyan A., Formation of a hybrid of electroacoustic waves in piezoelectric layered composites, in: "Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites. Advanced Structured Materials", v. 182, Springer, Cham., 2023, pp. 119-175, https://doi.org/10.1007/978-3-031-26731-4_5
 51. Avetisyan A., Kamalyan A., Docking of inhomogeneous surfaces of piezoelectric layers in a composite waveguide as a harvesters of wave energy, "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep", "Advanced Structured Materials", v. 185, Springer, Cham., 2023, pp. 43-56, https://doi.org/10.1007/978-3-031-18564-9_4
 52. Avetisyan A., Khachatryan V., Propagation of a hybrid of heterogeneous electroacoustic waves in composite piezoelectric waveguide without acoustic contact between layers, "Proceed. of NAS RA, Mechanics", v. 76, N 1, 2023, pp. 56-74, <https://doi.org/10.54503/0002-3051-2023.76.1-56>
 53. Avetisyan A.S., Mathematical Boundary Value Problem of Linear Electro-Elasticity, In: Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites. Advanced Structured Materials, (2023), v. 182, Springer, Cham., pp. 7-24, https://doi.org/10.1007/978-3-031-26731-4_2
 54. Avetisyan A., Mkrtchyan M., Avetisyan L., Variety of surface actions in problems of surface control of the three-component electroacoustic waves in a piezoelectric waveguide. Non-acoustic surface actions, "Acoustical Physics", v. 69, N 4, 2023, pp. 478-486, <https://doi.org/10.1134/S106377102360033X>

55. Avetisyan A., Mkrtchyan M., Avetisyan L., Controlling electro-acoustic wave propagation in a piezoelectric waveguide with non-acoustic edge action, "Mechanics - Proceedings of NAS RA", v.76, N3, 2023, pp.3-21, <https://doi.org/10.54503/0002-3051-2023.76.3-19>
56. Avetisyan A., Ghazaryan K., Marzocca P., Stability of a finite length multi-span beam resting on periodic rigid and elastic supports, "International Journal of Solids and Structures", v. 281, 2023, pp. 1-8, <https://doi.org/10.1016/j.ijsolstr.2023.112410>
57. Avetisyan A., Khachatryan V., Weakened by an infinite system of transverse periodic cracks piezoelectric waveguide as a filter of electroacoustic waves, Proc. VIII Int. Conf. "Topical Problems of Continuum Mechanics", 2023, pp. 269-267.
58. Avetisyan V., Control of a second-order electromechanical system under mixed constraints, "Mechanics - Proceedings of NAS RA", v. 76. issue 2, 2023, pp. 32-43.
59. Baghdasaryan G., Stress-strain state of a magnetoelastic ferromagnetic plane with a crack under the action of a magnetic field, "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep", 2023, pp. 77-92.
60. Barseghyan V., The problem of boundary control of displacement at two ends by the process of oscillation of a rod consisting of two sections of different density and elasticity, "Mechanics of Solids", v. 58, N 2, 2023, pp. 483-491, <http://doi.org/10.3103/S0025654423700073>.
61. Barseghyan V., Optimal boundary control of string vibrations with set values of deflection functions and point velocities at different intermediate time instants, "Прикладная механика", v. 59, N 5, 2023, pp.118-131, <http://pm.inmech.kiev.ua/archive/?article=1601>, <https://link.springer.com/article/10.1134/S0081543822060074>
62. Barseghyan V., Boundary control of some distributed heterogeneous vibrating system with given states at intermediate time instants, "Automation and Remote Control", v. 84, N 2, 2023, pp. 117-127, <https://doi.org/10.1134/S0005117923020029>
63. Barseghyan V., Problems of boundary control and optimal control of string vibrations with multipoint intermediate conditions on the state functions, "Proceedings of the Steklov Institute of Mathematics", v. 319, 2023, issue. 1, pp. 66-79, <https://link.springer.com/article/10.1134/S0081543822060074>
64. Barseghyan V., Optimal boundary control of a distributed heterogeneous vibrating system with given states at intermediate times, "Computational Mathematics and Mathematical Physics", v. 62, 2023, pp. 2023-2032, <https://doi.org/10.1134/S096554252212003X>
65. Ghazaryan K., Ghazaryan R., Terzian S. Shear Surface Wave in Homogeneous Semi-Space with Periodic Interfaces of Imperfect Elastic Contact, Proc. VIII Int. Conf. "Topical Problems of Continuum Mechanics", 2023, pp. 232-236.
66. Ghazaryan K., Jilavyan S., Piliposyan D., Aznaurov D., Band gaps of metastructure with periodically attached piezoelectric patches and internal hinges, in : "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep, Advanced Structured Materials", v. 185, Springer, 2023, pp. 101-113.
67. Ghazaryan K., Piliposyan G., Band gap formation in a beam with attached local resonators and periodically arranged intermediate external supports, "Mechanics. Proceedings of NAS RA", v.76, N3, 2023, pp. 6-18.
68. Ghazaryan K., Terzyan S., Ghazaryan R., Dispersion of shear surface waves in an elastic substrate imperfectly bonded with an elastic layer, "Mechanics. Proceedings of NAS RA", v.76, N2, 2023, pp.75-82.
69. Ghulghazaryan G., Ghulghazaryan L., Free localized vibrations of a thin elastic composite panel, "Mechanics of High-Contrast Elastic Solids. Advanced Structured Materials", Springer, Cham, v. 187, 2023, pp. 91-118, https://doi.org/10.1007/978-3-031-24141-3_7
70. Ghulghazaryan G., Ghulghazaryan L., Free vibrations of thin elastic orthotropic cylindrical panel with rigid – clamped edge generator, "Scientific Bulletin", v. 2, N 45, 2023, pp. 46-72, <https://doi.org/10.24234/scientific.v2i45.93>
71. Ghulghazaryan G., Ghulghazaryan L., Free vibrations of thin elastic orthotropic cylindrical panel with arbitrary methods of fixing the ends., "Proceedings of NAS RA. Mechanics", v. 76, N 4, 2023, pp. 48-68.
72. Hakobyan V., Grigoryan A., Amirjanyan H., On an axisymmetric contact problem for a piecewise homogeneous space with disc-shaped crack, in book: "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep", 2023, pp. 133-147, DOI :10.1007/978-3-031-18564-9
73. Karapetyan K., Valesyan S., About the energy dissipation coefficient of thin-walled glass-plastic pipes with the internal reinforcement asymmetry with respect to axis subjected to pulsating internal hydrostatic pressure, in book: "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep", Springer, 2023, pp. 175-184.

74. Khachatryan V., Avetisyan A., Propagation of a hybrid of dissimilar electroacoustic waves in a composite piezoelectric waveguide, 2023, available at SSRN: <https://ssrn.com/abstract=4175916> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.4175916>
 75. Mkhitarian S., On the exact solution of the first boundary value problem for a plane with a circular field on the formulation of the nonlinear power. Theory of steady creep under antiplane deformation, In "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep", Advanced Street used Materials, Springer, 2023, pp. 221-235.
 76. Mkhitarian S., Sarukhanyan A., Kanetsyan E., On exact solutions of problems of steady flow of incompressible viscous fluid in channel and a circular pipe, "Journal of Advanced research in Fluid Mechanics and Thermal Sciences", v. 107, N 2, 2023, DOI: <https://doi.org/10.37934/arfmts.117.2.6883>
 77. Mkrtchyan M., Avetisyan L., Control of electroactive shear waves in a piezoelectric waveguide by different surface actions, Proc. VIII Int. Conf. "Topical Problems of Continuum Mechanics", 2023, pp. 287-291.
 78. Panteleev A., Mikilyan M., Vardanyan I., Stability of a dielectric rectangular plate in a longitudinal magnetic field in the presence of a supersonic flow field, "Aerospace Systems", v.6(2), 2023, pp. 605-611.
 79. Sahakyan A., Amirjanyan H., Quadrature formulas for integrals with a weak singularity in the kernel and a weight function of Jacobi polynomials with complex exponents, in Book: "Solid Mechanics, Theory of Elasticity and Creep", "Advanced Structured Materials" (STRUCTMAT), v. 185, 2023, pp. 285-298, https://doi.org/10.1007/978-3-031-18564-9_21
 80. Vasilyan N., The bending rectangular isotropic pate by cutting forces along the edge, Proc. of the VIII Int. Conf. "Topical Problems of Continuum Mechanics", 2023, pp. 321-326.
- Հոդվածները հրատարակվել են «Актуальные проблемы механики сплошной среды» VIII միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2023, 332 էջ:**
81. Аветисян В.В., Управление однозвенным манипулятором с учетом ограничений на напряжение и мощность тепловыделения, с. 5-8.
 82. Агабекян П.В., Арутюнян Л.А., Плоская задача теории упругости для составной области, ограниченной дугами пересекающихся окружностей, с. 9-11.
 83. Агаян К.Л., Атоян Л.А., Саакян С.Л., Сдвиговые колебания штампов на краях пьезоэлектрического слоя, с. 12-16.
 84. Агаян К.Л., Закарян В.Г., Плоская сдвиговая волна в упругом слое со смешанными граничными условиями, с. 17-21.
 85. Амирджян А.А., Григорян А.В., О контакте абсолютно жесткого штампа с полуплоскостью с учетом трения, с. 33-36.
 86. Барсегян В.Р., Матевосян А.Г., Управление беспилотным летательным аппаратом самолетного типа с заданными промежуточными значениями разных частей координат, с. 59-63.
 87. Валесян С.Ш, Саакян А.А., Экспериментальное исследование прогиба шарнирно-опертой балки, нагруженной сосредоточенной силой, с. 66-70.
 88. Ерофеев В. И., Леонтьева А. В., Шекоян А.В., Влияние параметров точечных дефектов на дисперсию и нелинейную пространственную локализацию продольных волн, распространяющихся в материалах, с. 111-115.
 89. Карапетян К.А., Зависимость деформативных свойств и прочности композитов на основе цементного вяжущего от количества десорбированной влаги, с. 134-138.
 90. Кудрина С.П., Геворкян Г.А., Анализ периодичности функции упругих перемещений переменной длины упругих звеньев механизмов, 2023, с. 32-36.
 91. Мартиросян С.Р., Сверхзвуковая дивергенция панели с одним свободным краем, первоначально нагруженной по двум направлениям: сжатой по потоку газа и растянутой в направлении, перпендикулярном скорости потока газа, 2023, с. 176-180.
 92. Сейранян С.П., О сходимости тригонометрических рядов изгибающих моментов на защемленном контуре прямоугольной симметрично нагруженной пластины, с. 224-228.
 93. Hayroyan S., Characteristics of sliding deformation in swelling clays conditioned with the change in swelling consistence, pp. 281-285.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան
Էլեկտրոնային փոստ՝ iiap@sci.am
Կայքէջ՝ www.iiap.sci.am

Մասնագիտական խորհուրդ 037՝ «Ինֆորմատիկա»

Նախագահ՝ ակ. Յու.Շուքուրյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել է հիբրիդ ավտոմատներով նկարագրվող երամային համասեռ համակարգերի վիճակների հասանելիության խնդիրը մասնավոր դեպքերի համար՝ հաշվի առնելով անցումների հանրահաշվական բնույթը (ղեկ.՝ ակ. Յու.Շուքուրյան):

Շարունակվել են վիրուսի տարածման (population) ու հարմարվողական իմունային համակարգի համատեղ էվոլյուցիայի մոդելի մի շարք բնութագրիչների անալիտիկ ու էմպիրիկ ճանապարհով արժեքների ստացման հետազոտությունները: Մշակված ալգորիթմների վրա իրականացված ծրագրային համակարգն ադապտացվել է գերհամակարգչի միջավայրում զուգահեռացման ալգորիթմների ներգրավմամբ: Վիրուսի տարածման ալգորիթմի ինքնակազմակերպվող բնույթը թույլ կտա այն ոչ միայն մեկնաբանել, այլև կիրառել (որոշակի վերապահումներով) որպես ԱԹՍ երամում մասնակիցների դեգերման նոր ալգորիթմ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Պողոսյան):

Հետազոտվել են բազմանդամային ժամանակում հաշվարկելի բազմությունների, «բազմանդամորեն հաշվարկելի միթոտիկ բազմությունների, թույլ միթոտիկ բազմությունների» դասերի, «բազմանդամորեն հաշվարկելի ինքնահանգեցվող բազմությունների» դասի հատկությունները: Բացահայտվել են վերոնշյալ դասերի ինդեքսային բազմությունների ճշգրիտ դիրքերը թվաբանական աստիճանակարգում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մոկացյան):

Հետազոտվել են ընդհանրացված պարզագույն կարգընթաց ֆունկցիաների հատկությունները, մասնավորապես $(n + 1)$ փոփոխականի համապիտանի ֆունկցիայի գոյության խնդիրը n փոփոխականի ընդհանրացված պարզագույն կարգընթաց ֆունկցիաների բազմության համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Խաչատրյան):

Ապացուցվել է, որ n գագաթ և m կող ունեցող պարզ հիպերգրաֆների աստիճանային հաջորդականությունների բազմությունն ուռուցիկ չէ n չափանի $(m + 1)$ -արժեքանի ցանցում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան):

2-կապակցված δ նվազագույն աստիճանով ոչ համիլտոնյան գրաֆների ամենաերկար ցիկլի երկարության Դիրակի 2δ ստորին գնահատականը Բաուերն ու Շմայխելը (1986թ.) ընդլայնել են մինչև $2\delta + 2$, եթե գրաֆն ունի $\tau \geq 1$ կոշտություն: Եթե $\tau > 1$ և գրաֆը տարբեր է Պետերսենի գրաֆից, հայտնի է $2\delta + 4$ սահմանը (Նիկողոսյան, 2012թ.): Ապացուցվել է, որ վերջին $2\delta + 4$ գնահատականը կարելի է ընդլայնել մինչև $2\delta + 5$, ինչն ավելի ընդլայնել հնարավոր չէ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ժ.Նիկողոսյան):

2-կապակցված n -գագաթանի կողմնորոշված D գրաֆի համար ապացուցվել է՝ եթե $n - 1$ գագաթների աստիճանները $\geq n + k$, n -րդ z գագաթի աստիճանը $\geq n - k - 4$, $k \geq 0$ ամբողջ թվի համար և D -ն պարունակում է z գագաթով անցնող առնվազն $n - k - 2$ երկարության ցիկլ, ապա D -ն համիլտոնյան է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Դարբինյան):

Հետազոտվել է բաղադրյալ գաղտնալսվող կապուղու մոդելը, երբ օրինական հասցեատիրոջ ու գաղտնալսողի կապուղիները փոփոխվում են՝ կախված վիճակներից: Կառուցվել է E-ունակություն-անորոշություն տիրույթի արտաքին գնահատականը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան):

Ցույց է տրվել, որ արտաքին փոփոխական դաշտում գտնվող քառաչափ քվանտային տատանակը (օսցիլյատոր) ժամանակից կախված հաճախականությամբ, լրացուցիչ պայմանի դեպքում կարող է նկարագրել ջրածնի մասնակցությամբ ընթացող ըստ էության բոլոր տեսակի ֆիզիկաքիմիական ընթացքները: Կատարված հետազոտություններն ընդհանրացրել են Վ.Ֆոկի դասական համարվող արդյունքները՝ կիրառության ու հիմնարար գիտության տեսանկյունից էապես ավելի բարդ դեպքերի համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Ամպային միջավայրերում ինքնավար կառավարման հրատապ խնդիրների շուրջ մեքենայական ուսուցման մեթոդների, ինֆորմացիայի տեսության հասկացությունների կիրառման միջոցով առաջարկվել են այդ համակարգերի ախտորոշման ու օպտիմալացման մոտեցումներ ու լուծումներ, որոնք վերաբերում են մշտադիտարկման արդյունքում գրանցված մեծ թվով ժամանակային շարքերի ու հավելվածների հետազոտման (trace) ծավալուն շտեմարանների մշակման վրա հիմնված կանխատեսում իրականացնող մոդուլների, որոնք մի դեպքում բացատրելի կերպով մատնանշում են խափանումների կամ անցանկալի վարքագծի հավանական աղբյուրներն ու պայմանները, մյուս դեպքում հայտնաբերում ամպային ծառայությունում վատնվող ռեսուրսները (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Հարությունյան):

Դիտարկվել է արժեթղթերի շուկան՝ որոշակի կողմնակի ինֆորմացիայի առկայության դեպքում և օգտագործելով բազմակի վարկածների լոգարիթմորեն ասիմպտոտորեն օպտիմալ (LAO) ստուգման արդյունքները՝ ստացվել է աճի տեմպի նոր սահման: Նեյման-Պիրսոնի ստուգման օպտիմալ ընթացակարգը հետազոտվել է այն մոդելների համար, որոնք բնութագրվում են չորս անընդհատ հավանականային բաշխումներով, որոնք բաժանված են որպես վարկածներ դիտարկվող երկու խմբի (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Մշակվել է գլոբալ բինարիզացիա իրականացնող ծրագրային համակարգ: Կատարվել են համեմատական վերլուծություններ մի շարք այլ մեթոդների հետ: Ցույց է տրվել, որ տարբեր մեթոդների համեմատման եղանակով դրանք ըստ որակի դասակարգման խնդրում միջին քառակուսային չափանիշը պիտանի չէ: Ուսումնասիրվել են բինարիզացիայի ադապտիվ մեթոդները, առաջարկվել է Նիբլեկի ու Սաուվոլայի մեթոդների կատարելագործման նոր ընթացակարգ՝ հիմնված հատուկ հիբրիդային եղանակի վրա: Ցույց է տրվել առաջարկված մեթոդի արդյունավետությունը (ղեկ.՝ տեխ.գ.դ. Դ.Ասատրյան):

Մշակվել են մի քանի ինտերպոլյացիոն ալգորիթմներ, որոնք կատարում են անցում 64–940 միջակայքից 0–255 եռաշերտ (24-բիթ) RGB տեսքի FPGA սարքի վրա մինիմալ որակական կորստով, և ձևափոխված տվյալները փոխանցվել են host համակարգչին: Ալգորիթմի վերջնական ընտրությունը կախված է օգտագործվող ստանդարտի ընտրությունից (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Հ.Սարուխանյան):

Հետազոտվել է զանգվածային սպասարկման M|M|m|n համակարգ, որում սպասարկվող առաջադրանքները կարող են պահանջել մեկից ավելի սպասարկող սարքեր, և հերթում սպասման ընթացքում հնարավոր է նրանց հրաժարվելը սպասարկումից: Ստացվել են հերթի վիճակի ու վիրտուալ սպասման ժամանակի բաշխումները նկարագրող հավասարումների համակարգերը: Մշակվել և իրականացվել է ծրագրային փաթեթ թվային հաշվարկների համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան):

Դինամիկ գոյերը գոյություն ունեն տարրական մասնիկների հիմնական մակարդակում և ըստ դաշտի քվանտային տեսության (quantum field theory)՝ դրանք առաջանում են

որպես հիմնարար քվանտային դաշտերի գրգռումներ: Միաժամանակ իմացիչների (cognizers) միջուկները՝ գործիչները (doers), նրանց եղանակները՝ 1/2 տեղանի դասակարգիչները, էներգիա առաքողները (energizers) նույնպես դինամիկ գոյերի տեսակներ են: Գործիչների դինամիկության ծագումը մասնիկների ու դաշտերի դինամիկայում հետևելու փորձը կօգնի լուսաբանել դասակարգիչների ծագումը բնության մեջ: Այս հարցին պատասխանելու ճանապարհին բերվել են դինամիկայի այդպիսի ներկայացման ձևեր՝ եզրահանգելու որոշակի հուշումներով այդ օրինակների ընդհանրացման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Է.Պոդոյան):

Իրականացվել է գիտելիքների գրաֆի ձևափոխությունը հատկությունների գրաֆին և նրա ներմուծումը Apache Spark բաշխված համակարգի մեջ: Pregel միջավայրի օգտագործմամբ մշակվել է հատկությունների գրաֆի ձևափոխության ալգորիթմ: Ստեղծվել է նոր հատկությունների գրաֆ՝ պահպանելով միայն հետաքրքրող հանգույցները և նրանց միջև աղեղները՝ ըստ հետաքրքրող չափանիշների: Հատկությունների գրաֆի ձևափոխված տարբերակում Apache GraphX-ի ալգորիթմների միջոցով իրականացվել է կարևորագույն հանգույցների դուրս բերումը և այլ կապված հանգույցների հետ միասին նախապատրաստումը մեքենայական ուսուցման նեյրոնային ցանցերի մուտքի համար: Դրա արդյունքը մոդել է, որը կարող է կանխատեսել նոր կոնցեպտների հնարավոր կապը գոյություն ունեցող կոնցեպտների (գրաֆի հանգույցների) հետ: Նշված խնդիրների համար իրականացվել է ծրագրային մշակում Java և Scala լեզուներով (ղեկ.՝ տեխ.գ.թ. Տ.Շահինյան):

Հետազոտական ու կրթական ազգային ցանցի աշխատանքը բարելավելու և ակադեմիական ու գիտական համայնքների համար կենսունակ էկոհամակարգ ապահովելու նպատակով հետազոտվել, մշակվել և ներդրվել է ցանցի մոնիթորինգի ու էմուլացիայի հարթակ: Համակարգը թույլ է տվել փոփոխություններ կատարել և ընտրել պարամետրեր վիրտուալ միջավայրում օպտիմալ կոնֆիգուրացիան ստանալու համար, որին հաջորդում է իրական ցանցի կազմաձևումը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ռ.Թադևոսյան):

Ուսումնասիրվել են տվյալների հոսքի վիճակագրական համակարգի նոր հնարավորությունների ավելացման մեխանիզմները ASNET-AM Viewmon համակարգի շրջանակում, մասնավորապես համակարգի արագագործության բարձրացում տվյալների հենքի օպտիմիզացիայի շնորհիվ, վիճակագրական տվյալների վիզուալիզացիայի թարմացում ժամանակակից մեթոդների ու փաթեթների կիրառմամբ: Մշակվել են տվյալներ հավաքագրող սերվերի հիշողության սուղ պայմաններում Viewmon համակարգի անխափան աշխատանքի մեխանիզմները: Փորձարկվել է վեբ սերվերների ու տվյալների հենքերի կազմակերպման նոր կենտրոնացված համակարգ՝ հիմնված ISPConfig փաթեթի վրա (ղեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Պետրոսյան):

Ուսումնասիրվել են $GI|G|1|_{\infty}$ զանգվածային սպասարկման համակարգում փաստացի ու վիրտուալ սպասման ժամանակների հատկությունները: Ապացուցվել է, որ երկու հաջորդականություններն էլ ունեն վտանգավորության աստիճանը բարձրացնելու հատկություն (ղեկ.՝ բ.գ.թ. Ռ.Զիթչյան):

Տարբեր գիտական խնդիրների լուծման համար իրականացվել են տվյալների մշակման ու օպտիմալացման մեթոդներ, հարթակներ, ծառայություններ ու ալգորիթմներ՝ օգտագործելով բարձր արտադրողականությամբ հաշվողական ու ամպային ենթակառուցվածքներ, ինչպիսիք են թվայնացված առաջին Բյուրականի հետազոտության հիմնական օբյեկտների սպեկտրալ դասերն ու ենթատիպերը դասակարգելու համար մեքենայական ուսուցմամբ ամպային ծառայությունը, արբանյակային տվյալների համար մասշտաբային, առանց սերվերի ու հաշվողական ենթակառուցվածքից անկախ երկրատեղեկատվական

համալիր համակարգը, բարձր արտադրողականությամբ աշխատանքային բեռների կատարման համար առանց սերվերի ճարտարապետություն ու համապատասխան ծրագրային փաթեթ, ինչպես նաև ծրագրային համակարգ՝ վերածրագրավորվող 2 մուտքային հիմնական տրամաբանական փականների եռակի քվանտային նանոմասնիկների համար օգտագործելով լազերային իմպուլսներ (մասնամասն <https://github.com/armHPC>) (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան):

Իրականացվել են նախորդ տարիներին սկսված ու շարունակական բնույթ կրող հետևյալ աշխատանքները՝ արտասահմանյան պարբերականներում հայաստանյան գիտնականների ու հետազոտողների հրապարակումների գիտաչափական վերլուծություն (աշխատանքն իրականացվել է Web of Science Core Collection շտեմարանի միջոցով), հայաստանյան գիտական ամսագրերի մատենաչափական նկարագրություն ու հեղինակների, կազմակերպությունների նույնականացում: Ստացված շտեմարանները հիմք են ծառայում Գիտական հղման հայկական ցուցիչի համար: Российский индекс научного цитирования գիտական շտեմարանում գետեղվել են Mathematical Problems of Computer Science ամսագրի վերջին տարիների համարները, իրականացվել են Հայաստանում բաց գիտության զարգացման աշխատանքներ (ղեկ.՝ կ.գ.թ. Շ.Սարգսյան):

Ուսումնասիրություններ են տարվել հետևյալ ուղղություններով՝ հայերենի համար լայն կիրառման BERT ճարտարապետությամբ մոդելների ստեղծման համար անհրաժեշտ տվյալներ ու գործիքներ, էլեկտրոնային հայերեն նյութերի հավաքագրում, վերամշակում լայն կիրառման BERT ճարտարապետությամբ մոդելների ստեղծման համար հարմար ֆորմատով, բնական լեզվի մշակման համար նախատեսված տարատեսակ խնդիրների լուծման համար նախատեսված մեքենայական մոդելների ճարտարապետություններ: Կազմակերպվել են տարբեր բարդությունների ու երկարությունների մեքենայական ուսուցման պրոցեսներ, ստեղծվել են մեքենայական ուսուցման համար նախատեսված տարբեր սկրիպտեր (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Գյուրջյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Կոլեկտիվ արհեստական բանականությամբ ինքնակազմակերպված անօդաչու թռչող սարքերի երամի վթարակայուն մշտադիտարկման և նպատակային առաջադրանքների իրականացման ծրագրային համակարգ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Պողոսյան) անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) երամի կողմից տեղանքի մշտադիտարկման ու առաջադրանքների կատարման նպատակով մշակվել է կոլեկտիվ արհեստական բանականությամբ օժտված ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի մոդելավորման ծրագրային համակարգ: Ինֆորմացիայի լրիվ փոխանակում (Gossip/broadcast models) իրականացնող, մեր կողմից մշակված օպտիմալ ու վթարակայուն սխեմաների (fault-tolerant) կառուցման մեթոդներն ու ալգորիթմներն ադապտացվել են և հիմք են հանդիսացել տրամաբանական կապերով ապակենտրոն դեկավարմամբ ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի կառուցման համար: Ապացուցվել է բազմամասնիկ դեգերման ընդհանրացված թեորեմը Rotor-router մոդելի համար, որի հիման վրա մշակվել են էյլերյան ցիկլի համատեղ գեներացման նոր ալգորիթմներ: Երամի դրոնները քվադի պատահական դեգերման (rotor-router model) ընթացքում իրականացրել են տեղանքի դինամիկ նկարահանումներ, պատկերների գաղտնագրում, նկարահանված պատկերների հոսալի ու լրիվ փոխանակում միմյանց միջև և արդյունքների փոխանցում դեպի տվյալների մշակման կենտրոն: Ստացված տվյալների ինտեգրման հիման վրա վերարտադրվել է տեղանքի դինամիկ պատկերը, որի կոլեկտիվ հետազոտություններն իրականացվել են

բազմաօգտատեր ծրագրային հարթակում: Արդյունքում ձևավորվել են նպատակային առաջադրանքներ, մասնավորապես նոր անօդաչու երամի ուղղորդում դեպի նոր հաշվարկված կոորդինատները: Նկարահանումների ու առաջադրանքների կատարման ողջ ընթացքում ԱԹՍ երամը չի օգտվում արտաքին կառավարման որևէ միջոցից: Մշակվել և իրականացվել է ԱԹՍ երամի ապարատածրագրային համակարգի միատիպ, քիչ ծախսատար բաղադրիչներով օժտված 4 դրոնով երամի փորձարարական տարբերակը:

«Ինքնակազմակերպվող ԱԹՍ-ների երամի խելացի ամպային հիմնահարթակ՝ բազմաազենտային ալգորիթմների և համակարգերի ներգրավմամբ» նախագծի (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան) նպատակն է մշակել և ներդնել ինքնակազմակերպվող ԱԹՍ-ների երամի գործարկման ու կառավարման օպտիմալորեն բաշխված ծրագրա-ապարատային ամպային համակարգ՝ բազմաազենտային մոդելավորման ու երամի բանականությանը (swarm intelligence) միտված ալգորիթմների ու ձևայնացված մեթոդների ներգրավմամբ: Մշակվել է ամպային հիմնահարթակ, որը բաղկացած է ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի հաշվողական միջավայրից, ամպային հաշվողական միջավայրից ու QT սպասարկման մակարդակներից: Հարթակն իրականացվել է հայկական ամպային հետազոտական ենթակառուցվածքի ռեսուրսների հենքի վրա: Առաջարկվող ամպային հիմնահարթակի հետ օգտագործողը փոխգործակցում է QT ծառայության մակարդակում՝ ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի տեսաբերմանը, կազմաձևմանը և կառավարմանը միտված գործիքաշարի ու գործառույթների միջոցով: Տեղանքի քարտեզի կոնֆիգուրատորը ԱԹՍ երամի նավիգացիայի ու առաջադրանքների կատարման նպատակով այդ քարտեզների ստեղծման ու փոփոխման կրիտիկական գործիք է, որն օգտագործողին հնարավորություն է տալիս որոշակիացնել խոչընդոտները, թիրախային կետերը, թռիչքուղիները և օպտիմալացնել երամի վարքը:

«Ճանաչողության բազմամակարդակ մոդելներ օպտիմալ լուծումների դինամիկ որոնման խնդիրներում» ծրագրում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան) դիտարկվել է կերպարների վերծանման դասական խնդրի նոր տարբերակ, որտեղ առարկայի՝ ըստ ուսուցման բազմության ճշգրիտ դասակարգման խնդրի փոխարեն դրվել է նոր նպատակ՝ վերագրել բոլոր առարկաները նույն, այսպես կոչված «նորմալ» դասին: Տեսականորեն խնդիրը առաջացել է ճանաչողության կոմբինատոր-տրամաբանական մեթոդի առավելությունների օգտագործման հնարավորությունից, կիրառական հարթության վրա այն մասնակիորեն համապատասխանում է ուժեղացված ուսուցման սցենարին, որտեղ, սակայն, գործողությունները ստոխաստիկ չեն և միարժեքորեն կապված են դասերի հետ: Կախված այն բանից, թե ինչ մանրամասնությամբ է հասանելի ուսուցման բազմությունը, առաջանում է երկու խնդիր՝ գործող էմպիրիկ սցենարի վավերականության ստուգման ու գործողությունների՝ ըստ կապերի օպտիմալացման: Որպես կիրառման օրինակ դիտարկվել է հիվանդի բուժման կուրսի օպտիմալացման խնդիրը, որտեղ ախտորոշման քայլին համապատասխանում է գործողություն, և այդ շղթան կրկնվում է. նպատակը հիվանդին առողջ դասին բերելն է: Ծրագրում նախատեսվում են վերլուծական աշխատանքներ՝ պլանավորում, նպատակների ճշգրտում, ընդհանրական մոդելի կառուցում, մեկ-դաս մոդելի ու համապատասխանության ստուգման կոմբինատոր ալգորիթմների մշակում, ռեկուրենտ դասակարգման շրջանակի նախագծում, տրամաբանական-կոմբինատոր, գրաֆ-տեսական, ուժեղացմամբ ուսուցում ու փորձարարական հարթակի կազմում, փորձարկումների սցենարի մշակում, հոդվածների նախապատրաստում ու հրապարակում, ծրագրի արդյունքների ներկայացում գիտաժողովներում:

«Նորարարական լուծումներ մոնոտոն և գծային կոմբինատոր օպտիմիզացիայում՝ ուղղված կիրառություններին» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան) կատար-

վել են հետևյալ աշխատանքները՝ մոնոտորն ճանաչողությունը որպես օպտիմալացման խնդիր՝ օպտիմալ մուտքի ընտրություն ու սինթետիկ տվյալների վրա փորձարարական աշխատանք, մոնոտորն ճանաչողության խնդիրների նոր դասերի քննարկում՝ մեքենայական ուսուցման կիրառման հնարավորությամբ, օպտիմալացման խնդիրների համար (մասնավորապես դիսկրետ տոմոգրաֆիայի խնդիրներ՝ ներկայացված ամբողջարժեք գծային ծրագրավորման խնդրի տեսքով) տեղափոխությունների կիրառում: Ստացված արդյունքները զեկուցվել են OPTIMA-2023 (Montenegro) և CSIT Conference 2023 միջազգային գիտաժողովներում: Կազմակերպվել է ծրագրի արտասահմանյան խորհրդատու Զ.Կատոնայի այցը Հայաստան, նա CSIT 2023 գիտաժողովի ելույթում ներկայացրել է ծրագրին առնչվող հարակից արդյունքներ, քննարկվել են ընթացիկ աշխատանքները, մասնավորապես դիտարկվել է մոնոտորն բուլյան ֆունկցիաների նոր դասերի ներգրավումը RL փորձարկումների համար:

«Էլեկտրոնային քվեարկության ընթացակարգերի անվտանգության և հուսալիության բարելավում ստեգանոգրաֆիկ մոդելների հետազոտության և ներդրման միջոցով» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան) հետազոտվել է ակտիվ հակառակորդով ստեգոհամակարգի ինֆորմացիոն-տեսական մոդելը: Խնդիրը բերվել է երկփուլ վարկածների ստուգման մոտեցմանը հասցեատիրոջ տեսանկյունից: Առաջարկվել է լոգարիթմորեն ասիմպտոտիկ օպտիմալ վարկածների ստուգում այս մոդելի համար: Արդյունքում կառուցվել է առաջին և երկրորդ սեռի սխալի հավանականությունների հուսալիությունների ֆունկցիոնալ կախվածությունը երկու փուլերում: Տեսական արդյունքներից բացի, որոնք արտահայտվել են երկու թեորեմներում և ապացուցվել, բերվել են նաև ստացված կախվածությունների հաշվարկների օրինակներ, դրանց վարքը պատկերվել է գրաֆիկորեն: Արդյունքը հրապարակվել է Journal of Universal Computer Science հեղինակավոր ամսագրում: Հետազոտվել են գոյություն ունեցող թաքնագրական մեթոդները, դրանք դիտարկվել են է-քվեարկության համակարգերում՝ հնարավոր կիրառության տեսանկյունից: Յուրաքանչյուր մեթոդի համար քննարկվել են է-քվեարկության տեսանկյունից առավելություններն ու թերությունները: Հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ վարկածների ստուգման վրա հիմնված վիճակագրական մոդելն իրական կյանքի լավագույն մոտարկման իրականացումն է, փորձարկելի ու հաշվարկելի է՝ տալով մոդելի հուսալիության հստակ ըմբռնում: Արդյունքը զեկուցվել է CSIT 23 միջազգային գիտաժողովում:

«Ճշգրիտ կառուցվող պատահական շրջակայքով քվանտային համակարգեր, դրանց մոդելավորումը և 3D տեսայնացումը» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան) հետազոտվել է երեք-քվարկային դինամիկ համակարգը, որն ընկղմվել է գունավոր գլյուտնային աղմուկի մեջ որպես ինքնակազմակերպման խնդիր: Յույց է տրվել, որ կոմպլեքս հավանականային ընթացքների շրջանակում, որոնք բավարարում են Լանժմեն-Կլեյն-Գորդոն-Ֆոկ տիպի հավասարմանը, հնարավոր է կառուցել մաթեմատիկորեն փակ տեսություն՝ համակարգը նկարագրող վիճակագրական բոլոր չափորոշիչները հաշվելու համար: Խնդրում մանրամասնորեն քննարկվել են առաջացած լրացուցիչ ենթատարածությունների երկրաչափական ու տոպոլոգիական հատկությունները: Յույց է տրվել, որ զարգացված պատկերացումը, մասնավորապես ուժեղ փոխազդող նուկլոնների համար, հնարավորություն է տվել դուրս գալ քվանտային քրոմոդինամիկայի հատուկ խոտորումների տեսության պատկերացումների շրջանակից, որն էական առաջընթաց է հիմնարար տեսական պատկերացումների համար: Զարգացվել են մաթեմատիկական ալգորիթմներ՝ խնդիրը զուգահեռ ճարտարապետություն ունեցող գերհամակարգչի վրա թվային մոդելավորելու համար:

«Դեպի հայաստանյան գիտության միջազգայնացում. Գիտական հղման հայկական ցուցիչ» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Շ.Սարգսյան) կատարվել են հետևյալ աշխա-

տանքները՝ գործարկվել է Գիտական հղման հայկական ցուցիչը, որը հասանելի է <https://asci.am> հասցեով, հայաստանյան գիտական դաշտի ուսումնասիրություն, շտեմարանների ընդլայնում (գիտնականների, գիտական կազմակերպությունների, ամսագրերի և այլն), ԳՀՀՑ-ի հումքի հավաքագրում, մշակում ու ինդեքսավորում, առկա հումքային տվյալների ճշգրտում, մաքրում ու նույնականացում:

«Հայ ազգի գիտական ներուժի զարգացման հիմնական մարտահրավերներից մեկը. ինչպե՞ս ուղեղների արտահոսքը վերածել ուղեղների ներհոսքի» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Շ.Սարգսյան) կատարվել են հետևյալ աշխատանքները՝ հայերինիք-գիտական սփյուռք համագործակցության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրություն, Սփյուռքում գործող հայազգի հետազոտողների ու գիտնականների շտեմարանի ընդլայնում, Հայաստան – գիտական սփյուռք համագործակցության մոդելի մշակում:

«Հայաստանյան հետազոտությունների գնահատման համակարգի մշակում՝ հիմնված գիտաչափական մոտեցման վրա» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Շ.Սարգսյան) կատարվել են հետևյալ աշխատանքները՝ մեկնարկային քննարկումներ իտալացի գործընկերների հետ, աշխատանքային պլանի ու ժամանակացույցի հստակեցում, երկու շտեմարանի ստեղծում հայաստանյան բուհերի և ԳԱԱ գիտական կազմակերպությունների գիտական ու գիտամանկավարժական կադրերի, վերջիններիս՝ Web of Science-ում ինդեքսավորվող ամսագրերում հրապարակումների (2015-21թթ.) համար:

«Եղանակային երևույթների փոփոխություններ և օդի աղտոտվածության կանխատեսման համար հեռազննման տվյալների մշակման մեթոդներ՝ օգտագործելով նեյրոնային ցանցեր և խորը ուսուցում» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան) մշակվել է երկրատեղեկատվական տվյալների կառավարման, մշակման ու վերլուծության հայ-բելառուսական միասնական հարթակ: Հարթակի օգտագործմամբ մշակվել են արբանյակային տվյալների վերլուծության ալգորիթմներ, մոդելներ ու եղանակային երևույթների փոփոխությունների կանխատեսման համար նեյրոնային ցանցերի ուսուցման մեթոդներ: Մասնավորապես մշակվել է Ափամերձ գծի գծանշման մոդելը, որը հայտնաբերում է տրամադրված տարածաշրջանի ափամերձ գիծը ԵՏ տվյալների ընտրված ամսաթվերի միջակայքում, ինչպես նաև Landsat-8 TIR և TroPOMI գործիքներից տվյալների ստացման ալգորիթմներ ու մեթոդներ:

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Андрианов А.М., Фурс К.В., Гончар А.В., Асланян Л.А., Тузиков А.В., “Применение технологий виртуального скрининга и молекулярного моделирования для идентификации потенциальных ингибиторов основной протеазы коронавируса SARS-CoV-2”, М., Математическая биология и биоинформатика, т. 18, N 1, 2023, с. 15-32.
2. Abrahamyan R., Grigoryan H., Astsatryan H., Belotserkovsky A., Lukashevich P., NO2 Data analytics and visualization service: improving air quality insights in Armenia and Belarus, “Programming and Computer Software”, v. 49, suppl. 1, 2023, pp. S1017–S1026, doi: 10.1134/S0361768823090025
3. Alaverdyan Y., Poghosyan S., Poghosyans V., Confidential computing in edge-cloud hierarchy, “International Journal of Computer Science and Information Technology”, v. 15 (03), 2023, pp. 21-30, WOS-ԱԳ (IF) ունեցող պարբերական, 10.5121/ijcsit.2023.15302, 0975-4660,0975-3826
4. Andrianov A., Furs K., Gonchar A., Aslanyan L., Tuzikov A., Application of virtual screening and molecular modeling technologies to identify potential SARS-CoV-2 main protease inhibitors, “Mathematical Biology and Bioinformatics”, v. 18(1), 2023, pp. 15-32.

5. Asatryan D., Haroutunian M., Sazhumyan G., Kupriyanov A., Paringer R., Kirsh D., Hybrid binarization method for historical handwritten documents, "Programming and Computer Software" N 9, 2023, pp. 45-50, <https://www.springer.com/journal/11086> (SCOPUS)
6. Asatryan D., Haroutunian M., Sazhumyan G., Kupriyanov A., Paringer R., Kirsh D., Comparative quality analysis of image global binarization procedures, "IX International Conference on Information Technology and Nanotechnology (ITNT)", Samara, RF, 2023, pp. 1-5, doi: 10.1109/ITNT57377.2023.10138953.
7. Aslanyan L., Logic separation: discrete modelling of pattern recognition, "Pattern Recognition and Image Analysis: Advances in Mathematical Theory and Applications", v. 33, N 4, 2023, pp. 1-36, Q3
8. Aslanyan L., Arsenyan I., Karakhanyan V., Sahakyan H., RDNF oriented analytics to random Boolean Functions, "Mathematical Problems of Computer Science", v. 59, 2023, pp.16-26.
9. Aslanyan L., Gishyan K., Sahakyan H., Deterministic recursion to target class classification, "Pattern Recognition and Image Analysis", v. 33, N 3, 2023, pp. 584-598, Q3
10. Aslanyan L., Gishyan K., Sahakyan H., Target class classification recursion preliminaries", "Baltic J. Modern Computing", v. 11, N 3, 2023, pp. 398-410, Q3
11. Astsatryan H., Lalayan A., Giuliani G., Scalable data processing platform for Earth observation data repositories, "Scalable Computing: Practice and Experience", v. 24(1), 2023, pp. 35-44, doi: 10.12694/scpe.v24i1.2041, 2023, Q3
12. Bejanyan V., Astsatryan H., Exploring PGAS-based gossiping algorithms for Knodel Graphs, "Baltic J. Modern Computing", v. 1, N 2, 2023, pp. 241-256, doi: 10.22364/bjmc.2023.11.2.02. Q3
13. Chitchyan R., Aging properties of actual and virtual waiting times in the $GI|G|1|\infty$ Queuing Model, "Programming and Computer Software", v. 49, issue 7, 2023, pp. 24-29.
14. Gazazyan E., Grigoryan G., Adiabatic states and suppression of dissipative processes, "Optical Memory and Neural Networks", v. 32, suppl. 3, 2023, pp. S402-S408, © Allerton Press, Inc., 2023.
15. Gishyan K., Multi-stage classification scheme to optimize medical treatments, "Mathematical Problems of Computer Science", v. 60, 2023, pp. 40-51.
16. Gishyan K., Drug-treatment generation combinatorial algorithm based on machine learning and statistical methodologies, "Open Journal of Applied Sciences", v. 13, N 4, 2023, pp. 548-561.
17. Gishyan K., Sahakyan H., Aslanyan L., Time-stage driven pathfinding framework for optimized medical treatments, "Cogent Engineering", v. 10, N 1, 2023, 2249258, Q2
18. Gzoyan E., Mirzoyan A., Sargsyan A., Yeghikyan M., Maisano D.A., Sargsyan Sh., International visibility of Armenian domestic journals: the role of scientific diaspora, "Journal of Data and Information Science", v. 8(2), 2023, pp. 93-117, <https://doi.org/10.2478/jdis-2023-0011> (WOS & Scopus, Q2)
19. Haroutunian M., Hakobyan P., Avetisyan A., Two-stage optimal hypotheses testing for a model of stegosystem with an active adversary, "JUCS - Journal of Universal Computer Science", v. 29, N 11, 2023, pp. 1254-1273, <https://doi.org/10.3897/jucs.112913>
20. Harutyunyan A., Poghosyan A., Harutyunyan L., Aghajanyan N., Bunarjyan T., Han Vinck A.J., Challenges and experiences in designing interpretable KPI-diagnostics for cloud applications, "Journal of Universal Computer Science", v. 29, N 11, 2023, pp. 1298-1318.
21. Lalayan A., Astsatryan H., Giuliani G., A Multi-objective optimization service for enhancing performance and cost efficiency in Earth Observation Data processing workflows, "Baltic J. Modern Computing", v. 11, N 3, 2023, pp. 420-434, <https://doi.org/10.22364/bjmc.2023.11.3.05> Q3
22. Lukashevich P., Belotserkovsky A., Grigoryan H., Abrahamyan R., Astsatryan H., Sasnovich A., LST quality evaluation service for heterogeneous Earth Observation data, "IEEE Proceedings of the International Conference on Information and Digital Technologies", 2023, Zilina, Slovakia, pp. 195-199, doi: 10.1109/IDT59031.2023.10194405.
23. Manasyan A., Tadevosyan R., Sahakyan V., Astsatryan H., Petrosyan A., Empowering national research and education networks through monitoring and advanced emulation: ASNET-AM use cases and lessons learned, "Programming and Computer Software", v. 49, suppl. 1, 2023, pp. S996-S1004, doi: 10.1134/S0361768823090062.
24. Mickaelian A., Mikayelyan G.A., Astsatryan H.V., Knyazyan A.V., Armenian Virtual Observatory: status and activities, "Elsevier Journal Astronomy and Computing", v. 42, 2023, p. 100689, doi: 10.1016/j.ascom.2023.100689 Q2

25. Poghosyan A., Narsisian W., Astsatryan H., Benchmarking data of Gromacs: GPU and Gromacs version, "Elect. J. Nat. Sci.", v. 40(1), 2023, pp. 4-7, DOI:10.55841/1728-791X-2023.1.40-4 Scholar
26. Poghosyan A., Harutyunyan A., Bunarjyan T., Baloian N., Optimizing SaaS solutions for enhanced sustainability and predictive management of cloud assets, "Proceedings of the 6th Artificial Intelligence and Cloud Computing Conference", Kyoto, Japan, 2023.
27. Poghosyan A., Harutyunyan A., Grigoryan N., Pang C., Distributed tracing for troubleshooting of native cloud applications via rule-induction systems, "Journal of Universal Computer Science", v. 29, N 11, 2023, pp. 1274-1297.
28. Poghosyan E., Gazazyan E., Programmable quantum gate operations using qutrit quantum dots, "Optical Memory and Neural Networks", v. 32, suppl. 3, 2023, pp. S396-S40, © Allerton Press, Inc.
29. Pogossian E., Promoting origination of dynamicity of non cellular cognizers, "Mathematical Problems of Computer Science", v. 60, 2023, pp.17-26, <https://doi.org/10.51408/1963-0105>
30. Sahakyan, H., Aslanyan, L., Discrete tomography problems with paired projections and complexity characteristics, In: "Advances in Optimization and Applications. OPTIMA 2023. Communications in Computer and Information Science", v. 1913, Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-48751-4_20 (book chapter) Q4
31. Sahakyan V., Vardanyan A., A computational approach for evaluating steady-state probabilities and virtual waiting time of a multiprocessor queueing system, "Programming and Computer Software", v. 49, issue 7, 2023, pp. 16-23.
32. Veziryan R., Khachatryan R., Convolutional neural network (CNN) layer development for effectiveness of classification tasks, "Mathematical Problems of Computer Sciences", v. LX, 2023, pp. 63-71.
33. Yesayan A., On testing of multiple hypotheses of continuous probability distributions arranged into two groups, "Mathematical Problems of Computer Sciences", v. LX, 2023, pp. 35-39.
- Հոդվածները հրատարակվել են "AIP Conference Proceedings" ժողովածուում, 2757 (1), Melville, USA, 2023, SCOPUS.**
34. Abrahamyan R., Astsatryan H., Grigoryan H., Sahakyan V., Cloud infrastructure environment based on data cube and machine learning technologies, 030001-1/6, doi: 10.1063/5.0136314
35. Aslanyan L., Avagyan H., Karalyan Z., On algorithmic technique of whole-genome analytics of viruses, 040001-1-040001-20
36. Aslanyan L., Sahakyan H., Recurrent monotone descriptions in ARM systems, 04002-1 -04002-7
37. Asatryan D., Haroutunian M., Kurkchian V., Melkumyan A., Kupriyanov A., Paringer R., Kirsh D., Dissimilarity-based algorithms for fabric defects detection, 080001, <https://doi.org/10.1063/5.0136217>
38. Gabbasov R., Paringer R., Kupriyanov A., Asatryan D., Haroutunian M., A method of coordinated optimization of neural network parameters for a given set of images, 020001, <https://doi.org/10.1063/5.0136190>
39. Haroutunian E., Yesayan A., Optimal Neyman-Pearson procedure of detection with side information for separate groups of arbitrarily varying Markov distributions, 050001, <https://doi.org/10.1063/5.0136432>
40. Karapetyan I., Karapetyan K., Complete caps in projective geometry $PG(n, 3)$, v.2757, 040003-1-040003-5, DOI: 10.1063/5.0135975
41. Konevsky V., Gaidel A., Asatryan D., Paringer R., Kupriyanov A., Haroutunian M., Multiclass classification of texture images using greedy feature selection algorithms, 080003, <https://doi.org/10.1063/5.0136507>
42. Mokatsian A., On initial segments of the class of Turing degrees containing hypersimple T-mitotic but not wtt-mitotic sets, 070001
43. Piliposyan N., Astsatryan H., Petrosyan Z., Gevorgyan A., Miisakyan A., Melkonyan H., Sahakyan V., Abrahamyan R., Grigoryan H., Possibilities for using WRF weather forecast for flood forecasting (the Aghstev river example), 060004-1/8.
44. Poghosyan S., Alaverdyan Y., Poghosyan V., Abrahamyan S., Atashyan A., Astsatryan H., Shoukourian Yu., Certain methods for investigating epidemics and preventing the spread of viruses in self-organizing systems, 070002-1/6, doi: 10.1063/5.0135809
45. Poghosyan S., Alaverdyan Y., Poghosyan V., Lazyan A., Hayrapetyan D., Shoukourian Yu., Algorithms for operating self-organizing swarms of UAVs implementing full exchange of information, 070003, 10.1063/5.0135806
46. Sahakyan H., Aslanyan L., Connected and weighted hd-convex tomography reconstruction, 04005-1-04005-8

47. Sahakyan V., Vardanyan A., About the possibility of executing tasks with a waiting time restriction in a multiprocessor system, 030003, <https://doi.org/10.1063/5.0135784>
48. Sargsyan V., Asymptotics for the logarithm of the number of k-solution-free collections in Abelian groups, 040006-1- 040006-8, DOI: 10.1063/5.0135804
Հոդվածները հրատարակվել են “International Conference CSIT 2023 Conference Proceedings” ժողովածուում, Ե., 2023, 333 էջ:
49. Abrahamyan R., Grigoryan H., Astsatryan H., Belotserkovsky A., Lukashevich P., Evaluation of air pollution of NO₂ over Armenia and Belarus, pp. 169-172.
50. Abrahamyan S., Realization of ZKRP algorithm via homomorphic encryption methods, pp. 275-277.
51. Alaverdyan Y., Poghosyan S., Poghosyan V., Edge computing: data sharing and intelligence, pp. 75-77, <https://airconline.com/csit/papers/vol13/csit130811.pdf>, 12
52. Asatryan D., Sazhumyan G., Toolset for image virtual recovery of distorted cultural heritage objects. pp. 233-236.
53. Asatryan D., Haroutunian M., Sazhumyan G., Kupriyanov A., Paringer R., Kirsh D., Improving binarization methods for historical handwritten documents, pp. 229-232, https://doi.org/10.51408/csit2023_54
54. Aslanyan L., Katona G., Sahakyan H., Notes on reconstruction of shadow minimization Boolean functions, pp. 119-123.
55. Aslanyan M., On mobile pose estimation design and implementation”, pp. 124-128.
56. Chitchyan R., Properties of increasing hazard rate of waiting times in the $GI|G|1|\infty$ Queueing Model, pp. 178-181, https://doi.org/10.51408/csit2023_42
57. Avetisyan A., Haroutunian M., Hakobyan P., Discussion on steganographic methods from the perspective of E-Voting implementation, pp. 214-217, https://doi.org/10.51408/csit2023_51
58. Darbinyan S., A new sufficient condition for a 2-strong digraph to be Hamiltonian, pp. 129-130.
59. Gevorgyan A., Khalatyan Y., Melkonyan H., Iritsyan A., Panyan H., Azizyan H., Astsatryan H., Azizyan L., Piliposyan N., Petrosyan Z., Sahakyan V., Evaluation of global climate datasets over Armenia, pp. 91-94.
60. Grigoryan S., Context knowledge-based decisions for battlefields, pp. 42-44, https://doi.org/10.51408/csit2023_08
61. Gyulgyulyan E., Astsatryan H., Alert system for data quality in data lakes, pp. 55-58.
62. Karapetyan I., Karapetyan K., Complete caps in $AG(n,3)$, pp. 135-136.
63. Lalayan A., Astsatryan H., Giuliani G., Enhancing Earth Observation Data processing through optimized multi-modular service, pp. 95-98
64. Manasyan A., Tadevosyan R., Astsatryan H., Lessons learned from ASNET-AM Network simulation, pp.243-245, https://doi.org/10.51408/csit2023_57
65. Martirosyan A., Yesayan A., Improvement of growth rate bound of stock market with side information, pp. 218 – 220, https://doi.org/10.51408/csit2023_52
66. Mkrtchyan S., Enhancing the trustworthiness, and comprehensiveness of Wikipedia content”, pp.205-207, https://doi.org/10.51408/csit2023_49
67. Mokatsian A., Efficiently recognizable sets, P-T-mitoticity and arithmetical hierarchy, pp. 21-23.
68. Nikoghosyan Zh., Large cycles in graphs around conjectures of Bondy and Jung - modifications and sharpness, pp. 139-140.
69. Petrosyan A., Petrosyan G., Tadevosyan R., Eduroam in Armenia - success and challenges, pp.255-256, https://doi.org/10.51408/csit2023_60
70. Petrosyan D., Mkrtchyan H., Astsatryan H., Optimizing build time of Shoc workloads, pp. 99-102.
71. Petrosyan G., Prokhorenko E., Petrosyan A., Development of the concept of a system for collecting and visualizing statistical network traffic Data in the ASNET-AM Network, pp. 246-247, https://doi.org/10.51408/csit2023_58
72. Pogossian E., Promoting origination of constituents of non-cellular cognizers, pp. 65-68, https://doi.org/10.51408/csit2023_13
73. Poghosyan S., Poghosyan V., Alaverdyan Y., Tamper-proof hardware solution and algorithms for UAV swarms operating in hostile environments, pp.65-69, https://csit.am/2023/proceedings/AIML/AIML_3.pdf, 3
74. Poghosyan S., Poghosyan V., Lazyan A., Atashyan A., Hayrapetyan D., Astsatryan H., Cloud-based self-organizing UAV swarm simulation platform, pp. 45-48, https://csit.am/2023/proceedings/CHPC/CHPC_4.pdf, 3

75. Sahakyan H., On nonconvexity of the set of hypergraphic sequences, pp. 147-149.
76. Sahakyan V., Vardanyan A., A computational approach for evaluating steady-state probabilities of a multiprocessor queueing system with a waiting time restriction, pp. 106-110, DOI:http://doi.org/10.51408/csit2023_22
77. Sahakyan V., Vardanyan A., About virtual waiting time in a multiprocessor system, pp. 111-113, DOI: http://doi.org/10.51408/csit2023_23
78. Sargsyan V., Maximal k-Sum-Free collections in an Abelian Group, pp. 150-152.
79. Tislenko M., Paringer R., Kupriyanov A., Kirsh D., Mukhin A., Asatryan D., Haroutunian M., Feature selection based on Mmr and genetic algorithm for Data classification problem, pp. 48-51, https://doi.org/10.51408/csit2023_10
80. Vardanyan A., Steady-state probabilities and task rejection/failure probability estimation in the multiprocessor queueing system, pp. 114-116, DOI: http://doi.org/10.51408/csit2023_24

Հ.Ասցատրյանը պարզևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

«ՀԻՐՈՄԵՆԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻՐՈՏԵՆՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Տնօրեն՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան
Էլեկտրոնային փոստ՝ energopower@mail.ru

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել են մայրուղային գազամուղներում ալիքային ու տատանողական պրոցեսների կառավարման հետազոտություններ՝ բարձրացնելու գազի ծախսի ու քանակի չափման ճշտությունը: Գազի ծախսի ու քանակի չափումը հիմնված է ճնշման անկման մեթոդի վրա՝ նեղացող հարմարաքների կիրառմամբ՝ դիաֆրագմաներ, ISA 1932 փողեր, Վենտուրի փողեր ու խողովակներ, որոնք ստեղծում են գազի հոսքի տեղային նեղացումներ: Հոսքի պոտենցիալ էներգիայի մի մասի կինետիկական էներգիայի փոխակերպման հետևանքով հոսքի միջին արագությունը նեղացող կտրվածքում մեծանում է, որի արդյունքում ստատիկ ճնշումն այդ կտրվածքում դառնում է փոքր գազի ստատիկ ճնշումից նեղացող հարմարանքից առաջ: Այդ ճնշումների տարբերությունը մեծ է այնքանով, որքանով մեծ է հոսող գազի ծախսը, հետևաբար այն կարող է ծառայել որպես գազի ծախսի ու քանակի չափման միջոց: Հետազոտության նպատակն է մայրուղային գազամուղներում գազի ծախսի ու քանակի չափման ճշտության բարձրացումը:

Սեղմվող միջավայրի զանգվածային ծախսի որոշման հավասարման մեջ մտնում են՝ հոսքի ելքի գործակիցը, նեղացող հարմարանք մտնող հոսքի արագության գործակիցը, միջավայրի (գազի) ընդարձակման գործակիցը, նեղացող հարմարանքի անցքի կամ բկանցքի տրամագիծը գազի աշխատանքային ջերմաստիճանի ժամանակ, գազի խտությունն ու գազի ճնշման անկումը նեղացող հարմարանքում: Դրված նպատակն իրագործվում է գազի ծախսի ու քանակի չափման հանգույցներում նեղացող հարմարանքներից առաջ ու հետո, ինչպես նաև իմպուլսային գծերի վրա տեղակայելով գազի ճնշման պուլսացիաների կայունացուցիչներ: Գազի ծախսի ու քանակի չափման հանգույցը չափիչ խողովակի ուղիղ հատված է, որում տեղակայված դիաֆրագմայի միջոցով չափման խողովակի A և B հատվածներում ստեղծվում են ճնշման տարբերություններ, որոնք իմպուլսային գծերի միջոցով փոխանցվում են դիֆերենցիալ մանոմետրին: Չափելով ճնշումների տարբերությունը, հաշվի առնելով գործակիցներն ու գազի վիճակի պարամետրերը՝ որոշվում են գազի ծախսն ու քանակությունը: Գազի հոսքի պուլսացիաները, որոնք անցնում են չափիչ

խողովակաշարով, ինչպես նաև A և B հատվածներում առաջացող ճնշման պոլսացիաները մարվում են կայունացուցիչների միջոցով, որոնք տեղակայված են չափող խողովակի սկզբում ու վերջում, իմպուլսային գծերում ճնշման պոլսացիաները մարվում են իմպուլսային գծերի լայնական կտրվածքի ոչ կլոր լինելու (օվալ, եռանկյուն, քառակուսի) հաշվին: Իմպուլսային գծերում ճնշման պոլսացիաները մարվում են պատերի դեֆորմացիաների շնորհիվ: Հետազոտությունը թույլ է տալիս զգալի կրճատել չափիչ խողովակի ուղիղ հատվածը, խուսափել ավանդական հոսքաուղղիչների կիրառությունից: Կայունացուցիչի պարամետրերի, ինչպես նաև իմպուլսային գծերի լայնական կտրվածքների օպտիմալ ընտրության դեպքում կարելի է նշանակալի բարձրացնել գազի ծախսի ու քանակի չափման ճշգրտությունը, բարձրացնել դիֆմանոմետրերի ու երկրորդական սարքերի հուսալիությունն ու երկարակեցությունը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

Հոդվածները հրատարակվել են «XIII Всероссийский Съезд по теоретической и прикладной механике» միջազգային համագումարի զեկուցումների ժողովածուում, հտ. 4, Սանկտ Պետերբուրգ, “Политех-Пресс” հրատ., 2023, 938 էջ:

1. Аветисян Г.Р., Симонян А.А., Кавитационная эрозия рабочих колес гидротурбин и их устранение, т. 4, с. 268-270.
2. Симонян А.А., Аветисян Г.Р., Гаспарян А.С., Управление волновыми и вибрационными процессами в трубопроводных системах, содержащих двухфазную среду: жидкость-газ применительно к установке гидрокрекинга, т. 4, с. 271-273.

ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Ռ.Կոստանյան

Գիտքարտուղար՝ Ն.Դավիդյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանը (ԲԱ), Ֆիզիկական հետազոտությունների (ՖՀ), Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների (ՖԿՊԻ), Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի (ՌՖԷԻ) ինստիտուտները, ԻԿՐԱՆԵՏ կենտրոն ՄԿ:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 5 ակադեմիկոս, 10 թղթակից և 24 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 2 ընդհանուր ժողով, բյուրոյի 15 նիստ, բազմաթիվ ընթացիկ հարցերի քննարկման և լուծման համար կազմակերպությունների հետ պահպանվել է մշտական կապ:

Բաժանմունքի ապրիլի 20-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել ակադեմիկոս-քարտուղար ակ. Ռ.Կոստանյանի «2022թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը: Ժողովը որոշել է՝ կարևորելով ՀՀ-ում գիտական և գիտակրթական բնագավառներում նախատեսվող ծրագրերի իրականացումը՝ անհրաժեշտ է չխաթարել գիտական կազմակերպություններում կատարվող աշխատանքների բնականոն ընթացքն ու շարունակականությունը, հաշվի առնել գիտական կազմակերպությունների՝ տարիներ առաջ հաստատված թեմատիկայի վերանայման անհրաժեշտությունը, որոնք որոշ դեպքերում ապահովված չեն համապատասխան կադրերով ու կարիք ունեն արդիականացման՝ կարևորելով առկա կադրային ներուժը, համարել կարևոր հիմնարար հետազոտությունների արդյունքների հիման վրա հանրապետության հատկապես անվտանգային ու առողջապահության բնագավառներում կիրառման նպատակով նորարական աշխատանքների իրականացումը: Գիտական զեկուցումներով ելույթ են ունեցել թղթ. անդ. Ա.Հախումյանը (ՌՖԷԻ), Ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյանը (Իկրանետ կենտրոն ՄԿ), Ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյանը (ՖԿՊԻ), Ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյանը (ԲԱ), Ֆ.-մ.գ.թ. Ա.Մանուկյանը (ՖՀ):

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը, ասպիրանտուրայի ու գործուղումների հայտերը (9 հայտ), փորձագիտական եզրակացություն է տրվել Կառավարության կառույցներից ստացված նամակներին, դիմումատուներին տրվել են պատասխաններ:

Բաժանմունքի ապրիլի 5-ի ընդհանուր ժողովում հաստատվել և ԳԱԱ նախագահության քննարկմանն է ներկայացվել ՖԿՊԻ-ի նոր տնօրենի՝ Վ.Քոչարյանի թեկնածությունը: Բյուրոյի նիստում հաստատվել է ինստիտուտում վերընտրված գիտական խորհրդի նոր կազմը:

Քննարկվել և բավարարվել են «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» բյուջետային ծրագրերի շրջանակում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման ՖՀ-ի, ՖԿՊԻ-ի ու ՌՖԷԻ-ի ներկայացված հայտերը:

«Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի հանձնաժողովը Ռ.Կոստանյանի նախագահությամբ որոշել է հաղթած թեկնածուների ցանկը:

Մշտապես քննարկվել են գիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման, կիրառական նշանակություն ունեցող ուսումնասիրությունների ընդլայնման, գիտական կազմակերպությունների աշխատանքի գնահատման հարցերը:

Կազմակերպվել ու պարբերաբար անցկացվել են սեմինարներ ու միջազգային գիտա-
ժողովներ (6 գիտաժողով), կնքվել են նոր պայմանագրեր, շարունակվել է համագործակ-
ցությունը գիտական ու կրթական ոլորտների այլ ստորաբաժանումների հետ: Քննարկվել
են 2024թ. բազային ֆինանսավորման հայտերը, ծրագրերն ու բաժանմունքի
կազմակերպությունների ռազմավարությունը:

Դեկտեմբերին բաժանմունքի գիտական կազմակերպություններում անցկացվել են
տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել են ստացված կարևորագույն հիմնարար ու
կիրառական արդյունքները, հաստատվել են գիտական և գիտակազմակերպական գործու-
նեության մասին հաշվետվությունները:

Բաժանմունքի ինստիտուտների 1 աշխատակից պաշտպանել է թեկնածուական
ատենախոսություն:

Բաժանմունքի ինստիտուտները ստացել են 2 արտոնագիր, գիտաշխատողները
տպագրել են 7 մենագրություն (3-ն արտասահմանում), 200 հոդված՝ գրախոսվող
ամսագրերում 177 (104-ն արտասահմանում), գիտաժողովների նյութերի ժողովածուներում
23 (բոլորն արտասահմանում), 151 թեզիս (56-ն արտասահմանում):

Բաժանմունքը հրատարակում է «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» (imp. fac. 0,486, 4
համար), «Աստղաֆիզիկա» (imp. fac. 0,673, 4 համար), «Armenian journal of physics»
(«Ֆիզիկայի հայկական հանդես», էլեկտրոնային, 4 համար) ամսագրերը:

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան
Գիտքարտուղար՝ Լ.Համբարձումյան
Էլեկտրոնային փոստ՝ observ@bao.sci.am
Կայքէջ՝ www.mechins.sci.am

Մասնագիտական խորհուրդ 048՝ «Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն»

Նախագահ՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել է մեծ կարմիր շեղում ունեցող քվազարների գերմանուշակագույն (ԳՄ) սպեկտրների ուսումնասիրություն: Օգտագործվել են GALEX տիեզերական ԳՄ աստղա-
դիտակի տվյալները L-alpha սպեկտրային գծի հոսքի չափումների համար՝ այն համադրելու
H-beta գծի պրոֆիլների տեսքի ու հոսքերի հետ, մասնավորապես քվազարների՝ մեր
կողմից ներմուծված դասակարգման տարբեր դասերի համեմատության ու քվազարների
ԳՄ հոսքերով դասակարգման տարբերակ գտնելու նպատակով: Որոշակի կարմիր
շեղումների դեպքում L-alpha գիծն ընկնում է GALEX-ի FUV տիրույթը և ապահովում այդ
հոսքը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Հետազոտվել է մութ էներգիայի հնարավոր ազդեցությունը տիեզերական օբյեկտներում անկայունությունների դրսևորման վրա: Եզրակացությունն այն է, որ տարբեր հիերարխիկական մակարդակներում անկայունությունների դրսևորման համար կարող է պատասխանատու լինել հենց մութ էներգիան (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան):

Ուսումնասիրվել են մասնիկների շարժման ստանդարտ Լորենցի կոդի (SLC) հիմունքները: Այդ նպատակով մշակվել է գլոբալ, այսպես կոչված գլխավոր տարածության՝ MSp-գերհամաչափության տեսություն: SLC-ը դուրս է բերվել որպես MSp-SUSY գլոբալ կրկնակի ձևափոխությունների հետևանք: Նման ճանապարհով դուրս են բերվել հարաբերականության հատուկ տեսության երկու հիմնարար պոստուլատները: Մշակվել է Լորենց-ինվարիանտության դեֆորմացիայի (LID) ու համապատասխան երկրաչափության հետևողական միկրոսկոպիկ տեսությունը: Ճառագայթային էներգիայի տեղափոխման խնդրում, կիսաանվերջ միջավայրից ճառագայթման դիֆուզ անդրադարձման խնդրի լուծման համար Հ.Պիկիչյանը մշակել է նոր եղանակ, որը թույլ է տալիս հաճախությունների վերաբաշխման ու անիզոտրոպ ցրման խնդիրները լուծել մեկ փոփոխականի ֆունկցիաների կառուցման միջոցով (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Ցույց է տրվել, որ ակտիվ գալակտիկաների սպեկտրներում դիտվող [CII] 158 մկմ առաքման գծի լայնության համար (կմ/վ) ճառագայթող միջավայրում հավանաբար արդարացված է տուրբուլենտ արագության խորանարդի ու շառավղի հարաբերության օրենքն այսպես կոչվող Կոլմոգորովի կասկադային պրոցեսում փոխանցվող տուրբուլենտ էներգիայի չափաբաժնի համար: Քննարկվում են ճառագայթող միջավայրի տուրբուլենտ շարժման հնարավոր պատճառները (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Եղիկյան):

Զարգացվել է մաթեմատիկական տեսություն, որը հնարավորություն է ընձեռում դիտվող գծային սպեկտրների ժամանակային փոփոխությունների միջոցով պարզել ուսումնասիրվող ակտիվ միջավայրի ֆիզիկական հատկությունները, ներառյալ նրա քիմիական բաղադրությունը, սկզբնական էներգիայի աղբյուրների սպեկտրալ բաշխումը: Ուսումնասիրվել է ֆիզիկական տարբեր պայմանների ու գործոնների ազդեցությունը միջավայրից անդրադարձման ու նրանից անցման արդյունքում առաջացող սպեկտրային գծերի էվոլյուցիայի վրա:

Օգտագործելով TESS ուղեծրային աստղադիտարանի տվյալները՝ Ա.Հակոբյանն ուսումնասիրել է 07.2018-10.2020թթ. ժամանակահատվածում 100 և ավելի անգամ բռնկված բռնկվող աստղերը: Որոշվել են այդ աստղերի առանցքային պտույտների պարբերությունները, CD-56 1032 կրկնակի աստղի ու նրա բաղադրիչների փոփոխականության տիպերն ու պարբերությունները: Բռնկումների հաշվարկված ու դիտարկված փուլային բաշխումների համեմատությունը (օգտագործելով χ^2 չափանիշը) հիմնավորել է բռնկման հաճախականության պարբերական լինելը՝ պայմանավորված աստղերի առանցքային պտույտով ու աստղաբծերի անհավասարաչափ բաշխմամբ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Նիկողոսյան):

Ռուսաստանի 6մ դիտակով ու ԱՄՆ 3.5մ ARC դիտակով հայտնաբերվել և ուսումնասիրվել են օպտիկական ու մոտակա ինֆրակարմիր տիրույթում Mon R2 աստղասփյուռի հարավային մասում երկու երկար կորածև HH հոսքեր, երեք նոր մոլեկուլար ջրածնի հոսքեր: Այս հոսքերի աղբյուրները երիտասարդ, շատ ակտիվ աստղեր են՝ անսովոր սպեկտրներով: Հոսքերից մեկը (HH 1234) ունի եզակի հելիկոիդալ տեսք, իսկ նրա հետ կապված աստղը՝ արտակարգ լայն առաքման գծեր և նմանվում է գերակտիվ «գերէքսոր» PV Cep-ի (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Զորաց քարեր հուշարձանում բացահայտվել են 3-րդ դիտահարթակի գործառույթներն ու օգտագործման ժամանակաշրջանը, որը վերաբերում է ն.Ք. 9-3-րդ հազարամյակ-

ներին: Ավարտվել է թիվ 12, 13 ու 14 վեմերի լիարժեք քննությունը: Հստակեցվել են Ձկնակերպ վիշապաքարերի աստղագիտական բովանդակության վերաբերյալ որոշ խնդիրներ: Ճշգրտվել է դրանց երկնային գուգահեռը, հաշվարկվել է դրանց պաշտամունքի ժամանակաշրջանն աստղագիտական եղանակներով (Ն.Ք. 19-րդ հազ.) (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Հ.Մալխասյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Բարձր արագությամբ աստղերի որոնում և նույնացում բազմաստղերից դինամիկական արտանետման և գերնորերի պայթյունների միջոցով» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Համբարյան) ուսումնասիրվել են Բազումք աստղակույտն ու Կեփեոս OB2 (Cep OB2) աստղասփյուռը: Նույնացվել են աստղախմբերի հայտնի անդամ աստղերը Gaia DR3 տվյալների շտեմարանի աստղերի հետ: Ցույց է տրվել, որ Բազումքի տիրույթում դիտվող բռնկվող աստղերի գրեթե 30%-ն աստղակույտի կինեմատիկական անդամներ չեն, սակայն գտնվում են երիտասարդ թզուկ աստղերին հատուկ բռնկումային ակտիվության միևնույն էվոլյուցիոն փուլում: Կեփեոս OB2 աստղասփյուռի ուսումնասիրությունից պարզվել է, որ մեծ հավանականությամբ երկու փախչող աստղ ու երեք պուլսար այդ աստղասփյուռի մաս հանդիսացող հինգ կույտերի հետ կազմում են եռյակ համակարգեր (փախչող աստղ, պուլսար ու աստղախումբ) և առաջացել են միլիոնավոր տարիներ առաջ, տարածության միևնույն տեղում:

Հայտնաբերվել է լուսատվության մեծ ամպլիտուդով երկու փոփոխական երիտասարդ աստղային օբյեկտ՝ J183421.85-055951.0 (#1) և J183421.39-055937.7 (#2), RAFG 7009S աստղառաջացման տիրույթում: Օբյեկտ #1-ի բռնկումը տեղի է ունեցել 2007-11թթ., որի ընթացքում պայծառությունն աճել է 2.7^m-ով՝ մոտ ու 2.5^m-ով միջին ենթակարմիր ալիքային տիրույթներում: Գույնի ցուցիչները ցույց են տալիս, որ այս օբյեկտն ունի I/II դասի էվոլյուցիոն փուլ: Բռնկումից հետո K-ալիքային տիրույթի սպեկտրում դիտվել են կլանումներ CO շերտում և Brγ ու Mg I գծերում, ինչպես նաև H₂ գիծն առաքման մեջ: Այդ հատկությունները բնորոշ են FU Orionis (FUors) տիպի պայթյունային փոփոխականներին: Օբյեկտ #2-ը ցույց է տալիս միայն բարձր ամպլիտուդային փոփոխականություն մոտ ենթակարմիր տիրույթում ($\Delta K = 2,0$ m), իսկ նրա գունային ցուցիչները մինչև բռնկումը համապատասխանում են վաղ էվոլյուցիոն փուլում գտնվող երիտասարդ աստղային օբյեկտների (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան):

Օգտագործելով Սլոանի շրջահայության (SDSS) միջին լուծունակության սպեկտրերը և մեր կողմից ներմուծված դասերի ու ենթադասերի մանրակրկիտ ուսումնասիրությունը՝ դասակարգվել է 779 Mrk գալակտիկա, բացահայտվել է 2 քվազար, 49 դասական Սեյֆերտի գալակտիկա (BLS1), 17 նեղ գծերով Սեյֆերտ 1 (NLS1s), 4 Սեյֆերտ 2 (S2), 12 լայներ, 11 AGN առանց որոշակի դասի, 31 բաղադրյալ սպեկտրներով օբյեկտ ու 533 HII/Starburst (աստղառաջացման բռնկումով գալակտիկա): Ցածր որակի սպեկտրների պատճառով որոշ օբյեկտներ մնացել են առանց որոշակի ակտիվության դասերի (դասակարգվել են որպես Առաքման (Em) կամ Կլանման (Abs) գծերով գալակտիկաներ):

Գալակտիկաներն ու քվազարները գտնելու և առանձնացնելու նպատակով իրականացվել են խաչաձև համապատասխանեցումներ պայծառ գալակտիկաների (RNGC, RC3, PGC), քվազարների, APM, SDSS, Gaia և ռադիոաղբյուրների կատալոգների հետ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Նեյտրոնային աստղերի կեղևների էլեկտրական հաղորդունակությունը հաշվարկվել է նյութի հեղուկ փուլում ուժեղ մագնիսական դաշտերի առկայության դեպքում: Ուսումնասիր-

ված ջերմաստիճան-խտության միջակայքն ընդգրկում է անցումը ոչ այլասերվածից դեպի խիստ այլասերված էլեկտրոնային գազ և ենթադրում է, որ միջուկները ձևավորում են հեղուկ, այսինքն՝ ջերմաստիճանը բարձր է միջուկների ցանցի հալման ջերմաստիճանից: Ստացվել են առաջին ու երկրորդ կարգի ռելատիվիստիկական հիդրոդինամիկայի հավասարումները նյութում դիսսիպացիայի առկայությամբ: Ուսումնասիրվել է չափավոր տաք ու խիտ, նեյտրինո-թափանցիկ նեյտրոն-պրոտոն-էլեկտրոն-մյուոնային նյութի երկրորդ մածուցիկությունը, որն առաջանում է թույլ փոխազդեցության ուղիղ Urca գործընթացներից: Գնահատվել են խտության տատանումների մարման ժամկետները մեծածավալ մածուցիկությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սեդրակյան):

Հավաքելով ու վերլուծելով հասանելի տեղեկությունները ֆուտրների ու էքսոների մասին՝ կազմվել է այս դասերին պատկանող, ներկայում հայտնի աստղերի ամբողջական ցուցակը:

Տ.Մովսիսյանն իրականացրել է PV Cep՝ արտակարգ բարձր ակտիվությամբ երիտասարդ աստղի հետազոտություն հիմնականում 3 ուղղությամբ՝ ուղիղ պատկերների ստացում նեղ լուսազտիչներով Բյուրականի 1մ Շմիդտի դասի դիտակով, աղբյուր աստղի սպեկտրային ուսումնասիրություն և նրա հետ կապված արտահոսքի մանրակրկիտ ուսումնասիրություն սկանող Ֆաբրի-Պերո ինտերֆերաչափի օգնությամբ:

BNBIS շրջահայության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել մութ ամպերում գտնվող IRAS աղբյուրներին: Առաջին անգամ հայտնաբերվել է HH հոսք բազմիցս ուսումնասիրված LkHα 101 աստղառաջացման տիրույթում: Հոսքերի որոշ մասը դիտվել է նաև մոլեկուլային ջրածնում:

Dobashi 5006 մեկուսացված մութ ամպն ուսումնասիրելիս հայտնաբերվել են Հերբիգ-Հարո մի քանի նոր հոսքեր (HH 1179)՝ կապված ինֆրակարմիր աղբյուրների հետ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Հարությունյան Հ.Ա., Վիկտոր Համբարձումյան, Ե., «Արեգ» հրատ., 2023, 367 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

- Մալխասյան Հ.Ա., «Ձորաց Քարեր» հուշարձանի թիվ 12, 13 և 14 «դիտողական գործիքների» համապարփակ քննության արդյունքների վերաբերյալ, Ե., «Բազմավեպ», N 1-2, 2023, էջ 125-182:
- Акопян А.А., Периодичность частоты вспышек активных вспыхивающих звезд обнаруженных TESS, Ер., «Астрофизика», т. 66, N 4, 2023, с. 555-570.
- Никогосян А.Г., Эволюция спектральных линий в неоднородной атмосфере, освещенной нестационарными источниками энергии, Ер., «Астрофизика», т. 66, N 2, 2023, с. 258-272.
- Abrahamyan H., Mickaelian A., Paronyan G., Mikayelyan G., Sukiasyan A., Optical classification of BZG objects from the BZCAT Blazar Catalog, “Astrophysics (Ap)”, v. 66, N 1, 2023, pp. 11-23.
- Abrahamyan H., Mickaelian A., Mikayelyan G., Paronyan G., Sukiasyan A., Mkrtchyan V., Hambardzumyan L., Classification of blazars by activity types, “ComBAO”, v. 70, N 1, 2023, pp.83-87.
- Alford M., Harutyunyan A., Sedrakian A., Bulk viscosity from Urca processes: npeμ matter in the neutrino-transparent regime, “PhysRevD”, v. 108, N 8, 2023, id.083019.
- Andreasyan R., Abrahamyan H., Paronyan G., Mikayelyan G., Mickaelian A., On a possible mechanism for the start or resumption of activity of radio galaxies in clusters of galaxies, “Astrophysics”, v. 66, N 3, 2023, pp. 304-310.
- Andreasyan R., Hakopian S., Mahtessian A., Abrahamyan H., Paronyan G., Sukiasyan A., A study of active galaxies in groups of galaxies and in the field, “ComBAO”, v. 70, N 1, 2023, pp. 77-82.

10. Andreasyan R., Paronyan G., Suqiasyan A., The role of environment on the formation of different FR type extragalactic radio sources, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 307-311.
11. Ghazaryan S., Hambardzumyan L., Grigoryan A., Gigoyan K., Michel K.-U., Hambaryan V., Neuhaeuser R., Identification of birth places of high-velocity stars: CepOB2 association, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 279-285.
12. Gigoyan K.S., Sarkissian A., Kostandyan G., Gigoyan K.K., Meftah M., Bekki S., Azatyan N., Zamkotsian F., M dwarfs found in the first Byurakan spectral sky survey Database. Gaia EDR3 and TESS data. Some preliminary results, "Publication of the Astronomical Society of Australia (PASA)", v. 40, 2023, e023.
13. Gigoyan K.S., Gigoyan K.K., Sarkissian A., Kostandyan G., Meftah M., Bekki S., The digitized first Byurakan survey data base. Late-type Stars Candidates. New Confirmations, "Astrophysics", v. 66, N 4, 2023, pp. 505-520.
14. Gigoyan K.K., Gigoyan K.S., Sarkissian A., Meftah M., Kostandyan G.R., Rahmatullaeva F., TYC 1417-891-1 AND TYC 1478-742-1: Eclipsingvariable stars. The Gaia EDR3 and TESS Photometric Data, "Astrophysics", v. 66, N 3, 2023, pp. 194-204.
15. Gigoyan K.K., Gigoyan K.S., Kostandyan G.R., TYC 1417-891-1 and TYC 1478-742-1: Eclipsing variable stars. The Gaia EDR3 and TESS photometric data, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 60-67.
16. Hambardzumyan L., Arshakian T., Pushkarev A., BL Lacertae: a study of quasi-stationary feature trajectories in the inner part of a relativistic jet, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 94-99.
17. Hambardzumyan L., Arshakian T., Pushkarev A., BL Lacertae: Recovering intrinsic trajectory of a quasi-stationary jet feature on subparsec-scales, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 312-317.
18. Hambaryan V., Akopian A., Prof. Lyudwik Mirzoyan's life and activity, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 18-22.
19. Hambaryan V., Neuhaeuser R., Search and identification of high-velocity stars by dynamical ejection and supernovae from multiple stars, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 43-48.
20. Hambaryan V., Ghazaryan S., Hambardzumyan L., Neuhaeuser R., Mirzoyan A., Tsvetkova K.P., The Pleiades flare stars in the Gaia era, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 248-254.
21. Harutyunyan A., Sedrakian A., Phenomenological relativistic second-order hydrodynamics for multiflavor fluids, "Symmetry", v. 15(2), 2023, pp. 494-514.
22. Harutyunyan G., Multiwavelength properties of selected high redshift blazars, "Astrophysics", v. 66, N 2, 2023, pp. 181-193.
23. Harutyunian H., The discrepancy between the values of the Hubble constant and the effect of dark energy on baryonic matter, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 100-105.
24. Harutyunian H., Grigoryan A., Awni Khasawneh, Torosyan A., Is the Andromeda galaxy approaching our galaxy Milky Way?, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 296-300.
25. Harutyunian H., Activity phenomena in the baryonic universe as a result of interaction between baryonic objects and the carrier of dark energy, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 165-169.
26. Karapetyan E., Gigoyan K., Kostandyan G., Discovery of new red stars with digitized plates of the μ Cephei range, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 291-293.
27. Kostandyan G., Gigoyan K.S., Gigoyan K.K., Investigations of late-type giant stars from the First Byurakan Spectral Sky Survey, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 54-59.
28. Kostandyan G., Gigoyan K.S., New M-type stars found in the BAO Plate Archive centered at $\alpha = +15^h$ $\delta = +58^\circ$, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 294-295.
29. Mahtessian A., Karapetian G., Hovhannisyan M., Mahtessian L., Dependence of standardization parameters of type Ia supernova light curves on redshift, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 114-122.
30. Mahtessian A., Karapetian G., Hovhannisyan M., The evolving absolute magnitude of type Ia supernovae and its critical impact on the cosmological parameters, "International Journal of Astronomy and Astrophysics", v. 13, N 2, 2023, pp. 39-60.
31. Malkhasyan H., On the astronomical context of fish-shaped Vishap Stone Stelae, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 248-258.
32. Magakian T., Movsessian T., Andreasyan H., Moiseev A., Uklein R., The star in RNO 54: A possible post-FUor with a short faint jet, "Astronomy & Astrophysics", v. 675, 2023, id. A79.
33. Magakian, T., Movsessian, T., Andreasyan H., FUors, EXors, and the role of intermediate objects, "Acta Astrophysica Taurica", v. 3, N 3. 2023, pp. 4-7.

34. Mkrtchyan V., Mickaelian A., Abrahamyan H., Mikayelyan G., Paronyan G., Morphological study of active galaxies based on SDSS images. Preliminary results, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 318-320.
35. Mickaelian A., Mikayelyan G., Astsatryan H., Knyazyan A., Armenian Virtual Observatory: Status and activities, "Astronomy & Computing (A&C)", v. 42, N 1, 2023, id.100689.
36. Mickaelian A., Byurakan Astrophysical Observatory (BAO): current activities and statuses, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 9-17.
37. Mickaelian A., Abrahamyan H., Paronyan G., Mikayelyan G., Andreasyan R., Sukiasyan A., Hambardzumyan L., Mkrtchyan V., Multiwavelength search and studies of active galaxies, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 68-76.
38. Mickaelian A., Abrahamyan H., Paronyan G., Mikayelyan G., Andreasyan R., Sukiasyan A., Hambardzumyan L., Mkrtchyan V., Gasparyan A., Astronomical surveys and active galaxies, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 260-269.
39. Mikayelyan G., Mickaelian A., Abrahamyan H., Paronyan G., Building the largest sample of IR galaxies. Preliminary Results, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 300-306.
40. Moiseev A., Smirnova A., Movsessian T., Enigmatic emission structure around Mrk 783: Cross-ionization of a companion 100 kpc away, "Universe", v. 9(12), 2023, pp. 493-507.
41. Movsessian T., Magakian T., Bally J., Andreasyan, H., Moiseev A., The optical and infrared study of an active star-formation region in the southern part of Mon R2, "Acta Astrophysica Taurica", v. 4, N 1, 2023, pp. 8-11.
42. Movsessian T., Magakian T.Y., Rastorguev A., Andreasyan H., Herbig-Haro flows and young stars in the Dobashi 5006 dark cloud, "Astrophysics", v. 66, N 1, 2023, pp. 52-63.
43. Movsessian T., Magakyan T., Spectroscopy of new Herbig-Haro objects discovered in frames of BNBIS, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 49-53.
44. Nikoghossian A., Spectral lines evolution in the media illuminated by non-stationary energy sources, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 131-142.
45. Nikoghosyan E., Azatyan N., Andreasyan D., Kaper L., Samsonyan A., Yeghikyan A., Baghdasaryan D., Harutyunyan N., New eruptive variable(s) in the RAFGL 7009S H II region, "MNRAS", v. 522, N 2, 2023, pp. 2171-2180.
46. Oganessian K., Akopian A., Dzierzega K., Suddenly switching-on interaction in the relativistic strophotron, "LaPhL", v. 20, N 3, 2023, id.036001, pp. 1-4.
47. Paronyan G., Mickaelian A., Abrahamyan H., Mikayelyan G., Sukiasyan A., Hambardzumyan L., Mkrtchyan V., Study of the X-ray properties of radio sources, based on NVSS catalogue, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 88-93.
48. Pikichyan H., On the new opportunity of solving the Ambartsumian's functional equation in the theory of radiative transfer, "ComBAO", v. 70, N 1, 2023, pp. 143-151.
49. Pikichyan H., Separation of frequency variables in the problem of diffuse reflection from a semi-infinite medium under isotropic scattering with a general law of radiation redistribution by frequencies, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 204-215.
50. Pikichyan H., Reflection of radiation from a plane-parallel half-space in the case of redistribution of radiation by frequencies and directions, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 238-247.
51. Sahakyan N., Harutyunyan G., Israyelyan D., Origin of multiwavelength emission from flaring high redshift blazar PKS 0537-286, "MNRAS", v. 521, N 1, 2023, pp. 1013-1022.
52. Shahinyan S., Davtyan A., Gasparyan B., Primaeval civilizational culture and the architecture of rock cut sanctuaries (Artificial cavities), "Speleologia Iblea2023", v. 17, 2023, pp. 169-172.
53. Shahinyan S., Davtyan A., Davtyan S., Gasparyan B., Use of natural caves for ritual purposes as a forerunner of the formation of architecture, "Hypogea2023", 2023, pp. 205-212.
54. Sukiasyan A., Mickaelian A., Abrahamyan H., Paronyan G., Mikayelyan G., Analysis of the short wavelength range of QSOs, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 321-325.
55. Ter-Kazarian G., Coordinate-independent definition of relative velocity in pseudo-Riemannian spacetime: Implications for special cases, "Gravitation and Cosmology", v. 29, N 1, 2023, pp. 62-73.
56. Ter-Kazarian G., Inertia I: The global MSp-SUSY induced uniform motion, "ComBAO", v. 70, N 2, 2023, pp. 170-187.

57. Ter-Kazarian G., Deformation of special relativity in ultra-high energy Astrophysics, “ComBAO”, v. 70, N 2, 2023, pp. 188-203.
58. Ter-Kazarian G., Inertia II: The local gMSp-SUSY induced inertia effects, “ComBAO”, v. 70, N 2, 2023, pp. 216-237.
59. Yeghikyan A., Does Iron in Armenian really means a Sky Drop?, “Communications of the Byurakan Astrophysical Observatory”, v. 70, N 1, 2023, pp. 1-6.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Ն.Ազատյանն արժանացել է Միջազգային աստղագիտության միության մրցանակի, Ա.Հարությունյանը՝ Հայկական աստղագիտական ընկերության տարեկան մրցանակի:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ թղթ. անդ. Ա. Պապոյան
 Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Պ. Մուժիկյան
 Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Լ. Ծառուկյան
 Էլեկտրոնային փոստ՝ ifi@ipr.sci.am
 Կայքէջ՝ <http://www.ipr.sci.am>

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Բարձրջերմաստիճանային նանոբջիջների կիրառմամբ ցույց է տրվել, որ բացի ատոմ-մակերևույթ վանդերվալյան (ՎԴՎ) փոխազդեցությունից՝ ատոմային ռեզոնանսների հաճախության «կարմիր» շեղում է առաջացնում նաև ատոմ-ատոմ դիպոլ-դիպոլային (ԴԴ) փոխազդեցությունը: Վերջինիս անտեսումը բերում է ՎԴՎ C_3 գործակցի արժեքի անճշտության: Առաջին անգամ «կարմիր» շեղման փորձարարական չափումներով ցույց է տրվել C_3 գործակցի արժեքի նվազումն ատոմական նանոբջջի հաստության 130 նմ-ից մինչև 30-50 նմ նվազեցման դեպքում՝ հավաստելով տեսականորեն կանխատեսված ՎԴՎ երևույթի «թուլացումը» (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Հետազոտվել է ատոմային կլանման ազդանշանի ժամանակային վարքը՝ Rb D_2 գծի շուրջ 10 ԳՀց տիրույթում ծրվող հաճախությամբ լազերային գրգռման պայմաններում: Գրանցելով ազդանշանը 1 նվ ժամանակային լուծունակությամբ՝ ատոմային անցումների սպեկտրալ թևերի վրա ի հայտ են բերվել արագ տատանումներ, որոնք առավել ընդգծված են 10 մՎտ/սմ²-ից բարձր ինտենսիվության դեպքում: Գրանցված ազդանշանի Ֆուրյե-փոխակերպումը ցույց է տվել, որ երևույթը կապված է Ռաբիի տատանումների հետ՝ դրսևորվելով շնորհիվ լազերային դաշտի փուլային ֆլուկտուացիաների փոխակերպման ամպլիտուդային ազդանշանի (դեկ.՝ թղթ. անդ. Ա. Պապոյան):

Քվանտային ցանցի հանգույցների միջև քվանտային տեղեկույթի նվազագույն կորուստներով փոխանցելու համար մշակվել է տեսանելի ու հեռահաղորդակցական ֆոտոնների փոխադարձ կոհերենտ փոխակերպման մեխանիզմ, որը պահպանում է ֆոտոնների՝ ըստ ժամանակի կողավորված քվանտային վիճակը: Փոխակերպումն իրականացվում է ^{87}Rb ատոմներում $|5S_{1/2}F=1\rangle \rightarrow |5P_{1/2}F=2\rangle \rightarrow |6S_{1/2}F=1\rangle \rightarrow |5P_{3/2}F=2\rangle \rightarrow |5S_{1/2}F=1\rangle$ անցումների վրա քառաֆոտոն փոխազդեցության միջոցով, երբ երկու լազերային դաշտերի առկայությամբ տեսանելի ֆոտոնի ժամանակային քուբիթը վերածվում է 1.37 մկմ ֆոտոնի քուբիթի և հակառակը: Արդյունքում հնարավոր է գեներացնել քվանտային կապի իրականացման համար կարևոր կառավարելի մեծության

մեկ ֆոտոնային խճճվածություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Յու.Մալաքյան):

Օգտագործելով երկմակարդականի համակարգի մոդելը՝ տեսականորեն ուսումնասիրվել է լազերային իմպուլսների պարամետրերի համապատասխան ընտրությամբ լայնական ռելաքսացիայի կոմպենսացման հնարավորությունը: Օգտագործելով ադիաբատիկ բացառման մեթոդը՝ ստացված արդյունքները կիրառվել են եռամակարդակ համակարգի համար: Չնայած ստորին ենթամակարդակների կոհերենտության արագ տրոհմանը՝ ցույց է տրվել բնակեցվածության արդյունավետ փոխանցում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Գրիգորյան):

Տեսականորեն ուսումնասիրվել է երկու օպտիկական ռեզոնատորներից ու երկու ատոմական համակարգերից բաղկացած քվանտային օբյեկտը: Դիտարկվել է այն դեպքը, երբ առաջին ռեզոնատոր/ատոմ համակարգից արձակված լույսն ընկնում է երկրորդ ռեզոնատոր/ատոմ համակարգի վրա՝ հաշվի առնելով լույսի անցման իրական կորուստները: Խնդիրը կարևոր է քվանտային ցանցերում տեղեկույթի անվտանգ տեղափոխման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Խանբեկյան):

Ներկայացվել է ժամանակից կախված նոր երկվիճակ մոդել՝ հաստատուն ամպլիտուդով, մակարդակների հատմամբ դաշտի կոնֆիգուրացիա, որում հաճախության ապալարքը փոփոխվում է սահմանափակ միջակայքում: Այս կոնֆիգուրացիայում ռեզոնանսի հատումն ըստ ժամանակի տեղի է ունենում ասիմետրիկ կերպով, ուստի այն կարելի է համարել Դեմկով-Կունիկեի երկրորդ մոդելի ասիմետրիկ տարբերակ: Խնդրի ընդհանուր լուծումն արտահայտվում է Գաուսի հիպերերկրաչափական ֆունկցիաների երկու անկախ անկրճատելի գծային համակցություններով: Լուծման ասիմպտոտները վերլուծվել են քվադրատիկների միջոցով, հաշվվել է անցման վերջնական հավանականությունը (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Իշխանյան):

Օպտիկական հոլոգրաֆիայի ու չդիֆրակտվող բեսելյան փնջերի եղանակների հիման վրա մշակվել է միկրոմասնիկների գերման սարքերի (թվիզերների) նոր մեթոդ՝ ֆոտոռեֆրակտիվ բյուրեղի մակերևույթին լազերային փնջով մակածված, ամիսներ պահպանվող ֆոտովոլտային դաշտերի միջոցով միկրո- ու նանոմասնիկների ղեկավարվող տեղաշարժման ու գերման համար: Մշակված մեթոդով իրականացվել է կենսաբանական օբյեկտի՝ ԴՆԹ-ի մոլեկուլների միկրոտեղաշարժում ու գերում: Հայտնաբերվել է 4 մկմ չափերով ԴՆԹ մոլեկուլների կլաստերների ձևավորում NaCl լուծույթում: Բյուրեղի փոքր չափը ($10 \times 10 \times 2$ մմ) թույլ է տալիս ստեղծել ինքնավար գործող միկրո/նանոմասնիկների տեղաշարժման ու գերման «lab-on-a-chip» համակարգ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Դրամփյան):

Հետազոտվել են YAG-Er^{3+} բյուրեղների՝ օպտիկական հովացնող համակարգերում կիրառման ու 1.5 մկմ ալիքի երկարության տիրույթում ճառագայթաբալանսավորված գեներացման հնարավորությունները: Հաստատվել է, որ YAG-Er^{3+} -ը միանգամայն մրցունակ է ճառագայթաբալանսավորված գեներացում ստանալու տեսանկյունից: Գնահատվել է YAG բյուրեղում Er^{3+} իոնի անտիստոքսյան լյումինեսցենցով պայմանավորված հովացման արդյունավետությունը և ցույց է տրվել, որ այն մաքսիմալ է 1571 նմ ալիքի երկարությամբ գրգռման դեպքում (ղեկ.՝ ակ. Ռ.Կոստանյան):

YAG:Ho բյուրեղներում էՊՌ մեթոդով ուսումնասիրվել են էլեկտրոնների թակարդներ ստեղծող հակադիրքային (anti-sites) արատները: Նմուշի չափերի ու Ho^{3+} իոնների օպտիմալ կոնցենտրացիաների դեպքում արձանագրվել են սպեկտրներ ինչպես կանոնավոր Ho^{3+} կենտրոններից, այնպես էլ հակադիրքային արատներով շրջապատված Ho^{3+} կենտրոններից: Ուշագրավ է ութանիստ դիրքերում Ho^{3+} իոնների հայտնաբերումը Al^{3+} իոնների փոխարեն: Այս հանգույցը նույն հակադիրքային արատն է, բայց պարամագնի-

սական վիճակում, ունի երեք անգամ ավելի ճեղքում, քան սովորական տասներկուանիստ կենտրոնի դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Քլեռոնների (polaron) հիման վրա հիշողության տարրերի մշակման համար հետազոտվել է 0.27 ատ.% արծաթով լեգիրված ZnO թաղանթներում մագնիսական դաշտի ու ջերմաստիճանի ազդեցությունը լիցքակիրների տեղափոխման վրա: Գրանցվել է բարձր դրական մագնիսադիմադրություն $T < 120$ Կ ջերմաստիճաններում և բացասական՝ $T > 120$ Կ-ում: $T > 230$ Կ-ում մագնիսադիմադրությունը ենթարկվում է Արենիուսի օրենքին՝ դրսևորելով ակտիվացման էներգիայի աճ մինչև 0.25 ՏԷ մագնիսական դաշտում: Ցածր ջերմաստիճաններում գերակշռում է Մոտտի մեխանիզմը: Օպտիկական չափումներով ցույց է տրվել, որ քլեռոնի կայունությունը խախտվում է $T > 330$ Կ դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Կաֆադարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել են Rb գոլորշիների D_1 գծի ֆլուորեսցենցի սպեկտրների առանձնահատկությունները պոլիդիմեթիլսիլոքսանային (PDMS) հակառելաքսացիոն ծածկույթով օպտիկական բջջում: Դիոդային լազերի 200 մՎտ/սմ²-ից բարձր ինտենսիվության դեպքում օպտիկական մղման պատճառով բացթողման սպեկտրերում բացակայում են ատոմական ռեզոնանսային անցումների կլանման գծերը, մինչդեռ ֆլուորեսցենցի սպեկտրում բոլոր 8 ատոմային անցումները հստակ արտահայտված են: Ցույց է տրվել ֆլուորեսցենցի զգալի աճ ու անցումների վերաբաշխում PDMS բջջի ջերմաստիճանի բարձրացման հետևանքով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Ստեղծվել է օպտիկական պատկերագրման նոր փորձարարական սարք մինչև 22x22 սմ ծրվող 1 Վտ հզորությամբ 940 նմ LED ճառագայթիչով ու ընդունիչով: Նախանշված ուղեծրով ճառագայթման ծրումը, տվյալների գրանցումն ու մշակումն իրականացվել են միասալիկ համակարգչով: Կիրառվել է 50 կԶց հաճախությամբ լույսի մոդուլացման ու ընտրողական գրանցման սկզբունքը: Փորձանմուշով անցած լույսը ֆոտոընդունիչ հանգույցում վերածվել է «0»–«1» ազդանշանների հերթականության: Տարածական ծրման ամեն պիքսելում կատարվել է անցած իմպուլսների թվի հաշվում, որն էլ պատկերվում է որպես տվյալ պիքսելում գրանցված ինտենսիվություն: Ֆոտոընդունիչի վրա ընկնող լույսն անցնում է դիաֆրագմաներով, ինչի շնորհիվ զտվել են առավելապես ցրման չենթարկված «բալիստիկ» ֆոտոնները: Սարքը փորձարկվել է կենսաբանական օրգանների պատկերագրման համար (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Պապոյան):

Մշակվել է Հոնգ-Օու-Մանդելի (<OU) ինտերֆերենցի իրականացման նոր մեխանիզմ տարբեր ալիքի երկարության երկու անկախ ֆոտոնների համար՝ հիմնված պարամետրիկ փոխազդեցության վրա: Մեխանիզմը հնարավորություն է տալիս վերահսկելի կերպով տեղափոխել կողավորված քվանտային տեղեկույթը հիբրիդային ցանցով, ինչպիսին է քվանտային ինտերնետը, որտեղ տարբեր նյութական հանգույցները գործում են տարբեր ռեզոնանսային հաճախություններով՝ ապահովելով պաշտպանվածությունը դեկոհերենտությունից: <OU երևույթն անկախ է ֆոտոնների բևեռացումից, ինչի շնորհիվ առաջարկվող մոդելը ճկուն է հիբրիդային քվանտային ցանցերում օգտագործելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Յու.Մալաքյան):

Ներկայացվել է Դիրակի միաչափ ստացիոնար հավասարման ճշգրիտ լուծումը պսևդոսկալյար փոխազդեցության պոտենցիալի համար՝ բաղկացած հաստատունից ու հակադարձ-քառակուսի-արմատ օրենքով փոփոխվող անդամից: Խնդրի ընդհանուր լուծումը գրվում է Կոմերի երկու այլասերված հիպերերկրաչափական ֆունկցիաների ու ոչ

ամբողջ ինդեքսներով Հերմիտի երկու ֆունկցիաների գծային համակցություններով: Կախված հաստատունի արժեքից՝ արդյունարար պոտենցիալը պատնեշ է կամ հոր: Հորի դեպքում հնարավոր են անսահման թվով կապված վիճակներ: Դուրս է բերվել էներգիայի սպեկտրի ճշգրիտ հավասարումը, կառուցվել է կապված վիճակների էներգիաների ճշգրիտ մոտարկում: Պարզվել է, որ համապատասխան Մասլովի ինդեքսը կախված է պոտենցիալի պարամետրերից (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Իշխանյան):

Հետազոտվել է 10%Yb-YSAG լազերային կերամիկայի ցանցի հաստատունի կախվածությունը Sc^{3+} իոնի պարունակությունից, ինչպես նաև կերամիկայի ցանցի c (տասներկուանիստ) ու a (ութանիստ) հանգույցները տեղակալող Yb^{3+} իոնների քանակից: Որոշվել են Yb^{3+} ու Sc^{3+} պարունակությունները c ու a հանգույցներում և ցանցի հաստատունները Sc^{3+} -ի տարբեր քանակների դեպքում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Գ.Դեմիրխանյան):

Հետազոտվել է հայկական մոխրագույն կիսաթափանցիկ օքսիդիանի վրա ^{60}Co γ -ճառագայթման ազդեցությունը: Նմուշների վերլուծությունն իրականացվել է ԳՄ, տեսանելի ու ԵԿ տիրույթներում կլանման և անդրադարձման սպեկտրադիտման ու ԷՊՌ չափումներով: Տարբերակվել են երեք կլանման գոտիներ՝ 368, 386 ու 442 նմ՝ պայմանավորված տարբեր շրջապատով Fe^{3+} իոններով: ԷՊՌ չափումներով ստացվել են Fe^{3+} -ին բնորոշ՝ 6.0, 4.2 և 2.0 ց-գործոններով ազդանշաններ, որոնց ինտենսիվությունն աճել է ճառագայթման դոզային զուգահեռ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ն.Աղամալյան):

Բրիջմենի եղանակով աճեցվել են սկանդիում պարունակող (GSAG) նոնաքարի բյուրեղներ՝ Ce^{3+} ու լրացուցիչ (Li^+ , Ca^{2+} , Mg^{2+}) իոնների տարբեր կոնցենտրացիաներով: GSAG:Ce բյուրեղում առկա է գունավորման կենտրոն 620 նմ վրա, որը քայքայվում է օքսիդացնող թրծման ժամանակ և բացակայում է լրացուցիչ Li^+ , Ca^{2+} , Mg^{2+} պարունակող բյուրեղներում: Li^+ -ով բյուրեղներում ^{60}Co 10 կԳր ճառագայթամբ մակածված կլանման գործակիցը կազմել է 0.9 մ⁻¹, որը թույլ է տալիս դասակարգել GSAG:Ce, Li-ն որպես բարձր էներգիայի ֆիզիկայում կիրառվող նյութ: Բարձր կայունությունը վերագրվել է թթվածնի թափուրքների ցածր կոնցենտրացիային, որը կապված է Li^+ իոնների միջհանգույցներում տեղակայման մեխանիզմի հետ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Հետազոտվել է լիթիումի խառնուկի ազդեցությունն էլեկտրոնային ճառագայթանստեցման մեթոդով ստացված ցինկի օքսիդի բարակ թաղանթների դիէլեկտրական բնութագրերի ու հաղորդունակության մեխանիզմի վրա: Ցույց է տրվել, որ հաղորդականության կախվածությունը հաճախությունից նկարագրվում է Մոտտի տեսությամբ: Հաստատվել է, որ փոփոխական հոսանքի դեպքում հաղորդունակության մեխանիզմը լիթիումի կոնցենտրացիայի աճի հետ փոխվում է ցատկայինից դեպի փոքր շառավղով պոլարոնների թունելավորում: Ստացված թաղանթները կիրառելի են կոնդենսատորային հիշողության տարրերի ու դաշտային տրանզիստորի ալիքատարի ստեղծման համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ռ.Հովսեփյան):

Համակարգչային մոդելավորման եղանակով հետազոտվել են ջերմության տարածման պրոցեսները միաֆոտոն ջերմաէլեկտրական դետեկտորի եռաշերտ տարրում՝ բաղկացած կլանիչից (W), ջերմաէլեկտրական տվիչից ($La_{0.99}Ce_{0.01}B_6$) ու ջերմատարից (W): Սահմանափակ ծավալից ջերմության տարածման հավասարման հիման վրա մոդելավորվել է 7.1-124 ԷՎ էներգիայով ֆոտոնների կլանումը: Որոշվել է ազդանշանի ժամանակային կախվածությունը, հաշվարկվել է Ջոնսոնի ու ջերմային աղմուկի համարժեք հզորությունը: Ազդանշան-աղմուկ հարաբերությունը որոշվել է տվիչի նյութի ջերմունակության, ջերմահաղորդականության ու Ջեբեկի գործակցի տարբեր արժեքների համար: Ցույց է տրվել ջերմաէլեկտրական միաֆոտոն դետեկտորների՝ որպես ֆոտոնային ինտեգրալ շղթաների տարր օգտագործման հեռանկարը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Կուզանյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Khachunts A., Gevorgyan G., Tumanian A., Gevorgyan V., Kurghinyan B., Khachunts S., Tadevosyan N., Gevorgyan S., A single-layer flat-coil-oscillator-based technology as a highly sensitive promising detector for state-of-the-art “cognitive radio systems”, in: “New Insights on Oscillators and Their Applications to Engineering & Science”, Ed. Balthazar J.M., Tusset A., Intech Open, London, 2023, DOI:10.5772/intechopen.112305, 27p.
2. Mekhitarian V., Spinor fields, in: “Recent Topics and Innovations in Quantum Field Theory”, Ed. Szadkowski Z.P., Intech Open, London, 2023, DOI: 10.5772/intechopen.100713, 25p.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

3. Агамалян Н.Р., Айвазян О.Л., Вартанян Т.А., Кафадарян Е.А., Мнацаканян Г.Г., Овсепян Р.К., Погосян А.Р., Зависимость механизма проводимости и диэлектрических свойств пленок оксида цинка от степени легирования литием, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 3, 2023, с. 376-386.
Aghamalyan N., Ayvazyan H., Vartanyan T., Kafadaryan Y., Mnatsakanyan H., Hovsepyan R., Poghosyan A., Dependence of the conductivity mechanism and dielectric properties of zinc oxide films on the degree of lithium doping, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 3, 2023, pp. 274-281.
4. Агамалян Н.Р., Гамбарян И.А., Кафадарян Е.А., Нерсисян М.Н., Гюласарян А.Т., Чилингарян Г.Н., Влияние γ -облучения на полупрозрачный обсидиан серого цвета в области доз от 5 до 500 кГр, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 2, 2023, с. 235-243.
Aghamalyan N., Ghambaryan I., Kafadaryan E., Nersisyan M., Gyulasaryan H., Chilingaryan G., Effect of γ -irradiation on the semitransparent gray color obsidian in the 5 to 500 kGy range, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 2, 2023, pp. 172-178.
5. Аракелян В.С., Фотоиндуцированные локальные колебания решетки в рубине при оптической накачке состояния $2T_1$, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 4, 2023, с. 564-571.
6. Аракелян В.С., Баласанян Р.Н., Григорьян И.Г., Мужикян П.Г., Костанян Р.Б., Исследование электроиндуцированного тормозного излучения в воде, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 2, 2023, с. 180-185.
Arakelyan V., Balasanyan R., Grigoryan I., Muzhikyan P., Kostanyan R., Investigation of electroinduced bremsstrahlung in water, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 2, 2023, pp. 129-133.
7. Асатрян Г.Р., Шакуров Г.С., Ованесян К.Л., Петросян А.Г., Широкополосная ЭПР-спектроскопия кристалла $\text{Lu}_3\text{Al}_5\text{O}_{12}:\text{Tb}^{3+}$, “Физика твердого тела”, т. 65, N 3, 2023, с. 415-418.
Asatryan G.R., Shakuov G.S., Hovhannesian K.L., Petrosyan A.G., Wide-band EPR spectroscopy of a $\text{Lu}_3\text{Al}_5\text{O}_{12}:\text{Tb}^{3+}$ crystal, “Physics of the Solid State”, v.65, N 3, 2023, pp.406-409.
8. Асатрян Г., Шакуров Г., Петросян А., Крамущенко Д., Ованесян К., ЭПР ионов Ho^{3+} в кристаллах $\text{Y}_3\text{Al}_5\text{O}_{12}$, мат. XXIX межд. конф. “Оптика и спектроскопия конденсированных сред”, Краснодар, Россия, 2023, с. 3-7.
9. Асатрян Г., Шакуров Г., Ованесян К., Петросян А., ЭПР ионов Tb^{3+} в кристаллах $\text{Lu}_3\text{Al}_5\text{O}_{12}$, мат. XXIX межд. конф. “Оптика и спектроскопия конденсированных сред”, Краснодар, Россия, 8-14 октября 2023г., 2023, с. 67-71.
10. Бутаева Т.И., Ованесян К.Л., Еганян А.В., Формирование полос люминесценции ионов Ce^{3+} в кристаллах $\text{YAG}:\text{Ce}$, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 4, 2023, с. 576-584.
11. Геворгян С.Т., Геворгян М.С., Запутанные состояния поля в процессе невырожденного параметрического распада в оптическом резонаторе, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 1, 2023, с. 75-83.
Gevorgyan S., Gevorgyan M., Entangled field states in the process of nondegenerate parametric decay in an optical cavity, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 1, 2023, pp. 52-58.
12. Геворгян С.Т., Геворгян М.С., Запутанные состояния поля по квадратурным амплитудам в процессе

невыврожденного параметрического распада в оптическом резонаторе, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 2, 2023, с. 194-201.

Gevorgyan S., Gevorgyan M., Entangled field states in terms of quadrature amplitudes in the process of nondegenerate parametric decay in an optical cavity, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 2, 2023, pp. 140-146.

13. Гюласарян А.Т., Анализ магнитных характеристик однодоменных ферромагнитных и суперпарамагнитных наночастиц в нанокompозите Ni@C, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 3, 2023, с. 387-393.
14. Дерзян М.В., Ованесян К.Л., Еганян А.В., Гамбарян И.А., Бадалян Г.Р., Горбаченя К.Н., Кисель В.Э., Кулешов Н.В., Петросян А.Г., Монокристаллы $\text{YAlO}_3:\text{Er}$ для лазеров спектрального диапазона 1.6 мкм, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 3, 2023, с. 328-337.
15. Еганян А.В., Коканян Н.Э., Айллери М., Коканян Э.П., Поглощение гиперзвуковых волн в монокристаллах ниобата лития, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 1, 2023, с. 113-117.
Yeganyan A., Kokanyan N., Aillerie M., Kokanyan E., Absorption of hypersonic waves in single crystals of lithium niobate, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 1, 2023, pp. 81-84.
16. Еганян А.В., Коканян Н.Э., Коканян Э.П., Поглощение гиперзвуковых волн в легированных монокристаллах ниобата лития, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 4, 2023, с. 572-575.
17. Ишханян А.М., Крайнов В.П., Аналитическое описание циклотронных плазменных резонансов в многослойном графене, “Физика плазмы”, т. 49, N 4, 2023, с. 342-347.
Ishkhanyan A., Krainov V., Analytical description of cyclotron plasma resonances in monolayer graphene, “Plasma Physics Reports”, v. 49, N 4, 2023, pp. 437-442.
18. Казарян А.М., Ишханян А.М., Редьков В.М., Условно точно решаемый одномерный дираковский потенциал псевдоскалярного взаимодействия, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 3, 2023, с. 293-303.
Ghazaryan A., Ishkhanyan A., Red'kov V., A conditionally exactly solvable 1D Dirac pseudoscalar interaction potential, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 3, 2023, pp. 212-219.
19. Кузаян А.А., Кузаян А.С., Никогосян В.Р., Татоян В.Т., Кузаян В.С., Арутюнян А.С., Харатян Г.Ц., Бадалян Г.Р., Отношение сигнала к шуму термоэлектрического однофотонного детектора с CeB_6 сенсором и Bi-2223 поглотителем, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 2, 2023, с. 213-224.
Kuzanyan A.A., Kuzanyan A.S., Nikoghosyan V., Tatoyan V., Kuzanyan V.S., Harutyunyan A., Kharatyan G., Badalyan G., Signal-to-noise ratio of the thermoelectric single-photon detector with CeB_6 sensor and Bi-2223 absorber, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 2, 2023, pp. 155-163.
20. Кузаян А.А., Никогосян В.Р., Кузаян А.С., Арутюнян С.Р., Отношение сигнал/шум термоэлектрического однофотонного детектора с разными значениями физических параметров материала сенсора, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 3, 2023, с. 419-429.
Kuzanyan A.A., Nikoghosyan V., Kuzanyan A.S., Harutyunyan S., Signal-to-noise ratio of a thermoelectric single-photon detector with different values of the physical parameters of the sensor material, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 3, 2023, pp. 305-313.
21. Кузаян А.А., Никогосян В.Р., Кузаян А.С., Платиносодержащий детектирующий элемент термоэлектрического однофотонного детектора, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 4, 2023, с. 626-634.
22. Кузьмицкая А.С., Босак Н.А., Пашаян С.Т., Баран Л.В., Малютина-Бронская В.В., Дробуш В.С., Морфология поверхности, оптические и электрофизические свойства пленок оксида цинка, легированного кобальтом, полученных методом лазерного осаждения, мат. межд. симп. “Перспективные материалы и технологии”, Минск, 2023, с. 107-109.
23. Тарасенко Н.В., Тарасенко Н.Н., Пашаян С.Т., Анищик В.М., Буцень А.В., Корнев В., Формирование оксидных наноструктур меди методом лазерной абляции в жидких средах, мат. XV межд. конф. “Взаимодействие излучений с твердым телом”, Минск, 2023, с. 449-451.
24. Саргсян А.А., Мнацаканян Р.А., Григорян Т.В., Казарян А.А., Петросян А.А., Арутюнян В.В., Агамалян Н.Р., Баграмян В.В., Микроволновой синтез фотокатализатора SiO_2/ZnO со структурой ядро-

- оболочка, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 4, 2023, с. 601-611.
25. Саргсян А., Папоян А., Саркисян Д., Особенности флуоресценции паров атомов Rb, заключенных в ячейку с антирелаксационным покрытием, “Оптика и спектроскопия”, т.131, N 2, 2023, с. 254-259.
Sargsyan A., Papoyan A., Sarkisyan D., Peculiarities of fluorescence of Rb atomic vapors contained in a cell with an anti-relaxation coating, “Optics and Spectroscopy”, v. 131, N 2, 2023, pp. 236-241.
 26. Саргсян А., Исследование взаимодействия атомов рубидия с поверхностью сапфира с использованием спектроскопической наноячейки, “Журнал прикладной спектроскопии”, т. 90, N 4, 2023, с. 535-540.
Sargsyan A., Study of the interaction of rubidium atoms with sapphire surface using spectroscopic nanocells, “Journal of Applied Spectroscopy”, v. 90, N 4, 2023, pp. 731-735.
 27. Саргсян А.Д., Исследование атомных переходов D2 линии калия в сильных магнитных полях с помощью техники насыщенного поглощения в микро-ячейке, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т.58, N 1, 2023, с. 65-74.
Sargsyan A., Investigations of atomic transitions of the D2 line of potassium in strong magnetic fields using saturated absorption technique in a microcell, “Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, v. 58, N 1, 2023, pp. 45-51.
 28. Тарасенко Н.Н., Корнев В.Г., Урманов Б.Д., Пашаян С.Т., Луценко Е.В., Тарасенко Н.В., Лазерный синтез и оптические свойства гибридных кремниевых наноструктур для фототермической конверсии солнечного излучения, “Журнал прикладной спектроскопии”, т. 90, N 2, 2023, с. 253-265.
Tarasenko N.N., Kornev V., Urmanov B., Pashayan S., Lutsenko E., Tarasenko N., Laser synthesis and optical properties of hybrid silicon nanostructures for photothermal conversion of solar radiation, “Journal of Applied Spectroscopy”, v. 90, N 2, 2023, pp. 346-357.
 29. Шароян Э.Г., Гюласарян А.Т., Манукян А.С., Парамагнетизм поверхностных атомов Ni в нанокompозитах Ni@C. “Аномальные” магнитные размерные эффекты в ультрамалых частицах Ni. Поверхностная магнитная анизотропия в СКВИД магнитометрии и в спектрах ФМР, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 58, N 3, 2023, с. 394-410.
 30. Abramian P., Kuzanyan A., Nikoghosyan V., Teknowijoyo S., Gulian A., Some remarks on possible superconductivity of composition Pb9CuP6O25, “Optical Memory and Neural Networks”, v. 32, N S3, 2023, pp. S424-S427.
 31. Aharonyan K., Khachatryan A., Kokanyan E., Screened impurity scattering relaxation time with the quantum well/high - k dielectric heterojunction, “NPUA Bulletin, Collection of Scientific Papers”, v. 1, 2023, pp. 59-63.
 32. Aharonyan K., Kokanyan N., Kokanyan E., Impurity properties of inversion layers with electronic and substrate quantum screening, “Crystals”, v. 13, N 1, 2023, 83 (14p.).
 33. Alexanian M., Mkrtchian V., Angular distributions and polarization correlations of two-photon spherical states, “Optics and Spectroscopy”, v. 131, N 5, 2023, pp. 666-670.
 34. Asatryan H., Shakurov G., Lyadov N., Hovhannesian K., Petrosyan A., Anti-site defects and trigonal center of holmium in Y3Al5O12:Ho3+ crystal according to the results of wideband EPR spectroscopy, “Optical Memory and Neural Networks”, v. 32, N S3, 2023, pp. S356-S361.
 35. Crisanti F., Cesarano C., Ishkhanyan A., The Grad-Shafranov equation in cap-cyclide coordinates: The Heun function solution, “Mathematics”, v. 11, N 9, 2023, 2087 (12p.).
 36. Demirkhanyan G., Kostanyan R., LaF3-Er3+ crystal as materials for MIR-lasing operating, “Optical Memory and Neural Networks”, v. 32, N S3, 2023, pp. S362-S368.
 37. Derdzyan M., Hovhannesian K., Santos S.N.C., Dujardin C., Petrosyan A., Influence of air annealing on optical and scintillation properties of YAG:Pr,Ca, “Physica Status Solidi A”, v.220, N1, 2023, 2200571 (6p.).
 38. Gazazyan E., Grigoryan G., Adiabatic states and suppression of dissipative processes, “Optical Memory and Neural Networks”, v.32, No.S3, 2023, pp.S402-S408.
 39. Ghazaryan A., Ishkhanyan T.A., Ishkhanyan A.M., A new non-symmetric modification of the second Demkov-Kunike model, “Lobachevskii Journal of Mathematics”, v. 44, N 6, 2023, pp. 2299-2305.
 40. Grigoryan G., Kryzhanovsky B., Papoyan A., In memory of M.L. Ter-Mikaelyan, “Optical Memory and Neural Networks”, v. 32, N S3, 2023, pp. S293-S295.
 41. Gyulasaryan H., Kuzanyan A., Manukyan A., Mukasyan A.S., Combustion synthesis of magnetic

- nanomaterials for biomedical applications, "Nanomaterials", v. 13, N 13, 2023, 1902 (22p.).
42. Hovhannesian K., Derdzian M., Ghambaryan I., Butaeva T., Dujardin Ch., Petrosyan A., Radiation damage of GSAG:Ce crystals with codopants under gamma-ray irradiation, "Physica Status Solidi A", v. 220, N 21, 2023, 2300386 (6p.).
 43. Ishkhanyan A., Krainov V., Conditionally exactly solvable Dirac potential, including $\kappa/3$ pseudoscalar interaction, "Physica Scripta", v. 98, N 7, 2023, 75229 (9p.).
 44. Ishkhanyan A., Krainov V., Exact solution of the 1D Dirac equation for a pseudoscalar interaction potential with the inverse-square-root variation law, "Scientific Reports", v. 13, 2023, 13482 (9p.).
 45. Ishkhanyan A., Shahverdyan T., Ghazaryan A., An asymmetric version of the second Demkov-Kunike level-crossing model, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023, pp. S435-S442.
 46. Ivashkevich A., Kisel V., Red'kov V., Ishkhanyan A., Spin 3/2 particle in the presence of a magnetic field: Tetrad formalism and Fedorov-Groskiy method, "Nonlinear Phenomena in Complex Systems", v. 26, N 3, 2023, pp. 257-272.
 47. Khanbekyan M., Exceptional-point-enhanced coupled microcavities for ultrasensitive particle sensing, "Physical Review A", v. 108, N 2, 2023, 023710 (5p.).
 48. Kuzanyan A., Nikoghosyan V., Kuzanyan A., Harutyunyan S., Fast thermoelectric photodetector for UV radiation, "Proceedings of SPIE", v. 12570, 2023, 125700G (10p.).
 49. Pashayan S., Anishchik V., Zlotski S., Butsen A., Synthesis and comparative study of nanoscale thin-film structures by vacuum pused deposition and laser ablation in liquids, сб. научн. тр. "VII Конгресса физиков Беларуси", Минск, 2023, с. 113-114.
 50. Kuzanyan A.A., Kuzanyan A.S., Nikoghosyan V., Prospects for using thermoelectric single-photon detectors in quantum information systems and astrophysics, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023, pp. S334-S342.
 51. Malakyan Yu., Frequency-domain Hong-Ou-Mandel interference in cold atoms with induced atomic coherence, "Physical Review A", v. 107, N 5, 2023, 053715 (8p.).
 52. Martirosyan A., Kostanyan R., Martirosyan V., Muzhikyan P., Long range and wide field of view thermal detection miniature system with a conical horn, "Sensing and Imaging", v. 24, N 1, 2023, 41 (16p.).
 53. Mkhitarian N., Demirkhanyan G., Kokanyan N., Kokanyan E., LiNbO₃:Tm³⁺ crystal: material for radiation-balanced laser in the wavelength range of 1650 – 2000 nm, "Armenian Journal of Physics", v. 16, N 3, 2023, pp. 102-108.
 54. Momier R., Sargsyan A., Tonoyan A., Leroy C., Sarkisyan D., Micrometric-thin cell filled with Rb vapor for high-resolution atomic spectroscopy, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023, pp. S349-S355.
 55. Papadopoulou E., Tetos N., Gyulasaryan H., Chilingaryan G., Ginoyan A., Manukyan A., Angelakeris M., Farle M., Spasova M., Structural and magnetic properties of carbon-encapsulated Fe/Fe₃C nanoparticles, "Nano-Structures & Nano-Objects", v. 34, 2023, 100959 (6p.).
 56. Pogosyan E., Gazazyan E., Programmable quantum gate operations using qutrit quantum dots, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023, pp. S396-S401.
 57. Ramaswamy A., Chathanathil J., Kanta D., Klinger E., Papoyan A., Shmavonyan S., Khanbekyan A., Wickenbrock A., Budker D., Malinovskaya S.A., Mirrorless lasing: a theoretical perspective, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023, pp. S443-S466.
 58. Sargsyan A., Momier R., Leroy C., Sarkisyan D., Competing van der Waals and dipole-dipole interactions in optical nanocells at thicknesses below 100 nm, "Physics Letters A", v. 483, 2023, 129069 (5p.).
 59. Sargsyan A., Tonoyan A., Momier R., Leroy C., Sarkisyan D., Formation of strongly shifted EIT resonances using "forbidden" transitions of cesium, "Journal of Quantitative Spectroscopy and Radiative Transfer", v. 303, 2023, 108582 (7p.).
 60. Sargsyan A., Tonoyan A., Sarkisyan D., Application of magnetically induced $F_g=4 \rightarrow F_g=2$ atomic transitions of cesium atoms in strong magnetic fields, "Optics Communications", v. 537, N 4, 2023, 129464 (5p.).
 61. Sisakyan N., Chilingaryan G., Manukyan A., Mukasyan A.S., Combustion synthesis of materials for application in supercapacitors: a review, "Nanomaterials", v. 13, N 23, 2023, 3030 (29p.).
 62. Tonoyan A., Sargsyan A., Momier R., Leroy C., Sarkisyan D., Formation of narrow atomic lines of Rb in the UV region using a magnetic field, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023,

pp. S343-S348.

63. Tsarukyan L., Badalyan A., Aloyan L., Dalyan Y., Drampyan R., Photovoltaic tweezers based on optical holography: application to 2D trapping of DNA molecules on a lithium niobate crystal, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023, pp. S384-S395.
64. Tsarukyan L., Badalyan A., Drampyan R., Synergy of nanoparticles photovoltaic trapping and manipulation from suspension layer on ferroelectric crystal surface, "Optical Memory and Neural Networks", v. 32, N S3, 2023, pp. S369-S383.

Ա.Սարգսյանն արժանացել է «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի 1-ին մրցանակի:

ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈՔԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աթանեսյան
Գլխավոր տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Խաչատրյան
Էլեկտրոնային փոստ՝ info@iapp.am
Կայքէջ՝ www.iapp.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել են կալիումի բիֆտալատի ու ռուբիդիումի պիեզոբյուրեղներում, ակուստիկ տատանումների առկայության պայմաններում, ռենտգենյան ճառագայթի դիֆրակցիայի առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ այս բյուրեղներում ակուստիկ տատանումների գրգռման միջոցով հնարավոր է իրականացնել ռենտգենյան ճառագայթման ինտենսիվության մոդուլացիա (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Մկրտչյան):

Փորձականորեն հետազոտվել են ռենտգենյան ճառագայթման կլանման առանձնահատկությունները տարբեր հաստությամբ կվարցի միաբյուրեղում, ջերմային գրադիենտի առկայության պայմաններում: Դիֆրակցիայի Լաուե երկրաչափության պայմաններում գրանցվել են ինչպես անցնող ու անդրադարձող փնջերի ինտենսիվությունները, այնպես էլ նրանց միաժամանակյա գումարային ինտենսիվությունները: Ցույց է տրվել, որ դիֆրակցիայի ու ջերմային գրադիենտի վեկտորների հակազուգահեռ երկրաչափության դեպքում դիտվում է գումարային ինտենսիվության զգալի աճ, որը պայմանավորված է միաբյուրեղում ինտերֆերենցիոն կլանման գործակցի փոքրացմամբ, որի բացարձակ չափը կախված է ինչպես ջերմային գրադիենտի մեծությունից, այնպես էլ միաբյուրեղի հաստությունից, իսկ դիֆրակցիայի ու ջերմային գրադիենտի վեկտորների զուգահեռ երկրաչափության դեպքում դիտվում է գումարային ինտենսիվության փոքրացում, այսինքն՝ ինտերֆերենցիոն կլանման գործակիցը մեծանում է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Կվարցի միաբյուրեղի (10-11) հարթությունների ընտանիքից Լաուե երկրաչափությամբ անդրադարձած փնջի դիֆրակցիոն ֆոկուսացման առանձնահատկությունները, կախված ջերմային գրադիենտի մեծությունից, փորձականորեն ուսումնասիրելու նպատակով դիտարկվել է ռենտգենյան ճառագայթման անդրադարձում սեպաձև միաբյուրեղից, որի սեպի ուղղությունն ուղղահայաց է անդրադարձման հարթությանը: Միաբյուրեղից ֆիքսված Լ հեռավորության վրա անդրադարձած փնջի սեկցիոն տոպոգրամների վրա հստակ արտահայտվում է դիֆրակցված փնջի ֆոկուսացումը, ինչպես նաև ջերմային գրադիենտի մեծությունից կախված ֆոկուսային կետի տեղաշարժը սեպության ուղղությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Նորեյան):

Նախագծվել և պատրաստվել է ռենտգենյան եռաթիթեղ ինտերֆերոմետր, որը թույլ է տվել իրականացնել թիթեղների՝ միմյանց նկատմամբ պտույտ լծակների օգնությամբ: Յույց է տրվել, որ տոպոգրամներում դիտվող մուարի պատկերներում գերակշռում է պտտական մուարը, որի շերտերի պարբերությունն աճում է մեխանիկական մոմենտների մեծացմանը զուգընթաց, մոմենտի որոշակի արժեքի դեպքում մուարն անհետանում է, և ինտերֆերենցիոն դաշտը դառնում է համասեռ, ինչը նշանակում է, որ ինտերֆերոմետրը դառնում է «իդեալական»: Մոմենտի հետագա աճը հանգեցնում է պտտական մուարի շերտերի թեքության նշանի փոփոխության (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Դրմեյան):

Թույլ դեֆորմացված բյուրեղական ցանցում ռենտգենյան ճառագայթների դինամիկ դիֆրակցիայի պայմաններում, Տակագիի հավասարումների հիման վրա հետազոտվել է կետային աղբյուրից ցանցի դիֆրակցիոն դաշտի ձևավորման խնդիրը: Ստացվել են արտահայտություններ կիզակետման պայմանների ու բնութագրերի համար՝ կախված աղբյուր-բյուրեղ-դետեկտոր հեռավորություններից և դեֆորմացիայի դաշտի պարամետրերից: Իրականացվել են նաև համապատասխան փորձարարական հետազոտություններ կվարցի միաբյուրեղով, որում դեֆորմացիան ներմուծվել է արտաքին ջերմային գրադիենտի միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Կ.Թրունի):

Դիտարկվել է էլեկտրամագնիսական ալիքի Ֆրաունհոֆերյան դիֆրակցիան անթափանց էկրանի ճեղքի վրա, որը գտնվել է վակումի ու բաց ալիքային վեկտորի մակերևույթով անիզոտրոպ միջավայրի միջև: Ստացվել է դիֆրակցիայի բանաձևն այդպիսի նյութական միջավայրում: Ուսումնասիրվել են նաև դիֆրակցիոն մինիմումների ու մաքսիմումների ձևավորման առանձնահատկությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Երիցյան):

Առաջարկվել է լույսի մոդուլյատոր-դեմոդուլյատորների էմպիրիկ հաշվարկային բանաձև, որը թույլ է տվել բավական ճշգրիտ որոշել ռեզոնատորի պարամետրերը: Ուսումնասիրվել է նաև ԳԲՀ լույսի մոդեմի բարորակության գնահատման խնդիրը: Բարորակությունն առավել ճշգրիտ որոշելու համար նրա հաշվարկման բանաձևում ներմուծվել է գործակից՝ հաշվի առնելով ռեզոնատորի մշակման որակը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Հունանյան):

Ուսումնասիրվել են բազմաբաղադրիչ հեղուկ բյուրեղային համակարգի նատրիումի աղ սուլֆոսուլցինաթթվի (AOT) -n-հեպտան-ջրի դի-(2-էթիլհեքսիլ) էսթերի կառուցվածքային փոփոխությունները AOT-ի 27-ից 92% կոնցենտրացիաների դեպքում, որտեղ n-հեպտան/ջուր հարաբերակցությունը հավասար է 6/1: Յույց է տրվել, որ նման համակարգը կարող է ծառայել որպես կենսաբանական թաղանթի մոդել (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սարգսյան):

Մշակվել և պատրաստվել է լավարկված պարամետրերով կարգավորվող չափսերով մոնոդիսպերս միկրոկաթիլների գեներատոր, որի միջոցով տարբեր աղերի ջրային լուծույթներից (NaCl , LiIO_3 , Na_2SiO_3) ստացվել են կարգավորված և ոչ կարգավորված երկչափ միկրոմասշտաբային կառուցվածքներ: Այդ միջավայրերում լույսի ցրման արդյունքում ստացված դիֆրակցիոն պատկերների միջոցով գնահատվել են մասնիկների երկրաչափական ձևերը և որոշվել են չափերը: Յույց է տրվել, որ գեներատորի լավարկման արդյունքում հնարավոր է ստանալ սուբմիկրոնային մասնիկներ (ղեկ.՝ Ս.Հարությունյան):

Չափվել են պրոտոն-միջուկային ռեակցիաների կտրվածքներն անագի թիրախի վրա մինչև 18 ՄԷՎ էներգիաների դեպքում՝ օգտագործելով թիթեղների հավաքածու ակտիվացիոն տեխնիկան (stacked-foil activation technique), ներկայացվել են առաջին փորձնական արժեքները $^{114}\text{Sn}(p,\alpha)^{111}\text{In}$, $^{120}\text{Sn}(p,\alpha)^{117}\text{gIn}$ և $^{114}\text{Sn}(p,x)^{113}(\text{g}+0,911\text{m})\text{Sn}+^{113}\text{Sb}$ ռեակցիաների համար: Չափված կտրվածքները համեմատվել են գրականության մեջ առկա փորձարարական արժեքների և Talys1.95 -ի թվային հաշվարկների հետ: Հաշվարկվել են նաև $^{117}\text{m,gIn}$ և $^{120}\text{m,gSb}$ -ի իզոմեր հարաբերությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Բախշյան):

Տեսականորեն ուսումնասիրվել է դիէլեկտրիկ գնդի շուրջը՝ նրա հասարակածային հարթության մեջ հավասարաչափ պտտվող ռեյատիվիստիկ էլեկտրոնների շղթայի ճառագայթումը: Հաշվարկվել է ճառագայթման սպեկտրալ-անկյունային բաշխումը: Ցույց է տրվել, որ խնդրի պարամետրերի որոշակի ընտրության դեպքում կարող է մակածվել հզոր «ռեզոնանսային» ճառագայթում, որի ինտենսիվությունը համեմատական է շղթայում մասնիկների թվի քառակուսուն (քվադրիկոհերենտ ճառագայթում): Ճառագայթման քվադրիկոհերենտությունը պահպանվում է հավասարաչափ բաշխմանը համապատասխանող դիրքերից մասնիկների մինչև 10% պատահական հարաբերական շեղումների դեպքում: Հետազոտվել է դիէլեկտրական/հաղորդիչ գնդի առանցքով շարժվող լիցքավորված մասնիկների միաչափ թանձրուկների շղթայի ճառագայթման սպեկտրալ-անկյունային բաշխումը: Ցույց է տրվել, որ գնդի սահմանների ազդեցությունը մասնիկների ճառագայթման վրա կարող է լինել ռեզոնանսային, ինչը դրսևորվել է սպեկտրալ բաշխման մեջ նեղ պիկերի առկայությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Գրիգորյան):

Հետազոտվել է կոսմիկական լարի ազդեցությունն էլեկտրամագնիսական վակուումի բնութագրերի վրա (D+1)-չափանի լոկալ դե Սիտտերի տարածաժամանակում: Բանչ-Դևիսի վակուումային վիճակի համար բացահայտորեն առանձնացվել են տոպոլոգիական ներդրումները վակուումային էներգիա-իմպուլսի թենզորում: Ցույց է տրվել, որ տարածաժամանակի կորությունն էապես փոխում է տոպոլոգիական ներդրումների վարքը կոսմիկական լարից մեծ հեռավորությունների վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սահարյան):

Հետազոտվել են դիէլեկտիկական սնամեջ ալիքատարի առանցքով շարժվող էլեկտրոնային թանձրուկների շղթայի էլեկտրամագնիսական ճառագայթման առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ ալիքատարի մի շարք հարևան մոդաների վրա միաժամանակ կարող է մակածվել հզոր քվադրիկոհերենտ ճառագայթում: Բացահայտվել է տարբեր մոդաների վրա ճառագայթման ինտենսիվության կախումը խնդրի պարամետրերի արժեքներից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Խաչատրյան):

Իրականացվել են մի շարք գալիլեոտիկաների ու քվադարների շուրջ արտագալիլեոտիկ տարբեր աղբյուրների բաշխվածության համասեռության ուսումնասիրություններ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Հովհաննիսյան):

Իրականացվել են Սև լճի ավազանի երկրաբանական ու երկրաֆիզիկական հետազոտություններ, կատարվել են գեոդեզիական չափագրումներ: Իրականացված հետազոտությունների հիման վրա կառուցվել է Սև լճի եռաչափ մոդել, ըստ որի հաշվարկվել է նրա սեփական հաճախականությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Խ.Քոթանջյան):

Ազոտ պարունակող ու CO_2 լազերի 1:1:8 հարաբերակցությամբ $\text{CO}_2:\text{N}_2:\text{He}$ գազերի խառնուրդներով, ինչպես նաև մաքուր ազոտային ակուստոպլազմայի միջավայրում դիտվել են բարձր ինտենսիվությամբ 654.81նմ և 658.36նմ էմիսիոն գծեր ազոտի արգելված անցումների տիրույթում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Զիլինգարյան):

Հետազոտվել են մթնոլորտային ճնշման պայմաններում պլազմոդի ծնման, դրեյֆի ու արագացման երևույթները: Արդյունքում ձևավորվել է 1 վրկ տևողությամբ պլազմային գունդ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աբրահամյան):

Ուլտրամանուշակագույն ճառագայթների զգայուն փոխարկիչների պատրաստման նպատակով հետազոտվել են որոշակի խառնուրդներով կորունդի միաբյուրեղների կլանման ու լումինեսցենցիայի առանձնահատկությունները (ղեկ.՝ Զ. Վարդանյան):

Տարբեր սեյսմիկ կայանների, հետազոտական կենտրոնների ու հեղինակների հրապարակումների հիման վրա ուսումնասիրվել են տարաբնույթ սեյսմիկ պրոցեսներից առաջացած տատանումների ամպլիտուդահաճախականային բնութագրերը: Դասակարգվել են սեյսմիկ տատանումների գրանցման սարքերին ներկայացվող ամպլիտուդա-

հաճախականային, չափաբանական ու շահագործման պահանջներն ըստ ուսումնասիրվող կոնկրետ սեյսմիկ պրոցեսների, լուծվող խնդիրների ու գրանցման նպատակների (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Մխիթարյան):

Իրականացվել է պինդֆազային սինթեզ $\text{CaCu}_3\text{Ti}_4\text{O}_{12}$ (CCTO) ընտանիքի ու հարակից մեծ դիէլեկտրիկ թափանցելիություն ունեցող նյութերի $\text{Ca} \rightarrow (\text{Ba}, \text{Sr})$, ինչպես նաև նմուշների պատրաստում ու թրծում էլեկտրաֆիզիկական չափումների համար: Precision LCR Meter 6630 սարքի միջոցով չափվել են ստացված նմուշների ε , tg δ , Z և Rp պարամետրերը: Ցույց է տրվել, որ սինթեզված նյութերն ունեն բավականին մեծ ($10^3 \div 10^5$) դիէլեկտրիկ թափանցելիության գործակից հաճախականությունների 1կՀց -ից 1ՄՀց տիրույթում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Հարությունյան):

Կատարվել են հարվածային ալիքների կողմից առաջացված ձայնային ալիքների ժամանակային զարգացման ուսումնասիրություններ: Ցույց է տրվել, որ հարվածային ալիքը տարածվելով՝ առաջացնում է ակուստիկ ալիք, որի հաճախականությունը փոխվում է ժամանակի հետ, և այս փոփոխությունը կապված է հարվածային ալիքի տարածման արագության փոփոխության հետ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Արամյան):

Փուլային սինխրոնիզմի ուղղությամբ, շերտավոր ու ամինոթթթությունների խառնուկների առկայությամբ աճեցվել են լիթիումի յոդատի միաբյուրեղներ, ուսումնասիրվել են նրանց ֆիզիկաքիմիական հատկությունները: Վալինի խառնուկով աճեցրած $\alpha\text{-LiIO}_3$ -ի միաբյուրեղների ռենտգենկառուցվածքային հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է, որ ստացվել է մինչ այժմ անհայտ նոր նյութ՝ $\text{Li}_23\text{IO}_3\text{H}_3\text{O}$ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աթանեսյան):

Ստացվել են արգինինի ու նիտրոարգինինի նոր աղեր, հայտնաբերվել է, որ նրանք ունեն ոչ գծային պիրոէլեկտրական հատկություններ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Սուքիասյան):

Ստացվել են *l*-ցիստեին ամինոթթթվի յոդիդներն ու նիտրատները: Ուսումնասիրվել են դրանց բյուրեղական կառուցվածքներն ու ոչ գծային օպտիկական հատկությունները: Ցույց է տրվել, որ յոդիդներից մեկի մոտ երկրորդ հարմոնիկի վերափոխման էֆեկտիվությունը 5.2 անգամ գերազանցում է KDP-ին (ղեկ.՝ ք.գ.թ. Վ.Ղազարյան):

Զանազան ամինոթթթությունների օգտագործմամբ ստացվել են տարբեր ամինոթթթություն պարունակող աղեր՝ հեքսաֆտորսիլիկատ, սուլֆատ, հալոգենիդ անիոններով և մի շարք աղեր $[\text{A}(1) + \dots + \text{A}(2)]$ դիմերային կատիոններով, որոնք ունեն բևեռային սիմետրիա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Իրականացվել են գլխուղեղի 21ա դաշտի նեյրոնների տեսողական ինֆորմացիայի մշակման ու ծածկագրման մեխանիզմների բացահայտման հետազոտություններ: Արդյունքում պարզվել է, որ միմյանց հետ սինապտիկորեն կապված նեյրոնների ընկալման դաշտերի միջև փոխազդեցությունը տեսողական պատկերների ձևի ու չափի մասին տեղեկատվության կենտրոնական վերլուծության մեխանիզմների կարևոր բաղադրիչ է (ղեկ.՝ կ.գ.թ. Դ.Խաչվանքյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հետազոտվել է դիէլեկտրական գլանի ներսում, նրա առանցքին զուգահեռ շարժվող լիցքի կողմից մակերևութային պոլարիտոնների ճառագայթումը: Թվային տվյալները ներկայացվել են մասշտաբային ինվարիանտ տեսքով, ինչը թույլ է տվել հետազոտել մակերևութային պոլարիտոնների ճառագայթման առանձնահատկությունները գլանի շառավղի տարբեր արժեքների դեպքում:

«Քենդել» կենտրոնի AREAL լաբորատորիայի արագացուցիչի վրա փորձնականորեն հետազոտվել է 3.7ՄէՎ էներգիայով էլեկտրոնների թանձրուկի կոհերենտ ճառագայթման անկյունային բաշխումը՝ հալված քվարցից պատրաստված, սնամեջ գլանաձև ալիքատարի առանցքով շարժվելիս, հաճախությունների 10-100ԳՀց տիրույթում: Կատարված հետազոտությունները վկայում են, որ ճառագայթումը քվազիկոհերենտ է և ունի հիմնականում Չերենկովյան բնույթ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Լ.Գրիգորյան):

Հետազոտվել են L-արգինին, L-նիտրոարգինին, վալին ու գլիցին ամինոթթվածների աղերի խառնուկային քանակությունների առկայությամբ աճեցրած $\alpha - LiIO_3$ -ի միաբյուրեղները: Ֆիզիկաքիմիական հետազոտությունները ցույց են տվել, որ գլիցինից բացի միաբյուրեղի մեջ մտել են L-արգինինի, L-նիտրոարգինինի ու վալինի խառնուկաները (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Աթանեսյան):

Ինստիտուտում ստեղծված նոր բյուրեղարարներում աճեցվել են կիրառության համար հեռանկարային օպտիկական որակի ու մեծ չափերի մի շարք ամինոթթվածների միաբյուրեղային աղեր: Ֆիզիկաքիմիական մեթոդներով հետազոտվել են աճեցված բյուրեղների օպտիկական հատկությունները, մոլեկուլային ու բյուրեղային կառուցվածքները (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ռ.Սուքիասյան):

Սինթեզվել են ամինոթթվածների հալոգենաբիսմութատներ: Որոշվել է դրանց բյուրեղային կառուցվածքը, գրանցվել են դիֆուզ անդրադարձման սպեկտրները, գնահատվել և հաշվարկվել են դրանց արգելված գոտու արժեքները (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Իրականացվել են ուսումնասիրություններ 3D տպագրության կիրառմամբ ռենտգենյան ճառագայթների կլանման իմաստով կենսաբանական հյուսվածքներին համարժեք նմուշներ ստեղծելու համար՝ օգտագործելով PLA պլաստիկ: Ռենտգենյան միկրոտոմոգրաֆիկ հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ 80%-ից ավել լցոնման գործակից ունեցող նմուշներ տալիս նմուշի պատի դեֆորմացիան տեղի է ունենում մատակարարված պլաստիկի ավելցուկի նստվածքի պատճառով (ղեկ.՝ տեխ.գ.թ. Յու.Չերեպեննիկով):

Մշակվել և պատրաստվել են 10-100ԳՀց տիրույթի ճառագայթման համար քնեռատորներ, ոսպնյակներ, հավաքվել է Մարտին-Պապլետտի ինտերֆերոմետր, որը հնարավորություն է տվել մեծ ճշտությամբ ուսումնասիրել այդ տիրույթի ճառագայթման սպեկտրը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Մարգարյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Галечян Г.А., Управление атмосферными процессами, Ер., изд. “ИППФ НАН РА”, 2023, 84 стр.
2. Karataev P., Kocharyan V., Mkrtchyan A., Journal of Physics: Conference Series (JPCS), Volume 2657, International Scientific School-Conference on Acoustophysics named after Academician A.R. Mkrtchyan, IOP Publishing Ltd.
3. Mkrtchyan A., Atanesyan A., Vasilyan M., II International Scientific School-Conference on Acoustophysics named after Academician A.R. Mkrtchyan, 2023 Yerevan-Sevan, Armenia, Book of Abstracts, Y., Publisher “IAPP NAS RA”, 138p.
4. Potylitsyn A.P., Mkrtchyan A.H., Kocharyan V.R., Atanesyan A.K., “XIV International Symposium, Radiation from Relativistic Electrons in Periodic Structures” & “VIII International Conference Electron, Positron, Neutron and X-ray Scattering under the External Influences”, Book of Abstracts, 2023, Tsaghkadzor, Armenia, Y., Publisher “IAPP NAS RA”, 2023, 138p.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

5. Արամյան Կ., Սողոմոնյան Ա., Գասպարյան Ա., Դիալեկտիկական միկրոաշխարհում, Ե., «ԱՊՀ գիտական տեղեկագիր», պրակ 1, 2023, էջ 204-214:

6. Սողոմոնյան Ա., Արամյան Վ., Սողոմոնյան Ռ., Բյուրեղների համաչափության հիմնարար տեսությունը և նրա մաթեմատիկական ձևակերպումը, Ե., «ԱՊՀ գիտական տեղեկագիր», պրակ 1, 2023, էջ 185-193:
7. Дрмеян Г.Р., Василян М.С., Новый способ юстировки неодинарного рентгеновского интерферометра и устройства для генерации дислокаций в его блоке, Ер., "Proceedings metallurgy, material science, mining engineering", т. 1, 2023, с. 59-70.
8. Нореян С.Н., Месропян М.А., Труни К.Г., Агабекян В.Н., Маргарян В.В., Мирзоян Р.К., Кочарян В.Р., Поглощение дифрагированного рентгеновского излучения в монокристалле кварца при внешнем температурном градиенте, сб. мат., II объед. конф. "Электронно-лучевые технологии и рентгеновская оптика в микроэлектронике", 2023, Черноголовка, КЭЛТ-23, с. 209-210.
9. Хачванкян Д.К., Меликсетян А.А., Налбандян В.В., Влияние окружающего рецептивное поле пространства на паттерны ответов зрительно-чувствительных нейронов экстрастриарной области 21а., "Мед. наука Армении", т. LXIII, N 3, 2023, с. 44-54.
10. Саградян А.И., Мартиросян А.М., Ордян Н.А., Агбалян А.С., Изучение технологических возможностей метода свободного спекания для изготовления композитов металлизированный алмаз – связка, Ер., "Вестник НПУА. Металлургия, материаловедение, недропользование", т.56 (2), 2023, с. 29-40.
11. Abrahamyan A., Mkrtchyan A., Chilingaryan R., Generation of radiation on forbidden transitions in the laboratory acoustic plasma, "Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)", 2023, v. 58(3), pp. 220-223.
12. Abrahamyan A., Chilingaryan R., Melikyan A., Mkrtchyan A., Harutyunyan V., Generation of radiation on forbidden transitions in the region of 654-658 nm in an acoustoplasma medium, "JPCS", v. 2657, 2023, 012019.
13. Abrahamyan A., Sahakyan K., Chilingaryan R., Application of the catastrophe theory to acoustoplasma research, "JPCS", v. 2657, 2023, 012020.
14. Aloyan L., Avetisyan A., Arakelyan V., Margaryan H., Influence of cation porphyrins on DNA damage during irradiation by X-rays, "JPCS", v. 2657, 2023, 012009.
15. Bezhanova L., Vasilyan M., Atanesyan A., Dynamical behavior of phase transitions in liquid crystals under ultrasound field, "JPCS", v. 2657, 2023, 012011.
16. Bellucci S., Kotanjyan V., Saharian A., Fermionic condensate and the mean energy-momentum tensor in the Fulling-Rindler vacuum, "Phys. Rev. D", v. 108(8), 2023, 085014.
17. Drmeyer H., Mkhitarian S., Mnatsakanyan R., Desktop devices for application of X-ray double interferometer and generation of dislocations in its crystalline blocks, "Nucl. Instr. and Meth. Res. A", v. 1056, 2023, 168681.
18. Drmeyer H., Trouni K., Muradyan T., Shahverdyan A., X-ray three-crystal interferometer with manual control, "Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)", 2023, v.58(2), pp.193-197.
19. Drmeyer H., Vasilyan M., Use of special devices for the X-ray interferometric investigation of structural imperfections in single crystals, "Journal of Surface Investigation: X-ray, Synchrotron and Neutron Techniques", 2023, v. 17(5), pp. 1028-1033.
20. Eliovich Ya.A., Kocharyan V.R., Blagov A.E., Targonsky A.V., Korzhov V.A., Movsisyan A.E., Shahverdyan A.V., Noreyan S.N., Mkrtchyan A.H., Kovalchuk M.V., Possibilities of creating x-ray acoustic elements from biphthalate family crystals with thickness vibrations, "Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)", 2023, v. 58(4), pp. 405-409.
21. Eritsyan H., Araqelyan O., Lalayan A., Margaryan A., Fraunhofer diffraction by a slit in the medium has the magneto-optical faraday effect, "JPCS", v. 2657, 2023, 012013.
22. Ghazaryan V., Giester G., Minkov V., Apreyan R., Boldyreva E., Petrosyan A., New members of the family of L-cysteine-based nonlinear optical crystals-(L-CysH)I, (L-CysH)I·H₂O and (L-CysH...L-Cys)I·0.5H₂O, "J. Mol. Struct.", v. 1276, 2023, 134758, <https://doi.org/10.1016/j.molstruc.2022.134758>.
23. Giester G., Ghazaryan V., Minkov V., Boldyreva E., Petrosyan A., L-cysteine nitrates, "J. Struct. Chem.", v. 64 (5), 2003, pp. 917-931, <https://doi.org/10.1134/S0022476623050104>
24. Grigoryan L., Mkrtchyan A., Dabagov S., Saharian A., Kocharyan V., Kotanjyan V., Harutyunyan H., Khachatryan H., Coherent radiation from a chain of charged particles on a circular orbit around a

- dielectric ball, "Radiation Physics and Chemistry", v. 206, 2023, 110791, <https://doi.org/10.1016/j.radphyschem.2023.110791>
25. Grigoryan L., Saharian A., Grigoryan M., Kotanjyan V., Khachatryan H., On investigations of radiation processes in media under external influences conducted at the IAPP, "JPCS", v. 2657, 2023, 012012.
 26. Harutyunyan S., Khachikyan L., Harutyunyan G., Margaryan A., Baghdasaryan D., Muradyan T., Generator of monodisperse droplets and some applications, "JPCS", v. 2657, 2023, 012015.
 27. Harutyunyan V., Aramyan A., Aramyan G., Alexanyan H., Sargsyan N., Khachikyan L., Harutyunyan G., Study of the development of sound waves generated by shock waves, "JPCS", v. 2657, 2023, 012008.
 28. Hayrapetyan Y., Hunanyan H., Features of operation and calculation of the light modulator-demodulator (modem) on electro-optical crystals, "JPCS", v. 2657, 2023, 012018.
 29. Hovhannisyan M., Vardanyan J., Mnatsakanyan A., Mahtesyan K., Mkhitarian S., Summary of the results of research and selection of corundum crystals for development and creation of UV and VUV detectors, "Armenian Journal of Physics", v. 16(1), 2023, pp. 29-34.
 30. Hovhannisyan G., Bakhshian T., Martirosyan G., Dallakyan R., Balabekyan A., Proton induced reactions on ^{114}Sn and ^{120}Sn targets at energies up to 18 MeV, "European Physical Journal A", v.59(7), 2023, p. 161.
 31. Khachatryan A., Aghabekyan V., Soghomonyan L., Parsamyan A., Diffraction of a scalar plane wave oblique incidence on a flat screen with a one thin slit, "JPCS", v. 2657, 2023, 012014.
 32. Kocharyan V., Trouni K., Mesropyan M., Shahverdyan A., Baghdasaryan D., Noreyan S., Dynamic diffraction of planar X-rays in a crystal lattice with a weak deformation field, "JPCS", v. 2657, 2023, 012016.
 33. Lalayan A., Eritsyan O., Fraunhofer diffraction by slit into a homogeneous anisotropic medium with an open surface of wave vectors, "Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)", v. 58(1), 2023, pp. 77-80.
 34. Mahtessian A., Karapetian G., Hovhannisyan M., The evolving absolute magnitude of type 1a supernovae and its critical impact on the cosmological parameters, "International Journal of Astronomy and Astrophysics", v. 13(2), 2023, pp. 39-60.
 35. Mahtessian A., Karapetian G., Hovhannisyan M., Mahtessian L., Dependence of standardization parameters of type Ia supernova light curves on redshift, "Comm. BAO", v. 70, 2023, p. 114.
 36. Mahtessian L., Mkhitarian S., Amiragyan L., Karapetyan R., Mahtessian A., Hovhannisyan M., Studies of the 1101+38 galaxy and the distribution of extragalactic objects around it, "JPCS", v. 2657, 2023, 012004.
 37. Mkhitarian S., Drmeyer H., On an interferometric method for determining the X-ray coherence length of radiation "Journal of Optics", v. 52(3), 2023, pp. 1405–1414.
 38. Nalbandyan V., Meliksetian A., Khachvankian D., Receptive field surround influences on the neuron's activity in extrastriate area 21a, "JPCS", v. 2657, 2023, 012003.
 39. Petrosyan A., Srinivasan B., What is alanine hippurate, in fact?, "J. of Cluster Sci.", v. 34(2), 2023, pp. 907-909, <https://doi.org/10.1007/s10876-022-02268-9>.
 40. Petrosyan A., Giester G., Tonoyan G., Salts containing different amino acids. Four types of salts with the hexafluorosilicate anion, "Struct. Chem.", v. 34, 2023, pp. 491-504, <https://doi.org/10.1007/s11224-022-01980-6>.
 41. Petrosyan A., Kundaikar S., Srinivasan B., Comments on recently published papers reporting on "new" amino acid-based crystals in the Journal of Materials Science: Materials in Electronics, "J. Mater. Sci: Mater. Electron", v. 34, 2023, 2052, <https://doi.org/10.1007/s10854-023-11514-3>.
 42. Petrosyan A., Giester G., Tonoyan G., Salts containing different amino acids: four types of salts with the sulfate anion, "Struct. Chem", v. 34, 2023, pp. 2185–2200, <https://doi.org/10.1007/s11224-023-02154-8>.
 43. Saharian A., Grigoryan L., Kotanjyan A., Khachatryan H., Surface-polariton excitation and energy losses by a charged particle in cylindrical waveguides, "Phys. Rev. A", v. 107(6), 2023, 063513, <https://doi.org/10.1103/PhysRevA.107.063513>
 44. Saharian A., Manukyan V., Kotanjyan V., Grigoryan A., Electromagnetic vacuum stresses and energy fluxes induced by a cosmic string in de Sitter spacetime, "International Journal of Modern Physics D", v. 32(07), 2023, 23, <https://doi.org/10.1142/S0218271823500426>
 45. Saharian A., Grigoryan L., Khachatryan H., Parazian V., Radiation processes on acoustic superlattices, "JPCS", v. 2657, 2023, 012017.

46. Sargsyan A., Grigoryan S., X-ray study of structural changes in “di-(2-ethylhexyl) sulfosuccinic acid (AOT) n-heptane-water” liquid crystalline system depending on the concentration of components, “JPCS”, v. 2657, 2023, 012010.
47. Sukiasyan R., Danghyan A., Apreyan R., Atanesyan A., Study and characterization of L-arginine halides (HCl/HBr), “JPCS”, v. 2657, 2023, 012007.
48. Tonoyan G., Giester G., Petrosyan A., Salts containing different amino acids: L-argininium (+) sarcosine halogenides, “Struct. Chem.”, 2023, <https://doi.org/10.1007/s11224-023-02246-5>

ՈԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան
 Փոխտնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան
 Գիտքարտուղար՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան
 Էլեկտրոնային փոստ՝ office@irphe.am
 Կայքէջ՝ www.irphe.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Առաջարկվել է կոմպլեքս դիէլեկտրական թափանցելիությամբ ջրային խառնուրդի միկրոալիքային տաքացման մեթոդ՝ էլեկտրամագնիսական դաշտի էլեկտրական բաղադրիչի հետ փոխազդեցության շնորհիվ՝ օգտագործելով օղակային ճեղքով ռեզոնատորներ: Ճեղքի չափի սահմանափակման խնդիրը լուծելու համար առաջարկվել է օգտագործել կոպլանար ունակությամբ օղակային ռեզոնատոր՝ ուժեղ ու տեղայնացված էլեկտրական դաշտի ընդլայնված շրջանով: Առաջարկվող կառուցվածքն արդյունավետ է խառնուրդից աերոզոլ ստանալու համար (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Հախումյան):

Օգտագործելով իմպուլսային լազերային փոշեցրման մեթոդը՝ պոլիմերային (պոլիամիդային) ճկուն տակդիրների վրա նստեցվել են 2D-MoS₂ բյուրեղների մեկ կամ մի քանի ատոմական շերտեր պարունակող գերբարակ կիսահաղորդչային թաղանթներ ու տրանզիստորային կառուցվածքներ: Ուսումնասիրվել են ստացված թաղանթների ռենտգենադիֆրակցիոն, ռամանյան ցրման, ֆոտոլումինեսցենցիայի ու օպտիկական կլանման սպեկտրները, կառուցվածքների էլեկտրական ու ֆոտոէլեկտրական հատկությունները, ցույց է տրվել նման նյութերի օգնությամբ մեծ զգայնության ու միլիվայրկյանների հասնող արագագործությամբ օժտված ճկուն ֆոտոզգայուն սարքերի ստեղծման հեռանկարայնությունը: Միասնական n-CdTe տակդիրի վրա ստեղծվել են p-InSb-n-CdTe տիպի քառաբաղադրիչ ինֆրակարմիր ֆոտոընդունիչներ, որոնց առանձին տարրերի վոլտ-Ֆարադային ու վոլտ-ամպերային բնութագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տարրերի միջև բացակայել է փոխադարձ կապը, իսկ առանձին տարրերի պարամետրերն իրարից քիչ են տարբերվել: Օգտագործելով ինչպես լայնական, այնպես էլ երկայնական ֆոտոներկայությունը՝ այսպիսի կառուցվածքով ֆոտոընդունիչի հիման վրա ստեղծվել են մեկ կամ երկկողորդինատային զգայուն սարքեր, որոնց կողորդինատային բնութագրերն օժտված են մեծ զճայնությամբ, երբ ֆոկուսացված լուսային փունջը տեղաշարժվում է կառուցվածքի համաչափության կենտրոնի շրջակայքում: p-InSb-n-CdTe հետերոանցումային ֆոտոընդունիչի վրա ստեղծվել է CO₂ գազի օպտիկական սենսորի մակետ, որն օժտված է CO₂ մոլեկուլների նկատմամբ խիստ արտահայտված սելեկտիվ ու շատ մեծ գազազգայնությամբ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Ուսումնասիրվել է պատահական մակերևութային անհարթությունների ազդեցությունը լույսի կլանման վրա ոչ թափանցիկ միջավայրում, մակերևութի հանդեպ թեքությամբ

ընկնելու դեպքում: Առաջարկվել է անալիտիկ մոտեցում կատարելագործված սահմանային պայմաններով, որոնք հաշվի են առնում անհարթությունները մետաղական ու դիէլեկտրիկ թիթեղներում: Այդ մոտեցմամբ բացահայտվել են ինտերֆերենցիոն անդամներ, որոնք զգալիորեն փոխում են կլանման կախվածությունը տարբեր գործոններից: Ճշտվել են տեսության կիրառելիության սահմանները, որոնք ներառում են միկրոալիքայինից մինչև օպտիկական տիրույթը: Բացահայտվել են անհարթությունների հետ կապված կլանման անկյունային ու բևեռացիոն կախվածությունները: Պարզվել է, որ գոյություն ունի անկյուն, որի դեպքում կլանումն անհարթ ու լրիվ հարթ մակերևույթների դեպքում համընկնում է: Հիմնվելով այս երևույթի վրա՝ առաջարկվել է պատահական անհարթության կոորեկցիոն երկարությունը որոշելու մեթոդ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Ուսումնասիրվել է բևեռացված լույսի տարածումն իզոտրոպ բեկման ցուցիչով միջավայրում: Ցույց է տրվել, որ բևեռացումը խախտում է միջավայրի լրացուցիչ համաչափությունները: Առաջարկվել է բևեռացումից կախված բեկման ցուցիչ կառուցելու սխեմա, որը վերականգնում է սկզբնական պրոֆիլի բոլոր համաչափությունները: Առաջարկվող սխեման պատկերված է Լյունեբուրգի ու Մաքսվելի «Ձկան աչք» պրոֆիլների օրինակներով (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Ներսեսյան):

Ուսումնասիրվել են նոր հայտնաբերված դիսիպատիվ հոսքային անկայունությունները, որոնք առաջանում են պլազմային միկրոալիքային գեներատորների աշխատանքի ընթացքում՝ ռելյատիվիստիկ էլեկտրոնային փնջի ու պլազմայի փոխազդեցության հետևանքով: Հետազոտվել են նոր հատկությունները, մասնավորապես սովորականից դեպի դիսիպատիվ անկայունություն անցումային տիրույթում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Է.Ռոստոմյան):

Կատարվել է նանոկառուցվածքներում բազմաֆոտոն պրոցեսների ուսումնասիրություն ինտենսիվ լազերային դաշտերի հետ, դիտարկվել է անկարգավորվածությունների դերը գրաֆենում ու գրաֆենանման նանոկառուցվածքներում, մասնավորապես ֆուլերենների վրա բարձր կարգի հարմոնիկների գեներացիայի (ԲՀԳ) պրոցեսում: Ցույց է տրվել, որ անկարգավորվածությունները լոկալիզացիայի էֆեկտի շնորհիվ որոշակիորեն մեծացնում են ԲՀԳ հավանականությունը: Ուսումնասիրվել է վերջինիս կախումը հարկադրող լազերային դաշտի հաճախությունից ու բևեռացումից: Ուսումնասիրվել է C_{180} հսկա ֆուլերենի վարքն ինտենսիվ լազերային դաշտում ու ԲՀԳ պրոցեսում: Ցույց է տրվել, որ ԲՀԳ ավելի արդյունավետ է մեծ թվով մասնիկների համակարգում, ստացվել են ԲՀԳ հավանականություններն ու հիմնական պարամետրերի օպտիմալ քանակական բնութագիրը՝ համեմատելով C_{60} ու C_{70} տիպի մոլեկուլների դեպքում համապատասխան պարամետրերի հետ, որոնք գեներացնում են նույն կարգի հարմոնիկներ (ղեկ.՝ թղթ. անդ. Հ.Մաթևոսյան):

Ուսումնասիրվել են անտենայի բնութագրերի չափման եղանակները, երբ ազդանշանի աղբյուրի ու ընդունիչի համակարգում առկա են անհամաձայնություններ: Առաջարկվել է չափման արդյունքների վրա այդ անհամաձայնությունների ազդեցության չեզոքացման եղանակ: Ուսումնասիրվել են մեծ էֆեկտիվությամբ անտենայի բնութագրերի չափման ճշտության մեծացման ուղիները: Ցույց է տրվել, որ դեցիմետրանոց ու սանտիմետրանոց տիրույթներում Կասեռպեա-A, Լեբեդ-A ու Տելեգ-A էտալոնային աղբյուրների միջոցով կարելի է մեծ ճշտությամբ չափել մինչև 80մ բացվածքով անտենաների բնութագրերը (ղեկ.՝ ալ. Ա.Ղուկյան):

Ֆիզիոթերապևտիկ նշանակության սարքի համար մշակվել և փորձարկվել են տարբեր կայունությամբ, մասնավորապես հայելային հոսանքի աղբյուրներ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ն.Եզակյան):

Կատարվել են ազնիվ մետաղների (ոսկու, արծաթի, պլատինի) նանոմասնիկներով հարստացված լուծույթների ուսումնասիրություններ միկրոալիքային սենսորի միջոցով,

8-12 ԳՀց հաճախային տիրույթում: Միկրոալիքների փոխազդեցությունը նշված լուծույթների հետ բնորոշվում է մեծ զգայությամբ, լուծույթում նանոմասնիկների խտության ու նրանց չափերի, ինչպես նաև հեղուկի մոլեկուլների կլաստերային կառուցվածքի նկատմամբ, հաճախականության ռեզոնանսային արժեքների ժամանակ: Հայտնաբերվել է, որ խտության մինիմալ չափվող սահմանը կազմում է 0.01 մինչև 0.05 մկգ/մլ: Արդյունքները նաև ցույց են տվել չափիչ ազդանշանի միջինացված արժեքի գծային կախվածությունը նանոմասնիկների չափերից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Ալիք-մասնիկ դուալիզմի տեսանկյունից ուսումնասիրվել է ո-տիպի կիսահաղորդիչ նյութում ազատ էլեկտրոնների փոխազդեցությունը բացասական լիցք կրող եզրային դիսլոկացիաների հետ: Լիցքավորված դիսլոկացիայի ուժային դաշտում էլեկտրոնների առաձգական ցրման անկյունային բաշխումը նկարագրող ամպլիտուդի համար արտածվել է զուտ դասական բանաձև: Դիսլոկացված կիսահաղորդչային համակարգերի համար այս բանաձևը կարող է դիտարկվել որպես Քոնուել-Վայսկոպֆի բանաձևի նմանակ: Ստացված բանաձևի պիտանելիության տիրույթում հետազոտվել է նիտրիդային հետերոկառուցվածքներում քվանտային ու դասական ցրման ժամանակների հարաբերության կախվածությունը լիցքակիրների խտությունից: Անալիտիկ հաշվարկների արդյունքները համեմատվել են համակարգչային մոդելավորման տվյալների հետ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Հովակիմյան):

Մշակվել է հատուկ նշանակության տեխնիկայի հանգույցների վերականգնման ու բարելավման, դրանց պարամետրերի չափման մեթոդիկա: Այն կիրառվել է C-300 զենիթահրթիռային համակարգի անտենային հանգույցի վերականգնման համար: Մշակվել և պատրաստվել է մեխանիկական սինուսոիդալ (մինչև 600 Հց) հաճախությամբ թրթռականության փորձարկումների համակարգ, որի գրգռիչն ու ուժեղարարը հիմնված են ժամանակակից հաճախային փոխակերպիչի վրա: Մշակվել է արագացման անուղղակի չափման մեթոդիկա, հետազոտվել է համակարգի մեխանիկական հաճախային բնութագիրը (ղեկ.՝ Ն.Պողոսյան):

Մշակվել և պատրաստվել են Ku, X, C ու S հաճախային տիրույթների ռադիոմետրերի ԳԲՀ մուտքային հանգույցների նախանմուշներ գյուղատնտեսության ու շրջակա միջավայրի հետազոտման, հատուկ նշանակության համակարգերում օգտագործման համար: Մշակվել և պատրաստվել է երկու ֆեռոգոնդոլ մագնիսական տվիչի նախանմուշ (ղեկ.՝ Կ.Դադալյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել են CIGS, CTS բարակ թաղանթային արեգակնային տարրի կազմության մեջ մտնող ակտիվ, բուֆերային ու պատուհանային շերտերի ստացման տեխնոլոգիաների կատարելագործումը, ստացված շերտերի հատկությունների բազմակողմանի հետազոտումը: Այդ նպատակով ուսումնասիրվել են Sn-Cu մետաղական պրեկուսորների շերտավորելքային կառուցվածքների 500°C ջերմաստիճանում տարբեր տևողությամբ ծծմբացման եղանակով սինթեզված Cu_2SnS_3 (CTS) թաղանթների միկրոկառուցվածքի, ռենտգենյան դիֆրակցիայի ու ռամանի ցրման սպեկտրները: Արդյունքները ցույց են տվել, որ ծծմբացման ժամանակը մեծ ազդեցություն ունի թաղանթի և՛ բաղադրության, և՛ մորֆոլոգիայի վրա: Ցույց է տրվել, որ միաֆազ CTS միացության ձևավորման գործընթացը մոնոկլինիկ կառուցվածքով ու ստոյխիոմետրիային մոտ բաղադրությամբ ավարտվում է 60-80 րոպե սինթեզի ժամանակում: Պարզվել է, որ մոնոկլինիկ կառուցվածքի միաֆազ Cu_2SnS_3 միացության սինթեզի ամենաօպտիմալ պայմանը 500°C ջերմաստիճանն է՝ ծծմբացման գործընթացի 60-80 րոպե տևողությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մուսայելյան):

Չոլ-գել նստեցման եղանակով ապակու կամ սիլիցիումի տակդիրի վրա աճեցվել են միաֆազ ու բարձր թափանցիկությամբ օժտված ZnO:Tb թաղանթներ՝ 0.41 at%- ից մինչև 0.78 at% Tb-ի կոնցենտրացիայով: Ուսումնասիրվել է ուլտրամանուշակագույն ճառագայթման ազդեցությունը n-ZnO:Tb/n-Si կառուցվածքների կառուցվածքային ու ֆոտոէլեկտրական բնութագրերի վրա: Ցույց է տրվել, որ Tb^{3+} խառնուրդի կոնցենտրացիան որոշիչ գործոն է կառուցվածքների ուլտրամանուշակագույն լուսազգայնության բարձրացման համար (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Իրականացվել է պերովսկիտային թաղանթների ստացման վաակումային տեխնոլոգիայի կատարելագործում: Փորձնական ճանապարհով որոշվել են որպես ելանյութ ընտրված մեթիլամոնիումի քլորիդի ($\text{CH}_3\text{NH}_3\text{Cl}$) ու կապարի յոդիդի (PbI_2) սուբլիմացման օպտիմալ ջերմաստիճանները: Ստացված թաղանթների 0.4–1.0 մկմ տիրույթում օպտիկական թափանցելիության ու անդրադարձման սպեկտրների հետազոտությունների միջոցով կառուցվել են կլանման կորերը, հաշվարկվել է արգելված գոտու լայնությունը, թաղանթների հաստությունն ու դրանց նստեցման արագությունները (ղեկ.՝ Լ.Մաթևոսյան):

Կատարվել է նանոլարային բիո-սենսորի անալիտիկ մոդելավորում՝ օգտագործելով անցումային նանոլարային դաշտային տրանզիստորի մոդելը: Անալիտիկ հաշվարկներով ստացված արդյունքները համեմատվել են թվային սիմուլյացիաների հետ, ցույց է տրվել մոդելի բարձր ճշգրտությունը: Մշակված մոդելը հնարավորություն է տվել կանխատեսել սենսորի զգայնությունը՝ կախված համակարգի պարամետրերից (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Մշակվել և պատրաստվել է արդյունարար ռադիոլոկացիոն անդրադարձնող մակերեսի չափման համար անհրաժեշտ շարժական ստենդ: Հետազոտվել է զանազան մարմիններից, այդ թվում՝ գնդից ու անկյունային անդրադարձիչից ազդանշանի ինտենսիվության կախվածությունը թիրախի շարժման արագությունից ու ուղղությունից (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Аветисян Г.К., Казарян А.Г., Матевосян Г.Г., Мкртчян Г.Ф., Интенсивная генерация высоких гармоник в молекуле фуллерена C_{180} , ЖЭТФ, т. 165, вып. 1, 2023, с. 1-7.
2. Гулян А.Г., Езакян Н.Д., Мадосян Л.В., Аракелян А.С., Влияние рассогласований на результаты измерений шумовой температуры и эффективной площади антенн радиоастрономическими методами, Вестник НПУА, информационные технологии, электроника, радиотехника, N 2, 2023, с.22-34.
3. Петросян С.Г., Григорян Л.Н., Петросян П.Г., Наноструктурная стеклокерамика на основе перлита: получение и исследование. Стекло и керамика, т.96, N 10, 202), с. 39-47, DOI:10.14489/glc.2023.10.pp.039-047.
4. Adibekyan M., Gulyan A., Sargsyan S., Arakelyan H., Investigation of the type of radio emissions from sources of radio emissions such as: seismo-ionospheric communications, galactic background, “Swan-A” and “Cassiopeia-A” by vertical ionospheric sounding at a wavelength of 4.2 m., “15th Workshop, Sollar Influences on the Magnetosphere, Ionosphere and Atmosphere”, Primorsko, Bulgaria, 2023, pp. 20-22.
5. Ayvazyan G., Hakhoyan L., Dashtoyan H., Matevosyan L., Preparation and investigation of vacuum-deposited $\text{CH}_3\text{NH}_3\text{PbI}_3 - x \text{Cl} \times$ Perovskite films, “Journal of Contemporary Physics”, v. 58 (1), 2023, pp. 85-91.
6. Ayvazyan G., Khudaverdyan S., Matevosyan L., Dashtoyan H., Vaseashta A., Properties of vacuum-evaporated $\text{CH}_3\text{NH}_3\text{PbCl}_3 - x \text{I} \times$ Perovskite layers, “Proceedings of ICNBME-2023”, Chisinau, v. 1: Nanotechnologies and Nano-biomaterials for Applications in Medicine, 2023, pp. 3-11.

7. Avetissian H., Sukiasyan S., Matevosyan H., Mkrtchian G., Disorder-induced effects in high-harmonic generation process in fullerene molecules, "Results in Physics", v. 53, 2023, 106951.
 8. Babajanyan A., Abrahamyan T., Minasyan B., Manukyan H., Babajanyan N., Khachatryan R., Unveiling near-field interactions of metal nanoparticles in aqueous solutions: visualization through thermoelastic optical microscopy and X-Band microwaves response of structural clusters, "4th International Conference: Materials Science and Nanotechnology" Valencia, 2023, p. 10.
 9. Careyanand V., Gevorkian Zh., The impact of surface roughness on light absorption, "Phys. Rev.A", v. 109, 2023, p. 013515, arxiv:2308.076601.
 10. Davtyan M., Gevorkian Zh., Nersessian A., 'Integrable isotropic profiles for polarized light, "Physics of Particles and Nuclei", v. 54, N 6, 2023, pp. 1002–1005, DOI:10.1134/S1063779623060102
 11. Kalantaryan V., Martirosyan Y. Babayan, V. Petrosyan S., Violation of molecular structure of intercellular water as a possible cause of carcinogenesis and by microwave radiation (hipothesis) "Computational and structural biotechnology journal", N 6, 2023, pp. 3437-3442.
 12. Petrosyan S., Musayelyan E., Zaretskaya V., ... Study of the microstructure of Cu₂SnS₃ films, prepared through sulfurization of metal precursors deposited by magnetron sputtering, "Journal of Chalcogenide Letters", v. 20, N 11, 2023, pp. 811-820.
 13. Vaseashta A., Khudaverdyan S., Ayyazyan G., Matevosyan L., Tsaturyan S., Babajanyan H., On the unusually high photosensitivity of two barrier structures, "Applied Physics B", 2023, v. 129 (6), p. 7.
 14. Vaseashta A., Ayyazyan G., Khudaverdyan S., Matevosyan L., Structural and optical properties of vacuum-evaporated mixed-halide Perovskite layers on nanotextured black silicon, "Physica status solidi (RRL) – Rapid Research Letters", 2023, 58, 2200482.
 15. Zarteskaya E., Gremenok V., Malyutina-Bronskaya V., Musayelyan A., Petrosyan S., Study of ultraviolet irradiation effect on the ZnO:Tb thin films characteristics, "Journal of Contemporary Physics", v. 58, N 2, pp. 202-212, DOI:10.1134/S1068337223020172. DOI:10.1134/S1068337223020172
- Հոդվածները հրատարակվել են "Актуальные проблемы физики твердого тел" միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Մինսկ, 2023, 780 էջ:**
16. Gremenok V., Buskis K., Kunin K., Tivanov M., Lyashenko L., Pashayan S., Musayelyan A., Tokmajyan A., Optical properties of chemical bath deposited CdS thin films, pp. 106-109.
 17. Зарецкая Е.П., Гременок В.Ф., Бускис К.П., Станчик А.В., Петросян С.Г., Мусаелян А.С., Влияние условий синтеза на структурные характеристики пленок Cu₂SnS₃, полученных сульфидизацией слоев Sn-Cu , с. 762-765.
 18. Иванов В.А., Гременок В.Ф., Шевчик П.В., Петросян С.Г., Матевосян Л.А., Фотоэлектрические свойства полупроводниковых гетеропереходов (p)InSb-(n)CdTe, с. 287-290.
 19. Иванов В.А., Гременок В.Ф., Шевчик П.В., Петросян С.Г., Матевосян Л.А., Электрические свойства полупроводниковых гетеропереходов (p)InSb-(n)CdTe, с. 291-294.

Է.Ասմարյանն արժանացել է «Գիտության բնագավառում աշխարհի առաջին առաջնության» արժաթե հաղթողի կոչման:

ԻԿՐԱՆԵՏ ԿԵՆՏՐՈՆ ՄԿ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյան

Էլեկտրոնային փոստ՝ icranet-armenia@icranet.org,

yerevan.secretariat@gmail.com

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել են Mrk 501 բլազարի բազմաալիքային տիրույթում ճառագայթման մեխանիզմները՝ վերլուծելով 2017-20թթ. MAGIC, Fermi Large Area Telescope (LAT), NuSTAR, Swift, GASP-WEBT և Owens Valley Radio դիտակներով գրանցված տվյալները: Այդ

ընթացքում Mrk 501-ը որոշ ժամանակ գտնվել է ճառագայթման ցածր ակտիվության վիճակում, ինչը կարող է օգնել պարզելու աղբյուրի շիրում տեղի ունեցող հիմնական պրոցեսները: Ցույց է տրվել, որ բոլոր ալիքների տիրույթներում գրանցվել է հոսքի աճ, ընդ որում ամենաակտիվ փոփոխականությունները գրանցվել են ռենտգենյան ու շատ բարձր էներգիայի (ՇԲԷ; ≥ 100 ԳԷՎ) չ տիրույթներում: Ցույց է տրվել, որ ռենտգենյան ու ՇԲԷ չ տիրույթներում ճառագայթման փոփոխականությունը միաժամանակյա է, ինչը ցույց է տալիս, որ ճառագայթումն առաջանում է միևնույն էլեկտրոնների ճառագայթումից: Ցածր ակտիվության վիճակում աղբյուրի ճառագայթումը մոդելավորվել է մեկ տիրույթից սինքրոտրոնային ճառագայթման ու սինքրոտրոնային ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան մոդելի շրջանակում, գնահատվել են աղբյուրի շիթը նկարագրող հիմնական պարամետրերը:

BL Lac դասի 1ES 0647+250 աղբյուրը չ տիրույթում գրանցված հեռավոր բլազարներից է, որի ճառագայթումը գրանցվել է նույնիսկ ճառագայթման ոչ ակտիվ վիճակում: MAGIC դիտակներով այս աղբյուրը գրանցվել է 2009-11թթ. ցածր ակտիվության ժամանակ, ինչպես նաև 2014, 2019 ու 2020 թվականներին, բռնկումների ժամանակ: Հետազոտվել է 1ES 0647+250-ի բազմաալիքային տիրույթում երկարաժամկետ հոսքի փոփոխականությունը, մոդելավորվել են տարբեր ժամանակահատվածներում ճառագայթման էներգիայի սպեկտրալ բաշխվածությունները (ԷՄԲ-ները): Ցույց է տրվել, որ հոսքի ռենտգենյան ու ՇԲԷ չ տիրույթներում փոփոխական է երկար ժամանակահատվածում: Հայտնաբերվել է հոսքի միաժամանակյա փոփոխականություն օպտիկական ու բարձր էներգիայի (ԲԷ) չ տիրույթներում, իսկ ռադիո տիրույթում ճառագայթումը հետ է 400 օրով: Համեմատելով MAGIC ու Fermi LAT դիտակներով գրանցված տվյալները՝ գնահատվել է, որ աղբյուրի հեռավորությունը $z = 0.45 \pm 0.05$ է, որը շատ չի տարբերվում այլ մեթոդներով գրանցված արդյունքներից: Ցույց է տրվել, որ աղբյուրի ԷՄԲ ցածր ակտիվության ու բռնկումների վիճակներում կարելի է լավ բացատրել ինչպես մեկ, այնպես էլ երկու տիրույթներից լեպտոնային մոդելների շրջանակում: Սակայն ճառագայթման հանգիստ վիճակում ռադիո տիրույթում ճառագայթումը բացատրելու համար անհրաժեշտ է երկրորդ տիրույթ, որը գտնվում է չ տիրույթում՝ ճառագայթման տիրույթից 3.6 պարսեկ հեռավորության վրա:

ՏԷՎ տիրույթում գրանցված հեռավոր աղբյուրներից հետաձգված ճառագայթումը, որն առաջանում է միջգալակտիկական միջավայրով չ ճառագայթների տարածման հետևանքով, կարող է օգտագործվել միջգալակտիկական մագնիսական դաշտի (IGMF) չափման համար: 1ES 0229+200 բլազարից հնարավոր հետաձգված ճառագայթումը հետազոտվել է՝ վելուծելով MAGIC դիտակով 5 տարվա և Fermi LAT դիտակով 12 տարվա ընթացքում գրանցված տվյալները: Ցույց է տրվել, որ աղբյուրի հոսքը 200 ԳԷՎ-ից բարձր էներգիական տիրույթում տատանվում է իր միջին արժեքի շուրջը՝ դիտարկումների 14 տարվա ընթացքում: Միջգալակտիկական միջավայրում զարգացող էլեկտրամագնիսական կասկադից ուշացած ճառագայթման պատճառով փոփոխականության բացակայությունը թույլ է տալիս սահմանափակել մագնիսական դաշտը $B > 1.8 \times 10^{-17}$ Գ և $B > 1.8 \times 10^{-14}$ Գ ստորին արժեքներով տարբեր IGMF մոդելների դեպքում:

Ենթադրվում է, որ մեր Գալակտիկայում գերնոր աստղերի մնացորդների որոշ տեսակներ կարող են արագացնել տիեզերական ճառագայթները (ՏՃ) մինչև ՊԷՎ էներգիաներ: G106.3+2.7-ը գերնորի մնացորդը, որի ճառագայթումը գրանցվել է 1-100 ՏԷՎ տիրույթում, այդպիսի արագացուցիչների ամենահեռանկարային թեկնածուներից մեկն է: Այս գերնորի մնացորդն ունի գիսաստղի ձև, որը կարելի է բաժանել գլխի ու պոչի շրջանի, որոնք ունեն տարբեր ֆիզիկական պայմաններ: G106.3+2.7-ը դիտարկվել է MAGIC

դիտակներով, ընդհանուրը 121.7 ժամ՝ 2017թ. մայիսից մինչև 2019թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում: Ուսումնասիրվել են այդ աղբյուրի՝ տարբեր տիրույթներում γ ճառագայթման սպեկտրները, ցույց է տրվել, որ γ տիրույթում ճառագայթումը տարածականորեն համընկնում է G106.3+2.7-ի գլխից ու պոչից ռադիո տիրույթում ճառագայթման հետ: Այն փաստը, որ 6.0 ՏէՎ-ից բարձր էներգիայով զգալի γ ճառագայթում գրանցվել է միայն պոչի շրջանից, նշանակում է, որ 10 ՏէՎ-ից բարձր էներգիաներով ֆոտոնները, որոնք գրանցվել են Milagro, HAWC, Tibet AS γ ու LHAASO դիտակներով, նույնպես առաջանում են պոչի տիրույթից: Այս ենթադրության համաձայն՝ գլխի շրջանի բազմալիքային սպեկտրը կարելի է բացատրել կա՛մ հադրոնային, կա՛մ լեպտոնիկ մոդելներով, մինչդեռ պոչի շրջանում ճառագայթումը կարելի է բացատրել միայն հադրոնային մոդելի շրջանակում, հակառակ դեպքում ճառագայթման սպեկտրը կհակասեր 10 ՏէՎ-ից բարձր ու ռենտգենյան տիրույթում գրանցված տվյալներին:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Տիեզերքի վաղ շրջաններում ռելյատիվիստական շիթերի ֆիզիկան հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել մեծ հեռավորությամբ բլազարները, որոնց ակտիվությունը պայմանավորված է $10^9 M_{\odot}$ մեծ զանգվածով սև խոռոչներով և որոնք ունեն շիթի շատ մեծ լուսատվություն: Իրականացվել է մեծ հեռավորությամբ PKS 0537-286 աղբյուրի սպեկտրային ու ժամանակային ուսումնասիրություն՝ վերլուծելով Fermi LAT, NuSTAR, Swift XRT ու UVOT դիտակներով գրանցված տվյալները: Թեև աղբյուրի՝ ժամանակի ընթացքում միջինացված γ ճառագայթների սպեկտրը > 2.5 , ինչը ցույց է տալիս, որ Բէ տիրույթում ճառագայթման բաղադրիչի առավելագույնը գտնվում է ԳէՎ տիրույթից ցածր, գրանցվել են մի քանի ուժեղ բռնկումներ, երբ սպեկտրը եղել է < 2.5 , պայծառությունը՝ 10^{49} էրգ սմ $^{-2}$ վրկ $^{-1}$ -ից բարձր: Աղբյուրի ռենտգենյան տիրույթում ճառագայթումը նկարագրվում է ≤ 1.38 սպեկտրով, իսկ պայծառությունը՝ $> 10^{47}$ էրգ սմ $^{-2}$ վրկ $^{-1}$: Ճառագայթման հանգիստ ու ակտիվ վիճակներում ԷՍԲ-ները մոդելավորվել են մեկ տիրույթից լեպտոնային մոդելի շրջանակում՝ ենթադրելով ճառագայթման տիրույթի տարբեր դիրքեր՝ հաշվի առնելով ինչպես ներքին (սինքրոտրոնային ֆոտոններ), այնպես էլ արտաքին (սկավառակից, լայն գծերով տիրույթից ու տորանման տիրույթից) ֆոտոնային դաշտերը հակադարձ Կոմպտոնի ցրման համար: Մոդելավորումը ցույց է տվել, որ մինիմալ էներգիայի տեսանկյունից ամենահավանական սցենարն այն է, երբ ճառագայթման տիրույթը գտնվում է լայն գծերով տիրույթի ներսում:

γ տիրույթում ամբողջ երկնքի ամենամանրամասն դիտումները, որոնք հիմնված են 12 տարվա ընթացքում կուտակված տվյալների վրա (Fermi-LAT-ի 4FGL-DR3 կատալոգը), պարունակում են ավելի քան 6600 աղբյուր, որոնց գերակշիռ մասը բլազարներ են՝ 3743, որոնց 60.1%-ը դասակարգվում է որպես BL Lac կամ FSRQ դասի բլազարներ, մինչդեռ մնացածը որպես անորոշ տիպի բլազարների թեկնածուներ (BCU) են, քանի որ դրանց օպտիկական դասակարգումը բացակայում է: BCU-ները դասակարգվել են՝ օգտագործելով տարբեր մեքենայական ուսուցման ալգորիթմներ (արհեստական նեյրոնային ցանցեր, XGBOOST ու LIGHTGBM ալգորիթմներ), որոնք ուսուցանվել են արդեն դասակարգված 2219 BL Lac-ների ու FSRQ-երի սպեկտրային և ժամանակային հատկությունների 18 մուտքային պարամետրերի վրա: Ցույց է տրվել, որ լավագույն դասակարգումը ստացվում է LIGHTGBM մոդելի դեպքում, որը թույլ է տալիս դասակարգել նոր 825 BL Lac-ների ու 405 FSRQ-ների թեկնածուներ: Օգտագործելով նոր դասակարգված բլազարները՝ իրականացվել է դրանց տարբեր հատկությունների ստատիստիկական հետազոտություն:

Քվազի պարբերական տատանումների (QPOs) հայտնաբերումն ակտիվ գալակտիկական միջուկների լույսային կորերում հնարավորություն է տվել պատկերացում կազմել գերզանգվածային սև խոռոչների (SMBHs) ֆիզիկայի մասին: Երկարաժամկետ (մի քանի ամսից մինչև տարիներ) QPO-ների նույնականացումը հատկապես դժվար է և հնարավոր է դրան հասնել միայն ամբողջ երկնքի երկարատև դիտողական տվյալների առկայության դեպքում: Այս տեսանկյունից Fermi LAT դիտակով գրանցված տվյալներն իդեալական են QPO-երի առկայությունը հետազոտելու համար: Վերլուծվել են γ տիրույթում ամենապայծառ 35 բլազարների 2008-21թթ. ընթացքում գրանցված տվյալները, պատրաստվել են լուսային կորերը 7 ու 30-օրյա ինտերվալներով: Այնուհետև QPO-ների հետազոտությունն իրականացվել է շարունակական ալիքային փոխակերպման միջոցով, արդյունքների նշանակալիությունը ստուգվել է Մոնտե Կառլոյի մեթոդով՝ գեներացնելով նոր լուսային կորեր, որոնք ունեն հզորության սպեկտրային խտության ու հավանականության բաշխման նույն ֆունկցիան, ինչ սկզբնական լույսի կորերը: Հնարավոր է եղել առանձնացնել QPO-ներ ունեցող 24 աղբյուրները, որոնք համընկնում են արդեն իսկ նույնականացված աղբյուրների հետ (օրինակ՝ PKS 0537–441, S5 0716+714, Mrk 421, B2 1520+31 և PKS 2247–131): Ցույց է տրվել, որ S5 1044+71 աղբյուրի դեպքում QPO-ն 1100 օրվա կարգի է:

γ տիրույթում գրանցված մեծ հեռավորությամբ բլազարները տիեզերքի ամենահզոր կայուն օբյեկտներն են: Այդ հեռավոր աղբյուրների բազմաալիքային դիտումներն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ դրանք կարող են օգնել հասկանալու բլազարների շիթերի ճառագայթման էվոլյուցիան, ինչպես նաև ռելյատիվիստիկական շիթերի ձևավորումն ու տարածումը: Ուսումնասիրվել է 2.5-ից բարձր կարմիր շեղում ունեցող 7 բլազարների բազմաալիքային ճառագայթումը՝ վերլուծելով Swift UVOT/XRT ու Fermi LAT դիտակներով գրանցված տվյալները: γ տիրույթում գրանցվել են բռնկումներ PKS 1830-211 ($z = 2.507$), LQAC 247-061 ($z = 2.578$), TXS 0536+145 ($z = 2.690$) և 4C+41,32 ($z = 2.55$) աղբյուրների համար, երբ հոսքն ու ֆոտոնային ցուցիչը զգալիորեն փոխվել են: Օրինակ՝ MJD 58596.49-ին PKS 1830-211-ը գտնվել է անսովոր պայծառ վիճակում, երբ 3-օրյա միջին հոսքը եղել է $(1.74 \pm 0.04) \times 10^{-5}$ ֆոտոն $\text{սմ}^{-2} \text{վրկ}^{-1}$: PKS 1830-211-ի ռենտգենյան ճառագայթումը նույնպես խիստ փոփոխական է և բնութագրվում է կոշտ ֆոտոնների ինդեքսով՝ 0,34-0,94 տիրույթում: Դիտարկվող աղբյուրների ժամանակի միջինացված էՄԲ-ները մոդելավորվել են մեկ տիրույթից լեպտոնային մոդելի շրջանակում հակադարձ Կոմպտոնի ցրման համար՝ հաշվի առնելով և՛ սինքրոտրոնը, և՛ արտաքին ֆոտոնները: Այս մոդելավորումը թույլ է տվել գնահատել ճառագայթող մասնիկներն ու շիթը նկարագրող հիմնական պարամետրերը (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Sahakyan N., Harutyunyan G., Israyelyan D., Origin of multiwavelength emission from flaring high redshift blazar PKS 0537-286, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v. 521, issue 1, 2023, pp. 1013-1022.
2. Sahakyan N., Vardanyan V., Khachatryan M., Gradient boosting decision trees classification of blazars of uncertain type in the fourth Fermi-LAT catalogue, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v. 519, issue 2, 2023, pp. 3000-3010.
3. Aimuratov Y., Becerra L., Bianco C., Cherubini C., Della Valle M., Filippi S., Li, Liang, Moradi R., Rastegarnia F., Rueda J., Ruffini R., Sahakyan N., Wang Y., Zhang S., GRB-SN Association within the Binary-driven Hypernova Model, “The Astrophysical Journal”, v. 955, issue 2, id.93, 2023, 29 pp.

4. Sahakyan N., Giommi P., Padovani P., Petropoulou M., Bégué D., Boccardi B., Gasparyan S., A multimessenger study of the blazar PKS 0735+178: a new major neutrino source candidate, "Monthly Notices of the Royal Astronomical Society", v. 519, issue 1, 2023, pp. 1396-1408.
5. Ren H., Cerruti M., Sahakyan N., Quasi-periodic oscillations in the γ -ray light curves of bright active galactic nuclei, "Astronomy & Astrophysics", v. 672, id.A86, 2023, 31 pp.
6. Harutyunyan G., Multiwavelength properties of selected high redshift blazars, "Astrophysics", v. 66, issue 2, 2023, pp.181-193.
7. MAGIC Collaboration, Abe H., Abe K., Abe S., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., Performance of the joint LST-1 and MAGIC observations evaluated with Crab Nebula data, "Astronomy & Astrophysics", v. 680, id.A66, 2023, 21pp.
8. MAGIC Collaboration, Abe H., Abe S., Acciari V., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., MAGIC observations provide compelling evidence of hadronic multi-TeV emission from the putative PeVatron SNR G106.3+2.7, "Astronomy & Astrophysics", v. 671, id.A12, 2023, 12pp.
9. MAGIC Collaboration, Abe H., Abe S., Acciari V., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., Search for Gamma-Ray spectral lines from dark matter annihilation up to 100 TeV toward the galactic center with MAGIC, "Physical Review Letters", v. 130, issue 6, 2023, article id.061002.
10. MAGIC Collaboration, Abe H., Abe S., Acciari V., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., Multimessenger characterization of Markarian 501 during historically low X-Ray and γ -Ray activity, "The Astrophysical Journal Supplement Series", v. 266, issue 2, 2023, id.37, 43pp.
11. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Antonelli L., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., Study of the GeV to TeV morphology of the γ Cygni SNR (G 78.2+2.1) with MAGIC and Fermi-LAT. Evidence for cosmic ray escape, "Astronomy & Astrophysics", v. 670, 2023, id. A8, 20pp.
12. MAGIC Collaboration, Acciari V., Aniello T., Ansoldi S., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., Long-term multi-wavelength study of 1ES 0647+250, "Astronomy & Astrophysics", v. 670, 2023, id. A49, 20pp.
13. MAGIC Collaboration, Acciari V., Agudo I., Aniello T., ...Gasparyan S., ... Sahakyan N., ..., A lower bound on intergalactic magnetic fields from time variability of 1ES 0229+200 from MAGIC and Fermi/LAT observations, "Astronomy & Astrophysics", v. 670, 2023, id. A145, 8pp.
14. Gasparyan S., Bégué D., Sahakyan N., Time-dependent lepto-hadronic modeling of the emission processes in blazar jets, "The Sixteenth Marcel Grossmann Meeting, World Scientific Publishing", ISBN #9789811269776, 2023, pp. 429-444.
15. Rueda J., Ruffini R., Liang L., Moradi R., Sahakyan N., Wang Y., The white dwarf binary merger model of GRB 170817A, World Scientific Publishing, ISBN #9789811269776, 2023, pp. 217-241.
16. Harutyunyan G., Israyelyan D., Multiwavelength study of high-redshift blazars, "World Scientific Publishing", ISBN #9789811269776, 2023, pp. 445-461.
17. Ruffini R., Aimuratov Y., Becerra L., Bianco C., Cherubini Ch., Filippi S., Liang L., Moradi R., Rastegarnia F., Punsly B., Rueda J. Sahakyan N., Wang Yu, Xue Sh., The role of a standard family of Ic supernovae in BDHN I, BDHN II, and BDHN III GRBs, "Astronomische Nachrichten", v. 344, issue 1-2, 2023, article id. e20220099.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ռ.Հարությունյան

Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Ս.Աճեմյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են էկոլոգանոսֆերային հետազոտությունների, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնները, Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության, Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի, Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների, Մոլեկուլային կենսաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են 6 ակադեմիկոս, 8 թղթակից և 27 արտասահմանյան անդամներ, 12 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել են բաժանմունքի 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 17 նիստ և աշխատանքային խորհրդակցություններ, գիտական կազմակերպությունների 8 հաշվետու ժողով:

Բաժանմունքի տարեկան ժողովում քննարկվել են կազմակերպությունների հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքները:

Բյուրոյի 17 նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2023թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2022թ. բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, պետական նպատակային ծրագրերի մասին հաշվետվությունները, 2023-24 ուստարվա ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի ընդունելության հարցերը, ԳՀԿ-ների՝ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման հայտերը, ԳԱԱ համակարգի գիտական գործուղումների ֆինանսավորման դիմումները:

ԳԱԱ մրցութային հանձնաժողովի նիստերում քննարկումների արդյունքում բաժանմունքի ինստիտուտներին ու կենտրոններին տրամադրվել է ֆինանսավորում անհրաժեշտ սարքերի ձեռքբերման համար:

Բաժանմունքի բյուրոն հաստատել է 15 աշխատակցի գիտական գործուղումների ֆինանսավորման հայտերը:

ԳԱԱ 80-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շրջանակում բաժանմունքի կազմակերպությունների 1 աշխատակցի շնորհվել է պետական պարգև՝ Երախտագիտության մեդալ, 1 աշխատակցի՝ ՀՀ վարչապետի հուշամեդալ, 2 աշխատակցի՝ ԿԳՄՍՆ շնորհակալագիր, 22 աշխատակցի՝ ԳԱԱ հուշամեդալ:

Բաժանմունքը եղել է Ֆունկցիոնալ սննդի կենտրոնի՝ «Ֆունկցիոնալ սնունդ և կենսաակտիվ միացություններ» 31-րդ միջազգային գիտաժողովի համակազմակերպիչ: Միջոցառմանը մասնակցել է 26 երկրի ներկայացուցիչ:

Բաժանմունքի ԳՀԿ-ներն անցկացրել են հանրապետական ու միջազգային 44 միջոցառում, այդ թվում՝ ուսուցողական սեմինարներ, գիտաժողովներ, գիտարշավներ, որոնց մասնակցել է 1506 մարդ (258-ն արտերկրից):

Բաժանմունքի ԳՀԿ-ները տպագրել են 273 հոդված՝ գրախոսվող ամսագրերում 232 (182-ն արտասահմանում), գիտաժողովների նյութերի ժողովածուներում 41 (32-ն արտասահմանում), 93 թեզիս (72-ն արտասահմանում), 17 մենագրություն, 3 ուսումնական ձեռնարկ և ստացել 3 արտոնագիր:

Բաժանմունքի 5 մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել է 11 թեկնածուական ատենախոսություն:

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան
Փոխտնօրեն՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան
Գիտքարտուղար տնտ.գ.թ. Ք.Սարգսյան
Էլեկտրոնային փոստ՝ ecocentr@sci.am, info@cens.am
Կայքէջ՝ www.cens.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Երևանի տարածքի հողերի քիմիական կազմի երկրաքիմիական ֆոնային առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քաղաքի «հող-փողոցի փոշի» համակարգում՝ անթրոպոգենեզի շարունակական պայմաններում, կազմավորվել է տարրերի անթրոպոգեն, ցայտուն արտահայտված երկրաքիմիական ասոցացիա՝ Cu-Zn-Pb-Mo, որը քաղաքի տարածքի բնական միջավայրի բազմամյա անթրոպոգեն վերափոխման գործընթացի վառ ապացույց է: Հրազդան գետի Երևանի տարածքով հոսող հատվածից 2019-23թթ. վերցված հատակային նստվածքի նմուշներում Mo-ի պարունակությունները 2019-21թթ. դրսևորել են նվազման, իսկ 2021-23թթ.՝ աճման դինամիկա: Ուսումնասիրված ժամանակահատվածում նվազագույն միջին պարունակությունը գրանցվել է 2021թ., ինչը պայմանավորված է COVID-19 համավարակի ընթացքում գործող սահմանափակումներով: Երևանի տարածքի «հող-փոշի-հատակային նստվածք» համակարգում Mo-ի վարքի առանձնահատկություններում գերակայող դեր ունի Ca-ը: Վերոնշյալ միջավայրերում դիտվել է Mo-ի կարբոնատների հետ կապակցում ու նստեցում (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Տեփանոսյան):

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողերում գնահատվել են ալֆա ու բետա ակտիվության գումարային մակարդակները, բնական Ra-226, Th-232, K-40-ի և տեխնածին Cs-137-ի տեսակարար ակտիվությունները: Բնական ռադիոնուկլիդների առավելագույն ակտիվությունները գրանցվել են մարզի կենտրոնում ու հյուսիսում՝ Վանաձոր-Դիլիջան ուրանաբեր հանքային գոտու սահմաններում: Արզական-Փարաքար ուրանաբեր գոտու սահմաններում բնական ռադիոնուկլիդների ակտիվությունը համեմատաբար ավելի ցածր է: Գրանցվել է նշանակալի հարաբերակցություն բնական ռադիոնուկլիդների տեսակարար ակտիվության, գումարային բետա ակտիվության ու գամմա չափաբաժնի հզորության միջև: Տեխնածին Cs-137-ի ակտիվությունը տատանվում է 7.32-90.9 Բք/կգ սահմաններում և օրինաչափորեն աճում է նմուշառման կետի բացարձակ բարձրությանը զուգընթաց: Մշակվել են հողերում բնական ռադիոնուկլիդների բաշխվածության փորձագիտական քարտեզներ: Վերջիններս անհրաժեշտ տեղեկատվական հիմք են ՀՀ-ում բնական ռադիոնուկլիդների ֆոնային ակտիվության գնահատման համար, այդ թվում՝ ուրանաբեր հանքային գոտիների տարածքում (ղեկ.՝ Կ.գ.թ. Օ.Բեյլանա):

Շարունակվել են ՀՀ-ում սպառվող տարբեր մթերքներում քիմիական վտանգների նույնականացման և պարունակությունների տվյալների հենքի թարմացման աշխատանքները: Առաջին անգամ ՀՀ-ում գնահատվել են վերարտադրողական տարիքի (18-49) կանանց վրա վերարտադրողական համար թունավոր տարրերի (Pb, Mo, Ni) սննդակարգային ներգործությունն ու դրանով պայմանավորված հավանական առողջական ռիսկերը: Բացահայտվել է, որ ուսումնասիրված մթերքների ընդհանուր սպառման և որոշ մթերքների (կաթնաշոռ, տավարի միս, պելմենի, խինկալի, սև սուրճ, ծորակի ջուր) առանձին սպառման դեպքում առկա է կապարի (Pb) ներգործությամբ պայմանավորված հավանական ռիսկ: Արդյունքները հիմք են բնակչության հնարավոր առողջական ռիսկերի գնահատման ու տեղեկացման համար (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Լանդշաֆտային բաղադրիչների (հող, ջուր, բույս) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների կատարելագործման ուղղությամբ իրականացվել են քաղաքամերձ թափոնակույտերի անօդաչու թռչող սարքերով (ԱԹՍ) գերբարձր լուծաչափի (>2սմ) բազմասպեկտրալ հեռազննում և լուսանկարների ժամանակային շարքի սպեկտրալ վերլուծություն: Արդյունքում գերբարձր լուծաչափի հեռազննմամբ հաջողվել է ոչ միայն քարտեզագրել թափոնային տարածքը, այլև ստանալ արդյունաբերական ու կենցաղային թափոնների՝ շինարարական աղբ, պլաստիկ ու օրգանական թափոններ, վերծանման սպեկտրալ հայտանիշներ: ՀՀ բնական կերահանդակներում, խաղողի այգիներում կենսազանգվածի վիճակի տարածաժամանակային փոփոխությունների հեռազննմամբ գնահատման արդյունքների լավացման նպատակով իրականացվել է արբանյակային միջին (MODIS՝ 250մ, LANDSAT՝ 30մ), բարձր (SENTINEL՝ 10մ) և ԱԹՍ գերբարձր լուծաչափի (>2սմ) տվյալների համադրում, վեգետացիոն (NDVI, GNDVI և այլն) ու այլ սպեկտրալ ինդեքսների (NDWI, LAI և այլն) կիրառմամբ վերծանման արդյունքների նորմավորում: Արդյունքում վեր են հանվել հետազոտվող տարածքներում բուսազանգվածի վիճակի տարածական անհամասեռություններ: Վեգետացիոն ինդեքսների (NDVI, GNDVI) արժեքների սեզոնային փոփոխությունները (հատկապես մայիս-հուլիս ամիսներին) չոր մերձարևադարձային գոտում տեղակայված գյուղատնտեսական տարածքներում պայմանավորված են հողի «պահեստային» խոնավությամբ: Վերջիններիս ստուգաչափման ուղղությամբ հետազոտությունները շարունակվում են (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

Կոտայքի մարզի Ակունք համայնքի Սևաբերդ ու Հատիս գյուղերի տարբեր բարձրության խոտհարքներում (60 ու 80 սմ) ուսումնասիրվել են բարձրարժեք հացազգի ու բակլազգի 20 տեսակների բարձրության, վերգետնյա զանգվածի, տերև/ցողուն հարաբերության, տերևային մակերեսի ու քիմիական կազմի ցուցանիշները: Արդյունքները ցույց են տվել, որ բարձրահասակ խոտհարքներում աճող բույսերի տերևների կշիռը մոտ 35%-ով, ցողուններինը 80%-ով գերազանցել են, իսկ տերև/ցողուն հարաբերությամբ 72%-ով զիջել են ցածրահասակ խոտհարքների նույն ցուցանիշներին: Բացի այդ, անկախ բուսածածկի բարձրությունից՝ բակլազգիների տերևային մակերեսն ու հում սպիտակուցի քանակությունը, հատկապես տերևներում, զգալիորեն բարձր է եղել հացազգիներից, իսկ քիմիական կազմի մնացած ցուցանիշներով տեսակների միջև էական տարբերություն չի դիտվել (ղեկ.՝ գ.գ.դ. Բ.Մեժունց):

Էկոլոգիական գրագիտության բարձրացման նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնը շարունակել է աջակցել «Կրթություն հանուն կայուն զարգացման (ԿԿԶ)» միջազգային գործընթացին՝ իրականացնելով ոչ ֆորմալ կրթություն ասոցացված ու գործընկեր դպրոցներում (դպրոցներ 4, արհեստագործական պետական ուսումնարան 1): Ամբիոնի գործունեությունը լայնորեն լուսաբանվել է միջազգային կրթական ֆորումներում ու հանդիպումներում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Պողոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Երևան քաղաքի մթնոլորտային օդի մասնիկների, փոշու և ասոցացված պոտենցիալ տոքսիկ տարրերի համալիր հետազոտություններ. երկրաքիմիա, դիսկեր և լուծումներ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան) իրականացված հետազոտությունները թույլ են տվել վեր հանել քաղաքի հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ձգվածությամբ տրանսեկտից նմուշառված փողոցային փոշում տարրերի պարունակությունների սեզոնային նշանակալի փոփոխականություն (Ti, Ca, K, Sr, Rb, Zn, Cu, և Mn) ու կայունություն (Cr, V, Mo, Zr, As, Co, Mn, Pb և Ba) ցուցաբերած տարրերը: Բակային փոշում

Mo-ը փոխկապակցված է Cu, Zn ու Pb-ի հետ, բնահեն լուծման «կանաչ պատի» տերևներին դեպոնացված մասնիկներում Mo-ը հիմնականում հանդես է եկել Ca-ի հետ:

«Արածեցման տարբեր ռեժիմների ազդեցությունն արոտների արդյունավետության և հողերի բերրիության ցուցանիշների վրա» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Նավասարդյան) շարունակվել են ընտրված փորձատեղամասերի բուսածածկի ու հողերի հետազոտությունները: Արդյունքները ցույց են տվել, որ չարածեցված տեղամասերի համեմատ թույլ և ուժեղ արածեցված տարածքներն էապես զիջում են բույսերի բարձրությամբ (միջինը 35% և 78%), վերգետնյա զանգվածի (55% և 70%), ինչպես նաև հացազգի ու բակլազգի բուսախմբերի տեսակարար կշռով (70% և 85%): Փորձարկված արածեցման իմիտացիայի տարբերակներից առավել արդյունավետ է եղել երկշաքայա ընդմիջումով վերգետնյա զանգվածի օտարումը: Տարրալուծման արդյունքները ցույց են տվել, որ Ավան ու Արտաշավան համայնքներից հավաքագրված բույսերի ու հողերի նմուշներն ուսումնասիրված ցուցանիշների արժեքներով, բացի մանրահողի ու կալցիումի կարբոնատի տվյալներից, էականորեն չեն տարբերվել:

«Ռադոնի էմանացիայի պոտենցիալի և ռադոնային վտանգի գնահատում Երևան քաղաքում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Օ.Բելյանա) ստացվել է Երևանի հողի գազային ֆազայում ռադոնի տարածաբաշխման քարտեզ: Գազային ֆազայում ռադոնի ակտիվությունը հողում տատանվել է բավականին լայն սահմաններում՝ 210-40500 Բք/մ³, և չի հարաբերակցվել հողում ռադիումի ակտիվության հետ: Ռադոնի բարձր ակտիվություն գրանցվել է ավազային ֆրակցիայի մեծ պարունակությամբ (մինչև 81%) նստվածքային ապարների վրա զարգացած հողերում՝ քաղաքի կենտրոնական ու հարավային հատվածներում:

«Դասավանդողների համար ցկյանս ուսումնառության մոդելի մշակում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Պողոսյան) մշակվել է վերապատրաստման մոդել և սեմինարների ու քննարկումների միջոցով ներկայացվել է Հայաստանի 4 մարզերի՝ Տավուշի, Լոռու, Կոտայքի ու Արագածոտնի ավազ դպրոցների ու նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրինությանը, դասավանդողներին ու սովորողներին (թվով՝ 100 շահառու):

«Սննդամթերքում միկոտոքսինների ռիսկի գնահատում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Բեգլարյան) իրականացված աշխատանքներն ուղղված են աֆլատոքսիններով աղտոտված թիրախային մթերքի հետազոտմանը, բնակչության սննդակարգի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվական տվյալների վիճակագրական վերլուծությանը: Սննդի սպառման ու միկոտոքսինների պարունակության տվյալների համադրմամբ գնահատվել և բացահայտվել են միկոտոքսինների սննդակարգային ներգործությամբ պայմանավորված հավանական ռիսկերը: Ռիսկի գնահատումը կատարվել է ներգործության սահմանի հաշվարկման մեթոդով: ՀՀ չափահաս բնակչության կողմից կաթի սպառման դեպքում աֆլատոքսին M1-ի և Երևանի բնակչության կողմից բրնձի սպառման դեպքում աֆլատոքսին F1-ի ներգործությունը բնակչության առողջության համար կարող է ռիսկային լինել: Տարբեր մթերքներում աֆլատոքսինների պարունակության ու դրանցով պայմանավորված ռիսկերի գնահատման աշխատանքները շարունակվում են:

«Լեռնային լճերի ջրի որակի տարածաժամանակային փոփոխությունների գնահատում հեռազննման տվյալների մշակման տեխնոլոգիաների կիրառմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան) իրականացվել է Sentinel-3 OLCI արբանյակային լուսանկարների կիրառմամբ Սևանա լճի ջրի որակական մի շարք պարամետրերի (մակերևութային ջերմաստիճան, վտանգավոր ջրիմուռների ծաղկում, քլորոֆիլ- α) գնահատման հեռազննման մեթոդի ստուգաչափում և լճի ծաղկման ժամանակահատվածի

հայտնաբերման հեռազննման մեթոդի մշակում:

«Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման գիտամեթոդական կարողությունների հզորացում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան) ՀՀ-ում առաջին անգամ ուսումնասիրվել են բնակչության սննդային սովորությունները, գնահատվել է մակրո- և միկրոսննդանյութերի ընդունումը՝ օգտագործելով սննդի անհատական սպառման տվյալների հենքը: 164 սննդամթերքի (124 սննդամթերք՝ խմբավորված 11 խմբում և 40 հիմնական ճաշատեսակ՝ խմբավորված 4 խմբում) ներառմամբ հետազոտությունը ցույց է տվել, որ բնակչության ընտրանքի միայն փոքր տոկոսի մոտ է բավարարվում ածխաջրերի ու ճարպերի ընդունման պահանջը, իսկ 70%-ի մոտ՝ սպիտակուցի միջին պահանջը: Բացահայտվել է, որ բնակչության մեծ մասը հիմնական սննդի սպառման միջոցով բավարար քանակությամբ երկաթ չի ստանում, իսկ երկաթի օրական միջին ընդհանուր ընդունման մեջ մասմթերքն ու հեմային երկաթը համեմատաբար ցածր մասնաբաժին ունեն, ինչը վկայում է սննդակարգում երկաթի սահմանափակ կենսամատչելիության մասին: Ավելի քան 30 սննդամթերքի սպառման արդյունքում ֆոլաթթվի ու կալցիումի օրական ընդունման գնահատման արդյունքները ցույց են տվել, որ այս միկրոսննդանյութերի օրական ընդունման փաստացի քանակությունները սահմանված և առաջարկվող սննդակարգային ուղենիշային արժեքների մեջ փոքր մասնաբաժին են կազմում:

«Երկրաէկոլոգիական հետազոտություններում երկրատարածական տվյալների մշակման գործում մեքենայական ուսուցման կիրառման կարողությունների հզորացում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան) իրականացված աշխատանքների արդյունքում մեքենայական ուսուցման SVM մոդելի կիրառմամբ ստացվել է քաղաքային օդի ջերմաստիճանի կանխատեսման լավագույն արդյունքը ($R^2_{val} = 0.77$, $MSE = 0.23$), իսկ ԱԹՍ լուսանկարահանմամբ իրականացվել է Երևանի բուսաբանական այգում մակերևութային ջերմաստիճանի ձևավորման վրա տարբեր մակերևութային ծածկերի ազդեցության առանձնահատկությունների գնահատում:

«Բնական և մարդածին օբյեկտների սպեկտրալ հայտանիշների ստացման և վերլուծության մեթոդների մշակում» գերբարձր լուծաչափի հեռազննման տվյալների հիման վրա» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.թ. Ա.Մեդվեդև) իրականացվել է ԱԹՍ պատկերների ու դաշտային սպեկտրաչափության հիման վրա բնամարդածին օբյեկտների սպեկտրալ առանձնահատկությունների ստացման ու վերլուծության մեթոդաբանության փորձարկում: Ստացված տվյալների վերլուծությամբ վեր են հանվել վեգետացիոն շրջանում սպեկտրալ առանձնահատկությունների տարածական բաշխման ու փոփոխությունների օրինաչափությունները:

«Գեոէկոլոգիական հետազոտություններում ակտիվ հեռազննման համակարգերի ներդրման ուղղությամբ կարողությունների հզորացում» նախագիծը (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան) մեկնարկել է վերջին եռամսյակում, որի շրջանակում իրականացվել են նախապատրաստական ու արտասահմանյան խորհրդատուի հետ պլանի կազմման աշխատանքներ:

«ՀՀ լեռնային լանդշաֆտներում խաղողի այգիների էկոլոգիական վիճակի գնահատում հեռազննման տեխնոլոգիաների կիրառմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Ա.Խլղաթյան) Վայոց Ձորի Աղավնաձոր գյուղական համայնքի տարածքի Տրինիտի խաղողի այգիներում իրականացվել են ԱԹՍ լուսանկարահանում, քլորոֆիլի չափումներ, վեգետացիոն ինդեքսներով (LAI, NDVI, GNDVI, NDWI և այլն) ԱԹՍ պատկերների վերծանում ու տվյալների համադրում: ՄՌԻ (Random Forest և PLSR) մոդելների կիրառմամբ իրականացվել է խաղողի տերևներում քլորոֆիլի պարունակության գնահատում:

«Արագած լեռնազանգվածում ռադիոէկոլոգիական իրավիճակի գնահատման նորարարական մոտեցումներ: Ռադիոնուկլիդային ֆոն և հիմնագիծ, միգրացիա և ռիսկ» նա-

խագծային աշխատանքների (ղեկ.՝ Ն.Մովսիսյան) արդյունքում բացահայտվել է, որ բնական ռադիոնուկլիդների ակտիվությունն ավելի ցածր է վերին (0-10 սմ) և ավելի բարձր է խորքային շերտերում (10-20 և 20-40 սմ): Ra/Th հարաբերությունն Արագածի լեռնազանգվածի հողերում մոտ է 1.5-ին, ինչը հատուկ է հրաբխածին ապարների վրա զարգացած հողերին: Եվրատոմի ERICA գործիքի կիրառմամբ գնահատվել է էկոլոգիական ռիսկը, որը պայմանավորված է բնական ռադիոնուկլիդներով, մասնավորապես Ra-226-ով, իսկ ռիսկի ենթարկվող օրգանիզմները մամուռներն ու քարաքոսներն են: Cs-137-ը կուտակվել է հողի մակերևութային՝ 0-10 սմ խորության հողային շերտում: Cs-137-ի՝ ըստ բարձրության բաշխվածության օրինաչափության հիման վրա ստացվել է ռեգրեսիայի նշանակալի մոդել, համաձայն որի 2021թ. Արագած լեռնազանգվածի մակերևութային հողերում Cs-137-ը, ըստ բարձրության, աճում է հողում 0.03 Բք/կգ-ով՝ յուրաքանչյուր մետր բարձրանալիս:

«ՀՀ որոշ լանդշաֆտային գոտիներում բնական կերահանդակների էկոլոգիական վիճակի տարածաժամանակային փոփոխությունների գնահատման մեթոդի մշակում հեռազննման տեխնոլոգիաների և մեքենայական ուսուցման մոդելների կիրառմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Գ.Այվազյան) իրականացվել են Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն համայնքի բնական կերահանդակների արբանյակային պատկերների մշակում, ԱԹՍ լուսանկարահանում և ստացված օդալուսանկարների մշակում, վերգետնյա բուսածածկի նմուշառում, համապատասխան հաշվարկներ: Կատարված աշխատանքի արդյունքում ստացվել են բուսականության ընդհանուր վիճակն արտահայտող գործակիցներ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Սաղաթեյան Ա.Կ., Սահակյան Լ.Վ., Տեփանոսյան Գ.Հ., Արարատի մարզի գյուղատնտեսական հողերի երկրաքիմիական ատլաս, Ե., «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի» հրատ., 2023, 34 էջ:
2. Սաղաթեյան Ա.Կ., Սահակյան Լ.Վ., Տեփանոսյան Գ.Հ., Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողերի երկրաքիմիական ատլաս, Ե., «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի» հրատ., 2023, 34 էջ:
3. Սաղաթեյան Ա.Կ., Սահակյան Լ.Վ., Տեփանոսյան Գ.Հ., Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողերի երկրաքիմիական ատլաս, Ե., «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի» հրատ., 2023, 34 էջ:
4. Սաղաթեյան Ա.Կ., Սահակյան Լ.Վ., Տեփանոսյան Գ.Հ., Լոռու մարզի գյուղատնտեսական հողերի երկրաքիմիական ատլաս, Ե., «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի» հրատ., 2023, 34 էջ:

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

5. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Միկոտոքսինների ռիսկի գնահատում (մեթոդական ուղեցույց), Ե., «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի» հրատ., 2023, 55 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

6. Պիպոյան Դ.Ա., Պողոսյան Է.Վ., Ստեփանյան Ս.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Երևանի բնակչության կողմից բրնձի սպառման արդյունքում աֆլատոքսին B1 միկոտոքսինի ներգործության գնահատում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N 1(81), 2023, էջ 107-111:
7. Адамович Б.В., Бабаян Г.Г., Объективные и субъективные аспекты оценки качества воды в поверхностных водоёмах, мат. 23-й межд. научн. конф. “Сахаровские чтения 2023 года: экологические проблемы xxi века”, 2023, Минск, с. 125-128.
8. Бабаян Г.Г., Адамович Б.В., Оценка качества воды озера Севан с использованием индекса качества воды, мат. II межд. научно-практ. конф. “Тенденции и перспективы развития естественно-научных исследований в современных условиях”, 2023, Карачаевск, с. 91-94.
9. Бабаян Г.Г., Адамович Б.В., Регулирование уровня воды как инструмент устойчивого управления

качеством воды крупных пресноводных озер: на примере оз. Севан, “Водные ресурсы в условиях глобальных вызовов: экологические проблемы, управление, мониторинг. сб. тр. Всероссийской научно-практич. конф., 2023, Ростов-на-Дону, N 1, с. 50-55.

10. Овсепян А.А., Хлгатын А.Н., Аветисян Р.А., Мурадян В.С., Асмарян Ш.Г., Дистанционное зондирование температуры поверхности воды оз. севан с применением данных Copernicus Global Land Service, Ер., “Ученые записки ЕГУ: геологические и географические науки”, N3, 2023, <https://doi.org/10.46991/PYSU:C/2023.57.3>
11. Оганисян С.М., Мовсисян Н.Э., Беляева О.А., Пюскюлян К.И., Особенности распределения ¹³⁷Cs в почвах некоторых горных районов РА, Петрозаводск, “Студент года 2023, сб. ст. межд. учебно-исслед. конкурса, МЦНП “Новая наука”, 2023, с. 516-527.
12. Погосян Г., Гаспарян А., Григорян М., Амирян Е., Современные образовательные технологии в процессе непрерывного обучения. Владимир, мат. XII-ой всерос. научно-практич. конф. “Молодежь и будущее: профессиональная и личностная самореализация”, «Транзит-ИКС», 2023, с. 139-142.
- Հոդվածները հրատարակվել են “Всероссийская конференция с международным участием и элементами научной школы для молодежи «Экотоксикология-2023»” միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Տպւշ, “ТулГУ” հրատ., 2023, 320 էջ:**
13. Багдасарян Л.Г., Тепаносян Г.О., Саакян Л.В., Динамика концентраций и оценка уровней загрязнения и экологического риска цинка в уличной пыли г. Еревана, с. 36-38.
14. Геворгян А.Т., Тепаносян Г.О., Саакян Л.В., Геохимическая и санитарно-гигиеническая оценка загрязнения почв свинцом городов Ереван, Гюмри и Ванадзора, с. 33-35.
15. Погосян Ж.А., Тепаносян Г.О., Саакян Л.В., Динамика изменений содержания молибдена (Mo) и оценка загрязнения и экологического риска в донных отложениях р. Раздан в пределах г. Еревана, с. 30-32.
16. Тепаносян Г.О., Асмарян Ш.Г., Саакян Л.В., Медведев А.А., Геохимические ассоциации химических элементов в почвах вблизи городской свалки, с. 39-41.
17. Avagyan H., Hakobyan S., Avetisyan A., Bayramyan N., Hakobyan L., Poghosyan A., Abroyan L., Baghdasaryan B., Tsakanova G., Sahakyan L., Yeremyan A. , Karalyan Z., The pattern of stability of African swine fever virus in leeches, “Veterinary Microbiology”, v. 284, 2023, 109835, <https://doi.org/10.1016/j.vetmic.2023.109835>.
55. Stepanyan I., Barjadze Sh., Karagyan G., Kalashian M., Check list of Armenian aphids (Hemiptera: Aphidomorpha), *Zootaxa*, N 4, 2023, pp. 497-525.
56. Tabolin S., Akopyan K., Kolganova T., Migunova V., Characterisation of *Crossonema civellae* (Steiner, 1949) Mehta & Raski, 1971 (Tylenchida: Criconeematidae) from Armenia, *Russian Journal of Nematology*, 31(1), 2023, pp. 69-74.
57. Theissinger K., Fernandes C., ... Mazzoni C., Höglund J., European Reference Genome Atlas Consortium (S.Aghayan), How genomics can help biodiversity conservation, *Trends Genet*, 2023, 39(7), pp. 545-559.
58. Terlemezyan H., Sargsyan M., Harutyunyan H., Sargsyan S., Zarikian N., Environmentally friendly strategies for controlling the European Grapevine Moth, *Lobesia botrana* (Denis & Schiffermüller) (Lepidoptera: Tortricidae), *Arab Journal of Plant Protection*, 41(3), 2023, pp. 272-277.
59. Terlemezyan H., Sargsyan M., Harutyunyan H., Zarikian N., Sargsyan S., Karapetyan G., Mkrtchyan H., Results of testing of the efficacy of sublethal concentrations of bacterial-chemical insecticides combinations against cabbage moth larvae, *Acta agriculturae Slovenica*, 119(3), 2023, pp. 1-6.
60. Zarikian N., Dilbaryan K., Khachatryan A., Harutyunova L., Species composition and diversity of spider (Arachnida: Araneae) in the northern forests of Armenia, *Biodiversity*, v. 24, NOS 1-2, 2023, pp. 66-75.
61. Zarikia N., Kosyan A., Marusik Y., Spiders (Arachnida: Araneae) new to Armenia. 1. Ten genera and 20 new species belonging to Araneidae, Theridiidae, and Thomisidae, *Euroasian Entomological Journal*. 22 (3), pp. 142-150.
62. Vayssieres J., ... Kalashian M., ... Bruneau de Mire Ph., Contribution à la connaissance des buprestes de Mauritanie: inventaire, bioécologie et chorologie (Coleoptera, Buprestidae), *Revue de l'Association Roussillonnaise d'Entomologie*, v. 32, N 1, 2023, pp. 43-72.
63. Varagyan A., Gevorgyan G., Microbiological assessment of fecal contamination in the river waters of the Voghji River catchment basin, *Proceedings of the YSU B: Chemical and Biological Sciences*, 57, 2023, pp. 172-176.
64. Yurchenko A., Naumenko A., ... Aghayan S., ... Sharakhov I., Phylogenomics revealed migration routes and adaptive radiation timing of Holarctic malaria mosquito species of the *Maculipennis* Group, *BMC Biol*, 10; 21(1), 2023, p.63.
Հոդվածները հրատարակվել են «Теория и практика борьбы с паразитарными болезнями» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուում, N 24, Մ., «Наука» հրատ., 2023, 550 էջ:
65. Геворкян Р.Г., Эпизоотологическая ситуация по токсоплазмозу сельскохозяйственных животных в Тавушской области Армении, с.142-146.
66. Мовсесян С.О., Петросян Р.А., Никогосян М.А. , Барсегян Р.Э., Теренина Н.Б., Воронин М. В., Варданян М.В., Биоразнообразие фауны на территории северных районов Армении и бассейна озера Севан, с. 306-311.
67. Мочалова Н.В., Крещенко Н.Д., Кузнецов Г.В., Шалаева Н.М., Мовсесян С.О., Теренина Н.Б., Исследование мышечной системы трематоды *Dicrocoelium lanceatum*, с. 319-324.
68. Слободяник Р.В., Зыкова С.С., Щербаков О.В. Случаи лейшманиоза среди безнадзорных собак в населенных пунктах Сюникской и Арагатской областей Армении, с. 436-440.
69. Слободяник Р.В., Зыкова С.С., Щербаков О.В., Агабабян К.Э.. Фауна кровососущих двукрылых Мегринского района Армении, с. 441-446.
Հոդվածները հրատարակվել են “Актуальные вопросы ветеринарной медицины” միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուում, N 3, Սանկտ Պետերբուրգ, 2023, 220 էջ:
70. Слободяник Р.В., Зыкова С.С., Щербаков О.В., Лунегов А.М. Шакал как потенциальный источник висцерального лейшманиоза на территории Арагатской долины Армении, с. 36-40.

71. Слободяник Р.В., Щербаков О.В., Зыкова С.С., Лунегов А.М. Фауна иксодовых клещей высокогорной зоны Ширакской области Армении, с. 72-79.
Հոդվածները հրատարակվել են “VII съезд биофизиков России” միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Կրասնոդար, “Биофизика” հրատ., 2023, 381 էջ:
72. Крещенко Н.Д., Кузнецов Г.В., Митьковский Д.Е., Мочалова Н.В., Теренина Н.Б., Мовсесян С.О., Идентификация серотониновых нейронов у *Hymenolepis diminuta* и *Schmidtea mediterranea* с помощью конфокальной лазерной сканирующей микроскопии (CLSM), с. 286-287.
73. Кузнецов Г.В., Крещенко Н.Д., Кучин А.В., Яшин В.А., Мочалова Н.В., Теренина Н.Б., Гордеев И.И., Митьковский Д.Е., Никогосян М.А., Петросян Р.А., Мовсесян С.О., Идентификация FMRF-подобных пептидов в репродуктивной системе паразитических трематод (*Platyhelminthes*). Рецепторы и внутриклеточная сигнализация, с. 221-224.

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան
 Փոխտնօրեն՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան
 Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Հ.Քոլոյան
 Էլեկտրոնային փոստ՝ armbiotech@gmail.com
 Կայքէջ՝ www.armbiotech.am

Մասնագիտական խորհուրդ 018՝ «Միկրոբիոլոգիա, կենսատեխնոլոգիա»

Նախագահ՝ ակ. Ա.Սադյան, գիտքարտուղար՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել են *in vitro* և *in vivo* ուսումնասիրություններ, որոնք ուղղված են նախկինում սինթեզված տրի- և պենտապեպտիդների վրա հիմնված նոր, կենսաբանորեն ակտիվ միացությունների որոնմանը: Գլայդերի համակցման ռեակցիայի միջոցով (Ni^{2+} կատալիզատոր) սինթեզվել են նոր էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային (S)- α -ամինաթթուներ, դրանց հիման վրա ChemBioDraw ծրագրի կիրառմամբ կառուցվել են նոր, գրականության մեջ չնկարագրված տրի- ու պենտապեպտիդներ (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Հետազոտվել են դեհիդրոալանինի կոմպլեքսները դեհիդրոամինաթթվային մնացորդի $\text{C}=\text{C}$ կապին նուկլեոֆիլների (իմիդազոլ ու բենզիլամին) միացման ռեակցիաներում, որոնց հիման վրա անջատվել են նպատակային ամինաթթուներ: Պրոպարգիլգլիցինային կոմպլեքսը հետազոտվել է ծայրային ալկենային խմբին E-վինիլային խալգոգենիդների միացման ռեակցիայում: Ոչ սպիտակուցային ամինաթթուների հիման վրա իրականացվել է նոր պաշտպանված ամինաթթուների ու նոր դիպեպտիդի սինթեզ: Նշված միացությունները ցուցաբերել են բարձր հակամանրէային ազդեցություն միկրոօրգանիզմների մի շարք սնկային ու բակտերիալ շտամերի նկատմամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Գիբսոնի եղանակով pBE-S վեկտորի կազմում թթվային ալֆա-ամիլազի գենի կլոնավորման նպատակով նախագծվել և ձեռք են բերվել ֆերմենտի ազդանշանային պեպտիդով ու առանց ազդանշանային պեպտիդի պրայմերային զույգերը, որոնց օգնությամբ *Bacillus acidophilus* MDC3500 շտամի գենոմային ԴՆԹ-ից ամպլիֆիկացվել են ֆերմենտի սինթեզի համար պատասխանատու համապատասխան գեները: Արդյունքում

ստացվել են ամիլազի մաքրային վեկտորում կլոնավորված ազդանշանային պեպտիդով pBE-S_{amy3500}^{sig+} և առանց դրա՝ pBE-S_{amy3500}^{sig-} տարբերակները:

Ստացված վեկտորները բազմացվել են *Escherichia coli* Top 10-ի բջիջներում, որից հետո մոդիֆիկացված մեթոդով տրանսֆորմացիայի են ենթարկվել *B. subtilis* Rik 1285 բջիջները: Ցույց է տրվել, որ անջատված ալֆա-ամիլազը մինչև 50°C ջերմաստիճանն ամբողջությամբ պահպանում է ակտիվությունը, իսկ 55-70°C ջերմաստիճանային ու pH 5.5-6.5 տիրույթներում նկատվում է ֆերմենտի ակտիվության աստիճանական, իսկ 70°C ջերմաստիճանում՝ 50 %-ի նվազում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

P. rhodozyma խմորասնկի քիմիական եղանակով մուտագենեզի (ընտրվել են մուտագենով մշակման պայմանները) արդյունքում ստացվել են 2-3 գ/լ աստաքսանտին սինթեզող մուտանտներ, որոնց հիման վրա հետագայում ստացվել են արտադրության համար կարևոր նշանակություն ունեցող, 25-28°C ջերմաստիճանում աճող շտամ-արտադրիչներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Օրգանական միացություններում N, C, H և S քիմիական տարրերի որակական ու քանակական վերլուծության համար մշակվել է արդյունավետ մեթոդ, որը թույլ է տվել հուսալիորեն գնահատել ուսումնասիրվող միացությունների քիմիական մաքրությունն ու իսկությունը: Արդյունքում կառուցվել են կալիբրման կորեր ըստ N, C, H և S, որոնց կորեյացիայի գործակիցները կազմել են համապատասխանաբար 0.99989, 0.99993, 0.99831, 0.99919:

Մշակվել է ոչ սպիտակուցային ամինաթթուների քիրալային վերլուծության ԲԱՀՔ մեթոդ: Որոշվել են դրա ճշգրտությունը, գծայնությունն ու կրկնելիությունը, որոնք լիովին համապատասխանում են վերլուծական մեթոդների վալիդացման միջազգային չափանիշներին (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Շարունակվել են L-տրիպտոֆան ամինաթթվի արտադրիչների կառուցման աշխատանքները նախկինում ստացված m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն *Brevibacterium flavum* 4 (m-FP-r) բակտերիայի սելեկցիայի/մուտացիայի միջոցով: Հայտնաբերվել են 22 կայուն մուտանտներ, որոնք հաղթահարել են տրիպտոֆանի նմանակի արգելակող ազդեցությունը: Օգտագործելով մանրէաբանական թեստի եղանակը՝ ընտրվել է նախկինում ստացված L-տրիպտոֆանի աուքսոտրոֆ (trp⁻) թեստ-կուլտուրա «կերակրող» 7 մուտանտ, որոնց շուրջ դիտվել են թեստ-կուլտուրայի աճի ամենամեծ գոտիները:

Ցույց է տրվել, որ G27 և 59C շտամները սինթեզում են մինչև 6.5-7.0 գ/լ L-տրիպտոֆան: Հատկանշական է, որ այդ շտամների մոտ ուղեկցող ամինաթթուների թվում դիտվել են նաև մյուս արոմատիկ ամինաթթուները՝ ֆենիլալանինն ու թիրոզինը (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ավետիսովա):

Ուսումնասիրվել է կաթնաթթվային բակտերիաների ու էնտերոկոկ շտամների կողմից էկզոբազմաշաքարներ սինթեզելու ունակությունը կաթնաշոռի շիճուկ պարունակող սննդամիջավայրում: Ցույց է տրվել, որ *Lactobacillus* սեռի բակտերիաների ամենահեռանկարային շտամներն արտադրում են միջինը 5% էկզոբազմաշաքարներ, իսկ *Enterococcus*՝ մինչև 18%: Հաստատվել է, որ երբ *Enterococcus*-ի որոշ շտամներ աճեցվում են MRS միջավայրում, որը կուլտուրալ հեղուկում պարունակում է 0.8% լեդի, առաջանում են բարձր քանակությամբ ամինաթթուներ՝ գլիցին (մինչև 1.25 մգ/մլ) ու տաուրին (մինչև 2.1 մգ/մլ): Այսպիսով, պետք է ենթադրել, որ էնտերոկոկերը նպաստում են լեդու աղերի (գլիկոլիտլատներ, տաուրոլիտլատներ) դեկոնյուգացիային արժեքավոր ամինաթթուների ձևավորմամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տիրունի):

Ուսումնասիրվել է արտաբջջային բակտերիալ պրոտեազների ակտիվությունը՝ կախված կուլտիվացման միջավայրից (սինթետիկ M9, լիարժեք NB, BioLab) ու սուբստրատից

(կազեին, ժելատին, ֆիբրին): Ցույց է տրվել, որ *Pseudomonas aeruginosa* MDC5249 և *P. syringae* MDC8733 շտամները սինթետիկ սննդամիջավայրերում պահպանում են պրոտեոլիտիկ ակտիվությունը բոլոր օգտագործված սուբստրատների նկատմամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Սպեկտրոֆոտոմետրիկ մեթոդով որոշվել է մոշի (*Rubus caesius* L.), հապալասի (*Vaccinium myrtillus* L.), սև հաղարջի (*Ribes nigrum* L.) հասած պտուղներում ու լուծամզվածքներում անտոցիանների պարունակության գումարային քանակը: Մշակվել է տեխնոլոգիական մեթոդ դրանց էկոլոգիապես մաքուր էքստրակտների ստացման համար, որոնք պարունակում են նվազագույն քանակությամբ մակրո- և միկրոտարրեր, օժտված են հակավիրուսային ու հակաբորբոքային ակտիվությամբ:

Պարզվել է, որ անտոցիանների առավելագույն ընդհանուր քանակ, ցիանիդին-Օ-գլիկոզիդի վրա հաշվված ($4.21 \pm 0.18\%$), պարունակվում է հապալասի լուծահանուկում: Ստացված լուծամզվածքների հիման վրա մշակվել է հակավիրուսային, հակաբորբոքային օշարակների ու պաստեղների պատրաստման մեթոդ (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Ուսումնասիրվել են Գեղարքունիքի ու Արագածոտնի մարզերում «Քամերիոն նեղատերև» ու «Կարմիր երեքնուկ» բույսերի տարածվածությունը և հումքի պաշարները դեղագործական արտադրության կարիքների համար: Ուսումնասիրվել է նմուշների որակական ու քանակական բաղադրությունն ընդհանուր դեղագրքային հոդվածի պահանջների համաձայն: Մշակվել են ոգեթուրմերի ստացման լաբորատոր մեթոդներ: Արտադրվել են «Քամերիոն նեղատերևի» ու «Կարմիր երեքնուկի» ոգեթուրմերի փորձնական խմբաքանակներ, կազմվել և հաստատվել են դրանց օգտագործման ցուցումները (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Ուսումնասիրվել է Մայրամախոտ, Մեղրախոտ կամ Պատրինջ, Կասիա, Խնկածաղիկ բույսերի սպիրտային էքստրակտների չոր պատրաստուկների նվազագույն ճնշող ազդեցությունը կաթնաթթվային բակտերիաների՝ *Lactobacillus acidophilus*, *L. delbrueckii*, *L. helveticus* աճի վրա: Համաձայն ստացված արդյունքների՝ առավել բարձր հակամանրէային ակտիվությամբ օժտված է Կասիայի էքստրակտը, իսկ բուսական էքստրակտների հանդեպ ամենաբարձր զգայնություն ցուցաբերում է *L. delbrueckii* շտամը: Մայրամախոտի էքստրակտը խթանում է *L. acidophilus* ու *L. helveticus*-ի աճը՝ միաժամանակ ճնշելով *L. delbrueckii*-ի աճը: Խնկածաղիկի ու Պատրինջի էթանոլային էքստրակտները ցուցաբերում են երկակի ազդեցություն: Ի տարբերություն մյուս բույսերի՝ Կասիայի էքստրակտը ցուցաբերում է միայն ճնշող ազդեցություն հետազոտվող կուլտուրաների վրա: Ստացված տվյալների հիման վրա ստուգվել է բուսական էքստրակտների ազդեցությունը *L. delbrueckii*-ով ու *L. helveticus*-ով ֆերմենտացված կաթնամթերքի կենսաքիմիական ու օրգանոլեպտիկ հատկությունների վրա: Որոշվել է, որ Պատրինջի ու Խնկածաղիկի էքստրակտները, կախված կոնցենտրացիայից, կարող են ցուցաբերել զգալի ազդեցություն կաթի ֆերմենտացիայի գործընթացի վրա, այդ թվում՝ խթանել կաթի մակարդման արագությունը, զգալիորեն բարձրացնել բակտերիաների տիտրը՝ հաղորդելով հաճելի համ ու բույր (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Դանիելյան):

Ուսումնասիրվել են *Neochloris oleoabundans*, *Chlorella vulgaris* կանաչ միկրոօրգանիզմների ու *Limnospira maxima* ցիանոբակտերիայի կենսաբանական ու արտադրողական հատկությունները ֆոտոկենսառեակտորներում շարունակական կուլտիվացման պայմաններում: Փորձերը ցույց են տվել, որ *L. maxima* ցիանոբակտերիայի թաց ու չոր կենսազանգվածի առավելագույն քանակը 192 ժամում եղել է համապատասխանաբար 10.7 ու 0.98 գ/լ, 0.34 օր-1 շտամի աճի տեսակարար արագությամբ: *C. vulgaris* միկրոօրգանիզմի թաց ու չոր կենսազանգվածի առավելագույն քանակը 168 ժամվա

ընթացքում կազմել է համապատասխանաբար 9.8 ու 1.17 գ/լ, 0.384 օր⁻¹ շտամի աճի տեսակարար արագությամբ: Միաժամանակ *N. oleoabundans* միկրոօրգանիզմի խոնավ ու չոր կենսազանգվածի առավելագույն քանակը 192 ժամվա ընթացքում կազմել է համապատասխանաբար 9.7 և 1.12 գ/լ, 0.315 օր⁻¹ շտամի աճի տեսակարար արագությամբ: Սպիտակուցի պարունակությունը 100 գ չոր կենսազանգվածում *L. maxima*, *C. vulgaris* և *N. oleoabundans*-ի համար կազմել է համապատասխանաբար 59.0 ± 2.4 , 49.2 ± 2.2 և 40.0 ± 2.1 գ, ածխաջրեր՝ 21.0 ± 1.9 , 15.8 ± 1.6 և 20.0 ± 1.8 գ, իսկ լիպիդները՝ 6.0 ± 1.1 , 19.6 ± 1.7 և 26.0 ± 1.9 (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Պարզվել է, որ պղնձի խտանյութի տարրալուծումը կենսածին Fe^{3+} -ով, քիմիական լուծույթի $Fe_2(SO_4)_3 \times 9H_2O$ համեմատությամբ, ավելի արդյունավետ է ընթանում՝ անկախ պուլպի խտությունից: Քիմիական ռեագենտի օգտագործման դեպքում դիտվել է Fe^{3+} -ի նստեցում, ինչի արդյունքում իոնների քանակը լուծույթում նվազել է, ինչն էլ հանգեցրել է պղնձի տարրալուծման ակտիվության նվազմանը: Կենսածին Fe^{3+} -ի լուծույթի օգտագործման դեպքում նստվածքի առաջացում տեղի չի ունեցել, և լուծույթի բարձր օքսիդացնող ակտիվությունը պահպանվել է տարրալուծման ողջ գործընթացում (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Շարունակվել են գիտաարտադրական նշանակության մանրէների կուլտուրաների հավաքածուի կենսունակ վիճակում պահպանման աշխատանքները: Բացահայտվել է *Saccharomyces cerevisiae* շաքարասնկի 20 արդյունաբերական շտամների α -գլյուկոզիդազային ու β -ֆրուկտոֆուրոնիդիդազային կայուն ակտիվությունը 25 տարի լաբորատոր պայմաններում պահպանումից հետո: Մշակվել է *L. lactis* MDC-10881 կաթնաթթվային բակտերիաների ու *S. cerevisiae* MDC-9792 շաքարասնկերի երկաստիճան համատեղ կուլտիվացիայի ռեժիմը կաթնային շիճուկի վրա: Ուսումնասիրվել է *Aspergillus* ու *Penicillium* ցեղերի 25 շտամների պրոտեոլիտիկ ու ամիլազային ակտիվությունը: Ուսումնասիրվել են ֆիտոպաթոգեն կուլտուրաների 40 ու սպորառաջացնող բակտերիաների 40 շտամերի, այդ թվում՝ 16 թերմոֆիլ բացիլների կենսաքիմիական բնութագրերը (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Բագիյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Նոր քիրալային կատալիզատորներ և աքիրալային սուբստրատներ: Ոչ սպիտակուցային ամինաթթուների և այլ պոտենցիալ կենսաակտիվ քիրալային միացությունների կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի արդյունավետ մեթոդների մշակում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ակ. Ա.Սադյան) շարունակվել են նոր մետաղական սալենային կոմպլեքսների ու աքիրալային սուբստրատների սինթեզի ու հատկությունների ուսումնասիրության հետազոտությունները հետագա կենսաբժշկական սկրինինգի համար:

«Մանրէների լիզոցելյուլոզ յուրացնող համակցություններից մետազենոմների (ներառյալ մետատրանսկրիպտոմները) ստացում, պահպանում, ինֆորմացիայի վերծանում և դրանց կիրառում նոր ռեկոմբինանտ ցելյուլազների, հեմիցելյուլազների ու լիզին մոդիֆիկացնող ֆերմենտների ստացման համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան) կիրառվել է բարձրամոլեկուլային ԴՆԹ-ի ու ընդհանուր ՌՆԹ-ի միաժամանակյա անջատման անիոնափոխանակային քրոմատոգրաֆիայի մեթոդը: Պատրաստվել են նանոպորային սեքվենավորման բարձրորակ ԴՆԹ-նմուշներ:

«Պոտենցիալ հակախոլինէսթերազային ակտիվությամբ օժտված ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների նպատակային սինթեզ և կենսաակտիվության ներուժի գնահատում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Դադայան) իրականացվել է նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների, դիպեպտիդների ու տրիպեպտիդների սինթեզ:

Ուսումնասիրվել են դրանց հակախտլինէսթերազային, ֆերմենտ արգելակող, սպազմոլիտիկ ու ֆունգիցիդային հատկությունները:

«Նիկելի հարթ-քառակուսային կոմպլեքսների, որպես ունիվերսալ սինտոնների, ուսումնասիրումը տարբեր կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզներում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան) մշակվել են ցիկլոմիացման ու Մաննիխ ռեակցիաների իրականացման մեթոդները, որոնց հիման վրա սինթեզված ամինաթթուները փոխանցվել են կենսաբանական հատկություններն ուսումնասիրելու համար:

«Ներքջջային եռֆերմենտային համակարգերի կիրառմամբ նոր էնանտիոմերապես մաքուր ամինաթթուների և դրանց ածանցյալների ստացում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Պալոյան) գենային ճարտարագիտության մեթոդներով կառուցվել են հիդանտոինազների ու կարբամոյլազների շտամ-արտադրիչներ: Կատարվել է ստացված ֆերմենտների բնութագրումը և հաստատվել է ակտիվությունը համապատասխան սուբստրատների նկատմամբ:

«Միջատասպան և հողը պարարտացնող հատկություններով օժտված գյուղատնտեսական մշակաբույսեր» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան) նոր ազոտ-ֆիքսող ու ֆոսֆատ մոբիլիզացնող բակտերիաների հիման վրա մշակվել է պարարտացնող պատրաստուկ՝ «Պոլիագորիչ», անցկացվել են դաշտային հետազոտություններ գյուղատնտեսական մի շարք մշակաբույսերի վրա: Իրականացվել է 150-ից ավել էնտոմոպաթոգեն բակտերիաների շտամների՝ կարծրաթևավորների կարգի միջատների թրթուրների վրա ունեցած միջատասպան ազդեցության համեմատական ուսումնասիրություն:

«Ցեյուլոզ սինթեզող մանրէային շտամների սկրինինգ: Բակտերիալ ցեյուլոզի արտադրության տեխնոլոգիայի մշակում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Ավետիսյան) *Gluconacetobacter xylinus*-ի ու *Acetobacter aceti*-ի ընտրված մուտանտ շտամների մոտ ուսումնասիրվել է բակտերիալ ցեյուլոզի ելքն ու որակը՝ կախված ութ ֆերմենտման միջավայրի բաղադրությունից:

«Նորարարական մեթոդներ՝ մետաղներով աղտոտված վայրերի ռիսկերի բնութագրման համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Վարդանյան) իրականացվել են նախնական քարտեզագրման աշխատանքներ՝ շրջապատող միջավայրի համար առավել մեծ վտանգ ներկայացնող վայրերի ընտրության ու նմուշառումներ իրականացնելու նպատակով: Որպես թիրախային վայրեր ընտրվել են Կավարտի լճված հանքավայրը, Գեղանուշի ու Արծվանիկի պոչամբարները (Սյունիք): Իրականացվել են նմուշների ֆիզիկաքիմիական, մանրէաբանական հետազոտություններ:

«Օպտիկապես ակտիվ ֆենիլալանինի ածանցյալների սինթեզ, դրանց հենքի վրա պեպտիդների նպատակային ստացում և կենսաակտիվության հետազոտում» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան) սինթեզված α -դիրքում պրոպարգիլային ածանցյալներ պարունակող (S)- β -ֆենիլալանինի նմանակների հենքի վրա կառուցվել են նոր կենսաբանորեն ու օպտիկապես ակտիվ տրի- և տետրապեպտիդներ: Ուսումնասիրվել են դրանց հակաօքսիդանտային ու հակաբակտերիալ հատկությունները:

«Էնանտիոմերապես հարստացված չհագեցած ոչ սպիտակուցային նոր (S)- α -ամինաթթուների սինթեզը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան) ստացվել են 4 նոր կոմպլեքսներ, սինթեզվել են համապատասխան ամինաթթուներ:

«Հիդանտոինազային և կարբամոյլազային ակտիվությամբ օժտված ռեկոմբինանտ շտամների կառուցումը և դրանց կիրառումը օպտիկապես ակտիվ D-ամինաթթուների կենսակատալիտիկ սինթեզի համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Քոլոյան) ստացվել են D-կարբամոյլազի գենը կրող *E. coli* ռեկոմբինանտ շտամներ: Ուսումնասիրվել են D-կարբամոյլազների ֆիզիկաքիմիական ու կատալիտիկ հարկությունները, SDS-PAG

էլեկտրոֆորեզի միջոցով որոշվել են այդ ֆերմենտի ենթամիավորների մոլեկուլային կշիռները (37 kDa), կատարվել է ֆունկցիոնալ ակտիվ D-կարբամոլիլազների մաքրման օպտիմալ սխեմայի ընտրություն: Մոլեկուլային դոկինդ անալիզի կիրառմամբ իրականացվել է այդ ֆերմենտում կատալիտիկ կարևորություն ունեցող ամինաթթվային մնացորդների նույնականացում:

«Միկրոսկոպիկ սնկերի և միկրոջրիմուռների համակցությունները, դրանց մետաբոլից ակտիվությունը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան) ստացվել են քարաքոսային սնկերի ու միկրոջրիմուռների կայուն համակցություններ՝ *Aureobasidium pullulans* - *Chlorella vulgaris*, *A. pullulans* - *Neochloris oleoabundans*: Ցույց է տրվել, որ համակցությունների կողմից արտադրվող ճարպաթթուների որակական բաղադրությունը զգալիորեն տարբերվում է առանձին միկրոօրգանիզմների ճարպաթթվային կազմից:

«Որոշակի հիվանդությունների կանխարգելման համար նոր պրոբիոտիկ շտամների հատկությունների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Կ.Կարապետյան) շարունակվել է հեռանկարային կաթնաթթվային բակտերիաների ու էնտերոկոկերի կենսաբանական ու արտադրողական հատկությունների ուսումնասիրությունը:

«Նոր բազմաֆունկցիոնալ կենսատեխնոլոգիական պրեպարատի՝ որպես կենսապարարտանյութ, կենսախթանիչ, կենսաապեստիցիդ մշակումը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Մելքոնյան) ուսումնասիրվել են *Tetrademus obliquus* միկրոջրիմուռի մի շարք ազոտ ֆիքսող բակտերիաների շտամների կոնսորցիումները: Հետազոտվել են դրանց խթանիչ ազդեցությունը *Lepidum sativum* բույսի (ջրածաղիկ) սերմերի ծլունակության վրա, ֆունգիցիդային ակտիվությունը *Fusarium oxysporum* տեսակի սնկերի նկատմամբ:

«Հակամետաստազային ակտիվությամբ օժտված ոչ սովորական ամինաթթուների և դրանց դի-, տրիպեպտիդների հայտնաբերում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սարգսյան) ստացվել են մի շարք պրոպարգիլզիցին պարունակող դի- և տրիպեպտիդներ: Ուսումնասիրվել է դրանց ազդեցությունը կոլագենազ ֆերմենտի ակտիվության վրա:

«Կենսաբանորեն ակտիվ ջրալույծ մելանինի ստացումը բուսական հումքի թափոններից. հատկությունների ուսումնասիրությունը և կիրառումը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան) մշակվել է բուսական ծագման հումքերից առանց օրգանական լուծիչների օգտագործման ու թանկարժեք սարքավորումների կիրառմամբ մատչելի ու էժան ջրալույծ մելանինի ստացման տեխնոլոգիա, ուսումնասիրվել են անջատված մելանինի հակաօքսիդանտային, հակամանրէային ու կենսապաշտպանիչ հատկությունները, մասնավորապես որպես հակաբիոտիկների հանդեպ կայունությունը բարձրացնող միջոց:

«Ռեկոմբինանտ ցիանոբակտերիալ շտամների կառուցում 5-ամինոլուկլինաթթվի արտադրության համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ան.գ.թ. Վ. Գոգինյան) կառուցվել են կայուն, կենսունակ, վերարտադրելի ու մրցունակ ռեկոմբինանտ *Synechocystis* շտամներ, որոնք սինթեզում են 17.0–24.5 մգ/լ 5-ամինոլուկլինաթթու:

«Բիոմետաղներ: Արժեքավոր մետաղների մանրէաբանական կորզումը էլեկտրոնային թափոններից» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան) ուսումնասիրվել է առավել կարևոր գործոնների՝ պուլպի խտության, Fe^{3+} -ի կոնցենտրացիայի ու pH-ի ազդեցությունը տպագիր տպատախտակներից մետաղների կենսատարրալուծման վրա: Բացահայտվել են արժեքավոր մետաղների ընտրողական կենսատարրալուծման գործընթացի օպտիմալ պայմանները՝ ստացված բարձրարդյունավետ ու դիմացկուն մանրէների և նրանց ասոցիացիաների կիրառմամբ:

«Ցիանոբակտերիաներից և միկրոջրիմուռներից գլիկոլիցերոլիպիդների անջատում և հակաքաղցկեղային ազդեցության ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Բ.Հարությունյան) *Synechocystis* sp., *A. platensis* ցիանոբակտերիաների ու *C. vulgaris*

միկրոօրգանիզմների կենսազանգվածներից մեկուսացվել են գլիկոպիկտերոլիպիդներ, որոնց քիմիական մաքրությունը, քանակները հաստատվել են ՆՇՔ ու ԲԱՀՔ մեթոդների կիրառմամբ:

«Պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների, պեպտիդների նպատակային սինթեզ ու դրանց կենսաակտիվության հետազոտում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Լ. Ստեփանյան) համակարգչային ծրագրերի օգնությամբ իրականացվել է հետագա սինթեզով նոր ամինաթթուների ու պեպտիդների որոնում, որոնք արգելակում են հակամանրէային սերինային պրոտեազների ու բակտերիալ կոլագենազների գործողությունը:

«Սուբստրատների քիմիական սինթեզ և սուր երիկամային անբավարարության վաղ լաբորատոր ախտորոշման նպատակով կենսաբանական հեղուկներում պանտոթենազի ակտիվության որոշման նոր մեթոդի մշակում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա. Մկրտչյան) իրականացվել է ելային կոմպլեքսի ստացում ու C-ալկիլման ռեակցիայի հետազոտում:

«Մելանինոգեն շտամների և մանրէային մելանինի կիրառումը բույսերի վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարում, ինչպես նաև բերքատվության բարձրացման համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ս. Ավետիսյան) օպտիմալացվել են *Bacillus thuringiensis*-ի մելանինոգեն շտամների համար ֆերմենտման պայմանները: 19%-ով բարձրացել է նպատակային նյութի՝ մելանինի ելքը: Գյուղատնտեսական բույսերի կուլտուրաների համար որոշվել են մելանինով մշակման օպտիմալ չափաբաժիններն ու տևողությունը: Յույց է տրվել *B. thuringiensis*-ի ֆունգիցիդային ակտիվությունը որոշ ֆիտոպաթոգեն սնկերի ու մանէների նկատմամբ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Saghyan A., Bagiyany V., Ghazanchyan N., Kinosyan M., Harutyunyan A., Goginyan V., Catalogue of the culture collection of microorganisms. Aerobic spore-forming bacteria, "Stepanyan Print" LLC Printing house, Y., v. 1, part 3, 2023, 285pp.
2. Saghyan A., Bagiyany V., Khachaturyan N., Gevorgyan S., Kinosyan M., Harutyunyan A., Goginyan V., Catalogue of the culture collection of microorganisms: Filamentous Fungi, Basidiomycetes, "Stepanyan Print" LLC Printing house, Y., v. 4, 2023, 516pp.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

3. Гаспарян Г.Ц., Овакимян М.Ж., Бичахчян А.С., Погосян А.С., Дердзян Л.В., Особенности реагирования ненасыщенных фосфониевых и фосфорильных соединений с нуклеофильными электрофильными реагентами, сб. тр. "Некоторые успехи органической и фармацевтической химии", Ер., N 4, 2023, с. 259-273.
4. Aganyants H., Koloyan H., Hovsepyan A., Hambardzumyan A., Sakanyan V., Development of the hydantoinase process, FEBS Open Bio, P003, 2023, pp. 9-10.
5. Burkhardt Ch., Baruth L., Meyer-Heydecke N., Klippel B., Margaryan A., Paloyan A., Panosyan H., Antranikian G., Mining thermophiles for biotechnologically relevant enzymes: evaluating the potential of European and Caucasian hot springs, Extremophiles, v. 28, N 5, 2023, pp. 1-27.
6. Dadayan A., Poghosyan A., Ghazaryan S., Hovhannisyan A., Ghazaryan M., Dadayan S., Comparative study of the content of anthocyanins in the fruits of blueberries, blackberries and blackcurrants. Development of a technological method for obtaining partially purified new-galenic extracts, Proceedings of the Yerevan State University. Chemistry and Biology, v. 57, N 2, 2023, pp. 100-109.

7. Hakobyan H., Jamgaryan S., Sargsyan A., Danghyan Yu., Larionov V., Maleev V., Saghyan A., Mardiyan Z., A stereoselective entry to enantiopure (S)-2-amino-2-methyl-5-arylpen-4-ynoic acids and evaluation of their inhibitory activity against bacterial collagenase G, *Symmetry*, v. 15, N 10, 1924, 2023, pp. 1-13.
8. Harutyunyan A., Sumbatyan A., Hambardzumyan A., Panosyan H., Grigoryan A., Stepanyan H., Muradyan R.E., Synthesis, molecular docking, and biological activity of antimetabolites based on uracils and 5-substituted 2,6-dimethylpyrimidin-4(3H)-ones, *Russian Journal of Organic Chemistry*, v. 59, N 9, 2023, pp. 1511-1522.
9. Hovhannisyan H., Pashayan M., Barseghyan A., Grigoryan G., Gaboyan E., Danielyan L., Health promoting potentials of Armenian functional sour milk “Narine” and its starter *Lactobacillus helveticus* MDC9602, *The New Armenian Medical Journal*, v. 17, N 3, 2023, pp. 66-73.
10. Karimpour F., Tkhruni F., Karapetyan K., Afroughi S., Peikar A., Gohargani M., Tabatabaei N., Ebrahimzadeh Koor B., Salehi S., A study of Iranian traditional dairy beverage (Richal Shiri) and investigation into some properties of its isolated lactic acid bacteria, *The New Armenian Medical Journal*, v. 17, N 1, 2023, pp. 63-69.
11. Khachatryan G., Stepanyan T., Harutyunyan S., Goginyan V., Isolation of fenugreek nodule bacteria from arid and uncultivated soils and their impact on hostplants, *Reports of NAS RA*, v.123, N2, 2023, pp.60-67.
12. Melkumyan M., Babayan B., The study of proteolytic activity of Phytopathogenic *Rhodococcus*, *Pseudomonas* and *Xanthomonas* some strains, *European Science Review*, N 2, 2023, pp. 3-7.
13. Minasyan E., Aghajanyan A., Karapetyan K., Khachatryan N., Hovhannisyan G., Yeghyan K., Tsaturyan A., Antimicrobial activity of melanin isolated from wine waste, *Indian Journal of Microbiology*, v. 63, N 4, 2023, pp. 1-7.
14. Paloyan A., Dyukova K., Hambardzumyan A., Characterization of Glucose Oxidase from *Penicillium chrysogenum* MDC 8358. Prospects for application in food industry, *Functional Foods in Health and Disease*, v. 13, N 11, 2023, pp. 616-631.
15. Paloyan A., Sargsyan A., Karapetyan M., Hambardzumyan A., Kocharov S., Panosyan H., Dyukova K., Kinoshyan M., ... Marles-Wright J., Antranikian G., Structural and biochemical characterisation of the N-carbamoyl- β -alanine amidohydrolase from *Rhizobium radiobacter* MDC 8606, *FEBS J*, 2023, pp. 1-15.
16. Poladyan A., Trchounian K., Paloyan A., Minasyan E., Aghekyan H., Iskandaryan M., Khoyetsyan L., Aghayan S., Tsaturyan A., Antranikian G., Valorization of whey-based side streams for microbial biomass, molecular hydrogen, and hydrogenase production, *Applied Microbiology and Biotechnology*, v. 107, 2023, pp. 4683–4696.
17. Sargsyan A., Hakobyan H., Mardiyan Z., Jamharyan S., Dadayan A., Sargsyan T., Hovhannisyan N., Modeling, synthesis and in vitro screening of unusual amino acids and peptides as protease inhibitors, *Journal of Chemical Technology and Metallurgy*, v. 58, N 3, 2023, pp. 615-620.
18. Stepanyan L., Sargsyan T., Israyelyan M., Karapetyan K., Tsaturyan A., Study of the chemical composition, antibacterial and antioxidant activity of various extracts of the aerial part of *Leonurus Cardiac*, *Farmacia*, v. 71, N 5, 2023, pp. 1064-1071.
19. Tkhruni F., Israyelyan A., Karapetyan K., Balabekyan Ts., Khachatryan L., Khachatryan T., Comparative antimicrobial activity of some metabiotics, synthesized by lactic acid bacteria, *The New Armenian Medical Journal*, v. 17, N 1, 2023, pp. 1-13.
20. Tovmasyan A., Mkrtchyan A., Khachatryan H., Hayrapetyan M., Hakobyan R., Poghosyan A., Tsaturyan A., Minasyan E., Maleev V., Larionov V., Ayvazyan A., Shibata N., Giovanni N., Saghyan A., Synthesis, characterization, and study of catalytic activity of chiral Cu(II) and Ni(II) salen complexes in the α -Amino Acid C- α alkylation reaction, *Molecules*, v. 28, N 3, 1180, 2023, pp. 1-16.
21. Tsaturyan A., Arstamyanyan L., Sargsyan A., Saribekyan J., Voskanyan A., Minasyan E., Israelyan M., Sargsyan T., Stepanyan L., Development of an efficient method for obtaining lactose and lactulose from whey, *Pharmacia*, v. 70, N 4, 2023, pp. 1039–1046.
22. Tsaturyan A., Chiral separation of (2s,9s)-diamino-2,9-dibenzyldeca-4,6-diynedioic acid and (2r,9r)-diamino-2,9-dibenzyldeca-4,6-diynedioic acid, *Proceedings of the Yerevan State University, Chemistry and Biology*, v. 57, N 2, 2023, pp. 110–117.
23. Vardanyan A., Gaydardzhiev S., Vardanyan N., Optimized biological extraction of Cu and Ni from printed circuit boards via redoxolysis and concomitant substrate characterization, *Hydrometallurgy*, v. 221, 2023, pp. 1-10.

24. Vardanyan A., Khachatryan A., Castro L., Willscher S., Gaydardzhiev S., Zhang R., Vardanyan N., Bioleaching of sulfide minerals by *Leptospirillum ferriphilum* CC from polymetallic mine (Armenia), Minerals, v. 13, N 2, 2023, 243, pp. 1-15.
Հոդվածները հրատարակվել են “Functional Foods and Bioactive Compounds: Modern and Medieval Approaches” միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Ե., «Food Science Publisher» հրատ., 2023, 399 էջ:
25. Avetisova G., Ghochikyan V., Tsarukyan G., Keleshyan S., Karapetyan Zh., Toplaghaltsyan A., Melkonyan L., Microbial production of the essential amino acid L-tryptophan for food and nutrition, pp. 237-239.
26. Chitchyan K., Hovhannisyan S., Marutyan A., Verdyan A., Karapetyan K., The β -galactosidase activity potential of probiotic strains. pp. 307-310.
27. Danielyan L., Barseghyan A., Baghdasaryan L., Hrachya G. Hovhannisyan H., Improvement of Armenian functional dairy food Narine technological and probiotic properties by *Prunus armeniaca* gum exudate, pp. 365-366.
28. Danielyan L., Gaboyan E., Barseghyan A., Melqumyan I., Baghdasaryan L., Hovhannisyan H., Isolation of probiotic bacteria in breast milk to Improve breast milk and infant gut microbiota, pp. 254-255.
29. Melkonyan L., Ferreira A., Vela Bastos C., Figueiredo D., Avetisova G., Karapetyan Z., Toplaghaltsyan A., Gouveia L., Creating a consortium of nitrogen-fixing bacterium and microalga for healthier organic food, pp. 233-236.
30. Melkonyan L., Karapetyan Zh., Toplaghaltsyan A., Gouveia L., Avetisova G., Isolation and characterization of nitrogen-fixing bacteria to create a new multifunctional biotechnological mean for organic agriculture, pp. 230-232.
31. Paloyan A., Dyukova K., Hambardzumyan A., Characterization of Glucose Oxidase from *Penicillium chrysogenum* MDC 8358, pp. 211-213.
32. Tkhruni F., Balabekyan T., Khachatryan T., Karapetyan K., New biopreparations for functional nutrition, pp. 348-350.

Պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Ա.Մկրտչյանը պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Գ. ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Կ.գ.թ. Խ.Մայրապետյան
 Փոխտնօրեն՝ Կ.գ.թ. Ա.Թադևոսյան
 Գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Ա.Կարապետյան
 Էլեկտրոնային փոստ՝ hydropinstitute@gmail.com
 Կայքէջ՝ www.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Արարատյան դաշտի բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում բուրավետ կալիզիայի (*Callisia fragrans* (Lindl.) Woodson) վերգետնյա թարմ զանգվածի առավելագույն քանակություն ապահովել են Դավթյանի (0.5 Ն) սննդալուծողությամբ սնուցված բույսերը, որոնց արտարմատային եղանակով տրվել է կենսապարարտանյութ (Էկոբիոֆիդ+)՝ 1.2-3.5 անգամ գերազանցելով բույսերին, որոնք սնուցվել են միայն Դավթյանի (0.5 Ն) սննդալուծողությամբ, Դավթյանի (0.5 Ն) սննդալուծողությամբ ու կենսապարարտանյութով (արտարմատային եղանակով), միայն կենսապարարտանյութով (արտարմատային եղանակով): Միաժամանակ կողային ընձյուղներում գումարային ֆլավոնոիդների կենսասինթեզը շուրջ 80-100%-ով առավել ինտենսիվ է ընթացել Դավթյանի սննդալուծողի ու կեն-

սապարարտանյութի միաժամանակյա արմատային եղանակով, ինչպես նաև բույսերին միայն արտարմատային ճանապարհով կենսապարարտանյութ մատակարարելու դեպքում:

Բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում սովորական եղերդակի աճի, զարգացման ու կենսաքիմիական ցուցանիշների վրա Ստեյների սննդալուծոյթի տարբեր խտությունների (0.5 Ն, 0.75 Ն, 1.0 Ն և 1.25 Ն) ազդեցության ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ 1.0 Ն սննդալուծոյթը համարվում է ամենաարդյունավետը, որի դեպքում, հողային բույսերի համեմատ, գրանցվել է բույսի տերևների (2.5 անգամ) ու արմատների (3.0 անգամ) առավելագույն չոր զանգված և արմատներում ինուլինի (1.3 անգամ) բարձր պարունակություն: Նույն ցուցանիշներով սննդալուծոյթի մյուս խտությունները ցուցաբերել են համապատասխանաբար, 1.1-1.7, 1.4-1.5 և 1.6-2.0 անգամ ցածր արդյունավետություն:

Հիդրոպոնիկայում ու հողում տիբեթյան հազազի (*Lycium barbarum* L.) բույսերի արտարմատային սնուցումը Se-ի 0.005%-ոց լուծույթով (ստուգիչի համեմատ) բարձրացրել է Se-ի պարունակությունը հատապտուղներում 2.3 և 3.1, տերևներում՝ 7.0 և 18.5 անգամ: Ընդ որում, և՛ հիդրոպոնիկայում, և՛ հողում Se-ի 0.005 %-ոց լուծույթով բույսերի արտարմատային սնուցման դեպքում Se-ի պարունակությունը հատապտուղներում կազմել է 40 մկգ/կգ: Հիդրոպոնիկայում սննդալուծոյթին 1.0 մգ/լ Se-ի հավելումը նպաստել է հատապտուղներում Se-ի պարունակության բարձացմանը ստուգիչի համեմատ 1.4 անգամ:

Ակվապոնիկայի պայմաններում սոյայի (*Glycine max* Merr.) Մենուա սորտի սերմերի քաշը զիջել է դասական հիդրոպոնիկային 1.3, սակայն գերազանցել է հողային ստուգիչին 1.5 անգամ: Սպիտակուցի պարունակությամբ ակվապոնիկ տարբերակը զիջել է դասական հիդրոպոնիկային 1.4 անգամ, սակայն էականորեն չի տարբերվել հողային ստուգիչից: Ճարպերի պարունակության տեսակետից էական տարբերություն չի գրանցվել:

Անհող մշակույթում նրբաձաղիկ ռեհանը տերևների թարմ ու չոր քաշով, վիտամին C-ի պարունակությամբ շուրջ 10 %-ով զիջել է հողային ստուգիչին: Եթերայուղի (14 %-ով) ու սպիտակուցների (1.2 անգամ) պարունակությամբ նույնպես հողային բույսերը գերազանցել են հիդրոպոնիկ բույսերին: Էքստրակտիվ նյութերի (շուրջ 10 %-ով), դաբաղանյութերի (1.2 անգամ), ինչպես նաև β-կարոտինի պարունակության (1.7 անգամ) բարձր ցուցանիշ գրանցվել է հիդրոպոնիկայում: Մշակման պայմաններն էականորեն չեն ազդել կարոտինոիդների, «a» ու «b» քլորոֆիլների, ֆլավոնոիդների ու ֆենոլային թթուների պարունակության վրա:

Հիդրոպոնիկայում աշվազանդայի արմատների, տերևների, սերմերի, ինչպես նաև վերգետնյա զանգվածի չոր քաշը համապատասխանաբար 1.4, 2.0, 2.1 և 2.2 անգամ գերազանցել է հողային բույսերին: Բույսի տերևներում ֆլավոնոիդների պարունակության տեսանկյունից տարբերակների միջև էական տարբերություն չի դիտվել, սակայն ֆենոլային թթուների ու էքստրակտիվ նյութերի պարունակությամբ հիդրոպոնիկ բույսերը համապատասխանաբար 1.2 և 1.1 անգամ գերազանցել են հողայինին: Սպիտակուցների (1.1 անգամ) ու դաբաղանյութերի (1.3 անգամ) բարձր պարունակությամբ աչքի են ընկել հողային բույսերը: Հիդրոպոնիկայում աշվազանդայի թարմ տերևներում գրանցվել է «a» ու «b» քլորոֆիլների շուրջ 20%-ով և β-կարոտինի շուրջ 10%-ով բարձր քանակություն, իսկ սերմերում՝ ճարպերի (1.2 անգամ) ու հում թաղանթանյութի (1.3 անգամ) բարձր պարունակություն: Աշվազանդայի արմատներում հայտնաբերվել է քլորոգենաթթու, սակայն հիդրոպոնիկ ու հողային բույսերի միջև էական տարբերություն չի արձանագրվել:

Սրատերև թխկու (*Acer platanoides* L.) աճի ու զարգացման համար լավագույն լցանյութ է համարվել սև խարամը, որտեղ տնկիների բարձրությունը 1.2-1.4 ու բնի տրամագիծը 1.4-1.5 անգամ գերազանցել են կարմիր խարամ ու գլաքար լցանյութերում ու հողում աճեցված տնկիներին: Արարատյան դաշտի պայմաններում մշտադալար նոճու (8 տարեկան) բնի տրամագծի տարեկան աճը 1.5 անգամ գերազանցել է Դիլիջանի փորձակայանի պայմաններում աճեցված նոճուն (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել է ուսումնասիրվել բրգաձև թույայի (*Thuja pyramidalis* L.) տնկիների աճի վրա հիդրոպոնիկ տարբեր սուբստրատների, տնկարկի խտության ազդեցությունը, գնահատվել է տարբեր տարիքի տնկիների աճի արագությունը: Նախորդ և այս տարվա տվյալները փաստում են, որ հիդրոպոնիկ պայմաններն առավել նպաստավոր են բրգաձև թույայի տնկիների աճեցման համար՝ ապահովելով դրանց արագ աճ: Տարիքի հետ նույն տնկարկը (8 բույս/մ²) պայմանավորում է բույսերի ավելի ինտենսիվ աճ՝ ապահովելով աճի համար ազատ տարածություն ու բավարար սնուցում, սակայն տնկիների աճի հարաբերական արագությունը նվազել է:

Մորինգայի հանքային սննդառության օպտիմալացման փորձերի արդյունքներից բացահայտվել է, որ սննդալուծույթում NPK-ի տարբեր հարաբերակցությունները (N₇₀:P₁₅:K₁₅, N₁₅:P₇₀:K₁₅, N₁₅:P₁₅:K₇₀ ատոմ%) էականորեն ազդել են մորինգայի տերևների բերքատվության ու դրանց կենսաքիմիական ցուցանիշների վրա: Բուսահումքի ու տերևներում սպիտակուցի նվազագույն կուտակում (1.1-1.2 անգամ) դիտվել է N₁₅:P₁₅:K₇₀ դեպքում, սակայն այս տարբերակում չոր տերևներում գրանցվել է էքստրակտիվ նյութերի (մինչև 20%-ով), ֆլավոնոիդների (10-20%-ով), ֆենոլային թթուների (20%-ով), շաքարի (60%-ով), դաբաղանյութերի (20-40%-ով) բարձր պարունակություն (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հակոբջանյան):

Պարզվել է, որ նույն վեգետացիայի ընթացքում սոյայի 2 բերքի ստացումը լիովին հնարավոր է: Հանրագումարի բերելով 1-ին ու 2-րդ ցանքերի բերքի տվյալները՝ կարելի է փաստել, որ 1 վեգետացիոն շրջանում իրատեսական է 1540 գ/քմ բերքի ստացումը հիդրոպոնիկայում ու 680 գ/քմ՝ հողում:

Հաստատվել է, որ հիդրոպոնիկայում սնուցման հաճախականության փոփոխությունը զգալիորեն ազդել է բույսերի բերքատվության վրա. առավելագույն բերք ստացվել է օրը 2 անգամ սնուցման դեպքում: Սնուցման հաճախականության կրկնակի կրճատման դեպքում բերքի նվազումը կազմել է 20%, սպիտակուցի պարունակությանը՝ 10%: Սննդալուծույթի մատակարարման քառակի կրճատման դեպքում սոյայի սերմերի քաշը նվազել է 1.8 անգամ, իսկ ճարպի պարունակությունը՝ 1.1 անգամ: Միաժամանակ բոլոր հիդրոպոնիկ տարբերակները բերքով գերազանցել են հողային բույսերին 1.1-2.0, սպիտակուցի պարունակությամբ՝ 1.4-1.5 անգամ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

In vitro մշակույթում փշոտ էլեութերոկոկկի (*Eleutherococcus senticosus* L.) էքսպլանտների (բողբոջ, ընձյուղ, տերև) ախտահանման արդյունավետությունը կազմել է 86%: 0.5 ՄՍ սննդամիջավայրում GA₃ 0.5 մգ/լ խտությունը նպաստել է էքսպլանտների միջհանգուցային հատվածների երկարացմանը մինչև 1.5-2.0 սմ: Միկրոընձյուղները վերատնկարկվել են 1 մգ/լ ԻԿԹ ազոտ չպարունակող 0.5 ՄՍ սննդամիջավայրում, որտեղ գրանցվել է 80% արմատառաջացում, իսկ 2.0 մգ/լ ԲԱՊ, 0.5-ական մգ/լ ԻԿԹ ու GA₃ խտությունները նպաստել են 4-6 հատ ադվենտիվ միկրոընձյուղների ձևավորմանը:

Հիդրոպոնիկայում տերևները, ցողունները, արմատներն ու պտուղները ֆլավոնոիդների պարունակությամբ գերազանցել են հողային բույսերին համապատասխանաբար 1.5, 2. 0, 1.2, 2.3 անգամ: Էլեուտերոզիդների պարունակությամբ տերևներն ու պտուղները հիդրոպոնիկայում գերազանցել են հողային և Դիլիջանի փորձակայանի բույսերին համապատասխանաբար 1.2, 1.1 և 1.4, 1.1 անգամ: Արմատների վերլուծության արդյունքում քլորոգենաթթուն հիդրոպոնիկ նմուշում կազմել է 9.7 մգ%, իսկ հողայինում՝ 8.7 մգ%: Տերևների բարձր հակաօքսիդիչ հատկություն գրանցվել է լուծամզվածքի 500 մկգ/մլ խտության պարագայում, որի դեպքում 87-91%-ով չեզոքացվել են լուծույթում առկա ազատ ռադիկալները:

Ներմուծվել և հողում ու անհող մշակույթում ուսումնասիրվել են վայրի ուտելի բույսերից բոխի մանրապտուղը (*Bilacunaria microcarpa* (M. Bieb.) Pimenov & V.N. Tikhom.), նարդես գարշահոտը (*Ferula assa-foetida* L.), երնջակ դաշտայինը (*Eryngium campestre* L.) ու երնջակ կովկասյանը (*Eryngium caucasicum* Trautv.):

Ուսումնասիրվել է նաև հիդրոպոնիկ աճեցման միջավայրի ազդեցությունը Հայաստանի համար ոչ ավանդական սննդաբույս ալիքաձև խավրժիլի (*Rheum rhubarbarum* L.) բերքատվության ու բուսահումքի կենսաքիմիական ցուցանիշների վրա: Պարզվել է, որ Արարատյան դաշտի պայմաններում գլաքար լցանյութը գերտաքացման հետևանքով բացասաբար է ազդել խավրժիլի կենսունակության վրա: Հրաբխային խարամի և դրա ու գլաքարի խառնուրդի վրա աճեցված բույսերը թարմ կոթունների բերքատվությամբ ու քանակով գերազանցել են հողային բույսերին համապատասխանաբար 2.6-3.0 և 1.7 անգամ: Հողային բույսերը զիջել են հիդրոպոնիկներին էքստրակտիվ նյութերի (մինչև 50%-ով), ֆլավոնոիդների (մինչև 70 %-ով) և ֆենոլային թթուների (2 անգամ) պարունակությամբ, սակայն 3 անգամ գերազանցել են դաբաղանյութերի, մինչև 3.7 անգամ՝ C վիտամինի պարունակությամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Դարյադար):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Ղալաջյան Լ.Մ., Մայրապետյան Խ.Ս., Հովհաննիսյան Լ.Է., Սիսեոյան Ռ.Զ., Վարդանյան Ա.Պ., Հակոբջանյան Ա.Ա., Բաղդասարյան Վ.Գ., Որոշ բանջարաբույսերի գոմարային β-ռադիոակտիվությունն Արարատյան դաշտի տարբեր հիդրոպոնիկական համակարգերի և հողի պայմաններում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 75(1), 2023, էջ 6-12:
2. Հակոբջանյան Ա.Ա., Ղալաջյան Լ.Մ., Խչոյան Հ.Վ., Մարտիրոսյան Ս.Կ., Մկրտչյան Վ.Վ., Սարոյան Ն.Ա., Մկրտչյան Մ.Դ., Հովհաննեսյան Մ.Կ., Նահապետյան Ա.Մ., Ասճատրյան Ի.Ա., Հայաստանի տարբեր շրջաններում օդի աղտոտվածության ազդեցությունը կալեի վրա, Ե., «Գիտական հանդես», N 9, 2023, էջ 55-64:
3. Մայրապետյան Ս.Խ., Թադևոսյան Ա.Հ., Թովմասյան Ա.Հ., Ասատրյան Ա.Զ., Մաթևոսյան Ա.Զ., Սոյայի աճեցման հնարավորությունը բացօթյա հիդրոպոնիկայում և հողում Արարատյան դաշտի պայմաններում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 75(1), 2023, էջ 66-72:
4. Մայրապետյան Ս.Խ., Թովմասյան Ա.Հ., Ալեքսանյան Զ.Ս., Ասատրյան Ա.Զ., Ստեփանյան Ա.Ս., Թադևոսյան Ա.Հ., Նրբաձաղիկ ռեհանի (*Ocimum tenuiflorum* L.) կենսաքիմիական բնութագիրը բացօթյա հիդրոպոնիկայի և հողային մշակույթի պայմաններում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 75(2-3), 2023, էջ 13-18:
5. Babakhanyan M., Chavushyan V., Simonyan K., Ghalachyan L., Darbinyan L., Ghukasyan A., Zaqaryan Sh., Hovhannisyan L., Productivity and selenium enrichment of stevia in hydroponic and soil cultivation systems in the Ararat Valley, "Georgian Medical News", Jun; (339), 2023, pp. 71-76.

6. Chavushyan V., Simonyan K., Danielyan M., Avetisyan L., Darbinyan L., Isoyan A., Lorikyan A., Hovhannisyan L., Babakhanyan M., Sukiasyan L., Pathology and prevention of brain microvascular and neuronal dysfunction induced by a high-fructose diet in rats, "Metabolic Brain Disease", 38(1), 2023, pp. 269-286.
7. Daryadar M., Alexanyan J., Mayrapetyan S., Mayrapetyan K., Tovmasyan A., Tadevosyan A., Estimation of essential oil level in peppermint grown in the water-stream and classical hydroponic systems, "Functional Foods in Health and Disease" 13(7), 2023, pp. 361-371.
8. Ghalachyan L., Mairapetyan S., Vardanyan A., Hovhannisyan L., Daryadar M., Mairapetyan K., Ghahramanyan A., Hakobjanyan A., Tadevosyan A., The study of gross beta-radioactivity of some medicinal plants in conditions of outdoor hydroponics and soil culture in Ararat Valley, "Bioactive Compounds in Health and Disease", 6(10), 2023, pp. 243-258.
9. Matevosyan A., Tadevosyan A., Tovmasyan A., Asatryan A., Mairapetyan S. Nutritional value of soybean under outdoor hydroponics and soil conditions of the Ararat Valley, "Functional Foods in Health and Disease" 13(10), 2023, pp. 533-546.
10. Matevosyan L., Barbaryan A., Ghukasyan A., Ghazaryan R., Alikhanyan N., Shaboyan G., Organization of seed breeding activities for leguminous crops and introduction of new varieties in conditions of piedmont and mountainous zones of Armenia, EBWFF 2023 -International Scientific Conference Ecological and Biological Well-Being of Flora and Fauna (Part1), 420, 2023, pp. 1-6, 01022.
11. Sarikeyan M., Hovhannisyan F., Kirakosyan G., Hakobyan H., Shaboyan G., Hovhannisyan A., Study of the fertilizer "Multibar" for the productivity and characterization of eggplant varieties, BIO Web of Conferences, 01008.
12. Tadevosyan A., Hakobjanyan A., Tovmasyan A., Asatryan A., Roosta H.R., Daryadar M., Hypoglycemic and hypolipidemic activity of moringa grown in hydroponics and soil in Ararat Valley, "Functional Foods in Health and Disease", 13(8), 2023, pp. 398-408.
13. Vardanyan A., Ghalachyan L., Tadevosyan A., Baghdasaryan V., Stepanyan A., Daryadar M., The phytochemical study of Eleutherococcus senticosus (Rupr. & Maxim.) leaves in hydroponics and soil culture, "Functional Foods in Health and Disease", 13(11), 2023, pp. 574-583.

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Կ.Գ.Պ. Ա.Առաքելյան
 Փոխտնօրեն՝ Կ.Գ.Թ. Գ.Ցականովա
 Գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Զ.Խաչատրյան
 Էլեկտրոնային փոստ՝ imb@sci.am
 Կայքէջ՝ www.molbiol.sci.am

Մասնագիտական խորհուրդ 042՝ «Կենսաքիմիա» (Գ.00.03)

Նախագահ՝ Կ.Գ.Պ. Ս.Զախյան, գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Զ.Խաչատրյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ցույց է տրվել, որ երկարատև հիպերգլիկեմիան ճնշում է M1 ու խթանում M2 մակրոֆագերի ակտիվությունը: Համանման ազդեցություն է դիտարկվել LPS-ով բջիջների խթանման ու բջիջների իմունաբանական հիշողության ձևավորման ժամանակ: Տրվել է միելոիդային դենդրիտային բջիջների (CD14⁺CD16⁻), մոնոցիտների ու մակրոֆագերի միջև միջանկյալ բջիջների (CD14⁺CD16⁺) և հասուն մակրոֆագերի (CD14⁺CD16⁺) ֆունկցիոնալ, տրանսկրիպցիոն ու ֆենոտիպային նկարագրությունը: Ցույց է տրվել, որ օստեոարթրիտով հիվանդների մոտ դենդրիտային բջիջների համեմատ մակրոֆագերի ու մոնոցիտների ավելի մեծ տոկոսն ասոցացված է հիվանդության զարգացման հետ (դեկ.՝ Կ.Գ.Թ. Գ.Մանուկյան):

Հաստատվել է, որ բոլոր *K. pneumoniae* ST395 շտամերում կարբապենեմների նկատմամբ կայունության մեխանիզմ է մետալո-բետա-լակտամազ NDM-1-ի արտադրությունը: Բացահայտվել է, որ բոլոր կարբապենեմակայուն *K. pneumoniae* կլինիկական շտամերը զգայուն են *Klebsiella* բակտերիոֆագերի կոմերցիոն պատրաստուկների («МИКРОГЕН», ՌԴ) նկատմամբ, որոնք կարող են ծառայել որպես այլընտրանք/հավելում դրանց դեմ պայքարելու համար (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Սեդրակյան):

In silico մոդելավորման հետազոտություններում ստացվել է մարդու կոմպլեմենտի համակարգի մաննան-կապող լեկտին սպիտակուցի մոնոմերի ամբողջական տարածական կառուցվածքը՝ ներառյալ մինչ այժմ անհայտ 1-107 ամինաթթվային հիմքերից բաղկացած հատվածը:

Երկաթի, ցինկի ու պղնձի հելատորներով հիտոզանային միացությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք նվազեցնում են մարդու արյան նմուշներից անջատված էրիթրոցիտներում հեմոլիզի ու օքսիդատիվ սթրեսի մակարդակները, ինչը վկայում է դրանց հակաօքսիդանտային հատկությունների մասին (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Յականովա):

Ցույց է տրվել, որ բնական ծագման հակաբորբոքային ակտիվություն ունեցող տետրանդրին ու բերբամին միացությունները ճնշում են խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի ակտիվությունը՝ արգելափակելով վիրուսի մուտքը բջիջներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Հ.Զաքարյան):

In silico հետազոտություններում հայտնաբերվել են մոդուլատոր մոլեկուլներ, որոնք փոխազդում են ինչպես ընտանեկան միջերկրածովյան տենդի հետ կապված պիրին սպիտակուցի մուտացված (M694I) հատվածի, այնպես էլ մուտացված սպիտակուցի և 14-3-3 իզոֆորմների հետ անմիջապես փոխազդեցության կայքում (S209A և S208-209A) (ղեկ.՝ Կ.գ.դ. Կ.Նազարյան):

Եղեգիս քարանձավում (Վայոց Ձորի մարզ) պեղումների ժամանակ հայտնաբերվել է ավելի քան 3000 ոսկրային մնացորդ, որոնցից 400-ը հետազոտվել են ZooMS, 80-ը՝ կայուն իզոտոպների մեթոդներով: Հաստատվել է բոլոր 400 նմուշների տաքսոնոմիական պատկանելությունը տեսակի ու ցեղի մակարդակով: Ռադիոածխածնային մեթոդով (14C) որոշվել է պղնձի դարաշրջանին պատկանող հնագիտական 10 շերտերի թվագրումը (ղեկ.՝ Կ.գ.դ. Լ.Եպիսկոպոսյան):

Ցույց է տրվել, որ մարդու նորմալ կաթնագեղձի էպիթելային բջիջներում (HMEC) շրջակա միջավայրի աղտոտիչ Bisphenol A-ի էկոլոգիապես համապատասխան կոնցենտրացիայի (10^{-8} Մ) ազդեցությունը 24 ժամ հետո առաջացնում է *BRCA1* գենի պրոմոտորի մեթիլացում, որը պահպանվում է մինչև 72 ժամ: Այս տվյալները ենթադրում են պոտենցիալ փոխկապակցում քիմիական գենոտոքսիկության ու էպիգենետիկական փոփոխությունների միջև ԴՆԹ մեթիլացման ձևով (ղեկ.՝ Կ.գ.թ. Ն.Բաբայան):

Էլեկտրոֆիզիոլոգիական մեթոդներով ամբողջությամբ բնութագրվել են *KCNB1* գենի կլինիկական տարբերակները, որոնք ասոցացվում են մարդու զարգացման ու էպիլեպտիկ էնցեֆալոպաթիա հիվանդության հետ: Հաստատվել են մուտացիաներով պայմանավորված սպիտակուցի ֆունկցիայի խաթարման տարատեսակները՝ անցուղու դարպասման ու իոնային ընտրողականության փոփոխություններ, սպիտակուցների սինթեզման ու ներբջջային տեղափոխման խաթարումներ: Ցույց է տրվել, որ մուտացիաների մի խումբը ցուցաբերում է գերիշխող բացասական ազդեցություն (loss of function), իսկ մյուսը՝ ֆունկցիայի ուժեղացում (gain of function) սպիտակուցի C-տերմինալի հատվածի կորստի պայմաններում (ղեկ.՝ Կ.գ.թ. Վ.Վարդանյան):

18. Ohanyan N., Manukyan A., Harutyunyan R., Chailyan S., Danielyan K. Harutyunyan L., Diagnosis of glioblastoma based on the measurement of activity of some enzymes, *Bulletin of the Medical College after Mehrabyan, Scientific & Methodical Journal*, v.14, 2023, pp.139-150, DOI:10.53821/1829040X-2023.14-139.
19. Sahakyan L., Movsesyan N., Teaching of medical biochemistry according to clinical realities, *Word J. Adv. Res. Rev.*, v. 20, N 3, 2023, pp. 23-29. <https://dx.doi.org/10.30574/wjarr>.
20. Sarukhanyan F., Hunanyan O., Zakaryan H., Hemorphins – a Family of Atypical Opioid Peptides, “*Neurochemical Journal*”, v. 17(4), 2023, pp. 648-653, DOI:10.1134/S1819712423040207
21. Simonyan R., Babayan M., Yekmalyan H., Alexanyan A., Simonyan G., Alexanyan S., Darbinyan L., Simonyan K., Simonyan M., Isolation and purification of superoxide-producing protein complex from *Helianthus tuberosus*, *Daucus sativus*, and *Solanum tuberosum*, *Pharmacophore*, v.14, N 5, 2023, pp. 107-111, <https://doi.org/10.51847/XdwSHDmxQr>
22. Simonyan R., Chichoyan N., Manukyan A., Feschyan S., Simonyan G., Babayan M., Yekmalyan H., Aleksanyan A., Aleksanyan S., Simonyan M., Superoxide-producing thermostable associate from flaxseeds, flaxseed cake and sunflower seeds: isolation, purification, properties and mechanism of superoxide production, *Ученые записки ШГУ*, N 2, Выпуск А, 2023, с. 69-79.
23. Sukiasyan A., Madoyan R., Alchujyan N., Atoyan V., Sargsyan H.Jr, Sargsyan H., Chailyan S., Bacteriocin-producing probiotic lactic acid bacteria against hospital strains of *Staphylococcus aureus* and *Escherichia coli*, *Medical & Clinical Research*, v. 8 (12), 2023, pp. 1-7, ISSN: 2577-8005, <https://doi.org/10.1186/s12868-023-00838-9>

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Լ.Թավադյան
Գիտքարտուղար՝ տեխ.գ.թ. Լ.Գասպարյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի, Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի, Երկրաբանական գիտությունների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտները, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 5 ակադեմիկոս, 5 թղթակից և 18 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում բաժանմունքն անցկացրել է 1 ընդհանուր ժողով, հանձնաժողովի 6 և բյուրոյի 10 նիստեր, 2 խորհրդակցություն:

Բաժանմունքի ապրիլի 20-ի տարեկան ընդհանուր ժողովում լսվել են 2022թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության վերաբերյալ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի ու ինստիտուտների տնօրենների տարեկան հաշվետվությունները, բաժանմունքի առաջատար գիտնականների զեկուցումներն իրենց գիտական գործունեության ոլորտի, գիտական նվաճումների վերաբերյալ:

Բաժանմունքի հանձնաժողովների նիստերում լսվել և քննարկվել է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ «Լաք էթինոլ» վտանգավոր քիմիական թափոնի վտանգի գնահատման ու դրա անվտանգ վերացման հարցը, ներդրումային 2 ծրագիր: Քննարկվել է «Լավագույն գիտական աշխատանք» անվանակարգում ներկայացված 7 հայտ, հաստատել են I-VII տեղերում հավակնող հայտատուների աշխատանքները, գիտական ու փորձարարական լաբորատորիաների կենտրոնի ստեղծման ծրագիրը, ԳԱԱ կարևոր նախաձեռնությունների և ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին վերաբերող հարցերը:

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2024թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտերը, բաժանմունքի ու ինստիտուտների 2023թ. աշխատանքային պլանը, 2024-25 ուստարվա ԳԱԱ առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի, «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հագեցվածության բարելավում և արդիականացում» և «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» 2023թ. ծրագրի շրջանակում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման բաժանմունքի գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը: Քննարկվել են ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների կողմից ներկայացվող 2023-27թթ. զարգացման հնգամյա ծրագրերը, գիտական կազմակերպությունների՝ գիտական ստորաբաժանումներին առաջադրվող նախնական պահանջները, ՀՀ կառավարության «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային, գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևերով պետական ֆինանսավորման կարգերը հաստատելու մասին» որոշման նախագիծը, պրոբլեմային խորհուրդների ձևավորման, ԳԱԱ 80-ամյակի հուշամեդալով ինստիտուտ-

ների աշխատակիցներին պարգևատրելու, ԳԱԱ ինստիտուտների աշխատակիցներին արտերկիր գործուղման հարցերը:

Քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ու պետական նպատակային-ծրագրային ծրագրերի 2023թ. հաշվետվությունները:

Բաժանմունքի ինստիտուտները տպագրել են 221 հոդված՝ գրախոսվող ամսագրերում 193 (119-ն արտասահմանում), գիտաժողովների նյութերում՝ 28 (22-ն արտասահմանում), 145 թեզիս (71-ն արտասահմանում), 7 մենագրություն (4-ն արտասահմանում), 1 ուսումնական ձեռնարկ և ստացել 5 արտոնագիր:

Բաժանմունքի ինստիտուտներում պաշտպանվել է 8 թեկնածուական ատենախոսություն:

Բաժանմունքը մասնակցել է ինստիտուտների տարեկան ժողովներին ու ստացված արդյունքների քննարկմանը:

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ս.Մինասյան
Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան
Գիտքարտուղարի ժ/պ՝ Լ.Սեդրակյան
Էլեկտրոնային փոստ՝ ichph@ichph.sci.am
Կայքէջ՝ www.chph.sci.am

Մասնագիտական խորհուրդ 017՝ «Քիմիա»

Նախագահ՝ ակ. Լ.Թավադյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Սարգսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ֆուրյե ձևափոխման ինֆրակարմիր ու մագնիսառեզոնանսային սպեկտրաչափական եղանակներով ցույց է տրվել, որ ուսումնասիրվող սելեն-օրգանական միացություններն օժտված են հակահիդրոպերօքսիդային/հակաօքսիդիչային հատկությամբ և առաջարկվել է մոդելային լիպիդային հիդրոպերօքսիդի՝ կումոլի հիդրոպերօքսիդի հետ փոխազդեցության ռեակցիայի մեխանիզմը:

Թթվածնակենտրոն ռադիկալների նկատմամբ կլանման տարողության որոշման (ORAC) և ուլտրամանուշակագույն-տեսանելի սպեկտրաչափական եղանակներով ջրային միջավայրում կինետիկորեն հաշվարկվել են B խմբի ջրալուծ վիտամին ֆոլաթթվի կոֆերմենտային կառուցվածքային ածանցյալ 5-ֆորմիլ-տետրահիդրոֆոլաթթվի հակա-ռադիկալային տարողություններն ըստ պերօքսիլային ու կայուն 2,2-դիֆենիլ-1-պիկրիլիդիդրազիլ (ԴՖՊՀ) ռադիկալների:

Ցույց է տրվել, որ ջրային լուծույթում մեթիլեն կապույտ ներկի քայքայման ռեակցիայում վոլֆրամի օքսիդի փոքր քանակությունների ներմուծումը տիտանի նանոերկօքսիդ (TiO_2/WO_3) մաքուր TiO_2 -ի համեմատ տեսանելի լույսի ազդեցությամբ ցուցաբերում է բարձր ֆոտոկատալիզային ակտիվություն: Դիտարկվել է ֆոտոկատալիտիկ ռեակցիայի ընթացքի մեխանիզմը (դեկ.՝ ակ. Լ.Թավադյան):

Միկրոալիքային ճառագայթման պայմաններում սինթեզվել են լանթանոիդային խմբի մետաղների հեքսաբորիդներ՝ որպես ելանյութ առաջին անգամ օգտագործելով համապա-

տասխան մետաղների օքսիդներ (լանթանոիդային խմբի մետաղների ամենամատչելի հումքը) ու տարրական բորը: Լանթանոիդների հեքսաբորիդներն ունեն լայն կիրառություն էլեկտրոնային արդյունաբերության մեջ, սակայն դրանց սինթեզի եղանակներն էներգատար են և օգտագործվում են թանկարժեք ելանյութեր: Օպտիմալացված միկրոալիքային եղանակով օքսիդների 100%-ոց փոխարկումը հեքսաբորիդների տեղի է ունենում շատ ավելի արագ՝ 10 րոպեի ընթացքում, որի արդյունքում ստացվում են միկրոնային չափսերով հեքսաբորիդների խորանարդաձև բյուրեղներ (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

Էթանոլի առաջացմանը հանգեցնող հիդրօքսիէթիլ ու էթօքսի ռադիկալների՝ ացետալդեհիդի ու ֆորմալդեհիդի հետ փոխազդեցության մեխանիզմների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով իրականացվել են $C_2H_5OH + CH_3CO$ ու $C_2H_5OH + HCO$ համակարգերի պոտենցիալ էներգիայի մակերևույթների (ՊԷՄ) քվանտաքիմիական ուսումնասիրություններ: ՊԷՄ-երի վրա տեղայնացվել են ուսումնասիրվող ռեակցիաների ռեագենտներին ու արգասիքներին համապատասխանող, բացահայտված նախա- ու հետռեակցիոն կոմպլեքսային վիճակները:

Քվանտաքիմիական եղանակներով ուսումնասիրվել է հիդրոպերօքսիդային ռադիկալի փոխազդեցության մեխանիզմը էթիլենի հետ: Հաշվարկվել են $C_2H_4 + HO_2 \rightarrow C_2H_3 + H_2O_2$ ու $C_2H_4 + HO_2 \rightarrow C_2H_5O_2$ ռեակցիաների ակտիվացման էներգիաներն ու էնթալպիաները:

Թվային մոդելավորման եղանակով իրականացվել է ջրածնի օքսիդացման շղթայական ռեակցիայի վրա SO_2 գազի ազդեցության վերլուծություն: Ստացված հաշվարկված տվյալները համապատասխանում են փորձարարական արդյունքներին:

Ուսումնասիրվել է գազաֆազ ռեակցիաների հետազոտման ռեակտորներում հետադարձ կապի հետևանքով առաջացած տատանողական երևույթների ազդեցությունը ռեակցիոն միջավայրի ստացիոնար ռեժիմի վրա՝ կախված ռեակտորի սիմետրիայից: Ստացված արդյունքները վկայում են ռեակտորում կանգուն ալիքների դաշտի առաջացման հնարավորության մասին:

Ուսումնասիրվել է պրոպանի սառը բոցային օքսիդացումը ելանյութերի բաղադրության $C_3H_8 : O_2 = 1:1 \div 6:1$ տիրույթում: Ցույց է տրվել, որ պրոպանի կոնցենտրացիայի բարձրացումը նպաստում է մեթանի առաջացմանն այն դեպքում, երբ ռեակցիայի մյուս արգասիքների առաջացումը նվազում է (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Արսենտև):

Էլեկտրաթերմոգրաֆիական եղանակով կոբալտի օքսիդի (CoO) ջրածնով բարձրջերմաստիճանային ($900-1250^\circ C$) վերականգնման կինետիկայի ու մեխանիզմի ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ վերականգնման ռեակցիան ընթանում է հստակ արտահայտված ինդուցիոն տիրույթով, որին հետևում է պրոցեսի կտրուկ ինքնաարագացումը: Արդյունքում փոխարկման աստիճան-ժամանակ կինետիկական կորերն ունեն S-աձև տեսք, ինչը բնութագրական է սաղմնագոյացման ու դրանց աճի մեխանիզմով ընթացող տոպոքիմիական ռեակցիաների համար: Պրոցեսի կինետիկայի վրա ավելի մեծ է ջրածնի ճնշման ազդեցությունը, քան ջերմաստիճանի:

Ուսումնասիրվել է գծային օրենքով $4B+C$ խառնուրդի տաքացման արագության ազդեցությունը բորի կարբիդի առաջացման օրինաչափությունների վրա տաքացման արագությունների լայն տիրույթում ($100-5000^\circ C$ /րոպե): Տարբեր բնութագրական ջերմաստիճաններից արագ սառեցված նմուշների ռենտգենաֆազային ու էլեկտրոնային մանրազննության հետազոտություններով ցույց է տրվել, որ սկսած $200^\circ C$ տաքացման արագությունից դիտվում է ոչ մեծ ջերմանջատում ($T=50-80^\circ C$), որը հանգեցնում է խառնուրդի քանակական փոխարկման՝ $50-250$ նմ չափերով B_4C կարբիդի մասնիկների առաջացումով:

Նիկելի նիտրատ-հեքսամեթիլենտետրամին համակարգում ուսումնասիրվել է լուծույթների այրմամբ սինթեզի մեխանիզմը՝ նպատակ ունենալով ստանալ նիկելի նանոմասնիկ-

ներ: Զերմային անալիզի ու մասսպեկտրոսկոպիայի եղանակների կիրառմամբ հետազոտությունները, համակցված այրման պարամետրերի չափումների հետ, թույլ են տվել հաստատել, որ պրոցեսը ներառում է օքսիդիչի (նիտրատի) բազմափուլ քայքայում՝ NiO-ի առաջացմամբ և վառելիքի սուբլիմացիա՝ գազային ֆազում հետագա քայքայմամբ մինչև ազոտ, հիդրազին ու մեթան: N_2H_4 -ի ու CH_4 -ի բավարար քանակությունների դեպքում NiO-ն վերականգնում է մինչև նանոչափսի նիկելի: Ցույց է տրվել, որ սինթեզված նիկելը հեշտությամբ եռակալվում է 773 K ջերմաստիճանում՝ կարճ ժամանակահատվածում ձևավորելով 90%-ից բարձր հարաբերական խտությամբ կոմպակտ նմուշներ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

Բարձրջերմաստիճանային ինքնատարաձվող սինթեզի (ԲԻՍ) ու հիդրիդային ցիկլի (<Ց) եղանակների համադրմամբ Ti-Zr-Al-C, Ti-Al-N և T-Zr-Hf-Nb-V-Al-C համակարգերում սինթեզվել են գործնական հետաքրքրություն ներկայացնող MAX-ֆազեր՝ որպես ելանյութեր օգտագործելով ԲԻՍ եղանակով սինթեզված անցումային մետաղների (Ti, Zr, Hf, Nb և այլն) կարբոհիդրիդներ ու հիդրիդոնիտրիդներ: Ուսումնասիրվել են ստացված համաձուլվածքների ու միացությունների ֆիզիկաքիմիական և կառուցվածքային առանձնահատկությունները (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ս.Դուլուխանյան):

Մշակվել է համակարգչային մոդելավորման ծրագիր՝ տարբեր ձևի ու չափերի պլազմոնային նանոմասնիկների կլանման առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով: Մշակվել է քիմիական սինթեզի լուծույթային հակադարձ թորման եղանակ, որն ապահովում է տարբեր կոնցենտրացիայով ալյումինի լեգիրմամբ նախընտրելի բնութագրերով բարձրորակ գնդային նանոմասնիկներ: Ցույց է տրվել, որ ZnO բյուրեղում Al-ի քանակի ավելացմանը զուգընթաց արգելված գոտու լայնությունը մեծանում է: Ալյումինով լեգիրված ցինկօքսիդային նանոմասնիկներն ունեն ընդգծված ռեզոնանսային կլանման մաքսիմում միջին ինֆրակարմիր տիրույթում, ընդ որում, երբ կոնցենտրացիան աճում է 1%-ից մինչև 5%, կլանման մաքսիմումը տեղափոխվում է 2700-1200 նմ ալիքի երկարության տիրույթ, իսկ կլանման ինտենսիվությունն աճում է ավելի քան 10 անգամ: ԻԿ տիրույթում կլանումն ու դրա ղեկավարումն ունեն կարևոր նշանակություն հատուկ սարքերում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Երանոսյան):

Ցույց է տրվել, որ արտաքին փոփոխական դաշտում գտնվող քառաչափ քվանտային տատանակը (օսցիլյատոր) լրացուցիչ պայմանի դեպքում կարող է նկարագրել ջրածնի ատոմի առկայությամբ ընթացող գործնականորեն բոլոր տեսակի ֆիզիկաքիմիական պրոցեսները: Ցույց է տրվել, որ ոչ ստացիոնար 4D-իզոտրոպ տատանակի օրինակի վրա, ավելի փոքր չափանի էտալոնային դիֆերենցիալ հավասարման միջոցով, սկզբնական Շրոդինգերի հավասարումը կարելի է բերել ինքնավար (ավտոնոմ) տեսքի: Ապացուցվել է, որ գոյություն ունի նոր տիպի դինամիկ համաչափություն, որը պահպանում է քվանտային համակարգի շարժումը նկարագրող հավասարման ինվարիանտությունը ժամանակի ընթացքում: Այն բանից հետո, երբ հաջողվում է սկզբնական հավասարումը բերել ինքնավար տեսքի, հնարավոր է դառնում փոխազդեցության մեջ գտնվող ջրածնի ատոմի ալիքային ֆունկցիան կառուցել ճշգրիտ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Կովի, խոզի ու ջալյամի ոսկորներից հիդրօքսիապատիտ ստանալու նպատակով դրանք ենթարկվել են ջերմամշակման (կալցինացման), և ընտրվել է կալցինացման օպտիմալ ջերմաստիճանը (900°C) մաքուր նպատակային նյութ ստանալու համար, որից 3D տպագրությամբ պատրաստվել են կենսահամատեղելի դետալներ: Մշակվել է կալցինացման նմուշներից փոշիների ստացման եղանակ՝ օգտագործելով մոլորակային գնդադաշտ, ընտրվել են մանրացման ու մինչև 1 մկմ չափերով փոշիներ ստանալու օպտիմալ պարամետրերը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Բացահայտվել է չտարամիտող Բեսեյյան լազերային փնջերի ազդեցությունն ուղղա-

հայաց կապված գլանային քվանտային կետերի գծային ու ոչ գծային օպտիկական հատկությունների վրա: Հետազոտվել է նաև նշված քվանտային կետերից բաղկացած անսամբլի կողմից Թալբոտի երևույթի առաջացումը:

Կոնական քվանտային կետերի օպտիկական, մասնավորապես էքսիտոնային ռամանյան ցրման, միջգոտիական կլանման ու ֆոտոլյումինիսցենցիայի հետազոտություններով, երկրաչափական հատկություններից կախված քվանտային կետերի էլեկտրոնային հատկությունների փոփոխությունները դիտարկելու համար իրականացվել է FEM եղանակով դրանց մոդելավորում: Ստացված արդյունքները թույլ են տվել մշակել քյուբիթների կառավարման նոր եղանակ՝ հիմնված կիսահաղորդչային քվանտային կետերի վրա (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Պ.Մանթաշյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ցույց է տրվել, որ միցելային ջրային լուծույթում մոդելային լիպիդի՝ մեթիլլինոլեատի ինքնաօքսիդացման շղթայական ազատ-ռադիկալային ռեակցիայում ընտրված սելեն-օրգանական միացություններից դիֆենիլսելենիդն ու դիֆենիլսելենօքսիդը ցուցաբերում են հակապերօքսիդային ակտիվություն, իսկ դիֆենիլդիսելենիդը կատալիզում է այդ ռեակցիան: Դիֆենիլսելենիդն ու դիֆենիլսելենօքսիդը տրոլոքսի ու քվերցետինի հետ դրսևորում են ոչ ադիտիվ սիներգետիկ ազդեցություն:

Թթվածնակենտրոն ռադիկալների նկատմամբ հակաօքսիդիչ տարողության որոշման (ORAC), ելանյութերի իմպուլսային ներարկման կինետիկական ԷՊՌ և ուլտրամանուշակագույն տեսանելի սպեկտրաչափական եղանակներով կինետիկորեն քանակապես որոշվել են ըստ կառուցվածքի ընտրված թվով ինը կենսաֆլավոնոիդների շարքի հակա-ռադիկալային տարողությունները պերօքսիդային ու կայուն ԴՖՊՀ ռադիկալների նկատմամբ: Կազմվել է հակառադիկալային ակտիվության շարք:

Քվանտաքիմիական հաշվարկներով խտության ֆունկցիոնալի տեսության (DFT) B3LYP և M06-2X հիբրիդային եղանակների ((6-31G(d,p) բազիսային ֆունկցիաներ) օգնությամբ քանակապես գնահատվել են ֆոլատների (ֆոլաթթու, դիհիդրոֆոլաթթու, տետրահիդրոֆոլաթթու, 5-ֆորմիլ տետրահիդրոֆոլաթթու) հակառադիկալային (հակա-օքսիդիչային) ունակությունները բենզոլում: Ըստ ջրածնի ատոմի փոխանցման ռեակցիայի ընթացքի երեք մեխանիզմների՝ HAT, SPLET և SET-PT, բացահայտվել են ֆոլատների հակառադիկալային ռեակցման կենտրոնները, ստացվել է ակտիվության շարք:

Ֆլյուորեսցենտային սպեկտրաչափական ու էլեկտրաքիմիական եղանակներով բացահայտվել են մորինի՝ ԴՆԹ-ի հետ կապման քանակական բնութագրերը՝ կապման ձևերը, կոմպլեքսագոյացման հաստատունները (K) և հակաօքսիդիչի մեկ կապված մոլեկուլին բաժին ընկնող ԴՆԹ հիմքերի զույգերի թիվը (n) (ղեկ.՝ ակ. Լ.Թավադյան):

Հիմնվելով թերմոդինամիկական հաշվարկների ու կարբիդների սինթեզի բնագավառում ձեռք բերված փորձառության վրա՝ իրականացվել է մոլիբդենի ու վոլֆրամի կարբիդների միկրոալիքային սինթեզ՝ տարբեր մետաղների քիչ քանակությունների ներմուծմամբ, տարբեր տիպի կրիչների համակցությամբ (Mo_2C , $\text{Mo}_2\text{C}'$ ածխի ու $\gamma\text{-Al}_2\text{O}_3$ կրիչների համակցությամբ, Ni, Cu, Co, Pt մետաղների քիչ քանակությունների ներմուծումը Mo_2C ու Ni, Cu, Co, Fe, Mn մետաղների քիչ քանակությունների ներմուծումը WC, VC, Fe-W-Mo-C խառը կարբիդներ): Սինթեզված նյութերի կատալիտիկ հատկությունները (ակտիվությունն ու ընտրողականությունը) ուսումնասիրվել են նավթալինի հիդրոգենացման ռեակցիայում (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

Լուծույթների այրման սինթեզի ու ծրագրավորված տաքացման համատեղ կիրառման

պայմաններում հնարավոր է եղել անհամեմատ ցածր ջերմաստիճանում ($<1300^{\circ}\text{C}$) իրականացնել սերպենտինի ու սիլիկահողի կարբոթերմ վերականգնում օրգանական վերականգնիչի՝ ալանինի օգնությամբ: Արդյունքում ստացվել են ցանկալի մորֆոլոգիայով, բարձր ելքով ու եռակալման բարձր ունակությամբ սիլիցիումի կարբիդի ենթամիկրոնային փոշի, ինչպես նաև մանրաթելով ամրացված $\text{SiC-Al}_2\text{O}_3$ կոմպոզիտային սպունգ (50% ծակոտկենությամբ): Բացահայտվել են սիլիցիումի կարբիդների միկրոկառուցվածքի կարգավորման լայն հնարավորությունները՝ բեղանման, մանրաթելային, նանոխողովա-կային կառուցվածքներից մինչև գնդաձև, ձողաձև կամ խոռոչավոր կառուցվածքների ստացում՝ կախված ելանյութերի ու սինթեզի եղանակի ընտրությունից:

Իրականացվել է քարաղի ու շափնեղի կառուցվածքով բաղադրությամբ, ֆերրոմագնիսական հատկությամբ բնութագրվող բարձր էնտրոպիական միաֆազ (FeCoNiMnZn)O օքսիդների (ԲԷՕ) ստացում լուծույթների այրման սինթեզի եղանակով: Բացահայտվել է շափնեղային ու քարաղի կառուցվածքով ԲԷՕ-ների երկկողմանի փոխարկման հնարավորությունը կայծապլազմային եռակալման ժամանակ: Ցույց է տրվել տարրերից մեկի փոփոխության միջոցով ԲԷՕ-ի մագնիսական հատկությունների լայն տիրույթում կարգավորման հնարավորությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Այդինյան):

Առաջարկվել է Ni_3Fe միջմետաղական միացության ստացման պարզ եղանակ՝ հիմնված լուծույթների այրման սինթեզի վրա համապատասխան մետաղների նիտրատների ու հեքսամեթիլենտետրամինի ջրային լուծույթն ազոտի միջավայրում տաքացնելու միջոցով: Սինթեզված միաֆազ Ni_3Fe միացության մագնիսական բնութագրերի չափումներով ցույց է տրվել, որ այն ֆերրոմագնիսական նյութ է և ցուցաբերում է փափուկ մագնիսներին բնորոշ հատկություններ: Ջերմակշռաչափական հետազոտությունների տվյալների վերլուծության հիման վրա քննարկվել է միջմետաղական միացության ձևավորման մեխանիզմը (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան):

Սինթեզվել են $\text{Ti}(\alpha+\beta)$ տիպի $\text{Ti}_{10}\text{Mo}_{30}\text{Zr}$, $\text{Ti}_{10}\text{Mo}_{40}\text{Zr}$, $\text{Ti}_{10}\text{Mo}_{50}\text{Zr}$, $\text{Ti}_{6}\text{Al}_{7}\text{Nb}$, $\text{Ti}_{24}\text{Nb}_{4}\text{Zr}_{8}\text{Sn}$, $\text{Ti}_{-5}\text{Al}_{-5}\text{V}_{-5}\text{Mo}_{-3}\text{Cr}_{-1}\text{Zr}$, $\text{Ti}_{-5}\text{Al}_{-2.5}\text{Fe}$, Ti-Ni և այլ կենսահամատեղելի համաձուլվածքներ ու դրանց հիման վրա՝ հիդրիդների ստացման արդյունավետ եղանակներ: Ստացված հիդրիդների փոշիները կարող են կիրառվել որպես հումք ժամանակակից տեխնոլոգիաներում (SLM – ընտրողական լազերային հալում, EBM – էլեկտրոնաճառագայթային հալում, SPS – կայծապլազմային եռակալում) օգտագործելու համար (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ս.Դուլիսանյան):

Հիդրիդային ցիկլի (<3) մոտեցման հիման վրա TiH_2 - Al համակարգում գտնվել են տետրագոնալ կառուցվածքով միաֆազ TiAl_3 և γ - TiAl , ինչպես նաև հեքսագոնալ կառուցվածքով միաֆազ α_2 - Ti_3Al տիտանի ալյումինիդների սինթեզի օպտիմալ պայմանները, բացահայտվել են դրանց առաջացման մեխանիզմները (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Մայիլյան):

Կենդանական ծագման թափոն հանդիսացող ոսկորների թրծման տեխնոլոգիայով ստացված բնական հիդրօքսիապատիտն օգտագործվել է սթերեոլիթոգրաֆի համար նախատեսված կերամիկական ֆոտոպոլիմերի պատրաստման համար որպես հումք: Մանրացման ու խառնման պարամետրերի ընտրությամբ ստացվել է եռաչափ տպագրության տեխնոլոգիական պահանջներին համապատասխանող սորուն փոշեխառնուրդ 10-50 մկմ մասնիկի միջին չափով, իսկ դրա կոմպակտացման համար ընտրվել է ընտրողական լազերային հալեցման եղանակը: Ստացված բաղադրություններով ֆոտոպոլիմերի միջոցով տպագրվել են կենսահամատեղելի, կենսաքայքայվող իմպլանտների նմուշներ, որոնցից 6-ի փորձարկումների արդյունքներով ընտրվել է հստակ արտահայտված կենսահամատեղելիության ու կենսաքայքայվողականության հատկություններով օժտված երկու նմուշ հետագա բջջաբանական հետազոտությունների համար (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Ինֆրակարմիր տիրույթի բարձր ջերմաստիճանային ֆոտոդետեկտորների մշակման ուղղությամբ համակարգչային մոդելավորմամբ ցույց է տրվել, որ MoS₂-ով պատված ZnO ձողերի պարբերական համակարգը, բազմակի անդրադարձումներով պայմանավորված, կարող է կլանել մինչև 700 նմ երկարության ալիքների 90%-ը: Մշակվել է MoS₂-ի հիմքով նանոթաղանթային կառուցվածքների ստացման PLD տեխնոլոգիա: Պատրաստվել է MoS₂-ի հիմքով ֆոտոդետեկտոր, և սենյակային ջերմաստիճանում գրանցվել է ֆոտոհոսանքի աճ 3.5-4 անգամ: Համակարգը զգայուն է ամբողջ տեսանելի, ինչպես նաև մոտ ինֆրակարմիր տիրույթում (չափումները կատարվել են մինչև 1050 նմ ալիքի երկարությունը): 400, 700 ու 1000 նմ ալիքի երկարության դեպքում համակարգի ֆոտոարձագանքն աճել է համապատասխանաբար 30, 16 և 2.5 անգամ: Տեսական մոդելավորման ու փորձով ստացված արյունքների համեմատությունը ցույց է տվել որակական համընկնում:

«Մետաղօքսիդային նանոկառուցվածքային թաղանթների հենքով պատրաստվել են գազային տվիչների ու «էլեկտրոնային քիթ» միկրոհամակարգեր»: Մշակվել են քիմիական սինթեզման զոլ-գել ու հիդրոջերմային եղանակներ, որոնք ապահովում են տարբեր կոնցենտրացիայով ալյումինի լեգիրմամբ բարձրորակ սֆերիկ նանոմասնիկների ու նանոձողերի ստացում: ԻԿ տիրույթում կլանման սպեկտրի համեմատությունը փորձառական արդյունքների հետ ցուցաբերել է բավարար համապատասխանություն: Մշակվել են մետաղօքսիդային ու պլատինային թաղանթների ստացման եղանակներ, որոնք կիրառվել են ագրեսիվ պայմաններում գործող բարձր ճնշումային գազային ու ջերմաստիճանային զգայակներում: Մշակվել են պլազմայով համակցված քիմիական գոլորշենստեցման եղանակով SiO₂, Si₃N₄ ու SiN_xO_y նուրբ թաղանթների ստացման եղանակներ, որոնք ունեն հեռանկարային կիրառություն էլեկտրոնիկայում: Նախագծվել և պատրաստվել է գազային զգայակների թեստավորման համակարգ, որն աշխատում է վակուումի պայմաններում, ունի ճնշման, ջերմաստիճանի, գազային հոսքի ճշգրիտ կարգավորման ու էլեկտրական չափումների համակարգ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Երանոսյան):

Հեղուկ շերտազատման եղանակով սինթեզվել է գրաֆենի օքսիդ (ԳՕ), ստացվել է վերջինիս հեղուկ բյուրեղային ֆազը: ԳՕ-ի լուսածրային ու թափանցող մանրազննության հետազոտությունները ցույց են տվել, որ ճառագայթման միջոցով հնարավոր է ուղղակիորեն ստեղծել ՑիսԳՕ-ի միկրոպատկերներ ԳՕ-ի կաղապարի վրա՝ առանց հատուկ դիմակների ու վիմագրման համակարգերի անհրաժեշտության: Շնորհիվ ձևավորված Ցիս-ՄՆՄ «քոր-շել» համակարգի՝ վերոնշյալ կառուցվածքը դրսևորել է մագնիսական հատկությունների տեսանկյունից բավականին հետաքրքիր վարք (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Նարագույան):

Պատրաստվել է Ta₂O₅/SiO₂/Si/Al բազմաշերտ նանոկառուցվածքային ԷՄԿՈԻ համակարգ, մշակվել է դրա զգայուն մակերևույթին ուրեազի ֆիզիկական ադսորբման միջոցով արհեստական միզանյութի հայտնաբերման ու գրանցման վոլտ-ունակային եղանակ: Ցույց է տրվել, որ սենսորով գրանցվող ազդանշանը, միզանյութի կոնցենտրացիայից կախված, աճում է գծայնորեն, իսկ միզանյութի նկատմամբ զգայունությունը 17.8 mV/dec է, որը համեմատելի է գրականության մեջ բերված արժեքների հետ (ղեկ.՝ Ա.Յոկոլայկյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Давтян А.Г., Манукян З.О., Арсентьев С.Д., Тавадян Л.А., Арутюнов В.С., Исследование поверхности потенциальной энергии реакционных систем $H + O + C_2H_4$. М., “Химическая физика”, 2023, 42(4), с. 20-30.

2. Макарян Э.М., Гукасян П.С., Арутюнян А.А., Исследование взрывного процесса окисления водорода в присутствии сернистого газа, Ер., "Хим. журн. Армении", т 76, N 1-2, 2023, с. 8-16. DOI: 10.54503/0515-9628-2023.76.1-2-8.
3. Матышак В.А., Сильченкова О.Н., Ильичев А.Н., Быховский М.Я., Мнацаканян Р.А., О механизме разложения моногидрата гидразина на Pd/Al₂O₃ методом ИК-спектроскопии *in situ*, М., "Кинетика и катализ", т.64, N 6, 2023, с. 1–12.
4. Саргсян А.А., Мнацаканян Р.А., Григорян Т.В., Казарян А.А., Петросян А.А., Арутюнян В.В., Бадалян А.О., Агамалян Н.Р., Баграмян В.В., Микроволновый синтез фотокатализатора SiO₂/ZnO со структурой ядро-оболочка, Ер., "Изв. НАН Армении. Физика", т. 58, N 4, 2023, с.601-611.
5. Aghajanyan N., Dolukhanyan S., Ter-Galstyan O., Muradyan G., Hovhannisyan A., Self-propagating high-temperature synthesis of MAX phases in Ti–Zr–Al–C system, "Ceramics International", v. 49, N 14, Part B, 2023, pp. 24165-24170, 10.1016/j.ceramint.2022.11.041
6. Akopyan A., Eseva E., Mnatsakanyan R., Davtyan D., Lukashov M., Levin I., Sadovnikov A., Anisimov A., Terzyan A., Agoyan A., Karakhanov E., Catalytic aerobic desulfurization of fuels in the presence of nanosized mixed carbide FeWC, Chemical Engineering Journal, 464, 2023, p. 142641, <https://doi.org/10.1016/j.cej.2023.142641>
7. Aleksanyan A., Dolukhanyan S., Mayilyan D., Muradyan G., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Formation of Ti₂AlN_x MAX phase by "Hydride Cycle" and SHS methods, "Ceramics International", v.49, N 14, Part B, 2023, pp. 24229-24234, 10.1016/j.ceramint.2022.11.350
8. Amirkhanyan N., Grigoryan Y., Zakaryan M., Kharatyan A., Gyulasaryan H., Harutyunyan A., Preparation of the ferromagnetic intermetallic compound Ni₃Fe by solution combustion synthesis, Journal of Contemporary Physics (NAS RA), v. 58, N 3, 2023, pp. 299–304, DOI: 10.1134/S1068337223030040
9. Amirkhanyan N., Kirakosyan H., Zakaryan M., Zurnachyan A., Rodriguez M., Abovyan L., Aydinyan S., Sintering of silicon carbide obtained by combustion synthesis, Ceramics International, v. 49, issue 15, 2023, pp. 26129-26134, <https://doi.org/10.1016/j.ceramint.2023.04.233>
10. Arsentev S., Grigoryan R., Kocharyan G., Stepanyan S., Tavadyan L., Flameless catalytic combustion of ethanol on copper, chromium, and nickel oxides, "Petroleum Chemistry", 2023, pp. 993-1001, DOI: 10.1134/S096554412306018X
11. Arzumanyan, A., Amirkhanyan N., Grigoryan Y., et al., DTA/TG study of the interaction in the nickel nitrate hexahydrate–hexamethylentetramine system, Russ. J. Phys. Chem., B17, 2023, pp. 122–127, <https://doi.org/10.1134/S1990793123010177>
12. Asatryan A., Benight A., Badasyan A., Origins of fine structure in DNA melting curves, Computational Nanotechnology, 47, 2023, <https://doi.org/10.3389/fnano.2023.1331279>
13. Aydinyan S., Combustion synthesis of MAX phases: microstructure and properties inherited from the processing pathway", Crystals, v.13, issue 7, 2023, p. 1143, <https://doi.org/10.3390/cryst13071143>
14. Bleyan Y., Sargsian T., Kostanyan A., Hayrapetyan D., Mantashyan P., Impact of intense laser Bessel beam on excitonic complexes in ellipsoidal quantum dot. Journal of Luminescence, 263, 2023, p. 120101, <https://doi.org/10.1016/j.jlumin.2023.120101> (Q2, IF=3.857)
15. Davtyan A., Manukyan Z., Arsentev D., Tavadyan L., Arutyunov V., Investigation of potential energy surfaces of reaction systems containing ethylene, hydrogen, and oxygen atoms by quantum chemical calculations, Russian Journal of Physical Chemistry, B, v. 17, N 2, 2023, pp. 336–345, DOI: 10.1134/S1990793123020239
16. Gavalajyan S., Mantashian G., Kharatyan G., Sarkisyan H., Mantashyan P., Baskoutas S., Hayrapetyan D., Optical properties of conical quantum dot: exciton-related raman scattering, interband absorption and photoluminescence, Nanomaterials, 13(8), 2023, p. 1393, <https://doi.org/10.3390/nano13081393> (Q1, IF=5.507)
17. Gevorgyan A., Bogdanov A., Time-dependent 4D quantum harmonic oscillator and reacting hydrogen atom, Symmetry, v. 15, N 1, 2023, p. 252, <https://doi.org/10.3390/sym15010252>
18. Gevorgyan A., Vanyushkin N., Efimov I., Kamenev A., Golik S., Gharagulyan H., Sarukhanyan T., Daher Malek G., Oganessian K., Strong light absorption and absorption absence in photonic crystals with helical structure in an external static magnetic field, J. Opt. Soc. Am., B 40, 2023, pp. 1986-1993, <https://doi.org/10.3390/ma16165516>

19. Ghaltaghchyan T., Khachatryan H., Asatryan K., Rstakyan V., Aghayan M., Effect of additives on selective laser sintering of silicon carbide, *Boletín de la Sociedad Española de Cerámica y Vidrio*, v. 62, 2023, pp. 504-514, <https://doi.org/10.1016/j.bsecv.2023.01.001>
20. Gharagulyan H., Melikyan Y., Hayrapetyan V., Kirakosyan Kh., Ghazaryan D., Yeranossyan M., Essential L-amino acid-functionalized graphene oxide for liquid crystalline phase formation, *Materials Science and Engineering: B*, 295, 2023, p. 116564, <https://doi.org/10.1016/j.mseb.2023.116564>
21. Gukasyan P., Makaryan E., Arutyunyan A., Davtyan A., Temperature dependence of the oxidation of hydrogen with sulfur dioxide, *Russian Journal of Physical Chemistry, A*, 2023, v. 97, N 8, pp. 1826-1831, DOI: 10.1134/S0036024423080083
22. Hakobyan E., Baghdasaryan D., Kazaryan E., Mantashyan P., Hayrapetyan D., Nonlinear optical properties of coupled quantum dots in peanut configuration, *Philosophical Magazine*, 103(20), 2023, pp. 1911-1926, <https://doi.org/10.1080/14786435.2023.2243451> (Q3, IF=1.673)
23. Hayrapetyan D., Relativistic correction of biexciton fine structure in ellipsoidal quantum dots, *Physica B: Condensed Matter*, 2023, p. 415060, (Q2, IF=2.884)
24. Hovhannisyan A., Dolukhanyan S., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Asatryan K., Mnatsakanyan S., Mardanyan S., Muradyan G., Synthesis of non-stoichiometric carbides and carbohydrides of Ti and Ti-Nb using self-propagating high-temperature synthesis technique, *“Materialia”*, v. 30, 2023, p. 101820, 10.1016/j.mtla.2023.101820
25. Khachatryan H., Sahakyan A., Khachatryan L., Holovenko Y., Ghaltaghchyan T., Antounian F., Aghayan M., Designing and additive manufacturing of load-bearing lattice structures for patient-specific talus implants, *Heliyon*, 2023, p. 21, <http://dx.doi.org/10.2139/ssrn.4480215>
26. Kumar R., Torres H., Aydinyan S., Antonov M., Varga M., Hussainova I., Rodriguez R., Tribological behavior of Ni-based self-lubricating claddings containing sulfide of nickel, copper, or bismuth at temperatures up to 600 C, *Surface and Coatings Technology*, v. 456, 2023, p. 129270, <https://doi.org/10.1016/j.surfcoat.2023.129270>
27. Kuskov K., Nepapushev A., Aydinyan S., Shaysultanov D., Stepanov N., Nazaretyan Kh., Kharatyan S., Zakharova E., Belov D., Moskovskikh D., Combustion synthesis and reactive spark plasma sintering of non-equiatomic CoAl-based high entropy intermetallics, *Materials*, 16(4), 2023, p. 1490, <https://doi.org/10.3390/ma16041490>
28. Makaryan E., Gukasyan P., Arutyunyan A., Studying the nature of light flashes in the explosive oxidation of hydrogen with SO₂, *Russian Journal of Physical Chemistry, A*, v. 97, N 8, 2023, pp. 1838–1841, DOI: 10.1134/S0036024423080150
29. Mantashyan P., Mantashian G., Hayrapetyan D., Talbot effect in InAs/GaAs coupled cylindrical quantum dots ensemble, *Physica E: Low-dimensional Systems and Nanostructures*, 148, 2023, p. 115662, <https://doi.org/10.1016/j.physe.2023.115662> (Q2, IF=3.505)
30. Mantashian G., Mantashyan P., Hayrapetyan D., Modeling of quantum dots with the finite element method, *Computation*, 11(1), 2023, p. 5, <https://doi.org/10.1016/j.physb.2023.415060> (Q2, IF=2.452)
31. Mantashian G., The contribution of edge number on the optical properties in ZnO pyramidal quantum dots, In *Quantum Optics and Photon Counting 2023*, v. 12570, 2023, pp. 88-99, SPIE. <https://doi.org/10.1117/12.2664648> (Q4, IF=0.367)
32. Markarian Sh., Ghazoyan H., Sargsyan H., Grigoryan G., Chaban V., Sahakyan A., Tavadyan L., Diphenylsulfide exhibits an outstanding solubility in methanol: Physicochemical and quantum chemical evidences. Comparison to acetonitrile, *Journal of Molecular Liquids*, 389:, 2023, p. 122924, <https://doi.org/10.1016/j.molliq.2023.122924>
33. Mayilyan D., Aleksanyan A., Formation of Ti-3Al-2.5V alloy by hydride cycle method, *Russian Journal of Physical Chemistry B*, v. 17, N 5, 2023, pp. 1177–1182, 10.1134/S199079312305007X
34. Mayilyan D., Aleksanyan A., TiFe hydrogen storage alloys produced by “Hydride Cycle” method, *Russian Journal of Physical Chemistry A*, v. 97, N 13, 2023, pp. 205–210, 10.1134/S003602442313006X
35. Mayilyan D., Aleksanyan A., Synthesis of Ti-5Al-2.5Fe alloy and its hydride by HC and SHS methods, *International Journal of Self-Propagating High-Temperature Synthesis*, v. 32, N 4, 2023, pp. 268-272.
36. Mnatsakanyan R., Aghoyan A., Davtyan D., Microwave-assisted synthesis of boron monophosphide nanopowder, *Ceramics International*, v. 49, N 2, 2023 pp. 3066-3069, <https://doi.org/10.1016/j.ceramint.2022.10.330>

37. Muradyan N., Arzumanyan A., Kalantaryan M., Vardanyan Y., Yeranossyan M., Ulewicz M., Laroze D., Barseghyan M., The Use of biosilica to increase the compressive strength of cement mortar: The effect of the mixing method, *Materials* 16, 2023, p. 5516, <https://doi.org/10.1016/j.mseb.2023.116564>
38. Muradyan G., Dolukhanyan S., Aleksanyan A., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Asatryan K., Mardanyan S., Hovhannisyan A., Synthesis in hydride cycle of Ti–Al–C based MAX phases from mixtures of titanium carbohydrides and aluminum powders, *Ceramics International*, v. 49, N 14, Part B, 2023, pp. 24171–24178, [10.1016/j.ceramint.2022.11.125](https://doi.org/10.1016/j.ceramint.2022.11.125)
39. Muradyan G., Dolukhanyan S., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Asatryan K., Mardanyan S., Mnatsakanyan S., Hovhannisyan A., Synthesis in hydride cycle of near- α Ti-8Al-1Mo-1V alloy, *Metallurgical and Materials Transactions A*, v. 54, 2023, pp. 4272–4282, [10.1007/s11661-023-07161-2](https://doi.org/10.1007/s11661-023-07161-2)
40. Nazaretyan Kh., Aydinyan S., Kirakosyan H., Moskovskikh D., Tumanyan M., Zargaryan A., Traksmas R., Kharatyan S., AlCoNiFe and AlCoNiFeCr high entropy alloys: synthesis and interaction pathway at high heating rates, *J Alloys & Compounds*, v. 931, 2023, 167589, <https://doi.org/10.1016/j.jallcom.2022.167589>
41. Poghosyan N., Poghosyan M., Arsentev S., Strekova L., Arutyunov V., The effect of the mixture composition on the oxidation of propane in the stabilized cool-flame mode, *Russian Journal of Physical Chemistry B*, 2023, v. 17, N 5, pp. 1130–1134, DOI: 10.1134/S1990793123050081
42. Sahakyan A., Kocharyan G., Tavadyan L., Reactions of diphenylselenide and diphenylselenoxide with cumene hydroperoxide, *Chem. J. of Armenia*, v. 76, N 3, 2023, pp. 212–217.
43. Sargsian T., Mantashyan P., Hayrapetyan D., Effect of Gaussian and Bessel laser beams on linear and nonlinear optical properties of vertically coupled cylindrical quantum dots, *Nano-Structures & Nano-Objects*, 33, 2023, p. 100936, <https://doi.org/10.1016/j.nanoso.2022.100936>, (Q1, IF=5.914)
44. Sargsian T., Electronic states in a cylindrical quantum dot under the Influence of Gaussian and Bessel laser beams, *Journal of Contemporary Physics (NAS RA)*, 58(1), 2023, pp. 38–44, <https://doi.org/10.1134/S1068337223010164> (Q4, IF=0.584)
45. Sargsyan G., Gukasyan P., Sargsyan H., Poveda R., Diffusion flames and a semi-empirical method for estimating the distribution of hydrogen molecules in propane flames, *Scientific Herald of Uzhhorod University, Series "Physics"*, v. 53, 2023, pp. 42–52, <https://doi.org/10.54919/physics/53.2023.42>
46. Sargsyan G., Evinyan M., Ghukasyan P., Sargsyan H., Possibility of a point explosion due to the presence of UV radiation and mercury vapor in the reaction medium for oxidation of organic compounds on the example of propane, *Journal of Contemporary Physics (NAS RA)*, v. 58, N 3, 2023, pp. 245–250, DOI: 10.1134/S1068337223030143
47. Sarikeyan K., Hovhannisyan F., Kirakosyan G., Hakobyan A., Shaboyan G., Hovhannisyan A., Study of the fertilizer “Multibar” for the productivity and characterization of eggplant varieties, “BIO Web of Conferences”, v. 71, 2023, 01008, <https://doi.org/10.1051/bioconf/20237101008>
48. Tavadyan L., Tonikyan H., Sahakyan A., Musaelyan M., Reactivity of *tert*-butylperoxyl radical with some phenylthiazolidine derivatives and probucol, *International Journal of Chemical Kinetics*, 55(10):, 2023, pp. 662–669, <https://doi.org/10.1002/kin.21676>
49. Tavadyan L., Martoyan S., Kocharyan G., Kamal-Eldin A., Kinetic modeling of the reversal of antioxidant potency of α -, β -, γ - and δ -tocopherols in methyl linoleate peroxidation, *Food Chemistry*, 406: 2023, 134866, <https://doi.org/10.1016/j.foodchem.2022.134866>
50. Rstakyan V., Mkhitarian L., Torosyan M., Karabekian Z., Sevoyan G., Aghayan M., Rodríguez M., Manufacturing of bioactive biodegradable scaffolds by stereolithography, *Advances in Science and Technology*, v. 134, 2023, pp. 3–12, <https://doi.org/10.4028/p-ily5jt>
51. Zakaryan M., Amirkhanyan N., Nazaretyan Kh., Kharatyan S., Manukyan Kh., Combustion synthesis mechanism of the $\text{Ni}(\text{NO}_3)_2$ + hexamethylenetetramine solutions to prepare nickel nanomaterials, *Combustion and Flame*, v. 257, 2, 2023, 113049, <https://doi.org/10.1016/j.combustflame.2023.113049>

Պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան
Փոխտնօրեն՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան
Գիտքարտուղար՝ տեխ.գ.թ. Գ.Մանուկյան
Էլեկտրոնային փոստ՝ ionx@sci.am

Քաղային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Նոսր ջրային լուծույթներում ուսումնասիրվել են ֆոսֆորականադամոլիբդենային խառը պոլիօքսիմետալատի ՊՕՄ-ի ստացման պայմանները տարբեր թթվությունների ու վանադիումի և մոլիբդենի կոնցենտրացիոն տարբեր հարաբերությունների պայմաններում (1:1-1:10): Պարզվել է, որ օպտիմալ թթվության միջակայքը կախված է MoO_4/VO_3 հարաբերությունից՝ $\text{pH}=2.2\pm 0.8$: Ստացված ՊՕՄ-ը պոլիօքսիմետալատի միջուկային-մոնոմեր ձև է, որը չի ենթարկվում պոլիկոնդենսացիայի և չի առաջացնում կոնգլոմերատներ (ղեկ.՝ ք.գ.թ. Է.Հայրիյան):

Իրականացվել են $\text{BaO-B}_2\text{O}_3\text{-SiO}_2$ ու $\text{BaO-B}_2\text{O}_3\text{-Al}_2\text{O}_3\text{-ZnO-MgF}_2$ համակարգերի դյուրահալ ապակիների և Al_2O_3 ու ZrO_2 լցոնների հիման վրա կերամիկական նոր նյութերի սինթեզ ու դրանց ֆազային, էլեկտրաֆիզիկական ու մեխանիկական հատկությունների ուսումնասիրություններ: Կատարվել է ալմաստի սինթեզի ու աճի տեսական անալիզ թերմոդինամիկ կայունության տիրույթում դիֆուզիոն ու ոչդիֆուզիոն մոտեցումներով (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Կոստանյան):

Ուսումնասիրվել է Հայաստանի այլումինասիլիկատային ապարների թափոններից՝ տուֆերից, պեռլիտներից ու ցեոլիտներից վերամշակման միջոցով կոմպոզիտային ջերմամեկուսիչ փրփրանյութի ստացման տեխնոլոգիան միկրոալիքային սինթեզի եղանակով, 90-1200 Վտ հզորության միջակայքում: Մշակվել է նմուշների բաղադրությունը, որոշվել են ջերմային մշակման օպտիմալ ռեժիմները: Որոշվել են նյութի հիմնական հատկությունները՝ միջին խտությունը ($256\text{-}400\text{ կգ/մ}^3$), ջերմահաղորդականությունը ($0.06\text{-}0.12$ Վտ /մ $^\circ\text{K}$) և ամրությունը սեղմման ժամանակ ($0.3\text{-}0.71\text{ ՄՊա}$): Ստացված տվյալները բավարարում են ԳՕՍՏ 16381-77 պահանջները (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ն.Գուրգենյան):

Ուսումնասիրվել են $\text{MeO/MeF}_2\text{-B}_2\text{O}_3\text{-SiO}_2$, $\text{Al}_2\text{O}_3\text{-MeO/MeF}_2\text{-B}_2\text{O}_3\text{-SiO}_2$ (Me-Mg, Ca, Sr, Ba), $\text{BaV}_2\text{O}_5\text{-MeB}_2\text{O}_4\text{-MgF}_2$ (Me-Zn, Cd) համակարգերում ապակեզոյացման տիրույթները, ֆազային դիագրամները, ապակիների և ուղղորդված բյուրեղացմամբ սինթեզված ապակեբյուրեղային նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների փոփոխությունների օրինաչափությունները՝ կախված բաղադրությունից ու ջերմաստիճանից: Ռենտգենա-ֆազային ու էլեկտրոնային միկրոսկոպիկ հետազոտություններով վերծանվել են բյուրեղային ֆազերը: Մշակվել են օպտիկական ապակիներ ֆտորապարունակող սիլիկատային համակարգերի հիմքով: Սինթեզվել են ջերմակայուն ու թափանցիկ ապակեբյուրեղներ 9LQF ($15\text{-}30$) $\cdot 10^{-7}\text{ Կ}^{-1}$ ու կիսահաղորդիչ ապակիներ: Հետազոտվել է $\text{CaO-Al}_2\text{O}_3\text{-SiO}_2\text{-Fe}_2\text{O}_3\text{-MeF}_n$ (Me-Mg, Ca, Al) համակարգում ֆազային դիագրամը 10% SiO_2 , Fe_2O_3 պարունակության տիրույթում: Ուսումնասիրվել են ամրացման պրոցեսները՝ կախված կապակցողի բաղադրությունում կալցիումի այլումինատային ֆազերի հարաբերությունից (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

Առաջարկվել է սերպենտինիտի $(\text{Mg, Fe})_6[\text{Si}_4\text{O}_{10}](\text{OH})$ թթվային մշակման նոր մոտեցում: Որոշվել են մշակման արդյունավետ պարամետրերը՝ սերպենտինային միներալներից մագնեզիումի միացությունների ամենաբարձր ելքն ապահովելու նպատակով, որոնք

կիրառվել են տարբեր սերպենտինային հանքաքարերի մի շարք նմուշների վրա: Ցույց է տրվել, որ գլխավոր գործոնը, որը որոշում է մագնեզիումի կորզման աստիճանը, քրիզոտիլի ու լիզարդիտի գերակշռումն է հանքաքարում (ղեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Պեռլիտների ՄԱ մշակումով ստացվել են նատրիումի սիլիկատի լուծույթ ու նստվածք $\text{Na}_2\text{Al}_2\text{O}_3 \cdot 2,2 \text{SiO}_2$ բաղադրությամբ, որը քայքայելով թթվով՝ ստացվել են ալյումինիումի աղ ու SiO_2 քիմիական նյութերը՝ կիրառելի տարբեր բնագավառներում: ՄԱ վառարանում $\text{Na}_2\text{O} \cdot 0,7\text{SiO}_2$ -ի ու $\text{Y}(\text{NO}_3)_3$ - լուծույթներից սինթեզվել է իտրիումի պիրոսիլիկատ $\text{Y}_2\text{O}_3 \cdot 2\text{SiO}_2$ ՝ 50-60 նմ չափսի մասնիկներով: Ջերմամշակմամբ բյուրեղային ֆազի առաջացումն (1000°C) ընթացել է մասնիկների խոշորացմամբ՝ 120-150 նմ: Ավանդական ու ՄԱ սինթեզների համեմատությունը հաստատել է ՄԱ սինթեզի առավելությունը՝ սինթեզի տևողության կրճատում 2-3 անգամ ու բյուրեղական ֆազի առաջացում ավելի ցածր ջերմաստիճանում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Բաղդամյան):

Հայտնաբերվել են ածխաջրածինների օքսիդացման գազաֆազ շղթայական ռեակցիաների ազդեցությամբ (ՇՌԱ-մեթոդ) պղնձի անջուր քլորիդների (CuCl_2 , CuCl) հետերաֆազ քիմիական վերամշակման նոր եղանակներ, փորձական տվյալներ ու օրինաչափություններ: Ցույց է տրվել, որ, կախված պրոցեսի պայմաններից, փոխարկման արգասիքներն են տարբեր բյուրեղային կառուցվածքներով՝ CuCl , $\text{Cu}_2(\text{OH})_3\text{Cl}$, $\text{Cu}(\text{OH},\text{Cl})_2 \cdot 3\text{H}_2\text{O}$, Cu_2O , և ամբողջովին վերականգնված մետաղական պղինձը: Շղթայական ռեակցիաների ազդեցությամբ պղնձի քլորիդների փոխարկման կարծրաֆազ արգասիքներ առաջանում են բյուրեղացման տարբեր աստիճանով (այդ թվում՝ ռենտգենամորֆ վիճակում), օժտված են պարամագնիսականությամբ ու նոր ֆիզիկաքիմիական հատկություններով (ղեկ.՝ ք.գ.թ. Կ.Մանթաշյան):

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ պղնձամոլիբդենային թափոնների վերամշակման համալիր եղանակով պղնձի ու մոլիբդենի ցածր քանակները կարելի է կորզել լուծահանման եղանակով: Մոտ 97% ելքով կորզվել է մոլիբդենը՝ նատրիումի հիպոքլորիտի միջոցով, իսկ պղինձը՝ ծծմբական թթվի նոսր լուծույթով, 95% ելքով: Արտադրական թափոններից՝ մանրացրած տուֆի փոշուց ու էլեկտրաֆիլտրերում անջատված ցեմենտի փոշուց ստացվել են շինանյութեր, որոնց ֆիզիկամեխանիկական փորձարկման արդյունքները համապատասխանում են ՊԵՏ-ստանդարտի պահանջներին (ղեկ.՝ տեխ.գ.թ. Է.Նազարյան):

Ուսումնասիրվել է 42.5N մակնիշի պորտլանդցեմենտի խառնման գործընթացը՝ ջուր-ցեմենտ 0.35 հարաբերակցությամբ, ուլտրաձայնի ու մակերևութային ակտիվ նյութերի (անիոնային նատրիումի լաուրիլ սուլֆատ և ոչ իոնային OP-10) կիրառմամբ: Պարզվել է, որ 28 օր խոնավացումից հետո ամենաամուր նմուշները ստացվել են ուլտրաձայնային խառնումով՝ առանց հավելումների կամ OP-10-ի ավելացումով, ձեռքով խառնելով (ղեկ.՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Ուսումնասիրվել է կապար ու ցինկ պարունակող օքսիդացած հանքանյութերի միներալոգիական կազմը, դրանց մակերևութային սուլֆիդացման ու մետաղների համալիր կորզման առավել նախընտրելի տեխնոլոգիան: Հետազոտվել են համատեղ մանրացման ու սուլֆիդացման ընթացքում օքսիդացած հանքանյութերի սուլֆիդացման մեխանիզմն ու կինետիկան՝ որպես սուլֆիդարարներ օգտագործելով Na_2S և Na_2S_5 : Պարզվել է, որ PbCO_3 ու պղնձի կարբոնատներն արագ սուլֆիդացվում են: Ջերմաստիճանի բարձրացումը զգալիորեն նվազեցրել է սուլֆիդացման գործընթացի տևողությունը, իսկ լուծելի աղեր ու շլամեր պարունակող օքսիդացված հանքանյութերի մշակման դեպքում սուլֆիդացման ու ֆլոտացման գործընթացները դարձել են անկայուն (ղեկ.՝ տեխ.գ.դ. Կ.Դավիթյան):

Հետազոտվել են Իջևանի բենտոնիտի ակտիվացման պրոցեսում թթվի կոնցենտրացիայի, ակտիվացման պրոցեսի տևողության, նախնական ռեակցիոն խառնուրդում պինդ – հեղուկ հարաբերակցության (1,5-4,0:1) ու թթվի ծախսի ($20-60\text{ գ } \text{H}_2\text{SO}_4$ 100 գ օդաչոր բենտոնիտի վրա հաշված) ազդեցությունն ակտիվացման ընթացքի, սուսպենզիայի ֆիլտրման պրոցեսի ու պրոդուկտի որակական հատկությունների վրա: Պարզվել է, որ թթվի կոնցենտրացիայի մեծացման (2-3 անգամ) դեպքում նույն չափով աճում է նաև ելանյութային կոմպոնենտների փոխազդեցության ինտենսիվությունը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Մարտիրոսյան):

Սյունիքի մարզի Փխրուտի (Նաստուրան-մոլիբդենային) ֆորմացիոն տիպի հանքային դաշտում կատարված երկրաքիմիական աշխատանքների արդյունքում փխրուն հողային շերտից նմուշարկվել է 238 երկրաքիմիական նմուշ: Նմուշների քիմիական անալիզի արդյունքում պարզվել է, որ 123 նմուշում առկա է ուրանի որոշակի պարունակություն, իսկ 87 նմուշում առկա են լանթանի ու սամարիումի օքսիդներ: Կազմվել են ուրանի, լանթանի ու սամարիումի օքսիդների երկրորդային ցրման պսակների երկրաքիմիական անոմալիաների քարտեզներ: Համեմատելով կազմված քարտեզները տվյալ հանքային դաշտում՝ բացահայտվել է հստակ դրական կորելացիա հազվագյուտ հողային տարրերի օքսիդների հիպերգենային անոմալիաների ու ռադիոակտիվ տարրերի երկրորդային ցրման պսակների անոմալիաների միջև (ղեկ.՝ Ե.գ.թ. Լ.Հարությունյան):

Ուսումնասիրվել են Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչերի (ՔՊՄԿՊ) հիմքով երկու համակարգերի՝ ՔՊՄԿՊ- $\text{Li}_2\text{O}-\text{B}_2\text{O}_3$ և ՔՊՄԿՊ- $\text{LiFe}_5\text{O}_8-\text{B}_2\text{O}_3$ ապակեգոյացման տիրույթները: Ուսումնասիրվել են ապակիների խտությունը, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցն ու մագնիսական հատկությունները: Բյուրեղացված ապակիներում դիտվել է մագնիսական թափանցելիության զգալի աճ, որը պայմանավորված է դրանցում լիթիումի ֆեռոշպինելի առաջացմամբ: Զերմաստիճանից կախված տեսակարար էլեկտրադիմադրության ուսումնասիրություններով պարզվել է, որ սինթեզված ապակեբյուրեղներում վառ արտահայտված պոզիտրային էֆեկտը տարբեր ջերմաստիճաններում կարող է հիմք հանդիսանալ դրանց օգտագործմանը տարբեր տվիչներում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Պողոսյան):

Մշակվել է շահավետ ու արդյունավետ տեխնոլոգիա շփվող դետալների մաշակայունության բարձրացման նպատակով: Որպես ծածկութապատող նյութ օգտագործվել են վոլֆրամի կարբիդի ու սիլիցիումի կարբիդի միկրոփոշիները: Ուսումնասիրվել են միկրոփոշիների մեխանաքիմիական եղանակով ակտիվացման օպտիմալ պայմանները՝ քիմիական միջավայրը, ակտիվացման սարքի մեխանիկական պարամետրերը՝ վիբրացիայի հաճախականությունն ու ամպլիտուդը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Թաթարյան):

Կիրառելով սերպենտիններից $(\text{Mg,Fe})_6[\text{Si}_4\text{O}_{10}](\text{OH})_8$ ստացված հիդրոսիլիկաժելը և դրա հիմքով սինթեզված վիլեմիտի հիման վրա մշակվել է փոշենման գունանյութերի ստացման եղանակ: Ուսումնասիրվել են վիլեմիտային կառուցվածքով $\text{Zn}_{2-x}\text{Co}_x\text{SiO}_4$ (կապույտ $x=0.01\div 0.5$) ու $\text{Zn}_{2-x}\text{Ni}_x\text{SiO}_4$ (կապույտ $x=0.1\div 0.4$ ու կանաչ $x=0.5\div 0.9$), օլիվինային կառուցվածքով $\text{Zn}_{2-x}\text{Ni}_x\text{SiO}_4$ (կանաչ $x=1.0\div 2.0$) գունային փոփոխությունները՝ կախված սինթեզի պարամետրերից (ղեկ.՝ տեխ.գ.թ. Հ.Բեգլարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

ՄԱ եղանակով սինթեզվել է (Ni/Fe/ Cu/Ag) լեգիրացված ցինկի օքսիդ: ՌՖ անալիզը ցույց է տվել, որ ներդրված մետաղների օքսիդներն առանձին ֆազեր չեն առաջացրել, ստացվել են միաֆազ բյուրեղային միացություն $(\text{SiO}_2)/\text{պատյան}$ (լեգիրացված ZnO)

կառուցվածքով ֆոտոկատալիզատորներ (ՖԿ): Մշակվել են ՄԱ մեթոդով լեգիրացված ZnO-ի սինթեզի և դրա նստեցման պայմանները: Լեգիրացված ցինկի օքսիդն առանձնանում է բարձր ակտիվությամբ, և ներկանյութերի քայքայումն ընթանում է ավելի բարձր ելքերով՝ 90-93% (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Սարգսյան):

Սինթեզվել է ստրոնցիումի սիլիկատ՝ ակտիվացված եվրոպիումով: Որպես սիլիցիումի երկօքսիդի հումք օգտագործվել է սերպենտինիտից $(\text{Mg,Fe})_6[\text{Si}_4\text{O}_{10}](\text{OH})_8$ -ստացված ակտիվ SiO_2 -ը, որը բարձրացրել է սիլիկատի սինթեզի ելքը: Անթափանց նյութերի ֆլուորեսցենտային հատկություններն ուսումնասիրելու համար մշակվել է Agilent Cary Eclipse սպեկտրոֆոտոմետրով աշխատելու եղանակ:

Մշակվել են գունանյութերի ստացման երկու նորարարական մոտեցումներ՝ օգտագործելով սերպենտինիտներից $(\text{Mg(Fe)})_6[\text{Si}_4\text{O}_{10}](\text{OH})_8$ ստացված հիդրոսիլիկաժելը: Մեկը վերաբերում է վիլեմիտային կառուցվածքով $\text{Zn}_{2-x}\text{Co}_x\text{SiO}_4$ (կապույտ $x=0.01\div0.5$) ու $\text{Zn}_{2-x}\text{Ni}_x\text{SiO}_4$ (կապույտ $x=0.1\div0.4$ ու կանաչ $x=0.5\div0.9$), մյուսը՝ օլիվինային կառուցվածքով $\text{Zn}_{2-x}\text{Ni}_x\text{SiO}_4$ (կանաչ $x=1.0\div2.0$) պիգմենտներին: Մշակվել է նաև ցիրկոնի կառուցվածքում վանադիումի իոնների ներմուծման եղանակ՝ $\text{Zr}_{1-x}\text{V}_x\text{SiO}_4$ ստանալու նպատակով:

Որոշվել են $\text{Zn}_{2-x}\text{Co}_x\text{SiO}_4$ և $\text{Zn}_{2-x}\text{Ni}_x\text{SiO}_4$ պիգմենտների սինթեզի արդյունավետ պարամետրերը՝ առավել ինտենսիվ կապույտ ու կանաչ գույները երաշխավորելու համար: Ուսումնասիրվել է նաև սինթեզի պարամետրերի ազդեցությունը $\text{Zr}_{1-x}\text{V}_x\text{SiO}_4$ ($x=0.02\div0.06$) բաղադրությամբ նմուշների գունային երանգների վրա (դեկ.՝ ք.գ.թ. Հ.Բեգլարյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Մովսիսյան Բ.Վ., Մովսիսյան Ժ.Մ., Առաքելյան Ժ.Ռ., Ավետյան Ռ.Ա., Նեֆելինային սինթիտներից կավահողաբեյտային ցեմենտի բաղադրության մշակում, Ե., “Хим. журн. Армении”, հտ. 76, N 3, 2023, էջ 218-227:
2. Авагян А.Н., Овсеян А.В., Арутюнян Г.Г., Саканян М.С., К кинетической теории образования и роста синтетического алмаза в области термодинамической стабильности в бездиффузионном и диффузионном приближениях. Ер., “Известия НАН Армении. Физика”, т. 58, N 3, 2023, с. 310-327, DOI: 10.54503/0002-3035-2023-58.3-310
է ընդունված կարգ: Հայաստանում ընտանեկան բռնությունը ենթադրում է քրեական պատասխանատվություն քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով: Իրականացված հետազոտության արդյունքներով պարզվել են բռնության տարածվածության ծավալները, ավելի հաճախ բռնության ենթարկվող ընտանիքի անդամը, ընտանեկան բռնություն գործադրելու պատճառները: Հետազոտության մասնակիցների բացարձակ մեծամասնությունը՝ 96.4%, տեղեկացված է եղել ընտանեկան բռնության մասին, ընդ որում, նրանց 23%-ի կարծիքով այն լայնորեն տարածված է մեր երկրում, իսկ 53.4%-ի կարծիքով՝ տարածված է որոշ չափով: Հարցվողների 78.2% որպես բռնության ենթարկված ընտանիքի անդամի նշել է կնոջը, 16.5%՝ երեխաներին, մնացածն էլ ընտանիքի այլ անդամների՝ ամուսին, ծնող և այլն: Ինչ վերաբերում է բռնության դեպքերի կանխարգելման միջոցներին, հարցվողների 21.6% անհրաժեշտ է համարել նյութական բարեկեցության ապահովումը (մասնավորապես աշխատատեղերի ստեղծումը հատկապես բարձր աշխատավարձով), 12.7%՝ բարոյահոգեբանական նորմալ մթնոլորտի (փոխադարձ հարգանք, փոխզիջում, փոխադարձ սեր ու հավատարմություն) ապահովումը, 12.4% կարևորել է իրավական պաշտպանվածությունը, 12.2%՝ բարձր կրթական մակարդակի ապահովումը, 17.4% առաջարկել է խնդրի դեմ պայքարը սկսել տարբեր կազմակերպությունների ստեղծմամբ ու մարդկանց իրազեկության մակարդակի բարձրացմամբ և այլն:

«Դատահոգեբանական փորձաքննություններում անձի հոգեբանական առանձնահատկությունների գնահատման մեթոդաբանության մշակումն ու առավել ամբողջական արդյունքների ապահովմանն ուղղված հետազոտական թեստերի փաթեթների ձևավորման գիտական հիմնավորումը» թեմայի շրջանակում իրականացվել են անձի հոգեբանական փորձաքննությունների ընթացքում կիրառվող մեթոդական մոտեցումների, հետազոտական թեստերի, փորձարարական արդյունքների համադրված վերլուծություն ու մշակում՝ ըստ փորձաքննության նպատակի, առաջադրված խնդիրների, փորձաքննվողների տարիքային առանձնահատկությունների ու հոգեբանական փորձաքննության ուղղությունների (ենթատեսակների): Շվեյցարիայի ձեռագրաբանական գիտությունների ինստիտուտի (IHS) հետ համատեղ իրականացվել է ձեռագրի միջոցով բացահայտվող հոգեբանական առանձնահատկությունների վերլուծությամբ համապատասխան մեթոդների համեմատում: Ստացված նախնական արդյունքները ցույց են տվել, որ հոգեբանական ու ձեռագրաբանական մեթոդիկաների կիրառմամբ ստացված տվյալների համընկնումը դեռևս կազմում է շուրջ 70-80%:

Գիտագործնական աշխատանքներ: Կազմակերպության աշխատակիցներն անցկացրել են վերլուծական բնույթի 91 սեմինար՝ միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման, հնարավոր ներդրման ու Հայաստանի Հանրապետությունում կիրառման նպատակով, ակտիվորեն մասնակցել են փորձագիտական բնագավառներին առնչվող տարբեր առցանց սեմինարներին, մասնավորապես Ամերիկյան քրեագիտական լաբորատորիաների տնօրենների միության (ASCLD), Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL), Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի, «BUCHI Switzerland»-ի, «Legal Academy»-ի, «ThermoFisher Scientific»-ի, «PATENTUS»-ի, «LF Академия»-ի, «Sartorius»-ի, «Agilent technologies»-ի, «Horizon Europe»-ի, «Ultra Forensic Technology»-ի, «TOPCOP Project»-ի, «Академия Роскачества»-ի, «Российский национальный институт медицинского права»-ի և այլն:

Կազմակերպությունը շարունակել է համագործակցությունը նաև ԱՊՀ մի շարք երկրների, Վրաստանի Հանրապետության համանման դատափորձագիտական կառույցների հետ՝ նպատակ ունենալով զարգացնել գիտամեթոդական հնարավորությունները, մասնակցել է միջպետական ստանդարտների նախագծերի մշակման գործընթացին,

«Քիմիական նյութերի մասին» կառավարության որոշման նախագծերի, «Դատափորձագիտության գործունեության մասին», ՀՀ օրենքների նախագծի և այլ իրավական ակտերի քննարկմանը:

Շարունակվել են տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները՝ փամփուշտների ու պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների թափքի նույնականացման համարների տեղակայությունների, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, կեղծ թղթադրամների (ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Եվրո), գրելագործիքների, պայթուցիկ նյութերի արգասիքների, պարենային ու ոչ պարենային ապրանքների, անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ոճային ու կենսագրական տվյալների, ինչպես նաև GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար SUDMED-MS_3016 գրադարանի ներդրման (3116 անվանում նյութերի տեսականի), Cayman Spectral Library.new (CSL) գրադարանի ներդրման (2000 անվանում նյութերի տեսականի) ու SWGDRUG.3.9L գրադարանի ներդրման (4000 անվանում նյութերի տեսականի): Շարունակվել են դատափորձագիտական բնագավառում նոր դենդրոխրոնոլոգիական գործիքային «LINTAB» LTM06-E մոդելի սարքի ու TSAP-Win համակարգչային ծրագրի միջոցով ապօրինի ծառահատումների հիմնական օբյեկտ հանդիսացող ծառատեսակներից վերցված նմուշների տարեկան օղակների պատկերների բազայի համալրման աշխատանքները: «Genetic Analyzer 3500» գործիքային սարքի ու «GeneMapper™ ID-X Software v1.6» համակարգչային ծրագրի միջոցով սկսվել է դատագենետիկական փորձագիտական հետազոտությունների ԴՆԹ տվյալների պահոցի ձևավորումը, որտեղ ներառված են ԴՆԹ սեկվենավորված ու համեմատական հետազոտության համար պիտանի ԴՆԹ-բնութագրերը:

Ստորև ներկայացվում են 2023թ. իրականացված դատափորձաքննությունների տեսակների ու քանակի ամփոփ տվյալները՝

N	Տարեթիվ	Քրեադատավարական շրջանակներում կատարված դատական փորձաքննություններ	
		քանակային ցուցանիշը (հատ)	տեսակների քանակը (հատ)
1	2023	12931 (առ 28.11.2023թ.)	28

Գիտաուսումնական աշխատանքներ: ՀՀ դատախազության ու կազմակերպության միջև կնքված «Լրացուցիչ կրթության ուսուցման ծառայությունների գնման» պետական պայմանագրի շրջանակում իրավասու մարմինների թվով 111 աշխատող անցել է կատարելագործման ու վերապատրաստման ուսուցողական դասընթացներ: ԳԱԱ համակարգում դատական փորձագետի որակավորում է ստացել 15 հավակնորդ:

Կազմակերպությունում ճանաչողական այցեր են կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հիմնադրամի լեռնամետալուրգիայի ու քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտի, Դատական փորձաքննությունների և հոգեբանության ինստիտուտի, Մ.Մաշտոցի անվ. և Եվրասիա միջազգային համալսարանների և այլ բուհերի ուսանողների համար:

Գիտափորձնական-վերլուծական աշխատանքներ: Արյան ու մեզի փորձանմուշներում ցնդելի նյութերի, հատկապես էթիլ սպիրտի հայտնաբերման և քանակական որոշման նպատակով կատարվել են բոց-իոնային դետեկտորով ու գոլորշիացման համակարգով համակցված գազային քրոմատագրաֆով (Agilent Technologies GC 7820A, FID, Agilent Technologies 7697A Headspace) գիտափորձնական աշխատանքներ, լրամշակվել է մեթոդի նախնական տարբերակը՝ ավարտուն տեսքի են բերվել կենսաբանական օբյեկտների նմուշապատրաստման ու ներդրված մեթոդով աշխատելու համար գործիքի վրա

սահմանված պարամետրերի օպտիմալացման պայմանները, ընտրվել է էթիլ սպիրտի հայտնաբերման միջակայքը, փորձարկումների միջոցով ապահովվել է կիրառելիության ու վերլուծական տիրույթի, կրկնելիության ու վերարտադրելիության բնութագրերի առկայությունը:

Փորձարկվել են բջջային հեռախոսների ներքին հիշողության կրիչներին հասանելիություն ստանալու, դրանցում պարունակվող տեղեկատվության հետազոտման, վերծանման, կրիչներից ջնջված տեղեկատվության վերականգնման համար նախատեսված մի շարք արդի ծրագրային ապահովումներ: Կատարվել է ՀՀ-ում քրեական վարույթ իրականացնող տարբեր մարմինների կողմից նշանակված համակարգչատեխնիկական փորձաքննությանը ներկայացված բջջային հեռախոսների ու պլանշետային համակարգիչների ներքին հիշողության կրիչների ֆիզիկական մակարդակի փորձագիտական պատճենների բարեհաջող ստացում ու վերծանում, այդ թվում՝ ջնջված տեղեկատվության վերականգնում:

Կատարվել են աուդիոձայնագրային փորձաքննությունների համար նախատեսված ժամանակակից «Sound Cleaner» ու «STC SIS» ծրագրային ապահովումների կիրառման ուսումնասիրություններ, նաև նախկինում ստացված ու կատարված աուդիոձայնագրային փորձաքննությունների վերլուծություն, վեր են հանվել նախկինում կիրառվող տեխնիկական ու ծրագրային հնարավորություններով լուծման համար անհնարին համարվող խնդիրները: Գիտափորձնական վերլուծությունների արդյունքում վերը նշված ծրագրային ապահովումների առավել արդյունավետ աշխատանքի ու աուդիոձայնագրային փորձաքննությունների ոլորտում առկա արդի անլուծելի համարվող խնդիրների լուծման նպատակով ուսումնասիրվել, մշակվել են անհրաժեշտ մեթոդական ծրագրային մոտեցումներ և ներդրվել են ժամանակակից ալգորիթմներով ձայնային ազդանշանի աղմուկից մաքրման ու ձայնագրությունների մշակման, ձայնագրություններում մոնտաժման հատկանիշների, մշակման հետքերի հայտաբերման, ձայնագրությունների տեխնիկական տվյալների հետազոտության ու վերլուծության, բանավոր խոսքի նույնացման ժամանակ կիրառվող նորարար մեթոդներ:

Կատարվել են նաև ավտոտեխնիկական ու տեսաձայնագրային համալիր փորձագիտական հետազոտությունների նոր մեթոդների մշակման ու ներդրման, կրակոց արձակող անձի ձեռքերի ու հագուստի վրա կրակոցի արգասիքների հայտնաբերման ներկայում քրեագիտության բնագավառում արդիական համարվող գործիքային հետազոտման մեթոդի տեղայնացման աշխատանքներ:

Սկսվել է մարդու կենսաբանական ծագման բոլոր տեսակի նմուշներով ու հետքերով անձի գենետիկական նույնականացման հետազոտական կարողությունների ձևավորման գործընթացն ինչպես 1 անձից թողնված ԴՆԹ-ով, այնպես էլ 2 և ավելի անձանց ԴՆԹ-ների խառնուրդներով՝ պայմանավորված ԴՆԹ բնութագրում մաժոր ու մինոր բաղադրիչների տարանջատմամբ, դոնոր բնութագրերի հետ համեմատական հետազոտությունների իրականացմամբ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես, N 9, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2023, 149 էջ:
2. Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես, N 10, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2023, 176 էջ:

3. Իսրայելյան Գ.Վ., Թմրահանցավորության դեմ պայքարի նյութաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., «ԹԱՍԿՍՊԸ» հրատ., 2023, 220 էջ:
4. Իսրայելյան Գ.Վ., Քրեական զոհաբանություն. բնութագիրը և բաղադրիչները, Ե., «ԹԱՍԿՍՊԸ» հրատ, 2023, 116 էջ:
5. Մամիկոնյան Կ.Հ., Փորձագիտություն և ակտիվների գնահատում, Ե., հեղինակ. հրատ., 2023, 223 էջ:
6. Хох Н.А., Ермохин М.В., Восканян П.С., Петросян А.А., Жаворонков Ю.М., Словарь основных терминов судебной ботанической (дендрохронологической) экспертизы, Минск, справ.-метод. пособие, НПЦ Гос. ком. судеб. Экспертиз, 2023, 38 с..

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

7. Աղայան Ս.Ռ., Աղայան Ռ.Ս., Ճանապարհատրանսպորտային պատահարի վրա ճանապարհային պայմանների ազդեցության հետազոտումը, Ե., «Օրենքի պատվար», N 16, 2023, էջ 8-16:
8. Ավագյան Լ.Ա., Թառոյան Ս.Ք., Դիակային և դաշտանային արյան տարբերակումը SERATEC PMB թեստի միջոցով, ստացված արդյունքների գնահատման առանձնահատկությունները և նշանակությունը դատակենսաբանական փորձագիտական հետազոտությունների բնագավառում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 2-3 (75), 2023, էջ 103-111:
9. Իսրայելյան Գ.Վ., Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, արեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների առարկայի տեսակները և առանձնահատկությունները, Ե., «Դատական իշխանություն», N 4-6 (286-288), 2023, էջ 76-83:
10. Իսրայելյան Գ.Վ., Թմրահանցավորության քրեաբանական բնութագիրը և կանխարգելման հարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Բանբեր Եվրասիա համալսարանի», N 2, 2023, էջ 9-15:
11. Իսրայելյան Գ.Վ., Թմրամիջոցների հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, արեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված խախտումների համար պատասխանատվության իրավական հիմքերի կատարելագործման որոշ հարցերը, Ե., «Դատական իշխանություն», N 10-12 (292-294), 2023, էջ 15-23:
12. Իսրայելյան Գ.Վ., Մխիթարյան Ս.Ա., Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության բնական լատենտայնության կանխարգելման որոշ հարցեր, Ե., «Բանբեր», N 1, 2023, էջ 18-25:
13. Ծերեթյան Կ.Ո., Արագածոտնի մարզի Ապարանի ենթատարածքի XIX-XXդդ. եկեղեցիները, Ե., «Հուշարձան» գիտ. հանդես, N 1 (ԺԺ), «Պատմամշակութային ժառանգության մատենաշար», N 20, 2023, էջ 112-125:
14. Նիկոլյան Ս.Հ., Ցականյան Ա.Վ., Անդրեասյան Ն.Ա., Մարտիրոսյան Ս.Թ., Սննդամթերքի ոլորտը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերում առկա տարբերությունները Staphylococcus ցեղի մանրէների վերաբերյալ, Ե., «Հայաստանի բժշկություն», հ. L XIII, N 3, 2023, էջ 133-140:
15. Սանթրոսյան Ա.Վ., Իշխանյան Յու.Ռ., Փոքր հիդրոկայանների գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը էկոլոգիական փորձաքնությունների շրջանակներում, Ե., «Օրենքի պատվար», N 16, 2023, էջ 185-194:
16. Агузумцян Р.В., Научное наследие профессора О.Тутунжяна (К 105-летию со дня рождения), “Психологический журнал”, Ин-т психологии РАН, т. 44, N 5, 2023, с. 103-108.
17. Алоян М.А., Особенности экспертных исследований подписей, выполненных одним лицом с разрывом во времени, O‘zbekiston respublikasi adliya vazirligi X.Sulaymonova nomidagi respublika sud ekspertiza markazi, O‘zbekiston sud ekspertizasi, N 4 (11), 2023, с. 58-69.
18. Восканян П.С., Авоян Л.А., Языковые проблемы судебно-экспертного перевода и их практическое разрешение, Міністерство внутрішніх справ України Експертна служба, Кіровоградський науково-дослідний експертно-криміналістичний центр МВС України, «Актуальні питання вдосконалення судово-експертної та правоохоронної діяльності», Збірник матеріалів засідання N 5 Міжнародної науково-практичної конференції, 23 березня 2023 року Кропивницький, с. 437-440.
19. Исраелян Г.В., Кибервиктимология: понятие и составляющие элементы, Ե., «Օրենքի պատվար», N 16, 2023, էջ 264-270:

20. Израелян Г.В., Необходимая оборона: новые регламентации и проблемы совершенствования в РА, Минск, сб. научн. тр. “Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции”, вып. 16, 2023, с. 205-211.
21. Израелян Г.В., О вопросе совершенствования института освобождения от административной ответственности в РА, Ер., «ՀՀ օրինականության հարմարեցումը և անվտանգությունը», 3(111), 2023, с. 149-162.
22. Мачкалян К.Г., Некоторые особенности проведения судебной взрывотехнической экспертизы, М., “Судебная экспертиза в современном мире”, изд. центр Ун-та им. О.Е. Кутафина (МГЮА), 2023, с. 267-269.
23. Мачкалян К.Г., Применение атомно-абсорбционной спектроскопии в судебно-баллистической экспертизе, Минск, сб. научн. тр. “Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы”, вып. 2 (54), 2023, с. 165-168.
24. Николян С.А., Обнаружение гемолитических видов рода *Bacillus* в питьевых йогуртах, реализуемых на потребительском рынке РА, Минск, сб. научн. тр. “Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы”, вып. 2 (54), 2023, с. 169-172.
25. Овсепян А.Н., Особенности применения специальных знаний и навыков по констатации фактов совершенных военных преступлений, М., мат. XI меж. научно-практич. конф. “Теория и практика судебной экспертизы в современных условиях”, 2023, с. 255-259.
26. Овсепян А.Н., Гахнапетян А.П., Восканян П.С., Особенности высококвалифицированного кадрового обеспечения судебно-экспертной деятельности: научно-методические и организационные подходы, Минск, мат. меж. науч.-практич. конф. “Роль и значение судебно-экспертной деятельности и судебной экспертологии в обеспечении национальной безопасности”, 2023, с. 191-195.
27. Оганнисян В.И., Особенности судебно-экспертного исследования характеристик патронов, предназначенных для ручного огнестрельного нарезного оружия, Саратов, мат. XI меж. конф. по криминалистическому исследованию оружия, изд. “Техно-Декор”, 2023, с. 38-42.
28. Товмасян А.Г., Некоторые особенности тестирования и идентификации способа изготовления альфа-пирролидинопентиофенона, O‘zbekiston respublikasi adliya vazirligi X.Sulaymonova nomidagi respublika sud ekspertiza markazi, O‘zbekiston sud ekspertizasi, N 2 (9), 2023, с. 12-19.
29. Франгян В.Р., О некоторых тактических особенностях осмотра места пожара, Chisinau, LEGEA ȘI VIAȚA LAW AND LIFE ЗАКОН И ЖИЗНЬ, International Conference Qualitative Research of the crime scene an important factor in Subsequent judicial expertise, 14th april 2023, с. 10-14.
30. Хох Н.А., Петросян А.А., Установление места произрастания срубленных деревьев дендрохронологическим методом, Минск, мат. III межд. научно-практич. конф., 2023, с. 170-173.
31. Цаканян А.В., Андреасян Н.А., Николян С.А., Мартirosян С.Т., Прикладное значение грибов в жизни человека как источник природных биологически активных соединений, Е., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 2-3 (75), 2023, էջ 88-95:
32. Aguzumtsyan R., Shakhverdyan G., Ambartsumyan M., Mamyan T., Gabrielyan A., Sistemik features of forensic and legal psychological expertise, Zürich, / Handwriting Research: Forensics and Legal, Publisher: epubli b”” the edition, 2023, pp. 105-126 (<http://www.amazon.de/en/dp/3757565940>)
33. Mkhitaryan S., Drug trafficking problems and approaches to prevention in Armenia: Expert opinions, Y., Journal of Sociology: Bulletin of Yerevan State University, v. 14, N 1(37), 2023, pp. 96-104.
34. Tavadyan G., Gabrielyan H., Nazaryan K., Certain features of determining the market price of a vehicle when carrying out forensic commodity examination, Kharkiv, Program of international Scientific and Practical Conference Relevant Issues of Forensic Science and Criminalistics on the occasion of anniversaries of outstanding scientists: the 95th anniversary of L.Yu.Arotsker (Arotsker’s Readings) and the 105th anniversary of M.V.Saltevskiy, 2023, pp. 43-46.
35. Sukiasyan A., Hovhannisyan A., Aslikyan M., Galstyan A., Simonyan A., Kroyan A., Kirakosyan A., Assessment of ultra-trace elements pollution in the arable soils near the lake Sevan correcting for its toxicity, М., сб. тр. XXIV межд. научно-практич. конф. “Актуальные проблемы экологии и природопользования”, т. 1, 2023, с. 345-249.
36. Khokh A., Petrosyan A., Pollen as a bioindicator of environmental quality, Actual environmental problems, Proceedings of the XIII International Scientific Conference of young scientists, graduates, master and PhD students, N 30, Minsk, 2023, pp. 153-154.

Հոդվածները հրատարակվել են «Дискуссионные вопросы теории и практики судебной экспертизы» V միջազգային գիտապրակտիկ գիտաժողովի նյութերի ժողովածուում, Մ., 2023, 680 էջ:

37. Агузумцян Р.В., Пути повышения эффективности судебно-психологической экспертизы, с. 25-29.
38. Амбарцумян М.В., Особенности судебно-психологической экспертиз инцидентов в вооруженных силах РА, с. 34-40.

39. Мамян Т.С., Шахвердян Г.Д., Особенности посмертных судебно-психологических экспертиз, с.418-422.

Հոդվածները հրատարակվել են «Актуальные проблемы юридической психологии» միջազգային գիտապրակտիկ գիտաժողովի նյութերի ժողովածուում, Մ., 2023, 572 էջ:

40. Амбарцумян М.В., Габриелян А.К., Особенности проведения посмертной судебно-психологической экспертизы, с. 224-229.
41. Мамян Т.С., Шахвердян Г.Д., Особенности способности оказания сопротивления в рамках судебно-психологической экспертизы насилия, с. 312-318.

Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես»-ում, N 9, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2023, 149 էջ:

42. Խաչատրյան Մ.Վ., Էլիազյան Դ.Ս., Ղազարյան Գ.Ղ., Ոսկանյան Պ.Ս., Արտադրական կանեփի արտադրման, վերամշակման և փորձաքննության անցկացման խնդիրների վերլուծությունը, էջ 17-23:
43. Գաբրիելյան Հ.Բ., Թավադյան Գ.Կ., Նազարյան Կ.Հ., Տրանսպորտային միջոցի մոդիֆիկացիայի ու սերնդի փոփոխությամբ պայմանավորված անցած ժամանակահատվածի դրությամբ տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզումը դատաապրանքագիտական փորձաքննությունների շրջանակներում, էջ 24-31:
44. Հարությունյան Ա.Ա., Մովսիսյան Շ.Ա., ՀՀ-ում հեղինակային և հարակից իրավունքների դատական փորձաքննությունների անցկացման առանձնահատկությունները՝ օրենսդրական կարգավորումների կիրարկման համատեքստում, էջ 32-38:
45. Մամիկոնյան Կ.Հ., Դատական փորձագետի գիտական հետազոտական աշխատանք կատարելու փորձառության պահանջը հատուկ գիտելիքների կիրառման բնագավառում, էջ 39-45:
46. Սիմոնյան Յ.Հ., Կանեփից ստացված թմրամիջոցների գործածման բժշկասոցիալական տեսական և գործնական դրսևորումներն ու հետևանքները, էջ 46-53:
47. Մարգարյան Ռ.Ս., Էլեկտրատեխնիկական փորձաքննության որոշ առանձնահատկությունների մասին, էջ 101-107:

Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես»-ում, N 10, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2023, 176 էջ:

48. Գևորգյան Ա.Ս., Անմեղսունակության դատափոզեցումական փորձաքննություններում զառանցական համախտանիշի հետազոտության դեպքերում թույլ տրվող փորձագիտական սխալները՝ տարբեր նոզոլոգիական հիվանդությունների դեպքերում, էջ 51-57:
49. Իսրայելյան Գ.Վ., Ղուկասյան Ա.Պ., Հայաստանի Հանրապետությունում բնակարանային գողությունների բնական լատենտայնության կանխարգելման որոշ հարցեր, էջ 58-62:
50. Կիրակոսյան Ն.Ա., Կենսաբանական օբյեկտներում էթիլ սպիրտի հայտնաբերման և որոշման հետազոտական մեթոդների համեմատական վերլուծությունը, էջ 9-15:
51. Մամիկոնյան Կ.Հ., Գալստյան Է.Լ., Բիզնեսի հոգեբանություն. կամ՝ ձեռնարկատիրության վարման նոր կանոններ տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում, 122-129:
52. Ղահրամանյան Զ.Գ., Հրդեհատեխնիկական փորձաքննության շրջանակներում նավթամթերքների և դյուրավառ հեղուկների հետքերի հայտնաբերման և դրանց նույնականացման խնդիրները, էջ 130-135:
53. Մամիկոնյան Կ.Հ., Ստեփանյան Լ.Ս., Պետական մասնակցությամբ ընկերությունների գույքի ոչ արդյունավետ կառավարման հետևանքները, էջ 136-145:

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշվետու տարում անցկացվել է 1 ընդհանուր ժողով:

Ապրիլի 21-ի տարեկան ընդհանուր ժողովը բացել և ԳԱԱ 2022թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցմամբ հանդես է եկել ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա.Սադյանը: Ակադեմիայի 2022թ. գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցել է ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար թղթակից անդամ Ա.Իշխանյանը: Ժողովը քննարկել և հավանություն է տվել 2022թ. գործունեությանը:

Ժողովում լսվել է ԳԱԱ արտաստասանյան անդամ Վ.Սաքանյանի «Կենսատեխնոլոգիան բժշկության համար. քաղցկեղի թիրախավորված թերապիա» գիտական զեկուցումը:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում անցկացվել է նախագահության 11 նիստ, քննարկվել է շուրջ 25 հարց:

Գիտության տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներ կազմակերպելու, մասնագիտական կարծիք ձևակերպելու և պետական կառավարման մարմիններին ու գերատեսչություններին, ինչպես նաև մասնավոր սեկտորին խորհրդատվություն տրամադրելու նպատակով նախագահության որոշմամբ ձևավորվել են մասնագիտական պրոբլեմային խորհուրդներ՝ հատուկ նշանակության հիմնախնդիրների, ներդրումային հարցերի, կենսաբազմազանության ու կենսաանվտանգության, սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության, բնական ու տեխնածին աղետների, պատմագիտության և մշակութաբանության, տերմինաբանության հիմնախնդիրների, ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրների: Հաստատվել են խորհուրդների նախագահները:

Նախագահությունը որոշում է կայացրել հիմնադրել «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ, հաստատել է կանոնադրությունն ու հոգաբարձուների խորհրդի կազմը:

Նախագահության որոշմամբ սահմանվել է ՀՀ ԳԱԱ մրցանակ հետևյալ բնագավառներում՝ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ, քիմիա, կյանքի և երկրի մասին գիտություններ, հասարակական և հումանիտար գիտություններ:

Նախագահության որոշմամբ հաստատվել է ԳԱԱ նախագահության կառուցվածքը, աշխատակազմի հաստիքացուցակն ու աշխատողների թիվը, ԳԱԱ 2023թ. արտադրությունից կտրված, հեռակա և վճարովի ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները:

Նախագահության նիստում ընտրվել են Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների, Մ.Աբեղյանի անվ. գրականության, Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության, Պատմության, Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտների տնօրեններ, ընտրվել է «Հայաստանի կենսաբանական հանդեսի» գլխավոր խմբագիրը:

Նախագահության որոշմամբ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվ. պետական համալսարանի ռեկտոր, ՌԳԱ ակադեմիկոս Վ.Սադովնիչին պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՑԱՆՑ (ASNET-AM)

Ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանցը (ASNET-AM) համաեվրոպական գիտակրթական ցանցի GEANT միջավայրում ներկայացված է որպես ազգային գիտակրթական ցանց: 2023թ. տարվել են ցանցային ծառայությունների բարելավման, ցանցային կապի ուղիների որակի բարելավման, առցանց ծառայությունների անվտանգության ապահովման և ամպային ռեսուրսների օգտագործման ընդլայնման աշխատանքներ:

Իրականացվել է ցանցի հիմնական հանգույցների շուրջօրյա (24/7) աշխատանքի ապահովում հիմնական կապուղիների 10 Գբիտ/վ թողունակությամբ, իսկ կազմակերպությունների համար՝ մինչև 1 Գբիտ/վ: Ցանցն ունի և պահպանում է երաշխավորված 2 Գբիտ/վրկ երկկողմանի կապուղու ակտիվ վիճակը դեպի ինտերնետ (երկրորդ պահեստային կապով տեղական հեռահաղորդակցման մատակարարին) և դեպի Հայաստանի այլ գիտական ու մասնավոր ցանցեր: Աշխատանքներ են տարվում համաեվրոպական GEANT գիտակրթական ցանցի հետ կապուղու արագությունը 2-ից 10 Գբիտ/վրկ բարձրացնելու, WiFimon մոնիթորինգի համակարգ ներդնելու, Zabbix մոնիթորինգային համակարգի՝ Telegram Bot-ի միջոցով ծանուցման համակարգելու ուղղությամբ: NMaaS նախագծի հիման վրա NetBox համակարգի միջոցով ստեղծվել է բոլոր երթուղային սարքերի տվյալների բազա, որը ներառում է սարքերի կապերը միմյանց հետ:

Ցանցի կայունությունն ու արագության բնութագրերն ապահովելու համար իրականացվել է հանգույցային ցանցի բոլոր սարքերի պարամետրերը վերակազմավորելու և օպտիմալացնելու լայնածավալ աշխատանք: Ներքին օպերացիոն համակարգերը թարմացվել են վերջին կայուն տարբերակներով, փոփոխվել են բոլոր հանգույցների սարքերի Loopback հասցեներն ու դինամիկ երթուղավորումները: Որոշ հանգույցների երթուղիները թարմացվել և փոխարինվել են, մնացածը նույնպես նախատեսվում է փոխարինել:

Իրականացվում են Ազգային սուպերհամակարգչային կենտրոնի հանգույցների միջև կապի ստեղծման աշխատանքներ:

Հանրապետության 5 քաղաքներում իրականացվող ցանցային ծառայություններից օգտվել են 65 կազմակերպությունների բազմաթիվ գիտնականներ, ասպիրանտներ, ուսանողներ, գիտական աշխատողներ և այլ մասնագետներ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի նիստերում քննարկվել են Սևանա լճի էկոհամակարգի, բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման, վերարտադրության ու արդյունավետ օգտագործման խնդիրները:

Հանձնաժողովն անցկացրել է 35 նիստ, քննարկվել են Սևանա լճի ու նրա ջրավազանի հետ առնչվող ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և մի շարք ՓԲԸ ու ՍՊԸ կողմից ներկայացված ծրագրերի, նախագծերի, հաշվետվությունների տեխնիկատնտեսական հիմնադրույթների վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների, կարծիքների հետ կապված խնդիրները:

Հանձնաժողովը շարունակել է ակտիվ համագործակցությունը Շրջակա միջավայրի նախարարության, նրա ենթակառուցների, այդ թվում՝ «Հիդրոօդերևութաբանության և

մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՏԿԵՆ ջրային կոմիտեի և Գեղարքունիքի մարզպետարանի հետ:

Համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ՝ հանձնաժողովը կազմակերպել է քննարկումներ ADWISE Consulting կազմակերպության ներկայացուցիչների հետ՝ քննության առնելով «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» EU4Sevan ծրագրի ՄԱԶԾ բաղադրիչի շրջանակում իրականացվող լճի երկարաժամկետ ազգային տեսլականի սահմանման ճանապարհային քարտեզի իրականացման ընթացքը, անցկացրել է պարբերական քննարկումներ EU4Sevan ծրագրի թիմի հետ՝ իրականացվող ու պլանավորվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության պարբերական թարմացման նպատակով, կատարվել է աշխատանքների ներկայացում ու հետագա քայլերի քննարկում:

Հանձնաժողովին փորձաքննության ներկայացված 41 ծրագրերին, նախագծերին ու առաջարկություններին տրվել են կարծիքներ՝ բացասական 16 կարծիք է ներկայացվել Սևանա լճից ջրառի, լճի ջրավազանում տարբեր բնույթի հանքավայրերի բացման ու ԿՄԿ-մեխանիկական մաքրման կայանների արդիականացման, երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու վերաբերյալ ներկայացված ծրագրերին ու նախագծերին, դրական 25 կարծիք՝ լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման ու օգտագործման, ոռոգման, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի, արևային ֆոտովոլտային էլեկտրակայանների հիմնման, Գեղարքունիքի մարզում երկրաբանական հետախուզական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերի վերաբերյալ: Քննարկվել է 19 առաջարկություն ու խնդիր՝ կապված Սևանա լճից ջրբացթողումների, ջրակորուստների նվազեցման, բույսերի ջրապահանջի նորմերը պահպանելու, լճի ջրածածկման ենթակա տարածքների մաքրման, լճի բացասական հաշվեկշռի կարգավորման ու բնակավայրերի կոյուղաջրերի խնդիրների հետ, տրվել են համապատասխան առաջարկություններ: Հանձնաժողովը քննարկել և հավանություն է տվել Սևանում ձկան ու խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակների վերաբերյալ, կազմակերպվել են հանդիպումներ, ոռոգման նպատակով լճից ջրառի մասին որոշման նախագծի համատեղ քննարկումներ: Հանձնաժողովի նիստերում քննարկվել և հաստատվել են 2024թ. աշխատանքային ծրագիրն ու տարեկան գործունեության հաշվետվությունը:

Հանձնաժողովը տարբեր բնույթի խնդիրներ քննարկելիս առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով՝ Սևանա լճից ոռոգման ու այլ նպատակներով ջրթողումներն իրականացնել միայն լճի դրական հաշվեկշիռը պահպանելու պայմանով, ապահովել Սևանա լճի արդյունագործական ձկնատեսակների որսի արդյունավետ կառավարումը, կատարելագործել Սևանա լճի էկոլոգիական համակարգի հիդրոէկոլոգիական մոնիթորինգի պայմանները, ներդնել բնապահպանական նորագույն տեխնոլոգիական առաջարկություններ լճի ջրային ռեսուրսների պահպանման ու օգտագործման ոլորտում, վերահսկել և կանխարգելել լճի էկոհամակարգին վտանգ սպառնացող երևույթներն ու միջոցառումները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հաշվետու տարում ԳԱԱ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային գիտական կառույցների ու գիտությունների ակադեմիաների հետ: Առկա համագործակցություններն ակտիվ պահելու և նոր համագործակցություններ նախաձեռնելու նպատակով

ԳԱԱ պատվիրակություններն այցելել են տարբեր ակադեմիաներ ու այլ միջազգային կառույցներ:

Ապրիլին տեղի է ունեցել «Գերծանր միջուկներ և ատոմներ» միջազգային գիտաժողովը՝ նվիրված աշխարհահռչակ հայազգի գիտնական, ՌԳԱ ակադեմիկոս, Մենդելեևի անվ. ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափնեկիր, ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի Միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանի 90-ամյակին:

Մայիսին ԳԱԱ նախագահ ակ. Ա.Սադյանը և նախագահի տեղակալ Վ.Սահակյանը Փարիզում մասնակցել են Միջազգային գիտական խորհրդի (ISC) անդամների «Գիտության մեջ սիներգիայի կիրառումը» միջնաժամկետ հանդիպմանը, որի նպատակն էր ամրապնդել ՄԳԽ անդամների կապերը, քննարկել գիտության ոլորտում համաշխարհային առաջընթացը, անդամների և ՄԳԽ կարիքներն ու առաջնահերթությունները:

Համագործակցության հնարավորությունների խթանման, երկկողմ հետազոտությունների զարգացման նպատակով ԳԱԱ ու արտերկրի ակադեմիաների միջև կնքվել են համագործակցության համաձայնագրեր, հուշագրեր:

Հունիսին Պոդգորիցայում (Չեռնոգորիա) ԳԱԱ ու Չեռնոգորիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի միջև ստորագրվել է գիտական համագործակցության համաձայնագիր:

Սեպտեմբերին ԳԱԱ հյուրընկալել է Չինաստանի գիտությունների ակադեմիայի պատվիրակությանը: Այցի ընթացքում ԳԱԱ նախագահ ակ. Ա.Սադյանը և ՉԳԱ փոխնախագահ Չ.Յապինը ստորագրել են գիտական համագործակցության հուշագիր ֆիզիկայի ու աստղաֆիզիկայի, էկոլոգիայի, քիմիայի ու կենսաբանության, երկրաբանության ոլորտներում համագործակցության ամրապնդման ու զարգացման նպատակով:

Դեկտեմբերին տեղի է ունեցել ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի XI հեռավար նիստը, որը նախագահել է 2023թ. խորհրդի նախագահ ընտրված ակ. Ա.Սադյանը: Նիստին մասնակցել են խորհրդի անդամներ Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից, Տաջիկստանից, ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչներ, քննարկվել է ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության զարգացման 2023-24թթ. հիմնական միջոցառումների ծրագիրը, համագործակցության հետագա զարգացման հայեցակարգը, առաջնահերթ գործողությունների պլանը:

Հաշվետու տարում ԳԱԱ-ն տոնել է հիմնադրման 80-ամյակը: Հոբելյանական միջոցառումներին մասնակցել են ՀՀ վարչապետը, նախագահը, ԿԳՄՍ նախարարը, ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահը, կառավարության ու ԱԺ ներկայացուցիչներ, պատվիրակություններ արտերկրից, ՀՀ-ում արտակարգ ու լիազոր դեսպաններ: Հոբելյանական միջոցառումների շրջանակում տեղի է ունեցել Վ.Համբարձումյանի անվ. 2020թ. միջազգային գիտական մրցանակի հանձնման արարողությունը: Մրցանակները հանձնվել են պրոֆ. Ալեքսանդր Սալային (Ջոնս Հոփքինսի համալսարան, Բալթիմոր, ԱՄՆ)՝ «Տիեզերքում մութ նյութի՝ որպես չեզոք, թույլ փոխազդող մասնիկ լինելը ցուցադրող իր առաջնային աշխատանքի և տվյալների վրա հիմնված վիճակագրական տիեզերաբանության մեջ իր ներդրումների համար», պրոֆ. Իզաբել Բարաֆին (Էքսետերի համալսարան, ՄԹ և Լիոնի CRAL/ENS, CNRS, Ֆրանսիա)՝ «Ցածր զանգվածով աստղերի, գորշ թզուկների և արտաբեզակնային մոլորակների բնագավառում իր հիմնարար ներդրումների և աստղասեյսմաբանության և կոմպակտ կրկնակիների ոլորտում նորարարական գաղափարների համար», պրոֆ. Ադամ Բարոուզին (Աստղաֆիզիկական

գիտությունների բաժին, Փրինսթոնի համալսարան, ԱՄՆ)՝ «Գորշ թզուկների և արտաբեզակնային մոլորակների տեսություններում իր բեղմնավոր և առաջնային ներդրումների և գորշ թզուկների և արտաբեզակնային մոլորակների հետազոտությունների առաջնագծում գիտնականների սերունդ աճեցնելու գործում նրա առաջատար դերի համար» աշխատությունների համար: Հոբելյանական նիստի շրջանակում գիտական համագործակցության համաձայնագրեր են ստորագրվել Մոլդովայի, Իրանի Իսլամական Հանրապետության գիտությունների ակադեմիաների հետ:

Մոլդովայի ԳԱ պատվիրակությունը ԳԱԱ նախագահ ակ. Ա.Սադյանին հանձնել է ՄԳԱ բարձրագույն ու ամենահեղինակավոր պարգևը՝ «Դիմիտրի Կանտեմիր» մեդալը՝ ԳԱԱ նշանակալի հաջողությունների ու երկարամյա գիտական համագործակցության համար:

Շարունակվել է համագործակցությունն ու աջակցությունը ԳԱԱ ինստիտուտներին ու կենտրոններին՝ ապահովելով նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ: Վարչությունն աջակցել է երիտասարդ գիտնականների մասնակցությանը միջազգային համագործակցություններին, գիտաժողովներին, ամառային դպրոցներին և այլ միջոցառումներին: Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների Խորհրդի և Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների հիմնադրամի միջև փոխըմբռնման հուշագրի շրջանակում Նոբելյան մրցանակակիրների 72-րդ հանդիպմանը մասնակցել է Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող կ.գ.թ. Ռ.Զախարյանը:

Շարունակվել է համագործակցությունը Չինաստանի գիտությունների ակադեմիայի հետ Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ) շրջանակում: ANSO-BIDI school-ը կազմակերպել է եռամսյա դասընթացների շարք կառավարում, նորարարություններ, առաջնորդություն ու կայուն զարգացում թեմաներով: Դասընթացների մասնակիցները «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախագծին միացած երկրների գիտական հետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներն են: 2023թ. ԳԱԱ շուրջ 27 գիտնական է մասնակցել դասընթացներին:

ԳԱԱ շարունակել է մասնակցել և իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC), Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF), Միավորված ազգերի զարգացման ծրագրի (UNDP), «Հորիզոն Եվրոպա» ծրագրի, Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության (BMBF), Գերմանական Շտիֆտունգ Ֆոլքսվագեն հիմնադրամի (Volkswagen Stiftung Foundation), Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպության (NATO), Եվրոպական կենսաքիմիական ընկերությունների դաշնության (FEBS), Միջազգային զարգացման գործակալության (USAID) և այլ հիմնադրամների ծրագրերին (միջազգային գիտական ծրագրերի ու հիմնադրամների մասնակցության արդյունքները ներկայացվում են ստորև):

Հաշվետու տարում ԳԱԱ ինստիտուտներն ակտիվ համագործակցություն են ծավալել արտերկրի գործընկերների հետ, երկուստեք զգալիորեն աճել են արտասահմանյան գիտնականների այցերն ու մասնակցությունը ԳԱԱ կազմակերպած գիտական միջոցառումներին, ինչպես նաև ԳԱԱ գիտնականների գործուղումներն արտերկիր: 2023թ. արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ԳԱԱ 606 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 275, համատեղ աշխատանքներ է կատարել 161, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 170 գիտաշխատող: Արտասահմանից ժամանել է 1026 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 530, համատեղ աշխատանքներ է կատարել 301, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 195 գիտաշխատող: Կնքվել են համատեղ

հետազոտություններ կատարելու, նոր արտադրություն սկսելու համագործակցության հուշագրեր ու պայմանագրեր:

ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

N	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., ռուբ., GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2023թ. համար	
1	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ	Արևելյան համագործակցության կապուղիներ	ԵՄ ԱԳ կապուղիներ 2	2020-2025		754 386 €	139 793 €	Հ.Ասցատրյան
2		Նպաստել գիտական և արդյունաբերական դաշինքների R&D զարգացմանը համագործակցային և բաց նորարարական պլատֆորմի միջոցով	Էրազմուս+	2018-2023		12 227 €	360 €	Ս.Աբրահամյան
3		Հորիզոն Եվրոպայում հետազոտական ենթակառուցվածքների ազգային կոնսոլիդացիային կենտրոնի կոնսորցիում	Հետազոտական ենթակառուցվածքների կոնսորցիում (ԵՄ Հորիզոն) (RICH)	2022-2029		40 000 €	10 772 €	Հ.Ասցատրյան
4		Համաեվրոպական գիտակրթական մոլտիգի-գաբիթ ցանց և հարակից ծառայություններ	ԵՄ Հորիզոն 2020	2017-2023		126 591 €	40 737 €	Վ.Սահակյան
5		Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան	Էրազմուս+ ARMDOCT	2020-2023		59996 €	17500 €	Հ.Սահակյան
6		Եվրոպայում բաց գիտության ազգային նախաձեռնություններ	ԵՄ Հորիզոն 2020	2019-2023		97 100 €	1750 €	Հ.Ասցատրյան
7	Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան	Ռենտգենյան պայծառ գալակտիկաների որոնում և ուսումնասիրություն	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023		5000 \$	2000 \$	Ա.Միքայելյան
8		Նախանշյորոնային աստղերի վիճակի և կազմության հավասարումը և հիպերոնների հետ միաձուլման մնացորդները	«Ֆոլքսվագեն» հիմնադրամ	2020-2023		70000 €	15000 €	Ա.Սեդրակյան

9	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ	Նանոլարային բիոսենսորներ վիրուսների հայտնաբերման համար	UNIGE Seed fund Լոզանի դաշնային պոլիտեխնիկական դպրոց	2021-2023	4500 CHF	3000 CHF	Ա.Եսայան
10	Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	Մագնիսական նանոհիբրիդները քաղցկեղի բուժման համար	Հորիզոն 2020	2019-2023	364162.5 €	53479.4 €	Ա.Մանուկյան
11		Օպտիկական մագնիսական սենսորային համակարգի մշակում անվտանգության անցակետերի համար	Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպություն (NATO SPS), Գիտությունը խաղաղության և անվտանգության համար բազմամյա ծրագիր	2020-2024	150 790 €	32500.0 €	Ա.Պապոյան
12		Կորբալտի հիման վրա օքսիդային նյութերի ջերմաէլեկտրական փոխակերպման արդյունավետության բարձրացումը լեգիրման և միկրոկառուցվածքի մոդուլացման միջոցով	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2022-2025	43560 \$	9720 \$	Ա.Կուզանյան
13		Նանոնյութերի արտադրման նոր էներգաարդյունավետ կարգավորվող մեթոդ. կենսաբժշկական և էներգիայի պահպանման կիրառություններ	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ	2023-2027	400 000 \$	95 040 \$	Ա.Մուկասյան, Ա.Մանուկյան
14	Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն	Բնության հետ քաղաքների զարգացման, ինովացման և կառավարման համար համատեղ արտադրություն	Եվրահանձնաժողով, Հորիզոն 2020 ծրագիր	2017-2022	190 000 €	17234 €	Շ.Ասմարյան
15		Հայաստանում Սևանա լճի կառավարման գիտահեն գործիքակազմի ստեղծում	Գերմանիայի կրթության և գիտության դաշնային նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն	2020-2023	11200 €	2868 €	Շ.Ասմարյան
16		Միջուկային դատափորձաքննության ոլորտում կարողությունների զարգացում Հայաստանի և Վրաստանի միջև	Գիտության և տեխնոլոգիայի միջազգային կենտրոն (ISTC)	2021-2023	300 000 \$	1500 \$	Օ.Բեյլակա
17		Խմորված մթերքների նորարարության խթանում	Եվրահանձնաժողով, Գիտության և տեխնո-	2021-2025	4170 €	4170 €	Մ. Բեգլարյան

			լոգիայի Եվրոպական համագործակցություն				
18		Մեղվաբուծական արտադրանքի արժեքավորում և կենսամոնիթորինգ մեղուների և մեղրի անվտանգության համար	Եվրահանձնաժողով, Գիտության և տեխնոլոգիայի Եվրոպական համագործակցություն	2023-2027	2860 €	2860 €	Մ. Բեգլարյան, Դ. Պիպոյան
19		Հանքարդյունաբերական շրջանի ցանցի վերականգնում	Եվրահանձնաժողով, Գիտության և տեխնոլոգիայի Եվրոպական համագործակցություն	2023-2027	1318 €	1318 €	Գ. Տեփանյան
20	Հ. Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ	Քաղցկեղածին և բակտերիալ բջիջների դեղամիջոցների թիրախային առաքումը լեկտին պարունակող տրանսպորտային համակարգերի միջոցով	ԿԳՄՍՆ ԳԿ, ԲՀ ԳՏՊԿ -2021 միջազգային գիտական համագործակցություն	2021-2023	9 000 000 դրամ	2 072 000 դրամ	Վ. Գասպարյան
21		Ֆուլաթի և կատիոնային պորֆիրինների հիմքով նոր վեկտորային կոմպոզիտներ ուռուցքների ֆոտոդինամիկ թերապիայի համար	ԿԳՄՍՆ ԳԿ, ԲՀ ԳՏՊԿ -2021 միջազգային գիտական համագործակցություն	2021- 2023	9 000 000 դրամ	3 000 000 դրամ	Թ. Սեֆերյան
22		Լիպոսոմների տարբեր ձևերով դեղերի ինտրանազալ առաքման նոր մոտեցման մշակում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	5000 \$	500 \$	Թ. Սեֆերյան
23		Հեմորֆինների պոտենցիալ նյարդակարգավորիչ դերը փորձարարական Պարկինսոնի հիվանդության ժամանակ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	5000 \$	500 \$	Ֆ. Սարուխանյան
24		Ցիտրուլինացված ադենոզինդեամինազը ռևմատոիդ արթրիտի ախտորոշման ցուցանիշ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	5000 \$	500 \$	Ա. Անտոնյան
25	Ա. Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ	Կլիմայի փոփոխության պայմաններում գենետիկական կենսահսկողության կարողությունների հզորացում Հայաստանում (ArmBio Climate)	ԵՊՀ միջազգային համագործակցության ծրագիր (APPEAR 278)	2023-2027	30 392 710 դրամ	5 003 394 դրամ	Ա. Ալեքսանյան
26		Հայաստանում երկրաբազմազանության և կենսաբազմազանության փոխազդեցությունը անտառային և տափաստա-	ԵՊՀ միջազգային համագործակցության ծրագիր (APPEAR 249)				

		նային բնակմիջավայրերում էկոկլիմայական գրադիենտի երկայնքով, գլոբալ տաքացման հետևանքների համար կիրառվող տեսական հայեցակարգ (InvBioDivArm)		2023	1 369 973 դրամ	1 369 973 դրամ	Ա.Ալեքսանյան
27		Բուսաբանական այգիների հավաքածուներում եզակի և հնագույն ծառերի նմուշների պահպանում՝ գիտելիքի տարածման և ինտերակտիվ ցուցանակների միջոցով, Լվովի և Երևանի բուսաբանական այգիների օրինակով	Բուսաբանական այգիների պահպանության միջազգային կազմակերպություն/ Դենդրոպարկային ցանց (BGCI/ArbNe)	2023	448 877 դրամ	448 877 դրամ	Ա. Գասպարյան
28		Տարածաշրջանային էներգիայի վայրի պտղատու և դեկորատիվ ծառերի ex situ պահպանման հայտաջիկական նախաձեռնություն (մաս II)	Բուսաբանական այգիների պահպանության միջազգային կազմակերպություն/ Դենդրոպարկային ցանց (BGCI/ArbNet)	2023-2024	576 860 դրամ	576 860 դրամ	Ա. Ռուդով
29		Երևանի բուսաբանական այգու Հայաստանի ֆլորայի ալպիական էքսպոզիցիոն հավաքածուի վերականգնում	Բուսաբանական այգիների պահպանության միջազգային կազմակերպություն/ Դենդրոպարկային ցանց (BGCI/ArbNet)	2023-2027	992 496 դրամ	992 496 դրամ	Ժ. Հակոբյան
30		Սևան ազգային պարկի կառավարման պլանի մշակում և անհրաժեշտ վերլուծությունների կատարում	Միավորված ազգերի զարգացման ծրագիր (UNDP)	2022-2024	53 752 465 դրամ	32 250 214 դրամ	Ա. Գասպարյան
31		Էմերալդ ցանցի առաջխաղացումը և կառավարումը Հայաստանում	Էմերալդ ցանց (EMERALD)	2022-2024	13 910 746 դրամ	4 274 656 դրամ	Ա.Ալեքսանյան
32		Բնության հատուկ պահպանվող տարածքներում բույսերի բազմազանության մշտադիտարկում	Կովկասի բնության հիմնադրամ (CNF)	2023-2027	134 370 000 դրամ	20 965 000 դրամ	Ա.Ալեքսանյան, Գ. Ֆայվուշ
33		«Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն և կայուն օգտագործում Հայաստանում» Եվրոպական միության չափանիշներին համապատասխան» թվինինգ ծրագիր	Բեռլինի ազատ համալսարան	2023-2025	11 869 350 դրամ	5 683 881 դրամ	Ա. Գասպարյան

34		Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն և կայուն օգտագործում Հայաստանում	Չեխիայի հանրապետության բնապահպանության գործակալություն	2022-2023	767 880 դրամ	767 880 դրամ	Ա. Գասպարյան
35		Թուրքական պնդուկի (<i>Corulus colurna</i>) սերմերի աղբյուրների նմուշառում Կովկասում	Յոհան Հայնրիխ Ֆոն Թյունենի ինստիտուտ	2023-2024	7 478 138 դրամ	4 354 656 դրամ	Ա. Գասպարյան
36	«Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ	<i>Bacillus thuringiensis</i> -ի ջրալույծ մելանինի նեյրոնեգեներատիվ և ֆիտոխթանիչ հատկությունները, դրա գործնական կիրառման հնարավորությունները	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2023-2024	200 000 \$	200 000 \$	Ա. Հովսեփյան
37		Հայ կանանց կրծքի կաթում պրոբիոտիկ բակտերիաների կենսաբազմազանության ուսումնասիրություն	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2023-2024	5000\$	5000 \$	Լ. Դանիելյան
38		Նոր մեկուսացված <i>Bacillus</i> sp. շտամները որպես կենսապլաստիկ արտադրիչ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2023-2024	5000 \$	5000 \$	Ա. Պալոյան
39		Լուսազգայունացուցիչների վրա հիմնված կոմպլեքսների հակաուռուցքային գործունեության գնահատում՝ օգտագործելով Chicken chorioallantoic membrane (CAM) մոդելը ուռուցքին ուղղված ֆոտոդինամիկ թերապիայի համար	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2023-2024	5000 \$	5000 \$	Ա. Զաքոյան
40		Ոչ սպիտակուցային ամինաթթուների, պեպտիդների և պոլիմերների վրա հիմնված հակավիրուսային (հակաSARS-CoV) և հակաբակտերիալ միացությունների նպատակային սինթեզ և զննում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2022-2025	164 000 \$	55000 \$	Ա. Սադյան
41		Էքստրեմոֆիլներ Եվրասիայից	Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարություն	2023–2025	21600 €	7200 €	Ա. Պալոյան
42	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	Խաղողի բազմազանության պահպանման և հարմարվողական հատկանիշների մոբիլիզացման խթանում	Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինք (ANSO)	2021-2023	150 000 \$	143 000 \$	Ք. Մարգարյան
43		Խորը ուսուցման, մոլեկուլային մոդելավորման և					

		կենսաբժշկական փորձարկումների կիրառում՝ SARS COV-2 հիմնական պրոտեոմների պոտենցիալ ինհիբիտորներ փոքր դեղային միացությունների մշակման համար	Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինք (ANSO)	2022-2024	150 000 \$	25000 \$	Զ.Կարայան
44		Մոլեկուլային և բջջային կենսաբանության գործնական ուսուցում Հայաստանի երկու ռազմավարական համալսարաններում	«Ֆուլսվագեն» հիմնադրամ	2021-2024	142 100 €	17000 €	Վ.Վարդանյան
45		Քաղցկեղների համալիր կենսամարկերների որոշման և ֆենոտիպերի դասակարգման մեթոդների մշակումը կենսաբանական ուղիների և բարձր թողունակության տվյալների հիման վրա	ԿԳՄՄՆ ԳԿ, ԲՀՀ	2021-2023	9 000 000 դրամ	3 000 000 դրամ	Ա.Առաքելյան
46		Համակարգչային սքրինինգի, մոլեկուլային մոդելավորման և կենսաքիմիական վերլուծության տեխնոլոգիաների կիրառումը կորոնավիրուսային վարակի բուժման նոր պոտենցիալ պատրաստուկների մշակման համար	ԿԳՄՄՆ ԳԿ, ԲՀԳՏՊԿ	2021-2023	9 000 000 դրամ	1 321 000 դրամ	Զ.Կարայան
47		Մոլեկուլային գենետիկական թեստավորման նոր համակարգի մշակումը նոտանեկան միջերկրածովյան տենդի համար	Ամերիկայի հայ ճարտարագետներ և գիտնականներ (AESA)	2023-2025	10300 \$	5150 \$	Ռ.Զախարյան
48		Կենսապաշտպանության բարձրացումը ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Կենսաբանկում	Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամ (CRDF)	2023-2023	15000 \$	15000 \$	Հ.Ղազարյան
49		Հայաստանում շրջանառվող մարդու Klebsiella pneumonia իզոլատների բնութագրումը ամբողջական գենոմի սեքվենավորման հիման վրա	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	\$ 5000	\$ 500	Ա.Սեդրակյան
50		Կոլիսիցինը կապող տեղամասը արգելակող նոր ցիտոստատիկների մշակում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	5000 \$	2500 \$	Վ.Առաքելով
51		Թելոմերի երկարության ուսումնասիրությունը նախորդային սեքվենավոր-	Գիտության և կրթության հայկական	2022-2023	5000 \$	2500 \$	Դ.Ավետյան

		ման և գենոմի խմբագրման տեխնոլոգիաների կիրառմամբ	ազգային հիմնադրամ (ANSEF)				
52		Կապանում մարդկանց մոտ ծանր մետաղների տևական ազդեցության հետևանքով առաջացած էպիգենետիկական փոփոխությունները	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	5000 \$	2500 \$	Ա.Ստեփանյան
53		Կրեատինը որպես նոր բնական ռադիոպաշտպանիչ սուր ռենտգենյան ճառագայթման դեպքում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	5000 \$	2500 \$	Մ.Պետրոսյան
54	Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ	Մոդիֆիկացված նանոմասնիկների և 5-ֆտորուրացիլի համակցված ազդեցության վերլուծությունը Քրոքերի սարկոմայի և ռաբդոմիոսարկոմայի աճի և զարգացման վրա	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական համատեղ դրամաշնորհային ծրագիր	2021-2023	10 800 000 դրամ	5 015 000 դրամ	Գ.Կիրակոսյան
55		Նախկին խորհրդային երկրների համար կենսաբժշկական պատկերավորման ցանցի ստեղծում	Զան-Յուկերբերգ նախաձեռնություն	2020-2024	300 000 \$	100 000 \$	Ն.Սարվազյան, Ն. Այվազյան
56		Գերազանցության տարածաշրջանային կենտրոն Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտում	ԵՄ, Հորիզոն 2020	2022-2026	2 415 000 €	520 000 €	Ն. Այվազյան
57		Դոպամինի արտազատման և բավարարվածություն ստանալու ճանաչման եղանակները	«Ֆիլիպ Մորիս Արմենիա» ՍՊԸ	2022-2024	13 283 400 դրամ	13 283 400 դրամ	Ա.Ոսկանյան
58		Նիկոտինանման ազդեցություն ունեցող նյութերի բազմամասնագիտական ուսումնասիրում և տվյալների բազայի լրացում տարբեր տեսակի nAChR-ների վրա նվազագույն կախվածությամբ և կողմնակի ազդեցություններով	«Ֆիլիպ Մորիս Արմենիա» ՍՊԸ	2023-2024	5 808 000 դրամ	3 000 000 դրամ	Ա.Ոսկանյան
59		Խոզի աղիքի բնութագրերը որպես սկաֆոլդ և մարդու մաշկ համեմատական վերլուծությունը	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2023-2024	5000 \$	2500 \$	Զ.Կարաբեկյան
60		«Sutherlandia frutescens-ի ազդեցությունը Պարկինսոնի մոդելի վրա»	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2023-2024	5000 \$	2500 \$	Լ.Դարբինյան

61	Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	Սևանա լճի (Հայաստան) կառավարման գիտահեն գործիքների ստեղծում	Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարություն (BMBF)	2020-2023	75000 €	17048 €	Գ.Գևորգյան Կ.Ռինկե (Գերմանիա)
62		Մասնակցային մոտեցմամբ էկոհամակարգային ծառայությունների գնահատում՝ Հայաստանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման նպատակով EcoServ ծրագիր	Ավստրիական զարգացման համագործակցություն	2023-2027	70170 €	23147.7 €	Վ.Ասատրյան Մ.Դավթյան
63		Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա	Էրազմուս+	2022-2025	47316 €	27933.1 €	Բ.Գաբրիելյան
64		Կովկասի կենսաբազմազանության հետազոտական համատեղ հարթակ հիմնելու վրաց-հայ-գերմանական եռակողմ նախաձեռնություն	Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարություն (BMBF)	2020-2024	62 580 €	13649 €	Բ.Գաբրիելյան
65		Կլիմայի փոփոխության պայմաններում Հայաստանում գենետիկական մեթոդների ներդրումը և հզորացումը կենսաանվտանգության խնդիրների լուծման համար	Բարձրագույն կրթության և հետազոտությունների զարգացման ավստրիական գործընկերական ծրագիր	2023-2027	73 643 000 դրամ	46 357 000 դրամ	Ս.Աղայան
66		Թափառող շների և վայրի կենդանիների շրջանում E.granulosus-ի մոլեկուլային համաճարակաբանական ուսումնասիրությունը Հայաստանում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2022-2023	4956 \$	2456 \$	Ս.Աղայան
67		Կենսաբազմազանությունը մեռած բնափայտում. Գերմանիայի և Կովկասի հաճարենու անտառների կայուն պահպանության հիմք	Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարություն (BMBF)	2021-2024	20 000 €	1500 €	Մ. Քալաշյան
68	Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	Հայաստանի հյուսիսային ավազանի համար գետավազանային կառավարման պլանի (ԿԳՄՍՆ ԳԿ) մշակում	ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի	2022-2024	32195 €	16097€	Ս.Մինասյան
69		Ուլտրաարագ սկանավորվող էլեկտրաթերմոգրաֆ (ուսէտ-3)	Նոթթ Դամի համալսարան	2023	125000 \$	125000 \$	Ս.Խարատյան

70	Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	Մեծ Կովկասի սեյսմիկ կառուցվածքը և բարձրացումը	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2018-2024	72000 \$	9930 \$	Հ. Բաբայան
71		Սեյսմիկ ցանցի ընդարձակում Կովկասում և Կենտրոնական Ասիայում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2019 –2024	754 757 \$	6050 \$	Հ.Բաբայան
72		Երկրաջերմային էներգետիկ ռեսուրսների և բնական վտանգների գնահատումը Հայաստանում	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից ֆինանսավորվող Գիտության ոլորտում հետազոտությունների ընդլայնված համագործակցություն (PEER Science)	2021-2024	150 000 \$	47 000 \$	Խ.Մելիքսեթյան
73	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Հիշողությունը սահմաններից այն կողմ. գործունենալով վիճելի տարածքների ժառանգության հետ. Մարի Սկոդոպսկա-Կյուրիի նախաձեռնություններ	Հետազոտական և նորարարական անձնակազմի փոխանակում Հորիզոն 2020	2019-2024	70000 €	5000 €	Հ.Մարության
74		Հայաստանի Սյունիքի մարզի բանահյուսության համայնքահեն գույքագրում, փաստագրում և պահպանում	ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի հիմնադրամ	2021-2023	22 661 497 դրամ	13 952 700 դրամ	Թ.Հայրապետյան
75	Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ	Հայերենի բառակազմության ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում	Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ	2018-2023	35 000 \$	9750 \$	Մ. Սարգսյան
76	Գիտակրթական միջազգային կենտրոն	Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան (ARMDOCT)	Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր	2020-2023	966 177 €	288 920 €	Ա.Օհանյան Ա.Մխիթարյան
77		Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա (AFISHE)	Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր	2022-2025	697 090 €	30 786 €	Գ.Համբարձումյան

	Ընդամենը՝			418 125 392 դրամ 2 944 573 \$ 6504028.5 € 4500 CHF	167 688 987 դրամ 883 596 \$ 1308622.2 € 3000 CHF		
--	-----------	--	--	--	--	--	--

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացվել են միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին ԳԱԱ ինստիտուտների ու անհատ գիտնականների ավելի ակտիվ մասնակցությունը խթանելու մի շարք գործառնություններ՝ հիմնական շեշտը դնելով Եվրոպական Միության հետազոտությունների ու զարգացման «Հորիզոն Եվրոպա» (ՀԵ) ծրագրերի վրա: Մասնակցության խթանման գործընթացն իրականացվել է միջազգային ու եվրոպական գիտական ծրագրերի մասին տեղեկատվության լայն տարածման ու իրազեկության բարձրացման, դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրման, արտասահմանյան գործընկերների փնտրման գործում օժանդակության ցուցաբերման, տեղեկատվական միջոցառումների կազմակերպման միջոցով: Շահառուների բազան համալրվել է նոր անդամներով: Տարվա ընթացքում գրանցված շահառուներին էլեկտրոնային ցանցով տարածվել է մոտ 400 տեղեկատվություն եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերի, հայտարարված բաց մրցույթների, իրականացվող նախագծերի, կայանալիք միջոցառումների մասին, տրամադրվել է մոտ 100 անհատական խորհրդատվություն՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ: «Հորիզոն Եվրոպա» ծրագրի հայաստանյան սոցիալական ցանցերի էջերում պարբերաբար տարածվել է մանրամասն տեղեկատվություն ծրագրի, կոնտակտային անձանց ցանցի, բաց մրցույթների, գործող նախագծերի, միջազգային միջոցառումների, տեղեկատվական օրերի, բրոքերային միջոցառումների ու գործընկերների փնտրման առաջարկների վերաբերյալ: «Հորիզոն Եվրոպա» ծրագրի հայաստանյան ֆեյսբուքյան էջին տարվա ընթացքում գրանցվել է 81 մասնակից՝ ընդհանուր հետևորդների թիվը հասցնելով 1744-ի: (<https://www.facebook.com/HorizonEuropeArmenia>): Տրամադրվող ծառայություններն ուղղված են եղել ոչ միայն ակադեմիական ինստիտուտներին, այլև բոլոր գերատեսչական գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, գիտատար գործունեությանը զբաղվող ՓՄՁ-ին ու հասարակական կազմակերպություններին:

ԵՄ փորձագետների հետ համատեղ կազմակերպվել են մեկշաբաթյա «Հորիզոն Եվրոպա» հայտադիմումների նախապատրաստման դասընթացներ, որոնք ներառել են հնարավոր դիմորդների հետ անհատական խորհրդատվություններ: Տարվում են 2024թ. սկզբին այս միջոցառման 2-րդ փուլի կազմակերպման աշխատանքներ:

ԵՄ «NATIOONS» նախագծի հետ համատեղ կազմակերպվել է ազգային ներգրավվածության միջոցառում, որի նպատակն է բարձրացնել ԵՄ ՀԵ «Որակյալ բնահող» առաքելության իրազեկությունն ազգային շահագրգիռ կողմերի շրջանում՝ ապահովելով որակյալ նյութերի ու տեղեկատվության հասանելիություն, խթանելով մասնակցությունը բնահողի որակի բարելավման կենդանի լաբորատորիաների ու փարոսների ստեղծման մրցույթներին:

Եվրոպական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական միջոցառումներ են անցկացվել ոչ միայն նախագահությունում, այլև ԳԱԱ կազմակերպություններում, բուհերում: Միջոցառումներին ներկայացվել են Հորիզոն Եվրոպա և ԵՄ դրամաշնորհային ծրագրերի

մրցույթները, դիմելու ընթացակարգերը, համատեղ գիտահետազոտական նախագծերին մասնակցելու ու ֆինանսավորում ստանալու հնարավորությունները: Ընդհանուր առմամբ միջոցառումներին մասնակցել է ավելի քան 200 գիտնական:

Սեպտեմբերին կազմակերպվել է «Հորիզոն Եվրոպա» մասնակցության ընդլայնում ու եվրոպական հետազոտական տարածքի հզորացում (Widening) ենթաձրագրին նվիրված տեղեկատվական միջոցառում, որի ընթացքում ներկայացվել են ենթաձրագրի մրցույթները, նախագծի շրջանակում հասանելի նախագծերի առաջարկների մասնագիտական վերստուգման ու բրոքերային միջոցառումների համար նախատեսված ճանապարհորդական դրամաշնորհի սխեմաները՝ խթանելու ծրագրերում հայտերի ներկայացման գործընթացը: Այդ հնարավորությունների շրջանակում ԳԱԱ ինստիտուտների 4 գիտնական ստացել է ճանապարհորդական դրամաշնորհներ և մասնակցել եվրոպական տարբեր երկրներում անցկացված ՀԵ բրոքերային միջոցառումներին: ԳԱԱ ինստիտուտների ներկայացրած ՀԵ 3 նախագծերի առաջարկներ անցել են ԵՄ փորձագետների մասնագիտական վերստուգում:

Դեկտեմբերին Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ ԳԱԱ-ում անցկացվել է ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի տեղեկատվական միջոցառում, որին մասնակցել է 80 մարդ: Միջոցառման նպատակն էր խթանել Հայաստանի կազմակերպությունների մասնակցությունը ԵՄ գիտանորարարական նախագծերին: Միջոցառման ընթացքում Եվրահանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրել են «Հորիզոն Եվրոպա» ծրագիրն ու մրցույթները, Հայաստանի գիտանորարարական կազմակերպությունների ու անհատ գիտնականների մասնակցության հնարավորությունները տարբեր ենթաձրագրերում՝ «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողությունները», «Մասնակցության ընդլայնում և եվրոպական հետազոտական տարածքի հզորացում», «Նորարարությունների Եվրոպական խորհուրդ», «COST գործողություններ» և այլն:

Աշխատակիցները ԵՄ դրամաշնորհային ծրագրերը ներկայացնելու նպատակով մասնակցել են տարբեր միջոցառումների՝ ԵՄ NanoQIQO նախագծի շրջանակում կազմակերպված «Օպտիկայի և ֆոտոնիկայի դպրոցին», «Հայաստանում գործող ընկերություններին հասանելի ծրագրեր և գործիքներ» սեմինարին, Գիտության և գործարարության օրերի շրջանակում «Գիտություն, տնտեսություն՝ տեխնոլոգիաների առևտրայնացում», «Գիտության և գործարարության EXPO» միջոցառումներին, մի շարք թրեյնինգների:

ՍՓՅՈՒՌՔԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքի բաժնի, արտասահմանյան անդամների ու կազմակերպությունների միջև գործող համագործակցության շնորհիվ հնարավոր է դառնում իրականացնել ժամանակակից հետազոտություններ արտասահմանյան լաբորատորիաներում, տպագրել համատեղ հոդվածներ բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, պատրաստել երիտասարդ կադրեր, կատարել փոխադարձ այցեր, կնքել նոր համաձայնագրեր: Այդպիսի համագործակցության արդյունքում ԳԱԱ 80-ամյակի շրջանակում ստորագրվել է գիտական համագործակցության համաձայնագիր Իրանի Իսլամական Հանրապետության գիտությունների ակադեմիայի հետ ԳԱԱ արտասահմանյան անդամ Մ.Թումանյանի (ԻԻՀ գիտությունների ակադեմիայի անդամ) ջանքերով: Մշակվել է Ճանապարհային քարտեզ, որը թույլ կտա գտնել երկուստեք հետաքրքրության ոլորտներն ու խորացնել համագործակցությունը:

Ստորև բերվում է ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակն ըստ գիտության ուղղությունների ու երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	8	5	10	9	8	40
2	ԱՄՆ	10	6	9	4	3	32
3	Ֆրանսիա	1	4	2	2	6	15
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					1	1
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			2			2
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Պորտուգալիա					1	1
13	Իրան	1					1
14	Հունաստան	1					1
15	Բելառուս				1		1
16	Կորեա		1				1
17	Լիբանան					1	1
Ընդամենը՝		25	24	28	18	19	114

Համատեղ հետազոտությունների իրականացում և առաջարկներ: Կ.Լին (Կորեա) շարունակում է ակտիվ համագործակցությունը Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ու ԵՊՀ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի հետ: Նա ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող առաջատար հետազոտությունների աջակցության ծրագրի (2021-26թթ.) օտարերկրյա պաշտոնական գործընկերն է:

Ա.Պողոսյանը (ՌԴ) ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» մրցույթի արդյունքում (2022-27թթ.) ճանաչվել է գիտական թեմայի հաղթող: Հետազոտությունն իրականացվելու է Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ համատեղ:

Ա.Մինասյանը (Ավստրալիա) համագործակցում է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հետ միկրոալիքային ֆոտոնիկ ազդանշանի ինտեգրված մշակման աշխատանքներում:

Լ.Բուգալը (ՌԴ) սերտ համագործակցում է Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատորիայի հետ նանոգրաֆենային կլաստերների ուսումնասիրության շրջանակում:

Ֆ.Մկրտչյանը (ՌԴ) Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հետ շարունակում է Սևանա լճի էկոլոգիական գործընթացների մոդելավորման համակարգի, լճի երկրաէկոլոգիական վիճակի ու մարդածին գործոնների ազդեցության ապագա հետևանքների հաշվարկման ուսումնասիրությունները:

Ռ.Միրզոյանը (ՌԴ) շարունակում է համագործակցել ԻԿՐԱՆԵՏ-Հայաստան միջազգային կազմակերպության գիտաշխատողների հետ «MAGIC» պատկերային մթնոլորտային չերենկոլմյան դիտակների համակարգով տարբեր գործընթացների ուսումնասիրություններում:

Ա.Սեդրակյանը (Գերմանիա) համագործակցում է Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի հետ, կամավոր հիմունքներով եղել է «Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և հարաբերական ծգողականություն» բաժնի արտաքին ղեկավարը:

Վ.Սաքանյանը (Ֆրանսիա) շարունակում է համագործակցությունը «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ: Նա ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող ծրագրի գիտական խորհրդատուն է: Կենտրոնում ներդրել է կետային մուտագենեզի տեխնոլոգիան, նրա ղեկավարությամբ իրականացվել են մի շարք փորձնական աշխատանքներ՝ բնագավառի նոր մեթոդների կիրառմամբ: Սպիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիայի աշխատանքներին նպաստելու նպատակով Վ.Սաքանյանը պարբերաբար տրամադրել է թանկարժեք նյութեր:

Գ.Անտրանիկյանը (Գերմանիա) սերտորեն համագործակցում է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի սպիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիայի հետ, արդյունքում տպագրվել է 3 հոդված ազդեցության բարձր գործակից ունեցող շտեմարաններում (Q1 և Q2): Նրա մասնակցությամբ ներկայացվել է ծրագիր, որը ֆինանսավորելու է Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարությունը (BMBF), որին կմասնակցեն նաև կենտրոնի աշխատակիցները:

Ա.Դարզին (Մեծ Բրիտանիա) Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ու Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) խորհրդի անդամ է, շարունակում է համագործակցությունը ՀՀ առողջապահական կառույցների հետ, մեծ ներդրում ունի «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխության աշխատանքներում:

Տ.Դանիելյանը (Ֆրանսիա) աջակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի և Լիլի համալսարանի միջև համագործակցությանն ասպիրանտական թեզի հետազոտությունների շրջանակում: Ինստիտուտի աշխատակիցներն այցելել են Լիլ համալսարան, տպագրվել է հոդված բարձր վարկանիշ ունեցող Geobios ամսագրում: Նա Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտի ասպիրանտի համաղեկավար է, յուրաքանչյուր տարի Ֆրանսիայում ասպիրանտը կատարելու է 6-ամսյա հետազոտական աշխատանքներ: Տ.Դանիելյանը նաև ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող ծրագրի համաղեկավար է:

Ս.Ղազարյանը (Մեծ Բրիտանիա) շարունակում է համագործակցությունը Մաշտոցի անվ. Մատենադարանի վերականգնման ու պահպանության բաժնի, Փորձաքննությունների ազգային բյուրոյի և Մ.Սարյանի թանգարանի հետ: Համատեղ նախագծի շրջանակում Լոնդոնում կատարվել է Մ.Սարյանի օգտագործած պիգմենտների մանրադիտակային հետազոտություն: Նրա թեման ԲԿԳԿ կողմից ֆինանսավորման է երաշխավորվել, ինչը հնարավորություն է ստեղծում Հայաստանում Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի հետ հիմնել համատեղ նոր լաբորատորիա:

Ա.Ղազարյանը (ՌԴ) համագործակցում է Արվեստի ինստիտուտի հետ, նա «Արվեստագիտական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ է, ինստիտուտի հետ համատեղ տպագրել է «Նոր-Նախիջևանի հայկական գաղութի արվեստը» կոլեկտիվ մենագրությունը:

Ա.Խոջամիրյանի (Գերմանիա) նախաձեռնությամբ Ա.Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիայի ԱԱԳԼ-Բելլե2 խմբի հետ իրականացվել է լայնածավալ ծրագրի տեսական մասի նախագծում:

Մասնագետների պատրաստում և վերապատրաստում: Արտասահմանյան անդամները հնարավորինս աջակցում են Հայաստանի երիտասարդ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, նրանց նորարարական մտքի խրախուսմանը, մի շարք ասպիրանտների գիտական ղեկավարներ և համաղեկավարներ են:

Կարեն ու Արմեն Քոչարյանները (ԱՄՆ) Ն.Քոչարյանի անվան ամենամյա միանվագ դրամաշնորհ են տրամադրում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 2 ուսանողի լավագույն մագիստրոսական աշխատանքի համար:

Վ.Գրեգորյանի անվան (ԱՄՆ) ամենամյա կրթաթոշակ է սահմանվել երիտասարդ արևելագետների ու պատմաբանների համար «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության կողմից:

Հ.Փանոսյանի նախաձեռնությամբ ԱՐՓԱ-ն կազմակերպում է երիտասարդ մասնագետների համար նորարարության ամենամյա մրցույթ, որի նպատակն է խրախուսել նորարարական միտքն ու խթանել նրա զարգացումը:

Ա.Մինասյանը հիմնել է «Արամ և Շերի Մինասյան հիմնադրամը», որը նախատեսում է դրամական աջակցություն ցուցաբերել ասպիրանտներին շարունակելու հետազոտություններն էլեկտրոնային, համակարգչային տեխնիկայի, ռադիոֆիզիկայի կամ ֆիզիկայի ոլորտներում: Այս տարի մրցանակը ստացել է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ասպիրանտ Ա.Ստեփանյանը:

Ա.Սեդրակյանն ու Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանն ավարտել են Volkswagen հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագիրը, որին մասնակցել են աստղադիտարանի աշխատակիցները:

Վ.Սաքանյանը կարևոր դեր ունի երիտասարդ կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման հարցում մոլեկուլային կենսաբանության ոլորտում:

2023թ. լրացավ արտասահմանյան անդամ Յու.Հովհաննիսյանի 90-ամյակը, որի շրջանակում իրականացվեց վարպետաց դաս Երևանի 7 դպրոցների ավելի քան 150 աշակերտի համար: Միջոցառման ժամանակ Յու.Հովհաննիսյանն ակադեմիայի գովասանագրեր ու խրախուսական նվերներ հանձնեց քիմիայի միջազգային օլիմպիադայում հաղթած աշակերտներին:

Համատեղ աշխատությունների հրատարակում: Արտասահմանյան անդամների ու ՀՀ ակադեմիական և բուհական համակարգերի գիտնականների համատեղ ուսումնասիրությունների հիման վրա հրատարակվել են գրքեր, հետազոտությունների արդյունքները տպագրվել են միջազգային հեղինակավոր հանդեսներում, Հայաստանի կենտրոնական պարբերականներում, զեկուցվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում:

Մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպվող գիտական և գիտագործնական միջոցառումներին: Արտասահմանյան անդամներն ակտիվորեն մասնակցել են ՀՀ-ում կազմակերպվող գիտական, գիտակազմակերպական միջոցառումներին: Նրանց ակտիվ համագործակցության շնորհիվ ավելացել է նաև միջազգային ճանաչում ունեցող գիտնականների (ոչ հայազգի) մասնակցությունը Հայաստանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: Արտասահմանյան անդամներից շատերն ընդգրկված են ՀՀ գիտական կազմակերպությունների կառավարման մարմիններում, մասնագիտական խորհուրդների կազմերում ու գիտական հանդեսների խմբագրական կազմերում: Ա.Սեդրակյանը մասնակցել է "The Modern Physics of Compact Stars and Relativistic Gravity" գիտաժողովի կազմակերպման աշխատանքների համակարգմանը, եղել է գիտաժողովի համանախագահ: Ա.Ղազարյանն Արվեստի ինստիտուտի հետ Դոնի Ռոստովում կազմակերպել է «Ճարտարապետություն և արվեստ. տեսությունից մինչև պրակտիկա» միջազգային գիտաժողովը:

Մասնակցությունը գիտական փորձաքննությանը: ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամները ԲԿԳԿ փորձագետներ են, մասնակցում են բյուջետային ֆինանսավորման համար մրցութային սկզբունքով կազմակերպվող գիտական հետազոտությունների

նախագծերի (տեղական ու համատեղ միջազգային) հայտերի գիտական փորձաքննությանը:

Անդամակցություն միջազգային կազմակերպություններին ու պարգևներ:

Ա.Մինասյանն ընտրվել է Եվրոպական գիտությունների ակադեմիայի անդամ գիտության և տեխնոլոգիայի մեջ ակնառու ավանդի համար: Ա.Տերյանն արժանացել է Մատենադարանի Մաշտոցի անվան մեդալի կատարած ներդրումների համար: Վ.Հարությունովն արժանացել է Ռուսաստանի կրթության և գիտության նախարարության պատվո կրծքանշանի գիտության ու կրթության որտում ունեցած ներդրման համար:

Հարկ է նշել նաև, որ ԳԱԱ արտասահմանյան անդամները «բարի կամքի դեսպաններ են», որոնք Հայաստանի համար դժվար պահերին, օգտագործելով իրենց հեղինակությունը, հանդես են գալիս հանրային ելույթներով, մասնակցում քննարկումների, ներկայացնում Հայաստանին հուզող խնդիրները:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023թ. գրահրատարակչական ցուցանիշները*

Անվանումները	Քանակը	Տպագրական մամուլը	Տպագրական թերթ-տպվածքը (հազ. օրինակ)	Տպաքանակը
Գրքեր	37	870	286	14500
Հանդեսներ (14 անուն)	55 համար	475	104	11700
Ընդամենը՝	92	1345	390	26200

* Տվյալները վերաբերում են «Գիտություն» հրատարակչության մականիշով լույս ընծայված գրականությանը:

**«Գիտություն» հրատարակչության 2023թ. հրատարակությունները
Գրքեր**

1. А.Бекарян - Армения в судьбе Джорджа Байрона
2. Լ.Ղազարյան - Ֆելիքս Բախչինյանի արձակը
3. Վ.Գրիչենց - Ահազանգ. պահանջ: Հայ կյանքի զգաստության, վերաճանաչման, վերահաստատման
4. Գ.Պողոսյան - Ռուսաստանի հայկական սփյուռքի հայրենասիրության ներուժը
5. Մ.Բարսեղյան - Դեպքեր, դեմքեր...
6. Լենսեր Աբգարի Աղալովյան. կենսամատենագիտություն
7. Ֆ.Բախչինյան - Սիգիտաս Գյադայի բանաստեղծական աշխարհը
8. Ֆրիտյոֆ Նանսենը և Հայաստանը (փաստաթղթերի ժողովածու)
9. Գրական Անիկշչայ (կազմ. և թարգմ.՝ Ֆ.Բախչինյան)
10. «Լեզու և լեզվաբանություն», 2022թ., N 2
11. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների 2022թ. գործունեության համառոտ հաշվետվություն
12. Основные результаты научных исследований НАН РА за 2022г.
13. ՀՀ ԳԱԱ գիտական և գիտակազմակերպական գործունեության 2022թ. հիմնական արդյունքներ. հաշվետվություն
14. Լ.Թեյլան - Հայերենագիտական ուսումնասիրություններ
15. Հեղ. խումբ - Նոր բառեր, պր.2
16. Յու.Սովարյան - Հայկական պետականության կառավարչական հիմնախնդիրները

17. Г.Погосян - Историческая память и национальная идентичность
18. «ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի տեղեկագիրք - 2022
19. Կարինե Խուդաբաշյան. Կենսամատենագիտություն
20. Ֆ.Բախչինյան - Ֆադեյ Սարգսյան (ծննդյան 100-ամյակի առթիվ)
21. А.Агасян - Стихотворения. Русская лира (переводы).
22. «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանի նյութեր», հ. 15, N 1, N 2
23. «Բանբեր հայագիտության», 2023թ., N 1, N 2
24. «Ջահովյանական ընթերցումներ», N 1 (19)
25. Г.Карагёзян - Армения и армяне в записках европейских путешественников (Легенды и придания эпохи раннего христианства)
26. Авт.кол. «Актуальные проблемы механики сплошной среды (Сборник научных трудов)».
27. «Արվեստագիտական հանդես», 2023թ., N 1
28. T.Harutyunyan, Y.Ashrafyoun - Spectral Theory of Dirac operators
29. Հ.Մարգարյան - Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից- ԺԴ դարի առաջին կեսին
30. Լ.Խաչատրյան - Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը
31. Հեղ.խումբ - 1919-1920թթ. Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու
32. J.Akopian, A.Ghukasyan, A.Elbakyan, L.Martirosyan – Indigenous flora as a source of arid ornamental horticulture in Armenia.
33. Ա.Բոգոյան, Գ.Դանիելյան, Մ.Շևալիե - Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների փաստաթղթերում. վավերագիտական խնդիրներ
34. С.Карабахцян - Здравствуй, Ани
35. Հեղ.խումբ - Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը (միջազգային գիտաժողովների նյութեր և հարակից հոդվածներ), հ.Դ

ԳԱԱ գիտական հանդեսներ

1. «ՀՀ ԳԱԱ զեկույցներ» - NN 1,2, 3, 4
2. «Աստղաֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
3. «Պատմաբանասիրական հանդես» - NN 1, 2, 3
4. «Լրաբեր հասարակական գիտությունների» - NN 1, 2, 3
5. «Հայաստանի բժշկագիտություն» - NN 1, 2, 3, 4
6. «Հայաստանի քիմիական հանդես» - NN 1, 2, 3, 4
7. « ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
8. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» - NN 1, 2, 3, 4, 5, 6
9. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» - NN 1, 2, 3, 4
10. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին» - NN 1, 2, 3
11. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Տեխնիկական գիտություններ» - NN 1, 2, 3, 4
12. «Հայաստանի կենսաբանական հանդես» - NN 1, 2, 3, 4
13. «Նեյրոքիմիա» - NN 1, 2, 3, 4
14. «Գիտության աշխարհում» - NN 1, 2, 3, 4

Տպագրվող գիտական հանդեսներից բացի ԳԱԱ մակնիշով գիտական հանրությանն են ներկայացվել «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Բնական գիտություններ» էլեկտրոնային

հանդեսները: Լույս է տեսել «Գիտություն» թերթի 12 համար՝ 5500 օրինակ ընդհանուր տպաքանակով:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Հավաքածուների հայերեն ու օտարալեզու տպագիր արտադրանքի տեսականու ամբողջացման նպատակով համալրման բոլոր ուղիներով Հիմնարար գիտական գրադարանն (ՀԳԳ) ընթացիկ տարում ձեռք է բերել 8003 միավոր գրականություն՝ 6153 միավոր գիրք, 1630 միավոր ամսագիր, 211 միավոր այլ նյութեր, 9 լրակազմ թերթ: Ըստ լեզուների՝ գրադարանը համալրվել է 3838 հայերեն, 2614 ռուսերեն, 1551 լատինատառ գրականությամբ: Հայաստանյան ու միջազգային գրքափոխանակության ծրագրերով ստացվել է 279 գրադարանային միավոր: Ամբողջությամբ վերահաշվառվել, կարգի է բերվել գրքափոխանակության ֆոնդը, գտվել է հիվանդ, վնասված գրականությունը, արդյունքում գրականության թիվը 82200 գրադարանային միավոր է՝ 58043 գիրք, 24157 պարբերական հրատարակություններ: 2023թ. գրքափոխանակության ֆոնդ է հանձնվել 1173 միավոր գրականություն:

ՀԳԳ հավաքածուն առ 01.12.2023թ. 3079900 գրադարանային միավոր է (1685329 միավոր գիրք, 1368941 միավոր պարբերական և այլ նյութեր): Գրադարանի հավաքածուի ֆիզիկական պահպանության նպատակով իրականացվել են վերահաշվառման, քարտարանների ու գույքամատյանների ստուգման աշխատանքներ: Ռուսերեն չափսային ֆոնդից (787000 միավոր) ստուգվել է 480000 միավորը: Գրադարանի աշխատակիցների ջանքերով իրականացվել են ֆիզիկապես մաշված, եզակի, հազվագյուտ 8568 տպագիր նյութի ամրակայման ու վերականգնման աշխատանքներ: Ընթացքում հայտնաբերվել են 9 հայերեն հնատիպ, 8 վաղ շրջանի ու մի շարք այլ չմշակված գրքեր, որոնք գույքագրվել են:

Հավաքածուների երկարաժամկետ պահպանության նպատակով լուսաձրվել և մշակվել է 179674 էջ՝ Համահայկական թվանշային գրադարանը համալրելով 38277 թվային նյութով ու մատենագիտական նկարագրությամբ: Այժմ թվանշային գրադարանը պարունակում է 251389 թվային նյութ՝ 181569 հոդված, 2490 պարբերական, 3612 գիրք, 32 տեսանյութ, 15 քարտեզ:

Ընթացիկ տարում «Վիեննայի Մխիթարյան մենաստանի մամուլի շտեմարան» է մուտքագրվել 21835 գրառում, ներկայում առկա է 63355 թվային նյութ:

Հայ գրքի չորս շտեմարաններում՝ «1512-1800թթ.», «1801-1850թթ.», «1851-1900թթ.», «1901-1920թթ.», տեղադրվել է մինչև 1920թ. տպագրված հայերեն 93 գրքի թվային տարբերակ՝ իրենց մատենագիտական նկարագրություններով:

ՀԳԳ էլեկտրոնային քարտարան է մուտքագրվել 6684 միավոր գրականություն՝ համապատասխան լուսաձրված կազմերով: Զուգահեռ ստեղծվել են թղթային քարտեր, որոնք տեղադրվել են քարտարաններում: Նշված գրականությունը մուտքագրվել է նաև Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակում: ՀԳԳ էլեկտրոնային քարտարանում «Կարդալ առցանց» հղումով ընթերցողին հասանելի է դարձել ևս 780 գիրք: Խմբագրվել է 8352 գրառում, ստեղծվել է 279 հեղինակավոր գրառում, որոնք հիմնականում առնչվում են Գիտությունների ազգային ակադեմիային ու ԳԱԱ ակադեմիկոսներին: Տրվել է յուրաքանչյուրի համառոտ կենսագրությունը, գրառումներին կցվել է 12032 մատենագիտական նկարագրություն: Այժմ ՀԳԳ մատենագիտական տվյալների շտեմարանում մուտքագրվել է 529654 գրառում/886487 գրադարանային միավոր:

Հաշվետու տարում գրադարանը ավանդական ու էլեկտրոնային եղանակներով սպասարկել է 9523 ընթերցողի: Սպասարկման բաժնի համակարգիչներից օգտվել է 2454 այցելու, իրականացվել է 5329 էլեկտրոնային, 4545 թղթային պատվերի ու 24618

գրադարանային միավորի սպասարկում: Կայքէջում գրանցվել է 187000 այցելու: Ներդրվել է ընթերցողի հետ հետադարձ կապի համակարգը, որի շնորհիվ էլեկտրոնային փոստի միջոցով ընթերցողին տեղեկացվել է սպասարկված գրականության մասին:

ԳԱԱ ամսագրերի 616 գիտական հոդված ու 5 գիրք ստացել են DOI (թվային օբյեկտի նույնականացուցիչ), իսկ 196 հոդված՝ ՀՏԴ (Համընդհանուր տասնորդական դասակարգում): «CrossRef» միջազգային մատենագիտական տեղեկատու համակարգում ստեղծվել են ամսագրերի, ժողովածուների տիրույթներ: Համահայկական թվանշային գրադարան են մուտքագրվել ՀՀ գիտակրթական կենտրոնների գիտական ամսագրերի նյութերը:

«Գիտական տպագիր նյութերի թվայնացման ծառայություններ» ծրագրի շրջանակում 2023թ. տեղադրվել է 785 գիրք (140911 էջ), 100 պարբերական (1368 հոդված, 15275 էջ), ձևավորվել է «Թարգմանչաց արվեստ» շտեմարանը, ուր մուտքագրվել է 768 մատենագիտական գրառում: 24 թարգմանչի հետ կնքվել են պայմանագրեր:

«Ակադեմիա-80» շտեմարանում մուտքագրվել է 1402 նյութի մատենագիտական նկարագրություն՝ համապատասխան թվային տարբերակով: «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ» էլեկտրոնային շտեմարանում խմբագրվել է 49 ակադեմիկոսի կենսամատենագիտություն, «Վաստակաշատ գիտնականներ» շարքով պատրաստվել է 37 տեսանյութ:

Հայերեն Վիքիպեդիայում կատարվել է 512 հոդվածի խմբագրում:

Գրադարանի աշխատակիցները մասնակցել են միջազգային (Նովոսիբիրսկ, Սանկտեդերբուրգ, Բրյուսել) ու հանրապետական գիտաժողովների, հանդես են եկել զեկուցումներով: Համատեղ ծրագրերի կազմակերպման նպատակով համագործակցության հուշագրեր են կնքվել Երևանի «Գյոթե կենտրոնի» ու ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ: Իրականացվել են աշխատակազմի վերապատրաստման ծրագրեր ԿԳՄՄՆ, Ֆրանսիայի ժառանգության ազգային ինստիտուտի, Չեխիայի ազգային գրադարանի հետ: 2023թ. մարգային ու համայնքային գրադարանների գրադարանավարների ամենամյա վերապատրաստման դասընթացներին 2 աշխատակից մասնակցել է որպես վերապատրաստող, իսկ գրադարանում իրենց ուսումնական պրակտիկան են անցկացրել Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ ուսանողները:

Հայկական գրադարանային ասոցիացիայի հետ համատեղ հրատարակվել է «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» էլեկտրոնային գիտատեղեկատվական ամսագիրը (լույս է տեսել 2 համար): Գրադարանի «Դիմագրքում» (Facebook) «Թերթելով ՀՀ ԳԱԱ ՀԳԳ հավաքածուները» (17 հաղորդում) և «Տպագիր ժառանգության հետքերով» (35 հաղորդում) շարքերով ներկայացվել են հավաքածուների հետ պարբերաբար տարվող հետազոտական աշխատանքների արդյունքները:

ԳԱԱ համակարգում գործում է ակադեմիական ինստիտուտների 28 ճյուղային-մասնագիտական գրադարան: ՀԳԳ, որպես մեթոդական կենտրոն, աջակցել է ակադեմիական ինստիտուտների գրադարաններին յուրացնելու նորարարություններն ու արդիականացման գործընթացը: 24 գրադարան արդեն ունի գրառումներ ԳԱԱ ինստիտուտների համահավաք էլեկտրոնային քարտարանում, որոնցից 7-ը 2023թ. շարունակել է մուտքագրման աշխատանքները. ընթացիկ տարում մուտքագրվել է 4297 գրադարանային միավոր: Ակադեմիական ինստիտուտների ֆոնդերում առկա է 1055796 գրադարանային միավոր, գրադարաններն այս տարի ձեռք են բերել 3781 գրադարանային միավոր, սպասարկել 4763 ընթերցողի: Տացքը կազմում է 34743 գրադարանային միավոր (ներառված չեն Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Ռադիոֆիզիկայի և

էլեկտրոնիկայի, Քիմիական ֆիզիկայի ու Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների գրադարանների տվյալները):

Հրապարակումներ

1. Զարգարյան Տ.Կ., «Համատարած աշխարհացոյցի»-ի գունագարդ տպագրության հետքերով, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2023, էջ 41-51, DOI: 10.54503/2953-8092.1(1)-41:
2. Զարգարյան Տ.Կ., Մխիթարեան միաբանության Վիեննայի մենաստանի պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 2, 2023, էջ 3-18: DOI: 10.54503/2953-8092.2(2)-3:
3. Ի՞նչ է կանաչ գրադարանը (թարգմ.՝ Տ.Զարգարյան), Ե., Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի, N 1, 2023, էջ 67-68:
4. ԻՖԼԱ-ի ուղեցույցները գրադարաններում հանրային ինտերնետ հասանելիության (թարգմ.՝ Տ.Զարգարյան), Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 2, 2023, 32 էջ, DOI: 10.54503/2953-8092.2(2)-10:
5. Գրիգորյան Մ.Հ., Մարգարյան գրադարանների զարգացման միտումները, Ե., Գավառի պետհամալս. հոդվածների ժողովածու, N 14, 2023, էջ 404-418, DOI: 10.56246/18294480.14-31:
6. Գրիգորյան Մ.Հ., Սփյուռքահայ տպագիր ժառանգության հետքերով, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 2, 2023, էջ 52-66, DOI: 10.54503/2953-8092.2(2)-52:
7. Գրիգորյան Մ.Հ., Հայ տպագրության զարգացման ընթացքը Սյունիքում 20-րդ դարի առաջին կեսին, Ե., «Սյունյաց երկիր», N 10, 2023, էջ 47-48:
8. Գրիգորյան Մ.Հ., Ղազար Փարպեցին հայ գիտական մտքի գնահատմամբ, Ե., «Ղազար Փարպեցի (հոդվածների ժողովածու)», 2023, էջ 68-79:
9. Գրիգորյան Մ.Հ., ՀՀ ԳԱԱ ՀԳԳ «Էդգարյան հավաքածուն», Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2023, էջ 52-66, DOI: 10.54503/2953-8092.1(1)-52:
10. Գրիգորյան Մ.Հ., Ներսես Շնորհալու գրվածքների հրապարակումները (16-18-րդ դարեր), Ե., «Ներսես Շնորհալի (հոդվածների ժողովածու)», 2023, էջ 67-78:
11. Հայրապետյան Ն.Ա., Թվանշային գրադարանների ստեղծման անհրաժեշտությունը, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2023, էջ 9-16, DOI: 10.54503/2953-8092.1(1)-9:
12. Մակարյան Ա.Ս., Հանրային կապերի և գովազդի դերը ժամանակակից գրադարանի ձևավորման գործում, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 1, 2023, էջ 17-24, DOI: 10.54503/2953-8092.1(1)-17:
13. Աշուղյան Ա.Հ., Սոցիալական մեդիան և գրադարանները, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 2, 2023, էջ 18-25, DOI: 10.54503/2953-8092.2(2)-18:
14. Մանուկյան Մ.Է., Տվյալների բազա և մատենագիտությունը, Ե., «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», N 2, 2023, էջ 67-78, DOI: 10.54503/2953-8092.2(2)-67:

ԳԱԱ ԵՎ ԱՅԼ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, ԱՄԲԻՈՆՆԵՐ

1. Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի և Տոմսկի պոլիտեխնիկական համալսարանի հետ՝ «Ռենտգենյան օպտիկա» հայ-ռուսական համատեղ լաբորատորիա, Արցախի պետական համալսարանի հետ՝ Ա.Մկրտչյանի անվ. գիտակրթական լաբորատորիա, Մոսկվայի Կուրչատովի անվ. ինստիտուտի ԳՀԿ հետ՝ հայ-ռուսական գիտակրթական ու արտադրական միջազգային լաբորատորիա, հայ-իտալական գիտակրթական միջազգային լաբորատորիա (Ֆրասկատի, X-Lab), Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի հետ՝ «Ֆոտոնների և տարրական մասնիկների օպտիկա» հայ-ռուսական գիտակրթական ու կիրառական միջազգային համատեղ լաբորատորիա:

2. Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և Հայ-Ռուսական համալսարանի հետ՝ «Քվանտային և օպտիկական էլեկտրոնիկայի» բազային ամբիոն, Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ՝ «Ոչ գծային օպտիկական, լազերային և ֆոտոնիկական բյուրեղների» համատեղ լաբորատորիա:

3. Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի և «ԻՆՏԵԳՐԱ» ՓԲԸ (ԱՄՆ)-ԵՊՀ եռակողմ համատեղ գիտակրթական լաբորատորիա՝ նախագծելու և հետազոտելու հզոր ԳԲՀ կիսահաղորդիչային սարքեր:

4. Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի և Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ՝ «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրատուրայի ամբիոն, ՀԱԷԿ-ի ռադիացիոն անվտանգության լաբորատորիայի հիման վրա՝ լաբորատորիաների կոնսորցիում, ՅՈՒՆԵՎՕ-ի հետ՝ «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն:

5. Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և ՌԳԱ Ա.Սևերցևի անվ. էկոլոգիայի և էվոլյուցիայի պրոբլեմների ինստիտուտի Պարագիտոլոգիայի կենտրոնի հետ՝ գիտափորձարարական համատեղ կենտրոն (գործում է 1996թ.-ից):

6. Մոլեկուլային կենսաբանության և Հայ-Ռուսական) համալսարանի հետ՝ կենսաինժեներիայի, կենսահնֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության համատեղ բազային ամբիոն, ԳԿՄԿ-ի հետ՝ մոլեկուլային և բջջային կենսաբանության համատեղ ամբիոն, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հետ՝ փորձարարական կենսաբանության համատեղ լաբորատորիա:

7. Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտի և ԳԿՄԿ-ի հետ՝ «Նյարդաֆիզիոլոգիա և տոքսիկոլոգիա» մասնագիտությամբ մագիստրատուրա:

8. Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի և ԿԳՄՄՆ ԳԿ-ի հետ՝ «Մաթեմատիկական երկրաֆիզիկայի և գեոինֆորմատիկայի» ու «Երկրաշարժի մշտադիտարկում և մոդելավորում», Geoscience կենտրոնի, հայ-չինական միջազգային համատեղ լաբորատորիա, հայ-ռուսական Երկրի մագնիսական INTERMAGNET ստանդարտի դաշտի դիտարան:

9. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Գերմանիայի «ԴԻ ՎԻ ՎԻ Ինթերնեյշնալ» կազմակերպության հետ՝ համատեղ «Բանավոր պատմությունների կենտրոն», արտերկրի տարբեր գիտական կենտրոնների հետ իրականացվող դաշտային հետազոտական ծրագրերի շրջանակում՝ 14 հնագիտական համատեղ արշավախմբեր (3 հայ-գերմանական, 1 հայ-չինական, 5 հայ-իտալական, 1 հայ-չեխական, 1 հայ-ռուսական, 3 հայ-իսրայելական):

10. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի և ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվ. առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և Հայկական բժշկական ինստիտուտի հետ՝ դատական բժշկության ամբիոններ:

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ
ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

N	Համատեղության կազմակերպություններ	ՀՀ ԳԱՆ բաժանմունքներ														Ընդամենը	
		Մաթեմատիկական գիտությունների բաժանմունք		Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք		Բնական գիտությունների բաժանմունք		Քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունք		Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք		Միջազգային գիտակրթական կենտրոն		Փորձաքննությունների ազգային բյուրո			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	ԵՊՀ	12	1	16	11	15	18	6	3	51	8	1		2		103	41
2	Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ	2		5	4	2	4	4	2	13	11					26	21
3	Հայ-Ռուսական համալսարան	8	3	1	1	14	3	10	25	11	8					44	40
4	ՀՊՏՀ	2								2	2					4	2
5	ՀԱՊՀ	11			2			3							1	14	3
6	ՀՃՇԱՀ			1	1			1	1	9	1					11	3
7	Վ.Բրյուսովի անվ. ՊՀ									9		3	4			12	4
8	ՀԱԱՀ	1				6	3			4						11	3
9	Երևանի Կոմիտասի անվ. պետ. կոնսեր-վատորիա									8						8	
10	Երևանի գեղարվեստի պետ. ակադեմիա									4						4	
11	Մ.Հերացու անվ. ԵՊԲՀ	1				10	10	1		2				1		15	10
12	Երևանի թատրոնի և կինոյի պետ. ինս-տ									4	3					4	3
13	Գավառի պետհամալսարան						1			3						3	1
14	Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինս-տ	2														2	
15	Բժշկական գենետիկայի և առողջու-թյան առաջնային պահպանման կենտրոն	2														2	
16	Արցախի պետհամալսարան			1	2											1	2
17	Ինկուբատոր հիմնադրամ	4														4	
18	Ա.Ալիխանյանի անվ. ազգային ԳԼ			2	2							1	1			3	3
19	«Հայաստանում ֆրանսիական համալ-սարան» հիմնադրամ	8														8	
20	Մատենադարան	2								3	3					5	3
21	ՀՀ գլխավոր դատախազություն													1		1	
22	«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ	2														2	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
23	«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ			1				1								1	
24	ՀՀ ԿԳՄՍ «Պատմամշակութային ժառանգություն» ԳԿ													2		2	
25	ՀՀ ճանապարհային ոստիկանություն														1		1
26	Մ.Մաշտոցի անվ. կրթահամալիր											1	1			1	1
27	Երևանի քաղաքապետարան									1						1	
28	Ռուսաստանի Պլեխանովի անվ. տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղ									3						3	
29	«ՔԵՆԴԼ» ՍՀԻ					3	4									3	4
30	«Պրիզմ» ՍՊԸ											1	1			1	1
31	ՀՀ ԷՆ					1						1				2	
32	ՀՀ ԲՆ	4														4	
33	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինս-տ									1						1	
34	Երևանի Չայկովսկու անվ. երաժշտական դպրոց									1						1	
35	«Հայբուսակ» համալսարան					3		6		2						11	
36	ՀՀ փաստաբանական պալատ											1				1	
37	ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ			1	1											1	1
38	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն					2										2	
39	ՀՀ էլեկտրական ցանցեր			1												1	
40	Precision Sensors and Instruments ("PSL" LLC)				1												1
41	Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա			1												1	
42	Միջուկային և ռադիացիոն անվտանգության ԳԿ			1												1	
43	«Երևան» ԲԿ							1						1		2	
44	Շիրակի պետհամալսարան	2						1		5	2	1	1			9	3
45	Եվրասիա միջազգային համալսարան					1		2								3	
46	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան									3						3	
47	ՀՀ կադաստրի կոմիտեի «Գեոմատիկա» կենտրոն					1	4									1	4
48	«Ադմոսֆեր Արմենիա» ՓԲԸ					1										1	
49	«Սևանի իշխան» ՓԲԸ					1										1	
50	ՀՀ ԷՆ երկրագործության ԳԿ						1										1
51	«Այբ» հիմնադրամ						1										1
52	Հայկական բժշկական համալսարան					1		4								5	
53	ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղ									3						3	
54	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ									2						2	
55	Կրթության տեսչական մարմին									1						1	
56	ՀՀ Ամերիկյան համալսարան	4	1			4				8						16	1
57	Կրթության միջազգային ակադեմիա					1										1	
58	Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ					1										1	
59	ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն»						1										1
60	«Քվանտ» վարժարան					1										1	
61	Գորիսի պետհամալսարան									2						2	
62	Մարալիկի բժշկական հիվանդանոց					1										1	
63	Շիրակի ՊՄՀ						3										3
64	Դավիդյանց լաբորատորիաներ					1	2									1	2

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
65	Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվ. պետ- համալսարանի Երևանի մասնաճյուղ					1				2						3	
66	«Հայոռուզագարդ» ՓԲԸ							1		1						2	
67	«Տոքոմետրիկ» ընկերություն					5	1									5	1
68	«Դե նովո սայենսիս» ընկերություն					3	2					1	3			4	5
69	Հայկական ատոմային էլեկտրակայան					1	2									1	2
70	Ա.Շիրակացու անվ. միջազգային գի- տակրթական համալիր					1										1	
71	Հայաստանի կենսաինֆորմատիկայի ինս-տ					2	3									2	3
72	Ստանդարտացման և չափագրման ազգային մարմին							1								1	
73	ՀՀ պետական կառավարման ակադե- միա													1	1	1	1
74	Հայաստանի հանրային ռադիո									1						1	
75	Շիրակի երկրագիտական թանգարան									1						1	
76	Շ.Շահամիրյանի անվ. կրթահամալիր									1						1	
77	Հայաստանի պատմության թանգարան										2						2
78	ՀԱՊՀ Գյումրիի մասնաճյուղ							3	1							3	1
79	Պատմամշակութային ժառանգության ԳԿ									1	4					1	4
80	ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա							1								1	
81	ՀՀ ոստիկանության կրթահամալիր									1						1	
82	Սևանի Վազգենյան հոգևոր դպրոց									3						3	
83	Երևանի հենակետային բժշկական քոլեջ									3						3	
84	«Վեմ» համահայկական հանդես									1						1	
85	«Ռեգիոն ի միր» գիտական ամսագիր									1						1	
86	«Երկիր մեդիա»									1						1	
87	Մեհրաբյանի անվ. բժշկական քոլեջ							2								2	
88	Հայաստանի ավանդական բժշկության համալսարան					6	3									6	3
89	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան									1						1	
90	Երևանի N 47 դպրոց									1						1	
91	Երևանի N 112 ավագ դպրոց									1						1	
92	«Գրիգորիս» բժշկահումանիտար քոլեջ							1								1	
93	«Լազերային տեխնիկա» ՓԲԸ			1												1	
94	«Հեռանկար» ուսումնական կենտրոն							1								1	
95	Շիրակացու անվ. ճեմարան	1														1	
96	«Արմաթ» ինժեներական լաբորատորիա							1								1	
97	«Պրոմ-Տեստ» ՍՊԸ													1		1	
98	«Արմենիա» հանրապետական ԲԿ													1		1	
100	«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազ- գային համալսարան							3								3	
101	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկ- ման և կանխարգելման ազգային կենտրոն»						1							1		1	1
102	Հայաստանի Եվրոպական համալսա- րան	3								1						4	
103	«Է.Գաբրիելյանի անվ. դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձա- գիտական կենտրոն» ՓԲԸ							1								1	
104	ՀՊՏՀ Գյումրիի մասնաճյուղ							1	4	4						5	4

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
105	Հյուսիսային համալսարան									1						1	
106	Վանաձորի ՊՀ									1						1	
107	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունա- բերության նախարարություն									1						1	
108	ՀԲԸՄ հայկական համացանցային համալսարան									1						1	
109	«Գլաձոր» համալսարան									2						2	
110	ՀՀ ԱՆ «Ավան ՀԱԿ» ՓԲԸ													1		1	
111	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)						1										1
112	ՀՀ ԳՆ երկրագործության ԳԿ						3										3
113	ՀՀ ԷՆ բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի ԳԿ						3										3
114	ՀՀ ԷՆ սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության ԳԿ						2										2
115	«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ									1						1	
116	Մեսրոպ Մաշտոց համալսարան									1						1	
117	IT Storm Company									1						1	
118	«Բիգ Մայնդ» ուսումնական կենտրոն									1						1	
119	ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջ									1						1	
120	Խ.Արուսյանի անվ. ՀՊՄՀ հենակետային վարժարան									1						1	
121	Վ.Համբարձումյանի անվ. մանկավար- ժական քոլեջ (Վարդենիս)									1						1	
122	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինս-տ									2						2	
123	«Պատմամշակութային արգելոց-թան- գարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ									2						2	
124	Հայ-չինական բարեկամության դպրոց									1						1	
125	Հայաստանի գինու պատմության թանգարան									1						1	
126	«Կոմայրի» արգելոց-թանգարան									1						1	
127	ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ									1						1	
128	ՎՊՀ										1						1
129	ՅԹԻ										1						1
Ընդամենը՝		71	5	32	25	89	76	55	36	201	46	11	11	12	3	471	202

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ԳԱԱ համակարգի բյուջետային մուտքեր (հազար դրամ)

	Կազմակերպության անվանումը	Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	Ազգային արժեքներ կայացնող գիտական օբյեկտների պահպանում	Թեմա	Նպատակային ծրագրեր	Այլ դրամաշնորհներ	Այլ մուտքեր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Մաթեմատիկայի ինս-տ ՊՈԱԿ	139,113.1		43,975.1		13,682.3	1,387.1	198,157.6
2	Մեխանիկայի ինս-տ ՊՈԱԿ	230,757.9		57,380.0		25,540.0	2,507.0	316,184.9
3	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինս-տ ՊՈԱԿ	306,880.6		120,848.0	26,400.0	10,140.2	57,285.7	521,554.5
4	Ֆիզիկական հետազոտությունների ինս-տ ՊՈԱԿ	312,701.2		185,959.3		69,658.6	3,945.5	572,264.6
5	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինս-տ ՊՈԱԿ	224,537.6		49,078.0		7,940.8		281,556.4
6	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինս-տ ՊՈԱԿ	385,274.2		122,473.0		61,820.0		569,567.2
7	Երկրաբանական գիտությունների ինս-տ ՊՈԱԿ	293,356.6		113,183.0		2,248.8	2,799.3	411,587.7
8	Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինս-տ ՊՈԱԿ	153,835.7		23,400.0		7,501.0	2,236.1	186,972.8
9	Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինս-տ ՊՈԱԿ	219,733.1		344,112.3	14,000.0	102,101.0	4,866.2	684,812.6
10	Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն ՊՈԱԿ	564,829.4		227,114.4			116,555.2	908,499.0
11	Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինս-տ ՊՈԱԿ	252,149.7		28,915.0	28,230.0	41,763.6	7,264.8	358,323.1
12	Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների ինս-տ ՊՈԱԿ	97,065.5		51,500.0		5,642.4	2,409.1	156,617.0
13	Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինս-տ ՊՈԱԿ	172,595.0		203,276.0		58,667.9	11,483.0	446,021.9
14	Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ՊՈԱԿ	245,106.3		281,311.8		19,840.8		546,258.9
15	Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինս-տ ՊՈԱԿ	252,623.3		19,472.0			19,773.3	291,868.6
16	Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինս-տ ՊՈԱԿ	248,403.1		118,909.8		19,343.8	26,552.6	413,209.3

1	2	3	4	5	6	7	8	9
17	Մոլեկուլային կենսաբանության ինս-տ ՊՈԱԿ	267,843.1		325,192.4	16,900.0	21,175.0	12,625.5	643,736.0
18	Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	153,960.7		109,468.4	15,600.0	16,211.0	7,710.2	302,950.3
19	Պատմության ինս-տ ՊՈԱԿ	271,142.3		5,600.0		5,350.0	23,277.6	305,369.9
20	Արևելագիտության ինս-տ ՊՈԱԿ	175,527.1		56,797.0		3,239.8	17,349.2	252,913.1
21	Հնագիտության և ազգագրության ինս-տ ՊՈԱԿ	502,400.6		178,907.5	9,918.0	49,052.7		740,278.8
22	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	51,922.9		19,895.0		2,629.8	3,755.0	78,202.7
23	Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինս-տ ՊՈԱԿ	171,404.0		6,645.0		9,030.5		187,079.5
24	Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինս-տ ՊՈԱԿ	102,214.5					9,672.4	111,886.9
25	Մ.Աբեղյանի անվ. գրականության ինս-տ ՊՈԱԿ	158,580.4		38,457.5		19,033.6	529.8	216,601.3
26	Հ.Աճառյանի անվ. լեզվի ինս-տ ՊՈԱԿ	170,209.6		11,190.0		13,374.8	408.8	195,183.2
27	Արվեստի ինս-տ ՊՈԱԿ	187,131.2		21,300.0			23,012.6	231,443.8
28	«Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ	11,343.2					247.0	11,590.2
29	Փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ	241,406.8				4,500.0	9,667.3	255,574.1
30	Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայկական տարածաշրջանային բաժանմունք	9,295.1				300.0		9,595.1
31	«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ	399,238.2		234,019.0		82,970.8	4,787.3	721,015.3
32	ԻԿՐԱՆԵՏ կենտրոն ՄԿ	25,675.3		37,149.6		1,275.0	1,438.5	65,538.4
33	«Հայկական հանրագիտարան» հրատարակչություն ՊՈԱԿ	29,341.0				625.0	600.0	30,566.0
34	ԳԱԱ ՈԱԿ-ի նախագահություն	355,057.3				115,074.0		470,131.3
35	ԳԱԱ համակարգի գիտական գործուղումների իրականացում	33,752.6						33,752.6
36	ԳԱԱ համակարգի ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում	42,962.6						42,962.6

1	2	3	4	5	6	7	8	9
37	«Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի» պահպանում ու զարգացում	47,112.4						47,112.4
38	Գիտակրթական միջազգային կենտրոն	32,968.0				18,600.0	14,562.1	66,130.1
39	«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ	34600.0						34,600.0
